

ՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՆՔ ԶԴԱՌԵԱ

ԲԱՑԱՐԱՅՏԵԼ,

ԳԼԱՐԱՅՏԵԼ,

ՆՎԱԳԵՑՆԵԼ

Նախարան

Սիրելի բարեկամներ, յուրաքանչյուրիս կյանքում էլ տարաբնույթ դեպք-պատահարներ եղել են: Մի բան պատահել է մեկս մյուսին օգնության է հասել: Նոյնն էլ մեր պետությունը. որևէ մարզում աղետ է եղել պետական կառույցներն արձագանքել են, հասել են, օգնել են, փրկել են, փոխհատուցել են: Ուշ թե շուտ, լավ թե վատ, այլ հարց է:

Այսօր ամբողջ աշխարհը փոխել է իր ռազմավարությունը՝ արձագանքման մշակույթից անցնելով կանխարգելման և համայնքների խոցելիության նվազեցման մշակույթին: Իսկ այդ մշակույթի հիմքը իրազեկված քաղաքացին է, մենք բոլորս և մեզնից յուրաքանչյուրը, ով գիտի, թե ինչ վտանգներ կան, ինչ է արտակարգ իրավիճակը, ինչ բնութագրեր ու դասակարգում ունի այն, ինչ են նշանակում խոցելիությունն ու կարողությունը, ինչպես է ձևավորվում աղետների ռիսկը և ինչպես կարելի է այն նվազեցնել գիտակցում է, որ աղետների ռիսկի նվազեցումը մարդկային կյանքերի փրկություն է և ապրուստի միջոցների աղբյուրների պաշտպանություն, որ կանխարգելմանն ուղղված ֆինանսները ոչ թե ծախս են, այլ ներդրում, գիտի ինքնօգնության, փոխօգնության, առաջին նախարժշկական օգնության տարրական հիմունքները, գնահատում ու պահպանում է անվտանգ ու առողջ շրջակա միջավայրը, կարողանում է գրագետ կառավարել հողը, ջուրը, օդը, արագ ուրբանիզացվող ու

զարգացող, տեխնիկապես հագեցվող քաղաքային միջավայրը, նաև՝ կյամայի փոփոխության ոիսկերը:

Մենք բոլորովին էլ այն քաղաքականության կողմնակիցք չենք, որը մարդկանց վախճանում է աղետ-բորոներով՝ այ եթե ջիրագեկվեք-չպատրաստվեք, աղետը կզա ու կսրբի կտանի ձեր ունեցած-չունեցածը, կվնասի ձեզ ու ձեր մերձավորներին՝ անկախ ձեր դիրքից պաշտոնից ու կուսակցական պատկանելությունից: Ընդհակառակը, մենք ցանկանում ենք, որ դուք ինքներդ բացահայտեք, թե ինչ է պետք իմանալ ձեր կյանքը բարելավելու և առավել անվտանգ դարձնելու համար, որն է աշխարհի լավագույն փորձը, ինչ աղետներ են պատուհասել ու սպառնում մեր երկրին, ինչ նոր մարտահրավերներ կան, ինչպես կարելի է հզորացնել ձեր կարողությունները, նվազեցնել խոցելիությունն ու մեղմել անկանխելի աղետի հետևանքները:

Խնդրում ենք զիրքն ընթերցել անշտապ ու կանգ առնել առանձին զլուխների վրա: Քննարկեք այն ձեր ընտանիքի անդամների ու գործընկերների հետ: Համադրեք այս հանրամատչելի ձեռնարկը Տեղական մակարդակում աղետների ոիսկի կառավարման ուղեցույցի հետ: Հիշեք, որ հենց ձեզանից ձեր զիտելիքներից, հմտություն-կարողությունից է կախված, թե արդյոք փորձանք կդառնա վերահաս փորձությունը, թե՝ անցյալի զիրկն անցած, դիմագրավված ու հաղթահարված հերթական մարտահրավեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական դիրքը

Հայաստանը գտնվում է Կովկասյան Տարածաշրջանում: Այն արևելքից և հարավ-արևմուտքից սահմանակից է Աղբքաջանին, հյուսիսից՝ Վրաստանին, հարավից՝ Իրանին և արևմուտքից՝ Թուրքիային: Հստ վարչական բաժանման Հայաստանը բաղկացած է 10 մարզից և մայրաքաղաք Երևանից: Երկրի տարածքը 29.800 կմ² է, ըստ որում լանդշաֆտը հիմնականում կազմված է բարձրավանդակներից և լեռներից, որոնք միմյանցից անջատված են նեղ դաշտավայրերով:

Բարձրությունը ծովի մակերևույթից

Հայաստանի տարածքի 77% գտնվում է ծովի մակերևույթից 1.000 - 2.500 մ բարձրության վրա, ըստ որում, միջին բարձրությունը 1.850 մետր է: Ամենացածր վայրը ծովի մակերևույթից բարձր է մոտ 350 մետր, իսկ ամենաբարձրը՝ 4.096 մետր:

Ընդհանուր նկարագիրը

Հայաստանը գտնվում է բնական վտանգների բարձր ռիսկային գոտում և ենթակա է վերջիններիս ազդեցությանը: Համաշխարհային բանկը Հայաստանը դասում է

աշխարհի 60

ամենաաղետավտանգ

երկրների շարքում:

Աշխարհում հայտնի բնական վտանգներից Հայաստանին բնորոշ են շուրջ 110-ը: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ



լեռնաշղթաներով, դաշտավայրերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումների տարածքով (բարձրությունների տարրերությունն ավելի քան 3.500 մ. է): Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեղփակիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր:

Հիմնական վտանգների առկայությունը

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության տվյալներով հանրապետության տարածքի

- 100% ենթակա է ուժեղ երկրաշարժերի,
- 4.1%՝ սողանքների,
- 30%՝ սելավների և հեղեղումների,
- 0.5%՝ փլուզումների ու քարաթափումների,
- 12%՝ ցրտահարությունների,
- 15%՝ երաշտի,
- 17%՝ կարկտահարման և այլն:

Հանրապետության հողատարածքների 80%-ից ավելին ենթակա է եռողիայի, աղակալման կամ ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների ազդեցության:

Բնական աղետների ազդեցությունը

1988 թ. Սպիտակի երկաշարժի հետևանքով գոհվեց 25 000 մարդ, իսկ 517 000-ը մնացին անօթևան: Սպիտակի երկաշարժի տնտեսական վնասը գնահատվել է 14.2 միլիարդ դրամ:

Համայնքների մոտ 28%-ը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470 000 մարդ, կամ երկրի ազգաբնակչության 15%-ը ենթակա է այդ վտանգին: Սողանքների պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 միլիոն դրամ: 1990-2005 թթ. ընթացքում Հայաստանը կորցրեց իր անտառապատ մակերեսի 20%-ը, կամ մոտավորապես 63 000 հեկտար անտառ, որի արդյունքում զգալիորեն մեծացել է սելավների և սողանքների հավանակնությունը:

2004-2007 թթ. ընթացքում սելավները վնաս են հասցրել մոտ 200 բնակավայրերի և հիմնական տրանսպորտային ուղիների 600 տեղամասի: Սելավների հասցրած միջին տարեկան վնասը չորս տարվա ընթացքում կազմել է 2,9 միլիոն դրամ:

2000 թ. երաշտից զյուղատնտեսական սեկտորի կորուստները գնահատվել են 66,7 մլն ԱՄՆ դրամ, կազմելով զյուղատնտեսական համախառն արտադրանքի 10.1%-ը:

Աղետները թվերով

- 2011 թ. ամենավնասաբեր տարին էր բնական աղետների առումով՝ գրեթե 30 000 զնհ, 380 մլրդ ԱՄՆ դոլարի վնաս:
- 2012 թ. աշխարհում արձանագրվեց 905 բնական աղետ, որոնց 93 % -ը պայմանավորված էր եղանակային պայմաններով: Վնասը կազմեց 157 մլրդ ԱՄՆ դոլար: Մինչդեռ մահվան դեպքերի թիվը կազմեց 9656, ինչն էապես ցածր է վերջին 10 տարիների միջին տարեկան ցուցանիշից, որը կազմում է 106000:
- Աղետներից մահվան դեպքերի 95 % -ը արձանագրվել է զարգացող երկրներում:
- ՄԱԿ-ի տվյալներով՝ աղետի ժամանակ կանանց և երեխաների զոհվելու հավանականությունը 14 անգամ բարձր է, քան տղամարդկանցը:

Արտակարգ իրավիճակների բնութագրումը և դասակարգումը

Արտակարգ իրավիճակների բնութագրումը

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում արտակարգ իրավիճակը սահմանվում է հետևյալ կերպ՝ արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կամ օրյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անսանահամաձարակի (էպիզոոտիա), բույսերի և զյուրանտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), գենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, զգալի վնաս, խոշոր նյութական կորուստներ հասցնել մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին և խախտել մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանները:

Արտակարգ իրավիճակների դասակարգումը

Բնական (տարերային)

- երկրաշարժեր
- հրաբուխներ
- սողանքներ
- սելավներ
- ջրհեղեղներ
- փոթորիկներ
- երաշտ
- խորշակ
- առատ տեղումներ
- խոշոր կարկուտ
- անտառային հրդեհներ և այլն

Տեխնածին

- տրանսպորտային վթարներ
- ավիավթարներ
- գնացքների (նաև մետրոպոլիտենի) վթարներ
- ավտովթար
- հրդեհներ, պայթյուններ (շենքերում, կառուցվածքներում, օբյեկտներում, տրանսպորտում, հրաններում, փորվածքներում, մետրոպոլիտենում)
- վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի (ՈՒՆԹՆ) արտանետումով
- վթարներ ռադիոակտիվ նյութերի (ՌՆ) արտանետումով (արտանետման վտանգով)
- վթարներ կենսաբանական վտանգավոր նյութերի (ԿՎՆ) արտանետումով
- շենքերի, կառուցվածքների հանկարծակի փլուզում
- հիդրոդինամիկական վթարներ (ամբարտակների և պոչամբարների ձեղքումներ)

Էկոլոգիական

- ցամաքի վիճակի փոփոխություն
- մթնոլորտի կազմի և հատկությունների փոփոխություն
- կենսոլորտի վիճակի փոփոխություն
- Ջրային միջավայրի (հիդրոսֆերա) վիճակի փոփոխություն

Վարակիչ հիվանդություններ (համաձարակներ)

- մարդկանց
- զյուղատնտեսական կենդանիների (էպիզոոտիա)
- զյուղատնտեսական բույսերի (էպիֆիտոտիա)

Ահաբեկչական գործողություններ

Դժբախտ պատահարներ և այլն:

Հայաստանի Հանրապետությանը սպառնացող արտակարգ իրավիճակները

Պատմական անցյալում տեղի ունեցած բնական աղետների և այլ երևույթների մասին մենք տեղեկանում ենք տարեգրություններից, առասպելներից, ավանդագրույցներից, իրադարձությունների ականատեսների պահպանած վկայություններից: Հայաստանի պատմության հազարամյակների ընթացքում մեր նախնիների կյանքն ուղեկցել են ահրեկի բնական երևույթներ:

Հայ պատմիչները, մատենագիրները խոսուն վկայություններ են թողել Հայաստան աշխարհում տեղի ունեցած բնական աղետների, մասնավորապես Երկրաշարժերի մասին: Վկայություններ կան, որ մեր հին մայրաքաղաքները տուժել են ուժեղ Երկրաշարժերից: Ողբերգական է եղել Դվինի՝ Արևելքի ամենածաղկուն քաղաքներից մեկի ճակատագիրը. 815, 854, 858, 863, 869 թվականներին քաղաքն ավերվել է Երկրաշարժերից ու վերակառուցվել, և միայն 893-894 թթ. ահեղ Երկրաշարժից հետո Դվինը վերջնականապես կործանվեց: 11-14-րդ դարերում ստորգետնյա տարերքը քազմից ցնցել է հազարամյեթ Անին, իսկ 1319 թվականին՝ հիմնովին ավերել:

Բոլոր Երկրաշարժերից ամենասարսափելին 1679 թվականին Երևանում տեղի ունեցածն է: Ցնցումի կենտրոնը Գառնիում էր. կործանվեց առաջին դարի հեթանոսական տաճարը, ավերվեցին շրջանի բոլոր շինությունները, իիստ վնասվեցին Գեղարդի, Զավուց թատի, Խոր Վիրապի եկեղեցիները, քանդվեց Երևանի բերդի պարիսպը:

Մեր օրերում աշխարհում աղետներից տուժող բնակչության քանակի ավելացման գլխավոր պատճառն այնպիսի հիդրոօդերևութարանական

աղետների թվի աճն է, ինչպիսիք են ջրհեղեղները, փոթորիկները և երաշտները: 1991-ից մինչև 2000 թվականը յուրաքանչյուր տարի աղետներից զոհվել կամ տուժել է միջին հաշվով 211 միլիոն մարդ, մի թիվ, որը 7 անգամ գերազանցում է զինված բախումներից սպանվածների կամ տուժածների թիվը: Վերջին տասնամյակում աշխարհում ամեն շաբաթ միայն տարերային աղետներից զոհվել է 1300 մարդ, որոնց 98 տոկոսը թույլ կամ միջին զարգացած երկրների բնակիչ է:

Բնական (տարերային) աղետներ

Հայաստանի Հանրապետության տարածքը ենթակա է ավելի քան 20 բնական երևույթի ազդեցության, որոնց զարգացումն ու բացասական դրսնորումը տարերային աղետների տեսքով ամեն տարի երկրին պատճառում են 10-12 միլիարդ դրամի հասնող նյութական վնաս, նաև հանգեցնում մարդկային զոհերի:

Առավել վտանգավոր են երկրաշարժերը, սողանքները, ջրհեղեղները, ուժեղ, մրրկային քամիները, պտտահողմերը, սելավները, կարկտահարությունները և այլն:

Որոշ վտանգավոր բնական երևույթներ, օրինակ, երկրաշարժերը, սողանքները, պտտահողմերը տեղի են ունենում հանկարծակի և արագ առաջացնելով մեծ նյութական կորուստներ ու մարդկային զոհեր: Իսկ մյուսները, օրինակ, ջրհեղեղները, ջրածածկումները զարգանում են տեսական ժամանակում, մարդկային զոհերի համեմատաբար հազվադեպ են հանգեցնում, սակայն դրանց պատճառած նյութական վնասը հասնում է հսկայական չափերի:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Ի՞նչ է երկրաշարժը. ընդհանուր տեղեկություններ

Երկրաշարժը երկրաֆիզիկական վտանգավոր երևույթ է: Այն առաջանում է երկրակեղևում և երկրի առավել խոր շերտերում հանկարծակի տեղաշարժերի ու խզումների կամ հրաբխային ու փլվածքային երևույթների հետևանքով, որոնք առաձգական ալիքների տեսքով հաղորդվում են մեծ տարածքների վրա:

Առավել հաճախ երկրաշարժի պատճառ են դարնում չափից ավելի ներքին լարվածությունների երևան գալն ու քայրայված ապարը: Ապարի առաձգական դեֆորմացիաների (ձևախախոռումների) ժամանակ կուտակված պոտենցիալ էներգիան, քայրայման (խզվածքի) դեպքում վերածվում է կինետիկ էներգիայի՝ գրունտում (բնահողում) առաջացնելով սեյսմիկ ալիքներ:

Երկրաշարժի ծագման օջախը (սովորաբար երկրի մակերեսից որոշ խորության վրա), որտեղից սկսվում են սկզբնական ցնցումները՝ կոչվում է հիպոկենտրոն (ներքնակենտրոն): Խսկ երկրի մակերեսի այն կետը, որը գտնվում է երկրաշարժի օջախի կենտրոնի վրա՝ անվանվում է երկրաշարժի էպիկենտրոն (վերնակենտրոն): Ավելի հաճախ երկրաշարժի օջախները գտնվում են մոտ 60 կմ խորության վրա, իսկ երբեմն ի՝ մինչև 700 կմ:

Երկրաշարժի էներգիայի ինտենսիվությունը երկրի մակերեսին գնահատվում է 12-բալանց սանդղակով: Կախված օջախի մասշտաբից ու հզորությունից՝ երկրաշարժը դասակարգում են ըստ մազնիտուլի սանդղակի:

Մ-ը՝ երկրաշարժի մազնիտուլը, չափողականություն չունեցող մեծություն է և բնութագրում է հարուցած տատանումների ընդհանուր էներգիան, որը գտնվում է 0,0-ից մինչև 9,0 սահմաններում:

Երկրի մակերեսի ցնցումներն ու տատանումները հանգեցնում են երկրորդական գործոնների առաջացման, գրունտում լայն ձեղքերի և տեղաշարժերի, երկրի մակերեսի իջեցումների



(նստումների) և թեքումների, սողանքների, ձնահյուսերի, ցեխահոսքերի, ցունամիների, պատվարների ու պաշտպանական ամբարտակների ավերման ժամանակ ջրհեղեղների, ինչպես նաև հրդեհների: Հաճախ երկրաշարժերն առաջացնում են հրարուխների ժայթքումներ:

Երկրաշարժերի ժամանակ սեյսմիկ վտանգը որոշվում է ինչպես զրունակի (բնահողի) ինտենսիվ տատանումներով, այնպես էլ երկրորդական գործոններով:

Երկրաշարժերի դեպքում մարդու համար անմիջական վտանգ են ներկայացնում շենքերի մասնակի կամ լրիվ ավերվելը, հարկամիջան ծածկերի ու պատերի փլվելը, պատուհանների և ցուցափեղկերի կոտրված ապակիները, վատ ամրացված կահույքի շրջվելն ու տապալվելը, ինչպես նաև երկրորդական գործոնները՝ վառարանների, զազատարների և մալուխային (կարելային) գծերի ավերումից ծագող հրդեհները, ուժեղ ներգործող թունավոր նյութերի տարածումը, խուճապի հետևանքով մարդկանց անվերահսկելի գործողությունները և այլն:

Երկրաշարժի մազնիտուդ և ուժգնություն

Դեռ հարյուրամյակներ առաջ մարդիկ փորձել են որոշել երկրաշարժերի ուժը՝ ենելով դրանց պատճառած վնասներից: Եթե մի երկրաշարժ ավերել է ավելի շատ շենք, քան մյուսը, ապա այն համարվել է ավելի ուժգին: Թեև նման մոտեցումը թվում է տրամաքանական, սակայն այն չի կարող համարվել բացարձակ ձիւտ: Ավերածությունների չափերը կախված են ոչ միայն երկրաշարժի ուժից, այլև շինությունների որակից և դրանց հիմնատակի ապարների հատկությունից: Բացի դրանից, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, հզոր երկրաշարժը կարող է ավելի քիչ վնաս պատճառել, քան թույլը: Այս «հանելուկը» բացատրելու համար հիշենք, որ տատանումների մեծությունը մակերեսի վրա կախված է երկու գործոնից՝ հիպոկենտրոնից ճառագայթվող էներգիայի քանակից և երկրաշարժի օշակի խորությունից: Կարող է լինել այնպես, որ ճառագայթվող էներգիայի քանակը լինի շատ, բայց այն անջատվի մեծ խորությունում, այսինքն՝ օշակը խոր լինի: Այս դեպքում սեյսմիկ ալիքները, մինչև երկրի մակերես հասնելը, զգալիորեն մարում են, թուլանում, ցնցումներն են, բնականաբար, լինում են թույլ: Մի այլ

Երկրաշարժի դեպքում կարող է անջատվել ավելի քիչ էներգիա, բայց փոքր խորություններում: Սեյսմիկ ալիքներն այդ դեպքում քիչ թուլանալով կհասնեն երկրի մակերես և, հետևաբար, կառաջացնեն ուժեղ ցնցումներ:

Ուստի երկրաշարժերի ուժի հարցում շփոթությունից խուսափելու համար հարկավոր է հստակ գիտենալ, որ երկրի մակերեսին տեղի ունեցող ցնցումների ուժգնությունը կախված է ոչ միայն օշախում անջատված էներգիայի քանակից, այլև օշախի խորությունից և վերը նշված այլ հանգամանքներից:

Անջատված սեյսմիկ էներգիայի մեծությունը սեյսմոլոգները զնահատում են մազնիտուրով: «Մազնիտուր» հասկացությունը 1935 թ. գործածության մեջ դրեց Կալֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Չարլզ Ռիխտերը: Նա ել մշակեց երկրաշարժերի մազնիտուրների սանդղակ, որն այժմ կրում է «Ռիխտերի սանդղակ» անունը: Այդ սանդղակի ամենաբարձր աստիճանը համապատասխանում է 9 մազնիտուրի, որի էներգիայի մեծությունը կարելի է համեմատել ջրածնային ռումբի պայթյունից անջատված էներգիայի հետ:

Այլ բան է երկրաշարժի ուժգնությունը, որը որոշվում է շինություններում՝ ցնցումների հետևանքով առաջացած վնասվածքների և ավերածությունների աստիճանով: Ամենասուժեղ ցնցումները, բնականաբար, տեղի կունենան էպիկենտրոնում և նրա մոտակա տարածքում: Ինչքան հեռու է տեղանքը էպիկենտրոնից, այնքան փոքր է այնտեղ երկրաշարժի ուժգնությունը: Ի տարբերություն մազնիտուրի, ուժգնությունը անմիջականորեն չափվող մեծություն չէ: Այն որոշելու համար հարկավոր է ուսումնասիրել վնասված տեղանքը, բնակավայրերը, տեսնել, թե ցնցումների հետևանքով ինչ վնասվածքներ են ստացել շենքերը, շինությունները և տեղանքի ռելիեֆը: Երկրաշարժի ուժգնության որակական գնահատման համար մշակված է 12 բալանց սանդղակ (MSK-64), որի պարզեցված տարբերակը բերվում է ստորև:

Երկրաշարժի ուժգնությունը.

12 բալանոց (MSK-64) սանդղակ

1 բալ - Մարդիկ այն չեն զգում. գրանցվում է միայն սեյսմոգրաֆների կողմից:

2 բալ - Զգում են շատ քերը, եթե նրանք գտնվում են բարձրահարկ շենքերում, հանգիստ վիճակում:

3 բալ - Զգում են նրանք, ովքեր գտնվում են շինություններում, հատկապես վերին հարկերում: Դրսում գտնվողների մեծամասնության կողմից այն որպես երկրաշարժ չի ընկալվում: Նկատվում է վիբրացիա և առարկաների թույլ ճռճում:

4 բալ - Շենքի ներսում զգում են գրեթե բոլորը, դրսում՝ քշերը: Գիշերը ումանք արքնանում են, ամանեղենը զրնվում է: Լսվում է պատուհանների և դռների դրորոց: Կահույքը ցնցվում է, կախված առարկաները նկատելիորեն ճռճում են:

5 բալ - Զգում են բոլորը, շենքերը ցնցվում են ամբողջությամբ: Գիշերը շատերն արքնանում են, ամանեղենի մի մասը և պատուհանների ապակիները կոտրվում են, պատերի ծեփի մեջ տեղ-տեղ ճաքեր են առաջանում: Կախված առարկաներն ուժեղ ճռճում են:

6 բալ - Զգում են բոլորը, ինչպես շենքի ներսում, այնպես էլ դրսում: Շատերը վախից դուրս են վագում: Զամրացված կահույքը տեղաշարժվում է: Որոշ տեղերում պատերի ծեփը թափվում է: Ծինելույզները թերքում են: Ավերածությունը քիչ է:

7 բալ - Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները քիչ են, տիպային լավ կառույցներում՝ բույլից-չափավոր, վատ նախագծված կամ վատ կառուցված շինություններում՝ զգալի: Շենքերի ծինելույզները շարքից դուրս են զալիս:

8 բալ - Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները թերևսակի են, տիպայինում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի են ունենում ավերածություններ: Թերքում և ընկնում են վառարանային և գործարանային ծինելույզները, սյուները և հուշարձանները: Հորատանցքերում և ջրհորներում փոխվում է ջրի մակարդակը: Երկրի մակերեսի վրա երբեմն առաջանում են ճեղքեր:

9 բալ - Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները լուրջ են, մյուսներում նկատվում են զանգվածային փլուզումներ: Երկրի մակերեսին առաջանում են բազմաթիվ ճեղքեր:

10 բալ - Երկրի մակերեսին առաջացած ձեղքերի լայնությունը հասնում է մինչև 1 մետրի: Ավերվում է նույնիսկ լավ կառուցված փայտե և քարե տների մեծամասնությունը: Ծովում են երկաթգծի ռելսերը: Գետերի ափերի և սարալանջերի հողն սկսում է սահել:

11 բալ - Կանգուն են մնում միայն շատ քիչ երկաթբետոնե կառույցներ, փլվում են կամուրջները: Երկրի մակերեսին առաջանում են բազմաթիվ ձեղքեր: Փլուզումները համատարած են:

12 բալ - Հիմնահատակ կործանում: Երկրի մակերեսին առաջանում են լայն և երկար ձեղքեր: Գետերը փոխում են հուները: Փլուզում են լեռները, լանջերի վրա առաջանում են բազմաթիվ սողանքներ, որոնց հետևանքով երբեմն առաջանում են արհեստական լճեր:

Այսպիսով, յուրաքանչյուր երկրաշարժի հզորության համար գոյություն ունի ընդամենք մեկ մագնիտուդ, սակայն այդ նույն մագնիտուդի երկրաշարժը կարող է երկրի մակերեսի վրա առաջ բերել տարրեր ուժգնության ցնցումներ, ամենաուժեղից (Էպիկենտրոնի տարածքում) մինչև ամենաքույլ՝ էպիկենտրոնից մեծ հեռավորության վրա:
Հետևաբար երկրաշարժի ուժգնությունը երկրի մակերեսի տվյալ շրջանում հիմնականում կախված է մագնիտուդից, այսինքն՝ անշատված էներգիայի մեծությունից, օգախի խորությունից և էպիկենտրոնից նրա ունեցած հեռավորությունից:

Բնակչության գործելակերպը և վարքը երկրաշարժից առաջ

Ինչպես նախապատրաստվել երկրաշարժին

1988-ի Սպիտակի երկրաշարժի վերլուծությունը ցույց տվեց, որ երկրաշարժի նախապատրաստական փուլը սեյսմապաշտպանության հարցում վճռական նշանակություն ունի:

Այժմ թվարկենք այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են նախապատրաստական փուլում:

Չեռք բերեք տարածքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ

Քարտեզում նշված են ձեր շենքի սեյսմակայունության գործակիցը, տարածքի վթարավտանց և թունավոր օբյեկտները:

Այդ քարտեզը կնպաստի ձեր հետազա սեյսմապաշտպանական գործողություններին:

Քարտեզի ձեռքբերման հարցով կարող եք դիմել քաղաքապետարան կամ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայություն:

Շենքերի անվտանգության համար անհրաժեշտ պայմանները

Այս խնդրի շուրջ խոսելիս տեղին է հիշել ճապոնացիների հետևյալ պատկերավոր արտահայտութունը. «Երկրաշարժե՛րը չեն սպանում մարդկանց, այլ՝ նրանց կառուցած վատ շենքերի բեկորները»: Սա իր ողբերգական հաստատումը գտավ 1988-ին Հայաստանում. մարդկանց մեծ մասն ավերակների գոհ դարձավ:

Շինհրապարակի ընտրության հարցում ունեցեք տեղանքի կառուցապատումը երաշխավորող փաստաթուղթ, բայց որի շենքեր անհրաժեշտ է կառուցել երկրաբանական ակտիվ խզվածքներից հեռու, որովհետև ավերածություն առաջացնող գրունտի տեղաշարժերը կատարվում են հենց այդ խզվածքների երկայնքով:

Չի թույլատրվում շենքերը կառուցել սարալանջերի ստորոտին գտնվող շրաբերուկային գրունտների վրա: Երկրաշարժի հետևանքով նման վայրերում փլուզումներ և սողանքներ են առաջանում:



Ստուգեք ձեր տան վիճակը, եթե անհրաժեշտ է՝ անմիջապես ձեռնամուխ եղեք այդ գործին, որովհետև ձեր բնակարանի անվտանգության համար արված ոչ մի միջոց չի օգնի, եթե շենքն ամբողջությամբ ամրացված չէ:

Շենքեք կառուցելիս հնարավորինս ամուր հիմք դրեք, իսկ պատերը հուսալիորեն ամրացրեք հիմքին:

Շենքերում չի կարելի կատարել այնպիսի ձևափոխումներ, որոնք նվազեցնում են շենքի սելյամակայունությունը, օրինակ՝ ա. հիմքը թուլացնող նկուղային հարկերի վերակառուցում,
բ. բնակարանի հատակագծի փոփոխություն (կրող պատերում բացված որմնախորշեր, որոնք ազդում են շենքի ընդհանուր ամրության վրա),

գ. տանիքում ջրի ծանր բաքի տեղադրում:

Շենքերից մարդկանց տարհանելու և տուժածներին փրկելու ուղիների ապահովման համար պետք է.

- երկարյա դրները փոխարինել փայտե դրներով, որովհետև առաջին իսկ ցնցումների ժամանակ մետաղյա դրները սովորաբար ձկվում են և դժվար բացվում, իսկ երբեմ՝ լովում.
- առաջին հարկերի պատուհաններից հանել մետաղյա ձաղաշարերը, իսկ եթե անվտանգությունն ապահովելու նպատակով օգտվել եք պաշտպանական միջոցներից, ապա ձաղաշարերն ամրացնել անմիջապես բացվող վերլերին, քանի որ պատուհանները ևս պահեստային ելք են.
- ելքերը և մուտքերը, սանդղավանդակներն ու միջանցքներն ազատել մեծածավալ առարկաներից:

Օսոռայողական և բնակելի շենքերում ձեր անվտանգությունն ապահովելու համար.

- կահույքը, հաստոցներն ու սարքերը հուսալիորեն ամրացրեք հատակին ու պատերին.
- նուրբ էլեկտրոնային սարքերը իջեցրեք վերին դարակներից և տեղադրեք ներքին դարակներում հատուկ միջադիրների վրա.

- ծանր առարկաները նույնպես իջեցրեք վերին դարակներից, տեղադրեք առանձին պատվանդաններին.
- դյուրավառ և բունավոր հեղուկներով անորները հուսալիորեն ամրացրեք, ստուգեք տարաների ամրակները և խցանների հուսալիությունը.
- խտացված զազով լի զլանոթը և շրատաքացուցիչը մետաղագամերով ամրացրեք պատին.
- կախովի իրերը և լուսավորող սարքերը հուսալիորեն ամրացրեք առաստաղին.
- մահճականները տեղադրեք կրող պատի մոտ՝ պատուհաններից հեռու: Չի կարելի մահճակալի վերևում կախել գրադարակներ, ծանր շրջանակներով նկարներ:

Զեր իսկ անվտանգության համար անհրաժեշտ է:

- նախապես մշակել հնարավոր երկրաշարժի ժամանակ ձեր գործելակերպը, այն կօգնի ձեզ երկրաշարժի պահին խուսափել խուճապային իրավիճակներից և ճիշտ գործել.
- գիտենալ տան կամ աշխատավայրի ամենաանվտանգ տեղերը, ուր կարելի է պատսպարվել ցնցումների ժամանակ: Զեր ընտանիքի անդամներին և աշխատակիցներին ծանոթացնել դրանց.
- նախապես որոշել շենքից դուրս գալու և դեպի բաց տարածություն հեռանալու ամենաանվտանգ ուղին: Ընտանիքի անդամների հետ պայմանավորվել-ձշտել (եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք բնակավայրի տարբեր մասերում) հանդիպման տեղը.
- տիրապետել և ընտանիքի անդամներին սովորեցնել առաջին օգնության ձևերը.
- տանը՝ մուտքի մոտ, պահել առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ:

Պայուսակի մեջ պետք է լինեն.

- առաջին օգնության դեղարկողիկ (դեղորայք, վիրակապական նյութեր).

- մարտկոցով ռադիոլնդունիչ և գրպանի լապտեր.
- կարևոր փաստաթղթեր և տաք հազուստ.
- պահածոյացված սնունդ և խմելու ջրով լի տարա (սնունդ պատրաստելու և խմելու համար անհրաժեշտ է 3-4 լիտր ջուր):

Ինչպե՞ս վարվել երկրաշարժի ժամանակ

Հիշեք. երկրաշարժը ձեզ, ամենայն հավանականությամբ, հանկարծակի կրերի: Ինքնատիրապետում, հանգստություն և հստակ կշռադատված գործողություններ. ահա թե ինչ է ձեզ անհրաժեշտ: Զեր հանգստությունը վստահություն կներշնչի շրջապատին:

Հիշեք, որ նույնիսկ ավերիչ երկրաշարժի դեպքերը միանգամից չեն փլուզվում: Գյումրիի (9 բալ) ավերածությունների վերլուծությունը ցույց տվեց, որ 10 հարկանի շենքերը սկսել են փուլ գալ առաջին ցնցումից 10-12 վրկ. հետո: Դա այն ժամանակն է, որի ընթացքում փրկվելու համար որոշակի գործողություններ կկարողանաք ձեռնարկել:

Հիշեք, որ երեխաները, ծերերը և հիվանդները ձեր օգնության կարիքն ունեն: Նրանց կարիքները հոգալով՝ դուք չեք երկյուղի ձեր կյանքի համար և կարող եք ավելի հավասարակշռված գործել:

Հիշեք, ձեզ որոնում են, և ձեր փրկության համար կօգտագործվեն բոլոր հնարավորությունները:

Աղետները թվերով

ՄԱԿ-ի տվյալներով՝ 2000-2010 թթ. աշխարհում գրանցված երկրաշարժերի ժամանակ ավելի քան 680 հազար մարդ զոհվել է հիմնականում վատ կառուցված շենքերի փլուզման հետևանքով:

Եթե երկրաշարժի ժամանակ շենքում եք.

ա. Եթե բարձրահարկ շենքի 1-ին և 2-րդ հարկերում եք, աշխատեք անհապաղ դուրս գալ շենքից, հեռացեք դեպի բաց տարածություն:

բ. Եթե գտնվում եք 3-րդ և ավելի բարձր հարկերում, շենքից դուրս մի եկեք, աստիճաններն ու սանդղակները խցանված կլինեն խուճապահար մարդկանցով, վերեկաները կարող են անջատվել

ցանկացած պահի: Բացի դրանից, առաջին հերթին, սովորաբար, աստիճաններն ու սանդղակավանդակները փլվում են:

գ. Կարելի է կանգնել շենքի միջին մասի հիմնական կրող պատերի, նրանցով կազմված անկյունների, այդ իսկ պատերում դռան բացվածքների և հենապուների մոտ՝ զիսավերևում պահելով աթոռ, պայուսակ կամ այլ համապատասխան իր՝ վերևից թափվող ծեփակտորներից պաշտպանվելու համար: Կարելի է նաև մտնել տարածքում գտնվող մահճակալի կամ սեղանի տակ:

դ. Դատուհաններից և շենքի արտաքին պատերից հեռու մնացեք, դրանք փլվում են առաջին հերթին՝ փշրվող առարկաներից չվնասվելու համար:

ե. Զգուշացեք ծանր ու մեծածավալ առարկաներից՝ պահարաններից, սառնարաններից, որոնք կարող են տեղաշարժվել և շրջվել:

զ. Ցնցումների ավարտից հետո փորձեք դուրս գալ շենքից՝ նախապես որոշված ձանապարհով:

Է. Շենքից դուրս գալուց զգուշացեք ընկնող բեկորներից, կոտրատված ապակիներից, կտրված էլեկտրալարերից:

ը. Փլուզումներից առաջացած փոշուց կարող եք շնչահեղձ լինել: Այդ իսկ պատճառով շնչելիս օգտագործեք՝ թաշկինակ, զիսաշոր կամ հագուստից պոկված մի կտոր:

Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք փողոցում.

ա. Հեռացեք շենքից, կամուրջներից և էլեկտրասյուններից հեռու, դեպի անվտանգ տարածություն:

բ. Երբեք շենք չմտնեք այնտեղ գտնվողներին դուրս բերելու համար. դա շատ վտանգավոր է:

Մնացեք դրսում, միաժամանակ փնտրեք նրանց օգնելու տարբերակներ:

Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք ընթացող տրանսպորտում.

Երբ սկսվում է ուժեղ երկրաշարժ, վարորդի ձեռքից թռչում է դեկը: Տպակորությունն այնպիսին է, կարծես թողել է մեքենայի անիվը: Այդ ընթացքում, պետք է դանդաղեցնել ավտոմեքենայի ընթացքը և շարժվել ձանապարհի աջ կողմով, կանգ առնել համեմատաբար բաց տարածությունում՝ կամուրջներից, բարձրահարկերից և

Էլեկտրասյուներից հեռու: Մնացեք մեքենայում, հետևեք մեքենայի ռադիոընդունիչով տրվող տեղեկատվությանը և գործեք համաձայն դրա:

Բոլոր մեքենաների մուտքը դեպի աղետի գոտի խստիվ արգելվում է, բացի մասնագիտացված տեխնիկայից, փրկարարական ջոկատներից, իրշեց խմբերից և շտապօգնությունից:

Եթե արթնացել եք ստորգետնյա ցնցումներից.

ա. Ոչ մի դեպքում չօգտվեք էլեկտրականությունից, չօգտագործեք լուցկի կամ զազարիչ (զազատարը կարող է վնասված լինել):

Օգտվեք միայն գրավանի լապտերից:

բ. Հագնվելու վրա ժամանակ մի վատնեք, արագ վերցրեք ամենաանհրաժեշտ իրերով պայուսակը, գործեք բաժնի նախորդ կետերում նշված կանոնների համաձայն:

Ինչպես ս վարվել երկրաշարժից հետո

Ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, մարդկանց փրկելու համար անհրաժեշտ է գործադրել բոլոր ուժերը:

Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ օպերատիվ փրկարարական աշխատանքներն առավել արդյունավետ են երկրաշարժից հետո առաջին շաբաթվա ընթացքում, եթ ավելի հավանական է մարդկանց փրկության գաղափարը:

Սարդկանց փրկելը՝ աղետի գոտում գտնվող յուրաքանչյուր մարդու պարտքն է:

Օգտագործեք ձեռքի տակ եղած բոլոր միջոցները՝ ոչ մեծ փլատակներից մարդկանց հանելու համար:

Իսկ եթե ինքներդ գտնվում եք փլատակում, խուճապի մի՛ մատնվեք, այլ հանգիստ և սթափ գնահատեք իրավիճակը:



Չմտածված գործողությունները կարող են հանգեցնել նոր փլուզումների, եթե տարածությունը թույլ է տալիս՝ տեղափոխվեք ավելի անվտանգ տեղ:

Անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնություն ցույց տվեք նրանց:

ինքներդ ձեզ (դադարեցրեք արյունահոսությունը, վիրակապ դրեք): Եթե ձեզ հետ փլատակում կան ուրիշ մարդիկ, հանգստացրեք և առաջին բուժօգնություն ցույց տվեք նրանց:

Կապ հաստատեք (գոռացեք, հնչե՛ առարկաներով հարվածեք) դրսում և մոտակա փլատակներում գտնվողների հետ: Դա կօգնի փլատակներից ավելի հեշտ և ճիշտ ուղիներ որոնել՝ ձեզ և ուրիշներին փրկելու համար: Հնարավորության դեպքում փրկարարներին զգուշացրեք ձեզ սպառնացող վտանգի մասին:

Եթե առաջին երկու օրերի ընթացքում ձեզ չգտնեն, խուճապի մի՛ մատնվեք, խնայեք ձեր ուժերը, ավելորդ շարժումներ մի՛ արեք:

Եթե ձեր տրամադրության տակ կա սնունդ և հեղուկ՝ խնայողաբար օգտագործեք, բաժանելով առնվազն 15 օրվա: Մարդն առանց սննդի դիմանում է 15 օրից ավելի, իսկ առանց հեղուկի՝ 7 օր:

Եթե հեղուկ չունեք, իսկ վնասված ջրատար խողովակներից մոտակայքում հողը թաց է, ձեր հագուստից կտրեք մի կտոր և դրա միջով խմեք: Բերանում փոքր և ողորկ քար պահելը նույնպես մեղմացնում է ծարավի զգացումը:

Եթե մնացել եք փլատակում և հաստատ համոզված եք, որ կարող եք այնտեղից դուրս գալ, գործեք հետևյալ կերպ.

զգուշորեն սողանցք բացեք՝ խուսափելով տեղաշարժել իրար վրա կուտակված մեծ բեկորները. դա կարող է նոր փլուզման պատճառ դառնալ: Սողանցքն անպայման ամրացրեք հենարաններով (ամուր բեկորներ, ձողափայտեր, մետաղյա առարկաներ): Յուրաքանչյուր հետցնցումից հետո ուշադիր զննեք սողանցքի վիճակը:

Ավերիչ երկրաշարժերից հետո, առաջին օրերին կիսաքանդ և ավերված շենքում չի կարելի մնալ: Պետք է իմանալ, որ երկրաշարժն ուղեկցվում է հետցնցումներով, որոնք ցանկացած պահի կարող են շենքը հիմնովին քանդել:

Եթե երկրաշարժից հետո որոշել եք ապրել ձեր տանը, ապա.

- ցանկալի է այդպես վարվել մասնագետ շինարարի հաստատած եզրակացությունից հետո.
- ստուգեք՝ վնասված չե՞ն արդյոք պառարաններն ու ծիննելույզները, կրակ մի՛ վառեք մինչև ավերածությունների լիակատար վերացումը.
- ստուգե՛ք, կոյուղին գործո՞ւմ է, թե՞ ոչ.
- ուշադիր զննեք բնակարանը. արդյոք չե՞ն թափել վտանգավոր հեղուկներ (քիմոեակտիվներ, բենզին, նավթ).
- զգուշորեն բացեք պահարանների և խորդանոցների դռները, որպեսզի ծանր առարկաներ չընկնեն ձեզ վրա.

Հետևեք՝ արդյոք հետցնցումներից պատերի վրա չե՞ն առաջացել նոր ձեղութեա:

Հեռախոսը զբաղեցրեք միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝
911 զանգահարելու համար

ոստիկանություն զանգահարելու համար։ Հեռախոսային ցանցի գերբեռնվածությունը կիսափանի փրկարարական աշխատանքների նորմալ ընթացքը։

Երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով ձեռնարկվող միջոցառումներին տեղեկանալու համար հետևեք ռադիոյով և հեռուստացույցով տրվող պաշտոնական հաղորդագրություններին։ Աղետի գրտում (հատկապես ամռանը) խիստ հավանական է դառնում համաճարակի սպառնալիքը։ Այդ իսկ պատճառով շտապ կազմակերպէք զրիվածների թաղումը։ Անհրաժեշտ է հորել նաև սատկած անասուններին։ Եթե մարդկանց մեծ մասն ապրում է առանց տարրական կենցաղային հարմարությունների, անհրաժեշտ է խստրեն պահպանել սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության կանոնները։

Ուժեղ երկրաշարժերը միշտ ել ուղեցվում են զոհերով և ավերածություններով։ Թեև կատարյալ անվտանգությունն ապահովող կանոններ չկան, այնուամենայնիվ, վերոհիշյալ վարքականունների ճիշտ կիրառումը կօգնի նվազեցնել ձեզ և ձեր շրջապատին սպառնացող վտանգը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԳԱՑՎԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Երկրաշարժը կրկնվո՞ւմ է։ Հաճախակի կրկնվող երկրաշարժերը լավ են, թե վատ.

- Երկրաշարժերն ունեն կրկնվելու հատկություն։ Թույլ ցնցումները տեղի են ունենում հաճախակի։ Ոչ ուժեղ երկրաշարժերը երբեմն նպաստում են էներգիայի պարպմանը։

Կա՞ արդյոք ՀՀ տարածքում ուժեղ երկրաշարժերի տեղի ունենալու պարբերականություն.

- Չկա։ Ուժեղ երկրաշարժերի պարբերականության մասին կարելի է խոսել միայն սեսմաակտիվ մեծ տարածաշրջանների համար։ Փոքր տարածքների համար, ինչպիսին Հայաստանն է, այս հարցի դրվագը կոռեկտ է։

Հնարավո՞ր է արդյոք կանխատեսել ուժեղ երկրաշարժը.

- Հիմնախնդիրը դեռևս լրածված չէ: Այս ուղղությամբ գիտակիրառական աշխատանքներ են տարփում աշխարհի լավագույն սեյսմոլոգիական կենտրոններում, այդ թվում և ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայությունում: ԱԻՆ-ը մեծ ուշադրություն է դարձնում Ազգային սեյսմիկ բազմապարամետրային մշտադիտարկման դիտացանցի արդիականացմանն ու վերագինմանը: Կան կանխատեսման մի քանի հաջող փորձեր, սակայն շարդարացված կանխատեսումներն ավելի շատ են: Կարելի է ասել, որ երկրաշարժերի կարճաժամկետ կանխատեսումը դեռևս հավաստի և հուսալի չէ: Սակայն չի բացառվում ակնհայտ նախանշանների հիման վրա արված կարճաժամկետ կանխատեսումը:



Ի՞նչ առավելագույն ուժի երկրաշարժ կարող է տեղի ունենալ ՀՀ տարածքում.

- Հստ մասնագիտական գնահատումների, ՀՀ-ում հնարավոր երկրաշարժի առավելագույն մագնիտուդն ըստ Ռիխտերի սանդղակի կարող է հասնել միջև 7,5 միավորի, կամ 10 բալի: Այս ուժի երկրաշարժերը շատ քիչ են, և դրանք կարող են տեղի ունենալ միայն տարածաշրջանային ակտիվ բեկվածքների որոշ գոտիներում:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները զգու՞մ են մոտալուս երկրաշարժը.

- Կենդանական աշխարհի որոշ ներկայացուցիչներ զգում են մոտալուս երկրաշարժը, հատկապես կատուները, ձկները, շները, առնետները, օձերը և այլն: Սակայն սա զանգվածային բնույթ պիտի կրի, որ համարվի երկաշարժի նախանշան:

Այսօրվա վիճակով ճիշտ է գնահատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգը.

- Սպիտակի 1988 թվականի Երկրաշարժից հետո կազմվեցին ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի կամ, նույնն է, սեյսմիկ շրջանացման միքանիք բարտեզներ, որոնցով հանրապետության գրեթե ողջ տարածքում սեյսմիկ վտանգի մակարդակը բարձրացավ միջինը 1, իսկ որոշ տեղերում 2-3 բալով: Այսօր վտանգի ամենացածր մակարդակը գնահատվում է 8 բալ, իսկ ամենաբարձրը՝ 9-10 բալ: Մեր կարծիքով, այսպիսի գնահատումն իրական վտանգին շատ ավելի մոտ է:

Ինչո՞ւ է պայմանավորված ՀՀ տարածքի երկրաշարժերի առաջացումը.

- Երկրագնդի սալերի տեկտոնիկայի հայտնի սխեմայի համաձայն, Կովկասը, այդ թվում և ՀՀ տարածքը, գտնվում են Արարական և Եվրասիական սալերի բախման գրտում: Այսինքն՝ Արարական սալը տարեկան միջին 2 ամ արագությամբ շարժվում է դեպի հյուսիս-հյուսիս-արևելք, իսկ Եվրասիական սալը համարվում է անշարժ: Երահետևանքով Կովկասը «ձգմվում» է, տեղի է ունենում երկրակելուում տեկտոնական լարումների կուտակում, որն ի վերջո հանգեցնում է բլոկերի կտրուկ տեղաշարժերի, կամ՝ երկրաշարժերի: Քանի որ սալերի նշված տեղաշարժերը տևում են միլիոնավոր տարիներ, հետևաբար մեր հանրապետության տարածքում ևս ապագայում կլինեն ուժեղ երկրաշարժեր:

Ուժեղ երկրաշարժի ժամանակ Հայկական աստոմակայանը քանի՞ բալի կղիմանա.

- Աստոմակայանը պատկանում է հասուրական նշանակության օբյեկտների թվին: Այն գտնվում է թե՛ տեղական և թե՛ արտասահմանյան մասնագետների հսկողության տակ: Այն ՀՀ ներկայիս սեյսմակայուն կառույցներից մեկն է և նախատեսված է 9 բալ ուժգնության երկրաշարժի համար:

Սպիտակի երկրաշարժը բնական ծագման երկրաշարժ էր, թէ՞ ոչ.

- Սպիտակի երկրաշարժը միանշանակ բնական երկրաշարժ էր: Երկրաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ օջախում անցյալում ևս եղել են երկրաշարժեր: Երկրաշարժի ժամանակ անցատվել է 1016 Զոռու էներգիա, որը համարժեք է Հիրոսիմայի վրա նետված հարյուր ատոմային ռումբի միաժամանակյա պայթյունից անշատված էներգիային: Երկրաշարժի հիպրլենտրոնը գտնվել էր 10-12 կմ խորության վրա. այդպիսի խորության հորատման միջոցով մարդկությունն առ այսօր հասել է միայն մի կետում՝ Կոլա թերակղզում, 10-ից ավելի տարիների հորատման ընթացքում: Սպիտակի երկրաշարժը լավ ուսումնասիրված դասական երկրաշարժ է՝ նախացնումներով, հիմնական ցնցումներով և հետցնցումներով:

Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևանում կամ նրա որևէ քաղամասում ի՞նչ ավերածություններ կարող են լինել.

- Մինչև 1990-ական թվականները կառուցված ՀՀ շենք-շինությունները չեն համապատասխանում տարածքի սեյսմիկ վտանգի մակարդակին (նախագծվել են ցածր վտանգի հաշվառումով, ցածր էր շինարարության որակը, շենքերի զգալի մասը հատել է շահագործման ժամկետը և այլն), հետևաբար՝ խոցելի են: Սպիտակի երկրաշարժը ցույց տվեց, որ խոշորապանելային և շրջանակակապային համակարգով (Բադայանի նախագծով) կառուցված բազմահարկ շենքերն իրենց դրսնորել են որպես բավականին հուսալի և սեյսմակայուն, իսկ կարկասապանելային (111 սերիայի) և հարկերի բարձրացման եղանակով կառուցված շենքերը, հակառակը, բարձր խոցելի են:

Երևանում կարելի՞ է կառուցել բազմահարկ շենքեր.

- Երևան քաղաքում և ՀՀ-ում կարելի է կառուցել բարձրահարկ շենքեր, եթե հաշվի են առնված տվյալ տարածքի երկրաբանական առանձնահատկությունները, գրունտային բավարար պայմանները և սեյսմակայուն

սեյսմակայուն	շինարարության	բոլոր
--------------	---------------	-------

նորմերը:


Որքանո՞վ են ՀՀ բնակավայրերը պաշտպանված ուժեղ երկրաշարժի բացասական

- Ուժեղ երկրաշարժի բացասական հետևանքների նվազեցման նպատակով ՀՀ կառավարությունը 1991 թվականին մշակել է ռազմավարություն, 1999 թվականին հավանություն է տվել սեյսմիկ ռիսկի նվազեցման երկու համալիր ծրագրերի՝ ՀՀ տարածքի և Երևանի տարածքի համար: 2002 թվականին ընդունվել է ԱՊՀ երկրներում արաջին «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: 2010 թվականին ընդունվել է Հայաստանի սեյսմիկ անվտանգության ապահովման հայեցակարգ և նույն թվականին նրա դրույթների կատարումն ապահովող միջոցառումների ցանկ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, այլ գերատեսչությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ, իրականացնում է ՀՀ տարածքի սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներ:

Որո՞նք են ՀՀ-ում ուժեղ երկրաշարժերից շենքերի մեծամասշտար ավերումների հիմնական պատճառները.

- Մինչև 1989 թվականը կառուցված շենքերն ու կառույցները սեյսմիկ տեսակետից ավելի խոցելի են մի քանի պատճառներով: Նախ, դրանք նախագծվել ու կառուցվել են հիմնականում սեյսմիկ վտանգի ցածր մակարդակի հաշվառումով, ապա շինարարության որակը ցածր է եղել, սեյսմակայուն շինարարության նորմերի պահանջները այնքան ել խիստ չեն, որոշակի քանակով շենքերի շահագործման ժամկետն անցել է, և վերջապես թույլ են տրվել սիսալներ շենքերի շահագործման ժամանակ: Սա հանգեցրել է շենքերի և կառույցների սեյսմակայունության նվազեցմանը: 1989 թվականից հետո կառուցված շենքերի սեյսմակայունությունն անհամեմատ ավելի բարձր է:



Ինչպե՞ս կարելի է ապահովել նոր կառուցվող քնակելի շենքերի սեյսմակայունությունը.

- Նախ պետք է մանրամասն ուսումնասիրել կառուցվող շենքի շինհրապարակի ինժեներա-երկրաբանական և սեյսմիկ պայմանները, որոնց հիման վրա և ենելով սեյսմակայուն շինհրաբության գործող նորմերից՝ նախազգծվում է շենքը: Շենքի նախազիճը պարտադիր պետք է անցնի մասնագիտական փորձաքննություն: Շինհրաբությունն իրականացնողը և որակի հսկողը պետք է ունենան համապատասխան լիցենզիաներ: Պետք է արգելվի ցանկացած շեղում հաստատված նախազիճը: Շենքը շահագործելիս անհրաժեշտ է պահպանել մշակված կանոնները, և այլն: Այս դեպքում շենքի սեյսմակայունությունը կլինի բարձր:

Ո՞րն է երկրի սեյսմիկ անվտանգության ապահովման զինակողությունը և ուղղությունը.

- Հիմնախնդրի լուծման համար պարտադիր է կատարել հետևյալ քայլերը. հուսալի գնահատել տարածքների սեյսմիկ վտանգը, գնահատել շենքերի և կառուցվողների սեյսմիկ խոցելիությունը, ապա և տարածքների սեյսմիկ ռիսկը, վերջապես՝ իրականացնել պլանավորված գործողություններ սեյսմիկ ռիսկի նվազեցման համար: Վերջին խնդիրը՝ ռիսկի նվազեցումը, բարդ, մեծ նյութական միջոցներ և ժամանակ պահանջող գործընթաց է:

Ուժեղ երկրաշարժից հետո սույն վերադառնամ, թե՞ ոչ.

- Ուժեղ երկրաշարժից հետո, եթե դուք գտնվում եք դրսում կամ դրւու եք եկել բնակարանից, պետք չէ անմիջապես վերադառնալ շենք: Անհրաժեշտ է գնալ բաց տարածություն և սպասել պաշտոնական հայտարարությանը:

Ի՞նչ պետք է անել ցնցումների ժամանակ, և ո՞րն է քնակարանի ամենաանվտանգ տեղը.

- Եթե տեղի են ունենում ցնցումներ և դուք գտնվում եք շենքի 1-3

հարկերում, պետք է արագ դուրս գալ շենքից: Իսկ եթե զտնվում եք ավելի բարձր հարկերում, պետք է կանգնել հիմնական կրող պատերից կազմված անլյուններում, դրանցում զսնվող դրան բացվածքներում, կրող այուների մոտ, արտաքին պատերից և պատուհաններից հեռու:

Չրհեղեղներ

Տարերային աղետների մեջ ավելի հաճախ դիտվում են ջրհեղեղները: Չրհեղեղները բնության ուժերի գործողության հետևանքով ցամաքի զգալի մասի ժամանակավոր ջրածածկումներ են: Չրհեղեղները տարերային աղետների մյուս տեսակներից տարբերվում են այն բանով, որ որոշ չափով կանխատեսելի են: Դա հենարավորություն է տալիս շատ դեպքերում վաղօրոք որոշել ջրհեղեղի ժամը, բնույթը և մասշտաբները:

Չրհեղեղի հիմնական պատճառներն են՝ տեղատարափ, երկարատև անձրևները, ձնհալը, պատվարների ու ամբարտակների ձեղքվածքները, փլուզումները, սողանքները, այլ բնական երևույթները: Հայատանի Հանրապետության տարածքում նյութական մեծ վնասներով ու ավերածություններով ջրհեղեղները հազվադեպ չեն: Աղետայի ջրհեղեղներ են եղել 1936, 1938, 1946, 1951, 1953, 1956, 1963 և 1968 թթ.: Մասնավորապես հսկայական ավերածություններ առաջացրին 1956 թ. օգոստոսին տեղացած հորդ անձրևի հետևանքով Ողջի և Գեղի գետերի վարարումներից առաջացած ջրհեղեղները: Չրհեղեղը վնասում է արյունաբերական և զյուղատնտեսական օբյեկտները, աճեցրած բերքով դաշտերը, քայրայում է շենքերը, հիլլրոտեխնիկական կառույցներն ու հաղորդակցութինները, փշացնում ձեռնարկությունների սարքավորումները:



Միջին և խոշոր ջրհեղեղների առաջին ժամերին սովորաբար խախտվում է հաղորդակցությունը բնակավայրերում ու դրանց միջև:

Էլեկտրամատակարարումն ու կապը, որպէս կանոն, առաջին ժամվաընթացքում շաբթից դրւու են գալիս: Պաշտպանական պատվարներում ու ամբարտակներում, դրանց ջրով գերլցման և ջրի երկարատև ներգործության հետևանքով, կարող են առաջանալ ճեղքվածքներ ու թողանցքեր, ինչը սպառնում է աղետալի ջրածածկման գոտու ստեղծման:

Խոշոր ու աղետալի ջրհեղեղների դեպքում ջրի հոսանքներն արմատախիլ են անում ծառեր, քշում քարե պատնեշներ, ոչ մեծ տներ, շրջում տրանսպորտային միջոցներ: Ջրհեղեղները վտանգավոր են նաև այն բանով, որ շենքերն ու կառույցները կորցնում են իրենց ամրությունը: Փայտյա շինությունները սկսում են փուել, մետաղական կառույցները ժանգոտում են:

Աղետները թվերով

1973-1997 թթ. ամբողջ աշխարհում ջրհեղեղներից տուժել է մոտ 66 միլիոն մարդ:

Վարարում, գետավարարում

Չյան արագ հալոցքի կամ ուժեղ անձրևի հետևանքով գետում ջրի մակարդակի կտրուկ բարձրացում, որը հաճախ ուղեկցվում է հեղեղմամբ:

Հայաստանի գետերը Հարավային Կովկասի խոշոր գետերի՝ Արաքսի և Քուրի վտակներն են: Հայաստանի տարածքով հոսում են շուրջ 9500 փոքր և միջին գետեր, որոնց ընդհանուր երկարությունը շուրջ 25 հազ. կմ է: Ամենաերկար գետերն են Արաքսը (1072 կմ), Որոտանը (179 կմ), Դեբեդը (178 կմ), Հրազդանը (146 կմ): Գետային ցանցի խտությունը երկրի տարածքում փոփոխվում է շատ մեծ միջակայքում՝ 0-2,5 կմ/կմ²: Հայաստանի գետերին բնորոշ է նաև հոսքի բաշխման մեծ անհամաշափություն՝ ինչպէս տարեկան, այնպէս էլ բազմամյա կտրվածքով:

Հանրապետության գետերում սովորաբար գարնանային վարարումները սկսվում են մարտի երկրորդ կեսից և շարունակվում են մինչև հունիս, երբեմն էլ մինչև հուլիս: Վարարումների միջին տևողությունը 80-120 օր է, առավելագույնը՝ 150 օր, նվազագույնը՝ 60 օր: Հանրապետության տարածքում ձևավորվող միջին տարեկան

հաշվով շուրջ 6,859 մլն մ³ ջրից 58%-ը հոսում է գարնանային ամիսներին:

Հանրապետության տարածքում ամենամյա գարնանային հեղեղումներից առավելապես ջրածածկվում են և բնակչությունը նյութական մեծ վնասներ են կրում Հրազդան, Ախուրյան, Վեդի, Գալիսագետ, Աղսու, Դերեգ գետերի և Զաջու, Նարեկ սելավատարների ջրավազանների առափնյա բնակավայրերում:

Աղետները թվերով

Տարեկան միջինը 102 մլն մարդ տուժում է ջրհեղեղների, 37 մլն՝ փոքրիկների և շուրջ 366 000՝ սողանքների հետևանքով:

Սողանք

Սողանքն արտահայտվում է սարերի, բլուրների թեք լանջերում, գետահովիտներում: Այն զարգանում է տարբեր հողազանգվածներում, որոնք չունեն բնական կցորդում: Սողանքի առաջացման պատճառներն են՝ ջրով հագենալու հետևանքով գետնահողի բեռնվածության ավելացումը, փռուերի, իջվածքների, մակերեսային շերտերի տակ ջրակայուն կավի զանգվածի առկայությունը, երկրաշարժի և այլ ուժեղ պայթյունների հարուցած ցնցումները:



Սողանքներից տուժում են բնակելի և արյունաբերական կառույցները, տրանսպորտային հաղորդակցուղիները, էներգատարները, հանքերը և այլն: Օրինակ, ԱՄՆ-ում սողանքների հասցրած տարեկան վնասը կազմում է մոտ մեկ միլիարդ դոլար: Այս թիվը տարեցտարի աճելու միտում ունի: Մակայն այս աղետը չի բավարարվում միայն նյութական վնասներ պատճառելով: Նոյն ԱՄՆ-ում ամեն տարի սողանքնին զրի է գնում 25 մարդ, ինչը շատ ավելի է երկրաշարժերից զոհվածների թվից:

Ճապոնիայում այդ թիվը կազմում է բոլոր աղետներից գոհվածների 40-50 տոկոսը, սա այն դեպքում, եթե ճապոնական կողմները տարաբնույթ աղետների՝ երկրաշարժ, հրաբուխ, ջրհեղեղ ու փոթորիկ, մշտական թիրախ են:

Սողանքները լայն տարածում ունեն Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիներում, գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Արարատյան դաշտավայրի):

Հանրապետությունում առկա է շուրջ 3000 սողանքային տարածք, որից 2հա և ավելի մակերեսով սողանքային տեղամասերի թիվը, ըստ 2004-2006 թթ. ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության հետ համատեղ ուսումնասիրության տվյալների, կազմում է 2504: Ըստ որում՝ 960 համայնքներից սողանքներով վնասված են 233-ը, ավտոճանապարհներից ցանցի 7400 կմ-ից 240 կմ-ը շուրջ 280 սողանքով, երկաթգծերից ցանցի 870 կմ – ից 4,8-ը 10 սողանքով և այլն:

Մելավ

Մելավը կարձաժամկետ և բուռն ցեխային, երբեմն ցեխաքարային հեղեղ է, որը ձևավորվում է լեռնային գետերի ավազաններում՝ օժտված լինելով ավերիչ մեծ ուժով: Սովորական ժամանակ սելավահունը հաճախ միանգամայն չոր է լինում: Տեղատարափ անձրևների ժամանակ լցվում է ջրով, որը սարալանջերի թեքության շնորհիվ սրբնթաց վար է խոյանում և քշում-տանում հսկայական քանակությամբ բեկորային նյութ (հեղեղի ընդհանուր զանգվածի մինչև 75 տոկոս): Մելավները հաճախ հանգեցնում են աղետալի հետևանքների, ավերում են գյուղեր ու ճանապարհներ, ծածկում դաշտեր ու այգիներ: Մելավային հեղեղների դեմ պայքարը կազմակերպվում է արգելափակող պատվարներ կանգնեցնելով, հոսքը սպառնալի վայրերից շեղելով և ջրահոսքի ավազանը անտառապատելով: Հայաստանում ամեն տարի դիտվում են սելավներ: Տարածքի մոտ 65 տոկոսը պարբերաբար տուժում է այս վտանգավոր երկրաբանական երևույթից:

Կարկուտ

Մթնոլորտային տեղումներ, որոնք գալիս են տարվա տաք ժամանակաշրջանում 5 մմ մինչև 15 մմ (20 մմ-ից ավելի դեպքում՝

խոշոր կարկուտ) տրամագծով խիտ սառցամասնիկների տեսքով, սովորաբար տեղատարափի հետ համատեղ ամպրոպի ժամանակ:



Հայաստանի Հանրապետությունը համարվում է կարկտավտանգավոր տարածք: Տարեկան միջին կարկտահարության օրերի թիվը 80-90 օր է (մայիս-հունիս-հուլիս), սակայն եղել են տարիներ մինչև 100 օր տևողությամբ (ապրիլ-սեպտեմբեր), իսկ երբեմն պատահում են նաև մարտ, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին: Կարկտահարությունը հիմնականում դիտվում է օրվա 2-րդ կեսին, սակայն հնարավոր է նաև գիշերային և առավոտյան ժամերին:

Հիմնականում ուժեղ կարկտային երևոյթներ դիտվում են Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Կոտայքի մարզերում, իսկ Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում ունենում է համեմատաբար թույլ դրսնորում:

Աղետները թվերով Ուժեղ կարկտահարություններ

Հիմալայները երկար են պահել «Կմախքների լճի» մութ գաղտնիքը:

1942թ. հյուսիսային Հնդկաստանում գտնվող լեռնային լճի մոտ հայտնաբերվեցին 9-րդ դարով թվագրվող հարյուրավոր մարդկանց կմախքներ: Նրանք բոլորը գրիվել էին միաժամանակ: Սակայն մինչև 2007 թ. գիտնականներին չեր հաջողվում տալ նրանց խորհրդավոր մահվան բացատրությունը: Բոլոր մարմինների վրա նույն վերքերն էին՝ զանգերի խոր ձարեր: Գիտնականները գտան ապշեցուցիչ բացատրություն՝ նրանց բոլորի մահվան պատճառը կրիկետի զնդակի չափի կարկտահատերի հարվածներն էին:

Կարկտահատերի տրամագիծը սովորաբար կազմում է 5-15 մմ: Արտակարգ դեպքերում դրանք կարող են լինել թենիսի կամ բեյսբոլի զնդակի կամ թուրինջի չափերի: Վերջին մեծ կարկտահարությունը տեղի ունեցավ Գերմանիայում 2013թ. հուլիսին: Թենիսի զնդակի չափի կարկտահատերի հարվածներից կոտրվեցին պատուհաններն ու տանիքները, վնասվեցին հազարավոր ավոռութենաններ, պատճառվեց 600 մլն եվրոյի վնաս: Տուժածներին հարկ եղավ զլիս վնասվածքներով տեղափոխել հիվանդանոց:

ԱՄՆ պատմության մեջ երբեմ արձանագրված ամենաուժեղ կարկտահատերը, որոնց տրամագիծը կազմում էր 20 սմ, իսկ քաշը՝ 900 գրամ, տեղացին 2010 թ. հուլիսին: Շատ հավանական է, որ «Կմախքների լճում» հայտնաբերված կմախքների մարդկանց վրա տեղացել էին նման չափի կարկտահատեր:

Կայծակ

Կայծակը (շանթ) բնական էլեկտրական էրևույթ է, որն առաջանում է ամպրոպային ամպերում: Այն ուղեկցվում է կուրացուցիչ ֆայլատակումով և ուժեղ ձայնով՝ որոտով: Որոտն առաջանում է, եթե օդին ակնթարթորեն ընդարձակվում է և սառչելով՝ սեղմվում: Կայծակի ժամանակ ջերմաստիճանը հասնում է 25-30 հազար աստիճանի: Կայծակն ու որոտը միասին կոչվում են ամպրոպ: Ամպրոպին բնորոշ են նաև ուժեղ քամին, հորդառատ անձրևը, երբեմն կարկուտը:



Ամպրոպը շատ գեղեցիկ քնական էրևույթ է: Որպես կանոն, ամպրոպից հետո եղանակը լավանում է, օդը դառնում ավելի թափանցիկ, թարմ ու մաքուր: Սակայն չպետք է մոռանալ, որ ամպրոպը նաև մեծ վտանգ է ներկայացնում մարդկանց համար: Ուստի պետք է իմանալ և՝ ամպրոպի առաջացման, և՝ ամպրոպի ժամանակ գործելու ու կայծակից պաշտպանվելու մասին:

Հին ժամանակներում, չհասկանալով ամպրոպի ծագումը, տեսնելով, թե ինչպես է կայծակը սփռում հրդեհ ու մահ, այն կապում էին աստվածների զայրույթի և իրենց կատարած մեղքերի համար Աստծո պատժի հետ: Սակայն իիմա էլ, եթե պատճառները հայտնի են, ուժեղ ամպրոպների ժամանակ մարդկանց էլի պատում է ինչ-որ անհասկանալի տագնապ:

Ամպրոպներն առաջանում են կույտավոր-անձրևաբեր ամպերում: Այդ ամպերն առաջանում են այսպես. լեռներում եղանակը կտրուկ փոփոխվում է, գոլորշիներով հարուստ տաք օդը վեր բարձրանալով խառնվում է վերին սառը շերտերին, սառչում և սեղմվում: Առաջանում են ամպրոպային (կույտավոր-անձրևաբեր) ամպեր, որոնց մեջ կան մեծ քանակությամբ ջրի կաթիլներ ու սառցե բյուրեղներ: Մրանք միմյանց շփվելով էլեկտրականանում են, և զարգանում է կայծակ:

Կայծակը կարող է առաջանալ ինչպես ամպրոպային ամպերի, այնպես էլ այդ ամպերի և երկրի մակերևույթի միջև: Ընդ որում՝ երկու ամպերի միջև կայծակի երկարությունը կարող է հասնել մինչև 50 կմ, իսկ կայծակի երկարությունը ամպերի և երկրի միջև հազվադեպ է գերազանցում 2-3 կմ: Կայծակի լայնությունը չի գերազանցում 60 սմ: Կայծակի հոսանքի լարվածությունը հասնում է մինչև 50 միլիոն վոլտի, իսկ հոսանքի ուժը՝ 200 հազար ամպերի: Համեմատելու համար իմացեք, որ տանն օգտագործվող հոսանքի լարվածությունը 220 վոլտ է, իսկ հոսանքի ուժը՝ 6 ամպեր:

Լեռնային փլուզում

Լեռնային փլուզումը տեղի է ունենում ծանրության ուժի ազդեցության տակ՝ տարբեր պատճառներից. շերմաստիճանի կտրուկ փոփոխությունների ազդեցությունից, սառչելիս ջրի ընդարձակումից, երկրաշարժի ժամանակ:

Քարաթափում

Բեկորների կուտակում, որն առաջանում է լեռնային ապարների հողմահարման ու քայքայման ժամանակ՝ լեռների ստորոտներում ու լանջերի վրա: Սովորաբար քարաթափումները ծածկում են լեռնալանջերի ստորին, երբեմն էլ՝ միջին մասը:

ՀՀ տարածքում քարաթափերը մշտապես վտանգ են սպառնում դրանց տարածման գոտիներում գտնվող հիմնականում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, երկաթզգի անհիափան ու անվտանգ շահագործմանը, հասարակական, արտադրական շենքերին շինություններին, բնակավայրերի առանձին թաղամասերի բնակելի տներին: Հանրապետության 45 համայնքներում քարաթափերի ազդեցության վտանգավոր գոտում են գտնվում 706 անհատական և 6 քաղմաքանակարան շենքեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 125403 քառ. մետր, որոնցում բնակվում է 4040 բնակիչ:

Զնահյուս

Չյան ինտենսիվ հալոցքի կամ ուժեղ անձրևների հետևանքով (գարնանն ու աշնանը) լեռնային բարձունքների թեք լանջերից ձյան մեծ զանգվածակույտի զահավիժում, որը երբեմն հասնում է բնակելի հարթավայրերին և սպառնում բնակչության կյանքին ու առողջությանը, վնաս պատճառում տնտեսության օբյեկտներին, շրջակա բնական միջավայրին:

Հայաստանում ձնահյուսերի տարածման շրջաններն են Բագումի, Փամբակի, Վարդենիսի, Զանգեզուրի լեռնաշղթաների վերին հոսանքները: Ձնահյուսերի շարժման պատճառ են դառնում ձյան առատ տեղումները (50 տոլկո), փետրվար-ապրիլ ամիսների ձնահոսքերը (22,4 տոլկո), ձնաբուքերը (11,8 տոլկո), շերմաստիճանի կտրուկ անկումները (9,4 տոլկո) և անձրևները (6,4 տոլկո): Ձնահյուսերի հետևանքով լրջորեն վնասվում են էլեկտրահաղորդման գծերը, լեռնանցքային ճանապարհները և այլն:

Աբրազիա

Աբրազիա (լատիներեն՝ abrasion -քերում). ծովի կամ լճի, մեծ ջրամբարների ալերախության հետևանքով ափաքերում, ողողահարում:

Փոշեկորթորիկ

Փոշեկորթորիկն ուժեղ քամու հետևանքով գետնահողից (գրունտից) փոշու կամ ավազի տեղափոխումն է: Տարածված է հողն ուժեղ վարած վայրերում, ավագութ ու լոսային (դեղնահողային) և այլ անապատներում: Հերկած տարածքներում առաջանում է կուլտուրական մշակաբույսերի արմատների մերկացում: Փոշեկորթորիկի դեմ պայքարի լավագույն եղանակն անտառաշերտերի ստեղծումն է և ձիշտ ազրոտեխնիկան:

Փոթորիկ

Անսովոր ուժի (արագությունը մինչև 30-50 մետր/վայրկյան) քամի: Ծովում փոթորիկն առաջանում է ծովամբրիկ, որը երբեմն ուղեկցվում է պտտահողմով: Իր կործանարար ներգործությամբ փոթորիկը չի զիջում այնպիսի տարերային աղետին, ինչպիսին երկրաշարժն է: Փոթորիկի հետևանքով մարդիկ զոհվում են, ստանում տարբեր ծանրության վնասվածքներ: Փոթորիկը վնասում է ամուր և քանդում թերև շինությունները, կտրում կապի ու էլեկտրահաղորդման լարերը, ամայացնում դաշտերը, կոտրում և արմատախիլ անում ծառերը:

Մրրիկ

Հատ ուժեղ (արագությունը՝ վայրկյանում 20 մետր) և տևական քամի, որն առաջանում է մեծ ավերածություններ. վնասվում են կապի և էլեկտրահաղորդման գծերը, խախտվում է տրանսպորտի աշխատանքը, լճերում ու ջրամբարներում առաջանում են ալիքներ: Մրրիկին բնորոշ են ավելի փոքր, քան փոթորիկի ժամանակ, վնասներն ու ավերածությունները, սակայն տարերային այս աղետը լուրջ վտանգ է պարունակում:

Հայկական լեռնաշխարհում ուժեղ քամիների ուղղությունները բավական տարատեսակ են: Հանրապետության հյուսիս-արևմտյան տարածքում գերակշռում են արևմտյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները, իսկ հարավում՝ արևմտյան:

Քամու հատուկ ուժիմ ունի Սևանա լիճը: Սևանի գողավորության հյուսիսում քամիների ուժեղացումը դիտվում է արևմտյան և նովյանիկ հյուսիսային քամիների դեպքում: Հյուսիսային քամիները, որոնք առաջանում են փոքր Սևանի վրա, Հրազդանի հովտով հասնում են մինչև Երևան և ունեն ուժեղ արտահայտված օրական ընթացք: Քամու ուժգությունը առավելագույն չափերի է հասնում ժամը 16-17-ն ընկած հատվածում:

Ուժեղ քամիներով օրերի առավելագույն քանակը կազմում է Սևանում՝ 57, Երևանում՝ 71, իսկ Միսիանի լեռնանցքում՝ 132:

Այն վայրերում, որտեղ զարգացած է օդի լեռնահովտային շրջանառությունը, ուժեղ քամիները դիտվում են հիմնականում ամռանը (Արարատյան հարբավայր և Արագածի հարավային լանջեր): Քամու ուժգությունը կախված է նրա տևողությունից: Տարվա ընթացքում ուժեղ քամիների ընդհանուր տևողությունը կազմում է Սևանում՝ 117 ժամ, Երևանում՝ 86 ժամ, իսկ Միսիանում՝ 41 ժամ:

Ուժեղ քամիները Հայաստանի Հանրապետության տարածքում հական երևույթ են և դրանց դեմ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ:

Պտտահողմ, մրրկասյուն (թաթառ)

Օդի մրրկային շարժում ձագարի կամ այն տեսքով: Առաջանում է օդի ուժեղ տաքացման ժամանակ բարձրացող հոսանքի շնորհիվ: Տեղաշարժվում է 5-20 մետր վայրկյան արագությամբ: Պտտահողմի ժամանակ օդը պտտվում է և միաժամանակ բարձրանում պարուրածն՝ գետնից վեր քաշելով փոշի, ջուր ու տարբեր առարկաներ: Իր գոյության ընթացքում, որ տևում է մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ, պտտահողմն անցնում է զգալի տարածություն՝ հարյուր մետրից մինչև մի քանի կիլոմետր: Օվկիանոսի վրա տեղի ունեցող մրրկասյունը կոչվում է տոռնադո (խպաներեն):

Փոքորկանը

Կարճ ժամանակով քամու կտրուկ, պոռթկուն ուժեղացում՝ ուղղության հանկարծակի փոփոխումով:

Երաշտ

Երաշտը օդերևութարանական և ազրողերևութարանական վտանգավոր երևույթ է: Երաշտն սկսվում է տարվա տար ժամանակ՝

ամռանը, երբ տեսական ժամանակամիջոցում անձրևներ չեն գալիս, բույսերի աճի շրջանում տեղումների քանակը կազմում է 200 միլիմետրից պակաս:

Հաճախ երաշտի նախադրյալները երեան են գալիս նախորդ տարում՝ դրսնորվելով աշնան և ձմռան անբավարար տեղումներով, օդի և հողի խոնավության սակավությամբ: Երաշտը, ուժեղ շոգը կարող են ունենալ աղետավի բնույթ, դարնալ հանրապետության որևէ մարզում կամ ամբողջությամբ վերցրած երկրում արտակարգ իրավիճակի աղբյուր: Երաշտի ժամանակ բնակչության լյանքը բարդանում է, զգալիորեն մեծանում է զանգվածային անտառային հրդեհների, մարդկանց շրջանում վարակիչ հիվանդությունների, կենդանիների հիվանդանալու, մշակաբույսերի ոչնչանալու վտանգը: 2000 թվականի ամռանը Հայաստանում աննախադեպ երաշտ էր:



Աղետները թվերով

1991-2000 թթ. աշխարհում երաշտների զոհ է դարձել ավելի քան 280 հազար մարդ, հասցված նյութական վնասը հասել է մի քանի տասնյակ միլիոն դոլարի:

Խորշակ

Խորշակը խիստ տաք և չոր, գլխավորապես հարավարեւյան քամի է, որ փշում է տարվա տաք ժամանակ: Ընդ որում՝ օդի ջերմաստիճանն անցնում է 50-60 աստիճանից: Խորշակը մեծ վնաս է պատճառում բուսականությանը:

Համաձարակներ

Արտակարգ իրավիճակների, այդ թվում՝ աղետալի բնույթի կացությունների առաջացման կարող է հանգեցնել ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդությունների տարածումը բնակչության, կենդանիների ու բույսերի շրջանում։ Կենդանիների մեջ համաձարակային հիվանդության տարածումը կռչվում է էպիզոտիա, իսկ բույսերի և զյուղատնտեսական մշակաբույսերի մեջ՝ էպիֆիտոտիա։

Վարակիչ են այն հիվանդությունները, որոնք ծագում են մարդու օրգանիզմի մեջ վարակի յուրահատուկ հարուցիչ ներթափանցելու հետևանքով։ Վարակիչ հիվանդություններին բնորոշ առանձնահատկություններն են վարակելիությունը, այսինքն՝ վարակի հարուցիչի փոխանցման ունակությունը հիվանդից առողջ, ընկալունակ օրգանիզմ, զարգացման փուլայնությունը (վարակում, ինկուբացիոն շրջան, հիվանդության ընթացք, առողջացում), օրգանիզմի առանձնահատուկ արձագանքները (մարմնի ջերմաստիճանի բարձրացում, իմունիտետի մշակում և այլն)։ Ընդունված է առավել վտանգավոր սուր հիվանդություններ համարել ժանտախտը, խոյերան, սիրիքյան խոցը, բնական ծաղիկը, տուլարևմիան (սուր տենդային հիվանդություն)։

Տեխնածին բնույթի վթարներ ու աղետներ

Վթարն արդյունաբերական օբյեկտում կամ տրանսպորտում տեղի ունեցող վտանգավոր պատահարն է, որը մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնալիք է ստեղծում, հանգեցնում է արտադրական շենքերի ու կառույցների ավերման, սարքավորումների, մեխանիզմների, տրանսպորտային միջոցների, հումքի ու պատրաստի արտադրանքի վնասման կամ ոչնչացման, արտադրական գործընթացի խախտման և շրջակա միջավայրի բնական վիճակի վատթարացման։ Աղետը որպերգական հետևանքներով իրադարձությունն է, մարդկային զոհերով մեծ վթարը։

Վթարի և աղետի միջև կտրուկ և խիստ ընդգծված սահման գրյություն չունի։ Գլխավոր չափանիշներն են՝ վնասի մասշտաբը և մարդկային զոհերի առկայությունը։ Օրինակ, եթե երկու-երեք մեքենաների քախման ժամանակ կան վնասվածքներ, թեև տուժել են մարդիկ, ապա դա վթար է, եթե պատահարի վայրում զոհեր կան՝ ավտոմոբիլային աղետ է։

Ճառագայթային (ռադիոցիոն) աղետներ

Ճառագայթային վթարներն ու աղետները կարող են տեղի ունենալ ճառագայթային վտանգավոր օբյեկտներում:

Ճառագայթային վտանգավոր օբյեկտ ասելով հասկացվում է ցանկացած օբյեկտ, այդ թվում՝ միջուկային ռեակտորը, գործարանը, որն օգտագործում է միջուկային վառելիք կամ վերամշակում միջուկային նյութ, ինչպես նաև միջուկային պահպանման տեղը և միջուկային նյութ փոխադրող տրանսպորտային միջոցը կամ իննացնող ճառագայթային աղբյուրը, որոնց վթարների ժամանակ կարող է տեղի ունենալ մարդկանց, զյուղատնտեսական կենդանիների, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի ճառագայթահարում կամ ճառագայթային աղտոտում:

Ճառագայթային վտանգավոր օբյեկտներում վթարները կարող են ուղեկցվել զազահերոգորային ամպի ելքով, որը տարածվում է քամու ուղղությամբ: Ռադիոակտիվ նյութերն ամպից նստելով տեղանքի վրա՝ աղտոտում են այն: Ընդ որում՝ ամպի տարածման գոտում հայտնված բնակչությունը ենթարկվում է ներքին ու արտաքին ռադիոակտիվ ճառագայթահարման:

Հայաստանի Հանրապետությունում ճառագայթային վտանգավոր օբյեկտ է ատոմային էլեկտրակայանը:

Քիմիական աղետներ

Քիմիական վտանգավոր օբյեկտներում ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով վթարների ու աղետների տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ այդ նյութերի բարձր խտության դեպքում մարդկանց ախտահարումը տեղի է ունենում կարճ ժամկետում:

Ուժեղ ներգործող թունավոր նյութ (ՈՒՆԹՆ) է կոչվում արտադրատնտեսական նպատակներով օգտագործվող վտանգավոր քիմիական նյութը, որի թափվելը գետնին, ջրի մեջ կամ տարածվելը մթնոլորտում՝ թույլատրելի խտությունը գերազանցող քանակությամբ, կարող է առաջացնել մարդկանց, զյուղատնտեսական կենդանիների ու բույսերի զանգվածային ոչնչացում:

Այսօր Հայաստանում աշխատում են քիմիական պոտենցիալ վտանգ պարունակող ձեռնարկություններ, օբյեկտներ: Դրանցից ե «Նախրիտ» ԳԱ ՊՓԲԸ, Վանաձորի քիմիական գործարանը, ամոնիակ օգտագործող

սառնարանային տնտեսությունները, հեղուկ գազի լիցքավորման կայանները և այլն:

Հրդեհներ և պայթյուններ

Արտադրական օբյեկտներում վթարները հաճախ հանգեցնում են հրդեհների: Ամենից առաջ հրդեհի ծագման անմիջական պատճառ են հանդիսանում միացումներն էլեկտրահաղորդական լուսակացնության վերաբերյալ և դրա պայթյունը, ջեռուցման համակարգերի, դյուրավառ հեղուկներով լցված տարողությունների անսարքությունը:



Որոշ դեպքերում հրդեհները կարող են աղետի բնույթ ստանալ և զգայի նյութական վնաս պատճառել մարդկանց, վնասվածքներ առաջացնել, իսկ երբեմն էլ՝ զոհվելու պատճառ դառնալ: Հրդեհի հետևանքները սաստկացնում են երկրորդական գործոնները՝ պայթյունները, թունավոր և աղտոտող նյութերի հոսակորուստը շրջակա միջավայր, կառուցվածքների փլուզումը և այլն: Հրդեհների ժամանակ անմիջական վտանգ են կրակն ու ծուխը, որոնք հանգեցնում են այրվածքների և թունավորումների, պայթյունի ալիքներն ու բեկորները: Բացի դրանից, մեծ վտանգ է ներկայացնում վնասակար նյութերով վարակվելը՝ վթարների ժամանակ դրանց տարածման հետևանքով:



Հատկապես վտանգավոր են պայթյուններն այն օբյեկտներում, որտեղ օգտագործվում են մեծ քանակությամբ ածխաջրածնային գազեր (մեթան, էթան, պրոպան): Պայթյուն են կաթսաներ, բենզինի և այլ բաղադրամասերի գոլորշիներ: Հնարավոր են պայթյուններ բնակելի տներում, եթե մարդիկ մոռանում են անջատել գազը:

Տրանսպորտային աղետներ

Տրանսպորտային վթարներն ու աղետները ստորաբաժանվում են ավտոմոբիլային, երկաթուղային, ավիացիոն և ծովային (գետային) տեսակների: Հատուկ խումբ են կազմում խողովականուղ տրանսպորտում տեղի ունեցող վթարները: Օղում և ջրում վթարները հաճախ են դառնում անձնակազմի, ուղևորների, վթարի շրջանում ապրող բնակչության և հենց տրանսպորտային միջոցների կործանման պատճառ, այն դեպքում, եթե ավտոմոբիլային կամ երկաթուղային վթարները միշտ չեն հանգեցնում աղետների:



Կենցաղային աղետներ

Մրանք մարդուն ուղեկցում են անմիջականորեն բնակության, աշխատանքի, հանգստի, բուժման վայրերում: Ավելի հաճախ պատահում են ինչպես բնակելի, այնպես էլ հասարարական շենքերի հրդեհներ, պայթյուններ, փլուզումներ: Առավել ողբերգական հետևանքներ են ունենում մարդկանց մեծ կուտակումների վայրերում տեղի ունեցող աղետները՝ թատրոններում, ակումբներում,

հյուրանոցներում, մարզադաշտերում, կայարաններում և այլուր: Այդ դեպքերում արտակարգ իրավիճակը սրվում է խուճապով, եթք սարսափով համակված մարդիկ ջանում են թողնել հասարակական շենքերը:

Սիներգետիկ գործընթացներ

Բնական աղետները հաճախ ունենում են սիներգետիկ բնույթ (հունարեն սիներգետիկոս՝ համաձայնեցված գործող): Այլ կերպ ասած, դա նշանակում է, որ մեկ բնական երևույթն առաջացնում է այլ երևույթների մի ամբողջ շղթա: Օրինակ, երկրաշարժը կարող է սողանքների, սելավների և վիլուգրումների, ծովերում ու օվկիանոսներում՝ ցունամիի պատճառ դառնալ, իսկ ջրածածկումները հարուցում են վիլուգահողերի նստումներ: Հաճախ ծագած բնական երևույթն իր ավերիչ ո-ժով չի զիշում իրեն հարուցած աղետին, իսկ մի շարք դեպքերում անգամ գերազանցում է դրան: Այսպես, 1920 թվականին Չինաստանի Կոնսու նահանգում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ զանգվածաբար ակտիվացան սողանքները, որոնց հետևանքով ավերվեցին տասնյակ գյուղեր և զոհվեց 100 հազար մարդ:

Բնական աղետների քանակի աճը՝ մի կողմից, Երկրագնդի վրա տեխնոլոգի խսության մեծացումը՝ մյուս, զգայիորեն բարձրացնում են այն բանի հավանականությունը, որ բնական աղետների ռիսկի գոտու մեջ կարող են հայտնվել բարդ ինժեներական կառույցներ՝ ատոմային էլեկտրակայաններ, քիմիական ձեռնարկություններ, նավթատարներ ու զազատարներ, ջրամբարների ամբարտակներ, վառելիքի և վնասակար նյութերի պահեստներ, տրանսպորտային համակարգեր և այլն: Ուրբանիզացված (քաղաքակենտրոնացված) տարածքներում արդյունաբերական օբյեկտների բարձր կենտրոնացման պատճառով գործնականում ցանկացած տարերային երևույթ ունակ է առաջացնելու մի շարք տեխնածին աղետներ՝ հրդեհներ, պայթյուններ, քիմիական նյութերի արտանետումներ և ողողումներ: Արդյունքում աղետի գոտում տնտեսական կորուստները կարող են էապես աճել, իսկ շրջակա միջավայրի վիճակը՝ կտրուկ վատթարանալ: Միներգետիկ աղետը վերացնելը շատ ավելի դժվար է, քան բնականը կամ տեխնածինը, քանի որ դրանցից որևէ մեկի դեմք ուղղված գործողություններն անհամարժեք են և՝ այս, և՝ մյուս աղետը միաժամանակ տեղի ունենալու դեպքում: Նոյնիսկ բարձր

տեխնոլոգիական ստանդարտներ և խիստ շինարարական պահանջներ կիրառող երկրներում բնական աղետների ժամանակ տեխնիկական վթարների կանխտմբը քիչ հավանական է համարվում։ Ասածի հավաստում կարող են լինել Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժերի օրինակները։ Նիազատում տեղի ունեցած երկրաշարժը (1964 թ. հունիս), որ տևեց ընդամենը 15 վայրկյան, քաղաքին հսկայական վնաս պատճառեց։ Շատ շենքեր ու շինություններ կորցրեցին կայունությունը և փլվեցին։ Բայց դրանով աղետը չափարտվեց, որովհետև սկսվեցին և գրեթե 3 օր մոլեգնեցին զանգվածային հրդեհներ նավահանգստում, որտեղ տեղավորված էին նավթավերամշակման ձեռնարկություններն ու նավթի պահեստարանները։ Դրանց մարումը դժվարացավ, քանի որ նավահանգիստ տանող ձանապարհները, կամուրջներն ու մերձատար ուղիները երկրաշարժն ավերել եր։ Դրա հետևանքով կրակը ոչնչացրեց ոչ միայն նավթարիմիայի օրիելտները, այլև ավելի քան 300 բնակելի շենք։ Ինչ-որ չափով նման իրավիճակ ստեղծվեց Կորե քաղաքում։ Այստեղ 350-ից ավելի հրդեհ ծագեց, որոնք ոչնչացրեցին երկրաշարժից փրկված շենքեր՝ քաղաքի խիտ բնակեցված ավելի քան 100 հեկտար տարածքի վրա։

Բայց տեխնիկական ու հեղողիական աղետների պատճառը միայն վտանգավոր բնական երևույթները չեն։ Գոյություն ունի նաև հետարած կապ, եթե տեխնիկական վթարները և շրջակա միջավայրի արհեստական փոփոխությունները հարուցում են բնական բնույթի աղետներ։ Հայտնի է, որ անտառահատումները նպաստում են սողանքային գործընթացների ակտիվացմանը, կտրուկ բարձրացնում ջրհեղեղների ու փոթորկային քամիների հավանականությունը և վտանգը։ Մթնոլորտում ածխաթթու գազի պարունակության ավելանալը (ջերմոցային էֆեկտ) կարող է հանգեցնել համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացման և ծովային ցածրադիր ափերի տարածների ջրածածկման։ Ամեիկյան գիտնականների հաշվումներով, եթե մթնոլորտում ածխաթթու գազի պարունակությունը կրկնապատկվի, ապա փոթորկային քամիների ավերիչ ուժը ամբողջ երկրագնդում կածի 40-50 տոկոսվ, իսկ Մերսիկական ծոցում՝ 60 տոկոսվ։

Միներգեկան երևույթների լայնորեն զարգացումը վկայում է բնական, տեխնածին և հեղողիական աղետների սերտ փոխգործողության մասին։ Այս փակ համակարգում վտանգի մի տեսակի ծագումն

արագացնում է մյուսների երևան զալը: Հետևաբար, այսօր առանձնահատուկ հրատապություն է ստանում անվտանգության միասնական տեսության և ապահովման գործնական մեթոդների, աղետալի երևոյթների կանխման ու վերացման նկատմամբ համալիր մոտեցման մշակման անհրաժեշտության հարցը:

Կլիմայի փոփոխությունը և կլիմայի ռիսկերի կառավարումը Հայաստանում

Կլիմայի գլոբալ փոփոխությունը և դրա բացասական հետևանքները մարդու բարեկեցության և տնտեսության զարգացման վրա հայտնվել են համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում: Այսօր արդեն կլիմայի փոփոխությունը ոչ միայն քնապահպանական խնդիր է, այլ նաև մեծ ազդեցություն ունի տնտեսության տարբեր ճյուղերի վրա և ընդհանուր առմամբ երկրի կայուն զարգացման վրա:

Բնական վտանգավոր երևոյթները ըստ էության չեն առաջացնում աղետներ, քանի դեռ չեն գուգակցվում հասարակության խոցելիության հետ: Այդ իմաստով կլիմայի փոփոխության ազդեցությունը աղետների վտանգների վրա հնարավոր է՝

. Վտանգավոր հիդրոթերևութաբանական և կլիմայական երևոյթների հնարավոր և սպասվող ավելացման:

. Վտանգավոր բնական երևոյթների նկատմամբ հասարակության խոցելիության աստիճանի բարձրացման հետևանքով:

Վերջինիս պատճառներից են էկոհամակարգերի դեգրադացիան, բնական պաշարների և ջրային ռեսուրսների նվազեցումը, պարենամբերքների, կյանքի համար անհրաժեշտ միջոցների պակասությունը և այլն:

Այսպիսով, կլիմայի փոփոխությունը լրացուցիչ բեռ է հանդիսանում աղետների վտանգներից հասարակության դիմադրողականության հնարավորությունների առումով:

Այդ պատճառով արդիական խնդիր է դարձել կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը տնտեսության և էկոհամակարգերի վրա, և այդ փոփոխություններին դիմակայելու համար հարմարվողականության ծրագրերի մշակումը:

Կլիմայի փոփոխությունը որոշակի տարածքի, շրջանի կամ ամբողջ մոլորակի եղանակային տևական փոփոխությունն է: Այդ փոփոխությունը չափվում է միջին եղանակային ցուցանիշների՝ ջերմաստիճանի, քամիների, տեղումների և այլնի, փոփոխություններով: Կլիմայի փոփոխությունը տեղի է ունենում այն դեպքում, եթե փոփոխվում է երկրի մթնոլորտի և մակերևույթի կողմից կլանված էներգիայի, ինչպես նաև արեգակի էներգիայի ընդհանուր քանակը:



Քանակը: Այն տեղի է ունենում նաև այն դեպքում, եթե փոփոխվում է երկրի մակերևույթից և մթնոլորտից դեպի տիեզերք անդրադարձվող և ձառագայթվող էներգիայի քանակը:

Երկիրն էներգիա է ուղարկում տիեզերք նույն չափով, որքան ստանում է արեգակից: Արեգակից ստացվող էներգիան երկիր է հասնում մեծ մասամբ կարծալիք ձառագայթման ձևով: Ձառագայթման մի մասն անդրադարձում է երկրի մակերևույթից և մթնոլորտից: Սակայն նրա մեծ մասն, այնուամենայնիվ, ուղղակիորեն անցնում է մթնոլորտի միջով և տարացնում երկրի մակերևույթը: Երկիրն այս էներգիայից ազատվում է (հետ է ուղարկում տիեզերք) երկրալիք ինֆրակարմիք ձառագայթման ձևով: Ինֆրակարմիք ձառագայթների մի մասն էլ իր հերթին կլանվում է մթնոլորտում պարունակվող ջրային գոլորշիների, ածխածնի երկօքսիդի և բնական այլ «ջերմոցային գազերի» կողմից: Փաստորեն վերջիններս արգելակում են երկրից էներգիային անմիջական անցումը տիեզերք: Դրա փոխարեն, բազմաթիվ այլ տարաբնույթ և փոխկապակցված պրոցեսներ (ձառագայթումը, օդային հոսանքները, գոլորշիացումը, ամպագոյացումը, անձրևը) այդ էներգիան տեղափոխում են մթնոլորտի վերին շերտեր, որտեղից էլ այն ձառագայթվում է տիեզերք:

Աղետները թվերով

- Կլիմայական աղետների տարեկան միջին քանակն անշեղորեն աճում է 1990-ականների 224-ից (վնասը՝ 50 մլրդ ԱՄՆ դոլար) 2000-2009 թթ. հասնելով 347-ի (72 մլրդ):
- 1991-2010 թթ. աշխարհում 14 000 արտակարգ եղանակային երևույթների հետևանքով մահացել է 710 000 մարդ, հասցվել է 2.3 տրին ԱՄՆ դոլարի վնաս:
- Կլիմայական աղետներից ամեն տարի տուժում է շուրջ 240 մլն մարդ: 2015 թ. թիվը կարող է աճել մինչև 375 մլն:

Զերմոցային գազերը

Մարդու գործունեության հետևանքով փոխվում է մթնոլորտը կազմող հիմնական չերմոցային գազերի (ԶԳ՝ ածխածնի երկօքսիդ, մեթան և ազոտի ենթօքսիդ հաշվեկշիռը: Զրային գոլորշիները ևս հիմնական չերմոցային գազեր են, սակայն մարդու գործունեության ուղղակի արդյունք չեն:

Վերջին ժամանակներում այս երեք գազերին ավելացել են նաև հիդրօֆտոռածխածինները (HFCS), պերֆոռածխածինները (PFCS) և հեքսաֆոռիդը (SF): Մթնոլորտում այդ գազերի արտանետումը փոփոխում է մթնոլորտի էներգիա կլանելու ունակությունը և բարձրացնում օդի ստորին շերտի չերմաստիճանը: Արդյունքում առաջանում է «ուժեղացված չերմոցային էֆեկտ», ինչն էլ հանգեցնում է գլոբալ տաքացման:

Մոլորակի կլիման երկրարանական պատմության ընթացքում փոխվել է բնական ձանապարհով արեգակնային փուլերով: Դիտարկումները ցույց են տալիս, որ մոլորակի մթնոլորտի տասնյամյակների փոփոխության պատճառը մարդու գործունեությունն է: Մարդը վառում է հանքային վառելիք էլեկտրաէներգիայի արտադրության, տները տաքացնելու, ավտոմեքենաներ վարելու համար՝ դրանով ավելի ու ավելի մեծացնելով ԶԳ-ի արտանետումները մթնոլորտ: Կլիմայական փոփոխությունը, հավանաբար, զգալի ազդեցություն կունենա մեր մոլորակի վրա: Ոքքան արագ է փոփոխվում կլիման, այնքան մեծ է վնասի չափը: ԶԳ-ի ապագա արտանետումների մակարդակը

կախված կլիմի աշխարհի բնակչության թվի, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական զարգացման միտումներից:

Կլիմայի բնական փոփոխության գործոններից է նաև օվկիանոսային հոսանքների փոփոխությունը: Կլիմայի վրա կարևոր մարդածին ներգործողները աերողոլներն են. առաջանում են ծծմբի երկօրսիդից, որը հիմնականում արտանետվում է ջերմակայաններից, անտառային հրդեհների ծխից ու գյուղատնտեսական թափոնների այրումից: Աերողոլները պահպանվում են մթնոլորտում ընդամենը մի քանի օր, սակայն դրանք արտանետվում են այնպիսի քանակությամբ, որ կլիմայի վրա թողնում են զգալի ազդեցություն:

Մարդու գործունեության հետևանքով առաջացող ածխածնի երկօրսիդի արտանետումներն առաջանում են անտառահատումներից, վառված կամ քայրայված ծառերից: Նույնիսկ եթե մարդու գործունեության հետևանքով առաջացող ածխածնի երկօրսիդի արտանետումների կեսը կլանվի օվկիանոսի և ցամաքի կողմից, միևնույն է, կանխարգելիչ միջոցառումների քացակայության դեպքում մթնոլորտում դրանց քանակար յուրաքանչյուր 20 տարին մեկ կշարունակի ավելանալ 100%-ով:

Հայաստանում ԶԳ-երի ընդհանուր արտանետումները 2000 թ. բազային (1990 թ.) նկատմամբ կրճատվել է 73 %-ով: Արտանետումների կրճատումը պայմանավորված է 1992-1995 թթ. էներգետիկ և տնտեսական ճգնաժամով, իսկ այնուհետև՝ տնտեսությունում նշանակալի տեղաշարժով՝ արդյունաբերության մասնաբաժնի նվազեցմամբ և ոչ արտադրական ոլորտի մասնաբաժնի ավելացմամբ:

Մեկ շնչի հաշվով ԶԳ-երի արտանետումները նվազել են 6.9 տ-ից (1990 թ.) մինչև 1.6 տ (2000 թ.) և 2 տ (2006 թ.):

Կլիմայի փոփոխությունը Հայաստանում և դրա կանխատեսումները (համաձայն Հայաստանի Հանրապետության կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրության)

Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄ, IPCC) կողմից պատրաստված գեկույցներում տրված է կլիմայի փոփոխության գիտականորեն հիմնավորված գնահատականները, որու մարդածին բնույթի ապացույցները և հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

Այնումանենայնիվ աշխարհում դիտվում է այդ երևոյթի էլ ավելի արագ աճ, էլ ավելի էքտրեմալ դրսորումներ:

Հայաստանի աշխարհագրական դիրքը և լեռնային բարդ ռեինֆը պայմանավորվում են բնական պայմանների և կլիմայի գրտիների բազմազանությունը՝ 6 կլիմայական գոտի, չոր մերձարևադարձայինից մինչև խիստ բարձր եռնային, մշտական ձյան և սարցե շերտերից մինչև տաք և խոնավ մերձարևադարձային անտառներ և խոնավ կիասանապատային տափաստաններ:

Հայաստանի կլիման չոր է, միջին տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 592 մմ է: Տեղումների բաշխվածությունը խիստ անհավասարաշափ է: Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում նկատվում է ջերմաստիճանի բարձրացում վերջին տասնամյակների ընթացքում: Վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85°C -ով և տեղումների նվազում $6\text{-}8\%$ -ով:

Զերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Տեղումների տարածքային բաշխման փոփոխությունները բավականին անկանոն են: Այդպես, երկրի հյուսիս-արևելյան և կենտրոնական (Արարատյան դաշտավայր) շրջաններն առավել չոր են, իսկ հարավային-արևմտյան հատվածներում և Սևանալ լճի ավագանում տեղումների քանակը վերջին 70 տարվա ընթացքում ավելացել է:

Բնական աղետների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարառություններից, սառը-տաք հոսանքներից, կարկտահարությունից, սելավներից, սողանքներից, ուժեղ քամիներից, մառախոտից և անտառային հրդեհներից, որոնց ուժգնությունը և հաճախականությունը վերջին տարիներին աճել է:



**Կլիմայի փոփոխության
Շրջանառության ընդհանուր
արդյունքները**

Հայաստանում կլիմայի փոփոխության տարրեր սցենարներով կատարված հաշվարկների համաձայն 2030, 2070, 2100 թթ. կտրվածքով նախատեսվում են ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես գարնան ու ամռան ամիսներին: Ջերմաստիճանի աճն ավելի զգալի կլիմի Հայաստանի արևմտյան և կենտրոնական շրջաններում (Արարատյան դաշտավայր)՝ 1.1°C մինչև 2030 թ., 2.7°C մինչև 2070 թ., 4.4°C մինչը 2100 թ.:

Հայաստանում զլորար տաքացման հետևանքով սպասվելու է տեղումների հական շեղումներ կլիմայական նորմերի նկատմամբ: Ամռանը տեղումները խիստ նվազում են: Տարվա այլ եղանակներին տեղումների տատանումների բաշխվածության պատկերներն իրար նման են, սակայն ունեն բացարձակ արժեքների որոշակի տարբերություններ: Տեղումների առավելագույն փոփոխությունը սպասվում է գարնանը: Հայաստանում տեղումների փոփոխությունը տարբեր շրջաններում տարբեր է: Այն նվազելու է Արարատյան հարթավայրում, աճելու նախալեռներում, լեռներում և Սևանա լճի ավագանի արևմտյան մասում: Լեռնային շրջաններում (Արագած, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթա, Սյունիքի նախալեռներ) սպասվում է տեղումների աճ ներկայիս համեմատ, իսկ հարթավայրերում սպասվում է տեղումների քանակության կտրուկ նվազում: Հատ տեղումների կանխատեսման այս արդյունքները հուշում են, որ Հայաստանը տեղական մակարդակով ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կառավարման բնագավառում պետք է ձեռնարկի մի շարք մեջմացման և հարմարվողականության միջոցառումներ: Կլիմայի կանխատեսվող փոփոխության հետևանքով Հայաստանի տարածքի գումարային գետային հոսքը մինչև 2030 թ. կնվազի $6.7\%-ով$, մինչև 2070 թ.՝ $14.4\%-ով$, մինչև 2100 թ.՝ $24.4\%-ով$ (1961-1990 թթ. համեմատ): Զյան տեսքով տեղումները կնվազեն $7\%-11\%$ մինչև 2030 թ., $16\%-20\%$ մինչև 2070 թ. և $20\%-40\%$ մինչև 2100 թ.:

Կլիմայի փոփոխության սցենարների համաձայն 2030 թ. կանխատեսվում է զյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության անկում $8\%-14\%-ով$, արոտավայրերի ընդհանուր մակերեսի և նրաց բերքատվության կրծատում $4\%-10\%-ով$, ենթալպյան և

ալպյան գոտու առավել արժեքավոր արատավայրերի կրծատում 19-22 %-ով:

Տեղումների կրծատման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով սպասվում է կլիմայական գոտիների շեղում 200-250 մ լեռնային պրոֆիլով դեպի վեր մոտակա 100 տարիների ընթացքում:

Աղետները թվերով

Տապր և անտառային հրդեհները. Ռուսաստան, ամառ, 2010թ.

Արտակարգ տապր և երաշտը հուլիսին և օգոստոսին հանգեցրին աղետալի անտառային հրդեհների Ռուսաստանի արևմտյան մասում, ինչի արդյունքում օդի աղտոտումը բազում անգամներ գերազանցեց նորման: Չերմային ալիքների համակցված ազդեցությունը դարձավ 56 000 մարդու մահվան պատճառ:

Տաք ձմեռ. Սկանդինավիա, 2008- 2009

Շվեդիայում Մելարեն լճի վրա նկատվել է պարհելիոն (կեղծ արեգակ) հյուսիսափայլի հետ միասին: Այս եղանակային երևոյթն առաջանում է մթնոլորտում սառցե բյուրեղներից ցուրտ եղանակին:

Սակայն 2008- 2009թթ. ձմռանը Սկանդինավիայի մեծ մասում զարմանալիորեն մեղմ եղանակ էր: Նորվեգիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի մեծ տարածքներում տարին ամենատաքն էր արձանագրվածներից. ամսական անումալիան գերազանցեց 7 աստիճանով:

Կլիմայական ռիսկերի կառավարում և աղետների ռիսկի նվազեցում

Հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ կապված աղետների քանակի և ինտենսիվության աճը վերջին տարիների ընթացքում, ինչպես նաև դրանց կողմից տնտեսության տարբեր ճյուղերի հասցրած զգալի կորուստները և զլորբալ և տեղական մակարդակներում, անհրաժեշտություն է առաջացել նոր լուծումներ և մոտեցումներ գտնել

Կլիմայի փոփոխության հիմնախնդրի լուծման համար: Կլիամայական ռիսկերի կառավարումը (ԿՌԿ) նոր մոտեցում է կլիմայի փոփոխության բացասական ազդեցության դեմ պայքարի հարցում:

ԿՌԿ-ն ենթադրում է գոյություն ունեցող և սպասվող ապագա ռիսկերի գնահատում, այդ թվում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի գնահատում, և վերջիններիս ինտեգրում երկրի զարգացման ծրագրերի, քաղաքականության, ռազմավարական փաստաթղթերի մեջ՝ և ազգային և տեղական մակարդակներում:

Կլիմայի փոփոխության երևույթը, իր բացասական հետևանքներով, մեր հազարամյակի առավել վտանգավոր գործուններից է, որը նպաստում է աղետների քանակի և մասշտարների աճին՝ հաշվի առնելով այդ երևույթների միևնույն երկրաֆիզիկական բնույթը:

Դրան դիմակայելու միջոցներից է աղետների վտանգների նվազեցման գործնթացում կլիմայական ռիսկերի կառավարման զաղափարի ինտեգրումը: Այս մոտեցման կիրառումը թույլ կտա զգալիորեն նվազեցնել ռիսկերը և բարձրացնել հարմակողականությունը կլիմայի փոփոխության բացասական ազդեցության նկատմամար:

Աղետները թվերով

Տապար և անտառային հրդեհները. Ավստրալիա, ամառ 2009թ.

Ամենամահաբեր հրդեհներն Ավստրալիայի պատմության մեջ խլեցին ավելի քան 180 մարդու կյանք: Աշխարհի հարավում երբեք

արձանագրված ամենաբարձր ջերմաստիճանը՝ 48.8 աստիճան, դիտվել է Վիկտորիա նահանգում: Մելբուռնում արձանագրվեց տեղի ամենատաք եռօրյա ջերմային ալիքը՝ 43 աստիճանից բարձր, իսկ հունվար-փետրվարին ջերմային ալիքներ արձանագրվեցին ողջ Ավստրալիայում:

Կլիմայական ռիսկերի կառավարման հիմնական նպատակն է ամրապնդել և զարգացնել բնակչության կարողությունները ԿՓ հարմարվողականության ասպարեզում, նվազեցնել ԿՓ հետևանքով տնտեսության տարրեր ձյուղերի

խոցելիությունն այնպիսի բնական աղետներից ինչպիսիք են՝ երաշտը, հեղեղումները, սելավները և այլ եղանակալիմայական բնույթի վտանգավոր երևոյթները, ինչպէս նաև ապահովել երկրի կայուն զարգացումը՝ ռազմավարական ծրագրերում ԿՓ բաղադրիչի ինտեգրման միջոցով:

Կլիմայական ռիսկերի կառավարման խնդիրն է գնահատել հնարավոր ռիսկերը և մշակել միջոցառումներ ուղղված դրանց կանխարգելման ու հետևանքների նվազեցմանը գորալ, ազգային և տեղական մակարդակներով

Կլիմայական ռիսկերի կառավարման և աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարությունները ունեն ընդհանուր պահանջներ և մոտեցումներ: Դրանք են խոցելիության գնահատումը, արձագանքումը, կարողությունների ամրապնդումը և հատկապես հարմարվողականության մեղմացմանն ու կանխարգելման ուղղված գործողությունների ինտեգրումը ազգային և ճյուղային զարգացման ծրագրերում:

Սաոցադաշտերի հալոցքը. Արկտիկայի ծովային սառուցք հալվել է մինչև երբեք արձանագրված ամենացածր մակարդակը

Ընդամենը հաշված տարիների ընթացքում Արկտիկայում ծովային սառցածածկույթը (ԿՓ-ի հիմնական ինդիկատորը), շեշտակիորեն կրծատվեց: 2012թ. այն հասավ իր ռեկորդային ցածր ցուցանիշին և նվազեց մինչև իր ամենացածր «ամառային նվազագույն» մակերեսը արբայնակային չափումների մեկնարկից՝ 1979 թ. վեր: Ամառային նվազագույն մակերեսը կազմում էր 49 տոկոս կամ շուրջ 3.3 մլն քառակուսի կիլոմետր (Հնդկաստանի տարածքի չափ)՝ 1979- 2000թթ.

Միջին նվազագույնից ցածր: Սա 18 տոկոսով ցածր է երբեք: Արձանագրված ամենացածր ցուցանիշից (2007թ.), երբ ծովի սառուցք 40 տոկոսով նվազել էր 1980թ. համեմատ: Ավելին, 2012 թ. ամռանը Գրենլանդիայի սաոցածածկույթի ավելի քան 97 տոկոսի դեպքում դրսւորվել է հալվելու որեւէ ձև, ինչը 4 անգամ բարձր է 1981- 2010 թթ. հալոցքի միջին ցուցանիշից:

1979 թ. վեր յուրաքանչյուր 10-ամյակի ընթացքում Արկտիկայի սառուցք պակասել է 9.4 - 13.6 տոկոսով: Այս երևոյթը չի կարելի

բացատրել սուկ բնական փոփոխականությամբ: Այն արտացոլում է

Երկրի օվկիանոսներում և կենսոլրուտում տեղի ունեցող լուրջ հետևանքներ առաջացնող փոփոխությունները: Արկտիկայի սառուցի ծավալի ապշեցնող նվազումը հալոցքի արդյունք է գլխավորապես պայմանավորված տաքացած մթնոլորտով և օվկիանոսով, ինչպես նաև տարածաշրջանից սառուցի մեծ քանակություններ դուրս մղող անբարենպաստ քամիների պատճառած վնասներով:

Համամոլորակային տաքացումը, ուժգնանալով ձյան և սառուցի նվազման պատճառով, նպաստում է տաքացման բարձր մակարդակին Արկտիկայում, որտեղ ջերմաստիճանն աճում է ընդհուպ մինչև չորս անգամ ավելի արագ, քան միջին համամոլորակայինը: Դա ԿՓ ամենատեսանելի ազդեցությունն է:

Ծովային սառուցի մակերեսը կարևոր է, քանի որ, ի թիվս այլոց, այն գործում է որպես Երկրի հովացման համակարգ՝ արեգակնային լույսի մեծ մասի դեպի տիեզերք անդրադաման միշոց, այդպիսով պահպանելով Արկտիկայի տարածաշրջանը սառը վիճակում և կարգավորելով համամոլորակային կլիման: Օվկիանոսային մուգ ջրերը, ընդհակառակը, կլանում են ջերմությունը և խթանում Արկտիկայի տաքացումը՝ հալեցնելով ավելի ու ավելի շատ սառուց: Արկտիկայի ծովային սառուցի կորուստը նվազեցնում է մոլորակի անդրադաման ունակությունը և արագացնում հետագա տաքացումը: Գիտնականները 90 տոկոսով վստահ են, որ Արկտիկայի ծովային սառուցը, ձևածածկույթը և սառցադաշտերը կշարունակեն հավել և բարակել: ԿՓՓՄԽ-ն նախազգուշացնում է, որ մինչև 2050 թ. Արկտիկան կարող է սառցագրկվել (66 տոկոս հավանականությամբ):

Հյան և սառուցի տվյալների ազգային կենտրոն (ԶՍՍԱԿ), ԿՓՓՄԽ, OSUԿ (ՆՍՍՍ)

Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում.
խոցելիություն

Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունն այսօր զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Այն բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ,

ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կյամայի փոփոխության ագրեցությունների նկատմամբ:

Դժվար է գտնել տնտեսության որևէ ձյուղ, որի պլանավորման կամ ընթացիկ խնդիրների լուծման համար անհրաժեշտ չինի եղանակակիմայական պայմանների մասին տեղեկատվությունը: Տնտեսության ձյուղերը առանձնապես մեծ կորուստներ են կրում վտանգավոր և անբարենպաստ հիդրոօքերևութաբանական պայմաններից: Այդ ոլորտներից կարելի է նշել գյուղատնտեսությունը, հներգետիկան, առողջապահությունը, տրանսպորտը և այլն:

Զերմաստիճանի բարձրացումը և տեղումների քանակի կրծատումը կարագացնեն անապատացման գործընթացները և բացասաբար կանրադառնան մարդու առողջության, կյամայակախվածություն ունեցող տնտեսության ձյուղերի, շրջակա միջավայրի և բնական էկոհամակարգի վրա:

Զրային ռեսուրսների նվազեցումը անմիջականորեն կանրադառնա գյուղատնտեսության վրա՝ ոռոգման հնարավորությունների նվազումը, մշակաբույսերի բերքատվության անկումը և այլ գործոնները կիանզեցնեն գյուղատնտեսական ոլորտի խոցելիության մեծացմանը: Զրային ռեսուրսների նվազեցումը անմիջականորեն կանրադառնա նաև էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների կրծատման վրա ՀԷԿ-երում: Կյամայի փոփոխության հետևանքով աղետների կանխատեսվող հաճախականության և ինտենսիվության ավելացումը բացասաբար կանրադառնա բնակչության առողջության, ունեցվածքի, ենթակառուցվածքների և ընդհանուր կենսամակարդակի վրա:

Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում հիդրոօքերևութաբանական վտանգավոր երևոյթները՝ երաշտները, խորշակները, կարկտահարությունը, վաղ գարնանային ցրտահարությունները, որոնց հաճախականությունը և ինտենսիվությունը վերջին տասնամյակներում աճման միտում ունեն: Բացասական ազդեցություն կունենան նաև հաճախ կրկնվող և ավելի մեծ տարածքներ ընդգրկող երաշտները:

Այսպիսով, ակնհայտ է կապը կյամայի փոփոխության, աղետների վտանգների նվազեցման, երկրի և տնտեսության կայուն զարգացման և կառավարման միջև:

Խնդրի առնչությամբ գոյություն ունեցող ռազմավարությունները և գործողությունները, ինչպես նաև զիտելիքը և փորձը անհրաժեշտ է համատեղել և համակարգել զլրայ և տեղական մակարդակներում, կիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցմանն ուղղված գործընթացների արդյունավետ իրականացման համար:

Կիմայի համամոլորակային փոփոխությունը և Հայաստանի տարածքում ներքին միկրոկիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների:

Գյուղատնտեսություն

Չերմաստիճանի բարձրացումը Հայաստանում կրերի մինչև 30% հողի խոնավության նվազեցմանը, հացազգիների, բանջարոնացային և մրգատու մշակաբույսերի արդյունավետության կտրուկ նվազեցմանը, մինչև 10% արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրծատմանը, ինչպես նաև մոտ 30% անասունների զիսաքանակի և անասնապահության մթերատվության կրծատմանը: Կիմայի կանխատեսվող փոփոխության դեպքում, վերգետացիայի փուլից և տեղի բարձրությունից կախված, սպասվում է հողի խոնավության նվազում 10-30%-ով, զանազան գյուղատնեսական մշակաբույսերի բնական խոնավ ապահովածության նվազում՝ 7-13%-ով և հողում խոնավության պակասորդի աճ՝ 25-50 մմ-ով:

- Կիմայական բնութագրերի սպասվող փոփոխության դեպքում՝
 - . բուսաբուծության բերքատվությունը կարող է նվազել 8-14%-ով,
 - . հացազգիների բերքատվությունը միջին հաշվով կրծատվի 9-13%-ով,
 - . բանջարանոցային մշակաբույսերինը՝ 7-14%-ով,
 - . կարտոֆիլինը՝ 8-10%-ով,
 - . պտղատու մշակաբույսերինը՝ 5-8%-ով,
 - . ավելի չորադիմացկուն խաղողի բերքատվությունը կարող է աճել՝ 8-10%-ով:

Կանխատեսվող ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազեցման դեպքում պետք է սպասել կիմայի չորացման աճ և անապատացման պրոցեսների արագացում:

Արոտային անասնապահության համար կանխատեսվում էն՝ արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրծատում՝ 4-10%-ով, այդ թվում մերձալպյան և ալյայան գոտու առավել արժեքավոր և բերքատու արոտավայրերի մակերեսների կրծատում՝ 19-22%-ով, ինչպես նաև լեռնային խոտհարքների բերքատվության նվազում՝ 7-10%-ով: Դրա հետ կապված սպասվում է անասունների գլխարանակի կրծատում՝ 30%-ով և անասնապահության մթերատվության կրծատում՝ 28-33%-ով:

Զրային ռեսուրսներ

Զերմաստիճանի բարձրացման հետևանքով կնվազեն նաև ջրային ռեսուրսները: Կլիմայի կանխատեսվող փոփոխության սցենարի իրականացման դեպքում Հայաստանի տարածքի գումարային գետային հոսքը մինչև 2030 թ. կնվազի մոտ 6.7%-ով, մինչև 2070 թ.՝ 14.5%-ով, մինչև 2100 թ.՝ մոտ 24.4%-ով:

Ջան տեսրով տեղումների կանխատեսվող քանակը Հայաստանի տարածքի մեծ մասում 1961-1990 թթ. նորմային նկատմամբ կնվազի: Ամենաշատ խցելիությունը կղիտվի Հայաստանի տարածքի 1700-1800մ և ավելի բարձրություններում, որոնք հանդիսանում են գետային հոսքի ձևավորման հիմանական տարածքները:

Կլիմայի փոփոխության կանխատեսվող սցենարի իրականացման դեպքում Սևանա լճի ջրահավաք ավազանի ընդհանուր գետային փաստացի հոսքը, ջրառի և ներհոսքի ներկա ծավալների պահպանման դեպքում, 2030 թ. նվազելու է 12%-ով, 2070 թ.՝ 26%-ով և 2100 թ. 41%-ով:

Գոլորշիացումը վերջին տարիներին աճի միտում ունի, ինչը կշարունակվի նաև ապագայում, որը հիմնականում կապված է շերմաստիճանի ռեժիմի փոփոխության հետ: Լճի ջրի մակարդակի իջեցումը խիստ կերպով ազդել է նրա ջերմային ռեժիմի վրա: Ներկայումս նկատվում է լճի ավելի արագ տաքացում գարնան-ամռան և արագ սառեցում՝ աշնան-ձմռան շրջանում: Սևանա լճի ներկայիս ակտիվ ջրատվությունը, որը մոտ 252 մլն. մ³/տարի է, կնվազի և 2030 թ.-ին կկազմի 220-225 մլն. մ³/տարի:

Այդ ամենի հետ մեկտեղ կբարձրանա ջրային ռեսուրսների պահանջը, ինչը կարող է հանգեցնել սոցիալական լուրջ խնդիրների:

Բնական էկոհամակարգեր

Կանխատեսվում է լանդշաֆտային գոտիների սահմանների տեղափոխություն լեռնային պրոֆիլով դեպի վեր ըստ բարձրության 200-300 մ: Սպասվում է, որ անապատա-կիսաանապատային գոտու մակերեսը կընդլայնվի 33%-ով, տեղի կունենա տափաստային գոտու ընդլայնում 4%-ով: Մերձալայան գոտու մակերեսը կըրճատվի 21%-ով, իսկ ալպյան գոտունը միջին հաշվով 22%-ով:

Անտառատնտեսական մարզում կլիմայի փոփոխության կանխատեսվող սցենարների դեպքում առավել խոցելի կլինեն ստորին լեռնային գոտու անտառները (550-1200մ), հատկապես նրանք, որ ածում են հարավային լեռնալանջերին: Ներկայումս այս լանջերին տեղումների միջին տարեկան քանակը 600 մմ-ը չի անցնում, իսկ սպասվող կրծատումը կտրուկ ձևով կվատթարացնի անտառի ածման պայմանները: Արդյունքում կվատթարանան ինչպես անտառի բնական վերականգնումը և տարեկան աճը, այնպես էլ անտառային էկոհամակարգեր կթափանցնեն տափաստանային և կիսաանապատային բույսերի տեսակներ, որի արդյունքում այդ տարածքները լրիվ կանտառազրկվեն: Ըստ փորձագիտական գնահատումների (առանց հարմարվողականության միջոցառումների իրականացման) մոտ 10 հազ. հա-ի վրա (անտառատնտեսական մարզի անտառների մոտ 5%-ը) անտառները կանկետանան: Անտառային էկոհամակարգերում լուրջ փոփոխություններ չեն սպասվում 1200-1800 մ բարձրության վրա, քանի որ հենց այդ պայմաններում անտառներն ունեն հարմարվողականության ամենամեծ ներուժը:

Կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում անտառի ածման պայմանների վատթարացման հետևանքով կարող է անհետանալ ավելի քան 17 հազ. հա անտառ (5-5.5%):

Ենելով տերևակեր միջատների կենսաբանական առանձնահատկություններից, կարելի է ենթադրել, որ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում նրանց զանգվածային զարգացման տարածքը ավելի քան 2 անգամ կընդլայնվի և կիանի 70-75 հազ. հա-ի: Ընդ որում առավել խոցելի կլինեն հարավ-արևելյան անտառապատ շրջանի անտառները: Կլիմայի սպասվող չորայնության ավելացման հետ կապված սպասվում է նաև անտառային հրդեհների ինտենսիվության աճ: Այդ վտանգը ավելի շատ սպառնում է կենտրոնական, հարավային և հարավ-արևելյան անտառապատ շրջանների անտառներին:

Առողջապահություն

Ավելի բարձր ջերմաստիճանը և տաք հոսանքների թափանցումը կարող է նպաստել մարդկային առողջության վատրացմանը, հատկապես մեծահասակների, երեխաների շրջանում: Մարդկանց առողջությունը շատ զգայուն է ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նկատմամբ: Եվրոպայում և ԱՄՆ-ում տաքացումները հարյուրավոր, երբեմն նույնիսկ հազարավոր մահացության դեպքերի պատճառ են դարձել:

Կլիմայի փոփոխությունն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է բնակչության առողջության վրա: Ուղղակի հետևանքներն են «ջերմային ալիքների», «ջերմային կղզիների էֆեկտի» սրման պատճառով սիրտ-անոթային հիվանդությունների ավելացումը և վտանգավոր կլիմայական երևույթների՝ ջրհեղեղների, սելավների, սողանքների ժամանակ մարդկանց զոհվելը և վնասվածքները: Անուղղակի հետևանքներն արտահայտվում են ինֆեկցիոն և սեզոնային, ինչպես նաև վարակակիրների արեալների փոփոխության և մաքուր ջրով ոչ բավարար ապահովվածության և պարենի անվտանգության հետ կապված հիվանդությունների հաճախականության և տարածման աճով:

Խոցելիների թվին առաջին հերթին դասվում են սրտանոթային և կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություններով տառապող անձիք, ինչպես նաև ջերմակարգավորման թույլ ունակություններով օժտված մարդիկ (ծերերը, երեխաները): Ասթմայով և ալերգիայով տառապողները խոցելի են չորայնության աճի, օգոստ փոշու քանակի ավելացման և քաղաքային օդի աղտոտածվության պայմաններում:

ՀՀ-ում Էլտոր խոլերայի 1998 թ. շոգ տարվա բռնկումից հետո հիվանդություն չի դիտարկվել: Սակայն խոլերայի վիրբիոնները շարունակում են անջատվել Հայաստանի բազմաթիվ ջրահոսքերից ու ջրամբարներից: Կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում, առաջին հերթին ամառային և աշնանային ջերմաստիճանների բարձրացման հետևանքով, հնարավոր է հիվանդության նոր բռնկում: Առավել բարձր ռիսկ նախատեսվում է հանրապետության նախալեռնային շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում, սակայն հնարավոր է, որ ամռան արտակարգ

շող եղանակներին այդ հիվանդությունը ի հայտ գա նաև միջին լեռնայինգոտում:

Զերմաստիճանի բարձրացումը և տաք ու շող ժամանակահատվածների երկարաձգումը նպաստում է աղիքային խնֆեկցիաներով հիվանդության տարածմանը և աճին, հատկապես բնակչությանը դրակյալ խմելու ջրով ապահովելու լարվածության աճի և սննդամբերքի պահպանության սանիտարական նորմերը չպահպանելու դեպքում:

1963 թ.-ից Հայաստանում չի գրանցվել տեղական ծագման մալարիայի դեպք, սակայն 1994 թ. սկսած նկատվում է ներմուծված մալարիայի դեպքերի հաճախակիության միտում: Հայաստանում դիտված ամառային բարձր զերմաստիճանը 1998-2001 թթ. գրանցվեց մալարիայով հիվանդության ամենամեծ թիվը՝ 1998 թ. (1156 դեպք): Զեռնարկված միջոցառումների շնորհիվ 2006 թ. մալարիայի դեպքերը չեն գրանցվել: Ներկայումս միջին լեռնային գոտում մալարիան կանխվում է ցածր զերմաստիճաններով, իսկ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում տեղի կունենա ուղղաձիգ տարածում:

Կլիմայի փոփոխության սցենարների իրականացումը կնպաստի վիսցերալ լեյշմանիոզի տարածմանը, որը մինչև 20-րդ դարի 60-ական թվականները լայնորեն տարածված էր Հայաստանում: Երկարատև ընդմիջումից հետո այդ հիվանդությունը գրանցվեց Լոռու, իսկ 2001 թ.՝ Տավուշի մարզում: 2007 թ. գրանցվել է այդ հիվանդության 4 դեպք, իսկ 2008 թ. հունվար- մայիս ամիսներին՝ 5 դեպք: Մոնիթորինգը ցույց տվեց տարածող մժեղների թվաքանակի վերականգնման միտում Երևանի շրջակայքում և ամբողջ Արարատյան դաշտում, Լոռու և Սյունիքի մարզերում, որն ուղղակիորեն կապվում է վերջին տարիներին տաք ժամանակահատվածի երկարացման հետ և սպառնում է լեյշմանիոզով հիվանդության դեպքերի հաճախակիությամբ:

Տաք հոսանքների ներթափանցումն ավելի հավանական է Վայոց Զորի մարզում, Արարատյան դաշտավայրում՝ ներառյալ Երևանը, Սյունիքի, Լոռու և տավուշի մարզերում:

Ճանապարհներ և տրանսպորտ

Զերմաստիճանի բարձրացումն իր բացասական ազդեցությունը կունենա ասֆալտապատ ճանապարհների վրա: Բարձր շերմաստիճանը կարող է նաև դեֆորմացնել հին ճանապարհները, վնասել կամուրջների մետաղյա մասերը և նույնիսկ առաջացնել շերմային դեֆորմացում:

Բոլոր դեպքերում երթևեկության արագության, ինչպես նաև գիշերային ժամերին ծանրաբեռնված փոխադրումների սահմանափակման կարիք կլինի: Այսպիսի սահմանափակումների կարիք կունենան և ճանապարհային և երկաթուղային փոխադրումները, ինչպես նաև վերջիններս տնտեսական կորստի պատճառ կհանդիսանան: Հավանական է, որ բարձր շերմաստիճանը կազդի օդանավակայանների թոփշքային մակերևույթի ենթակառուցվածքի վրա:

Տաք օդը նոսր է և պահանջում է ինքնաթիռների հզորացում, փոխադրամիջոցների քաշի նվազեցում և թոփշքային ժամերի երկարացում:

Հարմարվողականության (ադապտացիայի) միջոցառումներ

Կլիմայի փոփոխության դեմ պայքարն արժե 20 անգամ քիչ, քան ոչինչ չանելը (ԿՓՓՄԻն գեկուց, 2007)

Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը և աղետների ռիսկերի նվազեցումը մոտ, քայլ և այնպես տարբեր գաղափարներ են: Աղետների ռիսկերի նվազեցումն ուղղված է ներկա և մոտ ապագայի վիճակին (աղետների կանխում, կանխարգելում և հետևանքների նվազեցում):

Իսկ կլիմայի փոփոխության հարմարվողականությունը դա երկարաժամկետ շանքեր են, ուղղված կլիմայի փոփոխության, այդ թվում աղետների, բացասական հետևանքների նվազեցմանը: Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը վերաբերվում է ոչ միայն եքստրեմալ երևույթներին, այլ նաև աստիճանաբար փոփոխվող կլիմայական պայմաններին:

Գյուղատնտեսություն և սննդի անվտանգություն

Հարմարվողականության հայտնի և տարածված օրինակներից է մշակաբույսերի տեսակների փոփոխությունն ավելի դիմակայուն տեսակներով (երաշտներին, միջատներին, հիվանդություններին, ցանքատարածությունների և տեղանքի ռելեֆի փոփոխությանը և այլն): Որպես այլնտրանքային տարրերակ կիրառելի է հողագործության, անսանապահության կամ անտառատնտեսության համարությունը: Ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառումը, հողի խոնավության պահպանման միջոցառումների կիրառում: Շատ կարևոր է ապահովագրական համակարգի ներդրումը գյուղացիների կողմից կրած վնասների հատուցման նպատակով:

Այս միջոցառումների արդյունավետությունը բարձրանում է հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովման պայմաններում:

Զրային ռեսուրսներ

Հարմարվողականության միջոցառումները ներառում են ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարումը: Այս միջոցառումների ապահովման համար անհրաժեշտ է ջրային ռեսուրսների համալիր կառավարման համակարգի ստեղծում, որում պետք է հաշվի առնվի կլիմայի փոփոխության հետևանքով ջրային ռեսուրսների խոցելիությունը:

Առողջապահություն

Այս բնագավառում հարմարվողականության միջոցներից են՝ վաղ նախազգուշացման համակարգերը, պրոֆիլակտիկ միջոցառումները, ջրամատակարարման/ջրահեռացման համակարգերի բարելավումը, սանիտարահիգինիկ մոնիթորինգը, ջրի և սննդի մշակման կանոնների պահպանումը, այս բնագավառում կրթության և գիտական հետազոտությունների ապահովումն ու խթանումը:

Բնակավայրեր և ենթակառուցվածքներ

Այս բնագավառում հարմարվողականության միջոցներն են՝ աղետներից պետական և մասնավոր սեփականության ապահովագրության համակարգի զարգացման և վնասների գնահատման ու փոխհատուցման մեխանիզմների ներդրումը, խթանող

օրենսդրական դաշտի ստեղծումը, սողանքների, վարարումների, սելավների, հեղեղումների և քարաթափման երևոյթների մանրակրկիտ ուսումնասիրությունը, բնակավայրերը և ենթակառուցվածքները պաշտպանող պատնեշների, պատվարների նախագծումն ու կառուցումը, անտառատնկումներն ու լանջերի բուսածածկումը, աստիճանավորումը, ցանկապատումն ու ցանցապատումը, ջրահավաք և ջրահեռացնող կառուցների ցանցերի ստեղծումը կամ եղածների բարելավումը, գետերի հուների պարբերաբար մաքրումը, ափերի լայնացումը կամ բարձրացումն ու ամրացումը, գետերի ափերի ողողման տեղամասերում ափապաշտպան կառուցների հիմնումն ու ավտոմացված ազդարարման դիտակետերի տեղադրումը, գարնանային վարարումների կանխատեսման համար գետավազային երթուղային ձևաչափական աշխատանքների վերսկսումը՝ նորագույն մեթոդներով, հեղեղումների, սելավների և գարնանային վարարումների կարծաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների կիրառական մեթոդների մշակումը և այլն:

Կրթության և գիտելիքի զարգացում

Այս բնագավառում անհրաժեշտ է՝ ուսումնական ծրագրերի մշակում, բնակչության տեղեկատվության տրամադրում, լրատվական միջոցներով (հեռուստահեռություն, ռատիո) հաղորդումների կազմակերպում, իրազեկման բարձրացում ուսուցիչների, լրագրողների, քաղաքական գործիչների միջոցով:

Բնապահպանական միջոցառումներ

Առողջ կրնամակարգերը աջակցում են աղետների վտանգների նվազեցմանը և զգալիորեն բարձրացնում են դիմադրողականության աստիճանը՝ ընդլայնելով հարմարվողականության հնարավորությունները: Այս ասպարեզում կիրառվում են այնպիսի բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են կրնամակարգերի, ինչպես նաև կլիմայի փոփոխության տեսանկյունից առավել խոցելի շրջակա բնական միջավայրի օբյեկտների պաշտպանությանը:

Վաղ ազդարարման համակարգ

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վտանգավոր երևոյթների ազդարարման համակարգերի արդիականացման՝ վտանգի վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվության ժամանակին տարածման նպատակով։ Նախազգուշացումները ստանալաւոց հետո պետք է տալ համապատասխան տեղեկատվություններ՝ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ։

Հայաստանը ՄԱԿ-ի Կիմայի փոփոխության շրջանակային կոնվեցիայի (ԿՓՇԿ) ներքո

1992 թ. հունիսին Ռիյազ կիմայի փոփոխության վերաբերյալ վեհաժողովում ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան ստորագրողների թվում էր Հայաստանի Հանրապետությունը։ ՀՀ Ազգային ժողովի կողմից կոնվեցիան վավերացվեց 1993 թ. մայիսին, իսկ 1997 թ. վավերացվեց նաև Կիոտոյի արձանագրությունը։

Հայաստանի կիմայի փոփոխության քաղաքականությունը ձևավորվում է ՄԱԿ ԿՓՇԿ-ի Կիոտոյի Արձանագրության շրջանակներում երկրի ստանձնած պարտավորություններին համապատասխան։ Որպես ՄԱԿ ԿՓՇԿ-ի Հավելված առաջինի մեջը շրջադրկված երկիր Հայաստանը չունի ԶԳ-երի արտանետումների նվազեցման քանակական պարտավորություններ։ Սակայն, հարելով և աջակցելով Կոնվենցիայի նպատակին, ինչպես նաև հաշվի առնելով, որ արտանետումների նվազեցումը համահունչ է երկրի տնտեսական, էներգետիկ և բնապահպանական նպատակներին, Հայաստանում ընդունվել են մի շարք օրենքներ և իրականացվում են ազգային և ճյուղային զարգացման ծրագրեր, որոնք նպաստում են ԶԳ-երի արտանետումների նվազմանը։ Միևնույն ժամանակ, Կիոտոյի արձանագրության «Մարուր զարգացման» մեխանիզմով իրականացվող մեղմացման նախագծերի շնորհիվ։ Հայաստանն ունի արտանետումների կրծատման փոխանցման շոշափելի ներուժ։

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ ԱՂԵՏՆԵՐԻ ՈՒՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետի ոխսի նվազեցման հարցերը պետք է հաշվի առնվեն ամենօրյա որոշումներում. սկսած նրանից, թե մարդիկ ինչպես են ուսուցանում իրենց երեխաներին, վերջացրած նրանով, թե ինչպես են նրանք պլանավորում կառուցել քաղաքային շինությունները: Յուրաքանչյուր որոշում մեզ կարող է դարձնել առավել խոցելի կամ ավելի դիմակայուն: Մինչև աղետների ոխսկերի նվազեցումների մասին գրելը, կարևոր է լավ ըմբռնել այս խնդրի էռությունը և հասկանալ օգտագործվող տերմինաբանությունը:

Սպառնալիք վտանգ՝ ֆիզիկական երևույթ է, մարդկային գործունեություն կամ պայման, որը կարող է առաջացնել մարդկային գոհեր, հաշմանդամություն, կամ առողջությանն այլ վնասներ, ունեցվածքի կորուստ, սոցիալական կամ տնտեսական ցնցումներ, կամ վնասներ պատճառել շրջակա միջավայրին:

Սպառնալիքները կարող են ունենալ զանազան աղյուրներ՝ քնական /երկրաբանական, հիդրոլոգիական, օդերևութաբանական և կենսաբանական/, կամ մարդկային գործունեությունից առաջացած /բնապահպանական կամ տեխնսածին/:

Աղետներ Աղետը սպառնալիքին ենթակա՝ խոցելիության առկա չափանիշների և ոխսկերի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցների կամ ներուժի անբավարարության համադրության արդյունք է:

Խոցելիությունը ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի ենթակայության աստիճանն է որոշակի սպառնալիքից, ինչը կախված է տարրեր գործոններից և գործընթացներից:

➤ **Ֆիզիկական** /ոչ կայուն տարածաշրջաններ, սպառնալիքի աղբյուրներին մոտ տարածություններ, խախուտ և չպաշտպանված կացարաններ/

➤ **Տնտեսական** /շկան արտադրական ակտիվներ. առկա են եկամուտների ստացման սահմանափակ հնարավորություններ, ցածր աշխատավարձեր, ընտանիքի մեկ անդամին հասնող ցածր եկամուտ, խնայողության և ապահովագրության բացակայություն/

➤ **Սոցիալական** /ցածր հասարակական կարգավիճակ, գենդերային հարաբերություն, որոշումների ընդունման փոքր հնարավորություններ, բռնակալական պետական և ոչ պաշտանական ինստիտուցիոնալ կառույցներ, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և սոցիալական հիերարխիաներ/

➤ **Հոգեբանական** /վախեր՝ պայմանավորված կրոնական հավատքներով և աշխարհայացքի, զաղափարախոսության այլ համակարգերով, քաղաքական ձնշում, հոգեկան խանգարումներ/

➤ **Ֆիզիոգիական** /կենսական կարգավիճակ՝ երիտասարդ, ծեր, անշափահաս, հղի կին, կերակրող մայր, քրոնիկ հիվանդություն, հաշմանդամություն, սեռական հետապնդման և բռնության ենթարկվածություն, ԶԻԱՎ, ՄԻԱՎ և այլ վարակներ/:

Աղետներն ըստ համամասնության

ԶԻԱՎ, ՄԻԱՎ-ից տարեկան մահանում է 3 մլն մարդ: Մալարիան խլում է 1.3 մլն մարդու կյանք: Ամեն տարի մոտ 1.2 մլն մարդ մահանում է ավտոպատահարներից:

Ոխսկը բացասական հետևանքների կամ սպասվելիք կորուստների հավանականությունն է /զոհեր, մարմնական վնասվածքներ, ունեցվածքի կորուստ, տնտեսական գործունեության խաթարում կամ շրջակա միջավայրի աղտօնում/, որոնք համարվում են մարդկային ու բնական սպառնալիքների և բնակչության խոցելի խմբերի փոխազդեցության արդյունքներ:

Աղետների ռիսկերի նվազեցում /ԱՌՆ/ Աղետների ռիսկերի նվազեցումն իր մեջ ներառում է բոլոր քաղաքականությունները, ռազմավարությունները և միջոցները, որոնք մարդկանց, զյուղերը,

քաղաքները և երկրները կարող են դարձնել առավել կայուն սպառնալիքի հանդեպ և կրծատել ռիսկերն ու խոցելիությունն աղետների նկատմամբ:

ԱՌՆ-ը ներառում է զանազան քաղաքամասեր.

➤ **Կանխումն** ընդգրկում է գործունեության բոլոր տեսակները, որոնք անմիջականրեն հնարավորություն են տալիս խուսափելու վտանգների անբարենպաստ հետևանքներից, ինչպես նաև միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, տեխնածին և կենսաբանական աղետները նվազագույնի հասցնելուն:

➤ **Միտիգացիան** մասնագետների համար, ովքեր գրադկում են կլիմայի փոփոխությամբ և աղետների դեմ պայքարի հարցերով, ունի տարրեր նշանակություններ, ինչը հաճախ խառնաշփոթ է առաջացնում: Աղետների դեմ պայքարի շրջանակներում միտիգացիան հիմնականում վերաբերում է կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցառումներին, որոնք ձեռնարկվում են սահմանափակելու համար բնական սպառնալիքների անբարենպաստ հետևանքները, բնապահպանական պայմանների վատթարացումը և տեխնածին վտանգները:

➤ **Նախապատրաստումն** ընդգրկում է առանձին անհատների ու համայնքների նախօրոք պլանավորած, ժամանակին և արդյունավետ գործողությունները՝ ուղղված բնական սպառնալիքների բացասական հետևանքների նվազեցմանը և հնարավոր աղետների հետևանքների վերացմանը:

➤ **Վերականգնումը** ներառում է աղետներից հետո ձեռնարկվող որոշումներն ու գործողությունները, վերականգնելու կամ բարելավելու համար տուժած համայնքների մինչ աղետը եղած կենսական պայմանները:

➤ **Վերակառուցումը** գործողությունների շարք է, որոնք ձեռնարկվում են աղետներից հետո՝ վերականգնելու համար հիմնական ծառայությունների գործառույթները, մեկուսացնելու ֆիզիկական վնասվածքները, վերականգնելու կոմունալ

Ենթակառուցվածքները, վերակենդանացնելու տնտեսությունը և պահպանելու աղետյալների հոգեբանական ու սոցիալական բարեկեցությունը:

ՓԱՍՏԵՐ. ԱՂԵՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղետները, որոնք առաջացել են քնական սպառնալիքների հանդեպ խոցելիությունից, 2010թ. դարձան ավելի քան քառորդ միլիոն մարդկանց մահվան պատճառ, որոնք ամենամահաբեր աղետները եղան ներկա սերնդի համար՝ սկսած Հայիթիի երկրաշարժից, Չիլիի ու Չինաստանի լուրջ ցնցումներից, Պակիստանի, Ավստրալիայի ու Եվրոպայի ջրհեղեղներից, վերջացրած Ռուսաստանի անտառային հրդեհներով: Այս աղետների հետևանքով գործնականում գրեթե ոչ մի օր առանց զոհերի, հարկադրված վերաբնակեցումների և ավերածությունների չի անցել:

Ստորև ներկայացվում է 10 կետից բաղկացած ցուցակ, որում ընդգրկված են աղետների հետ կապված տվյալներ ու միտումներ, որոնց մասին հարկավոր է իմանալ մինչև աղետների ռիսկերի նվազեցման մասին խոսելը:

1. Ամեն տարի աղետներից տուժում է ավելի քան 226 միլիոն մարդ: Միայն 2010 թ. թվով 373 աղետ 296 հազար մարդու կյանք խլեց:



Այս աղետներից տուժեց 207 միլիոն մարդ: Տասը տարիների ընթացքում /2000-2010 թթ./ տարեկան 400 աղետի հետևանքով զոհվել է 98 հազար մարդ, յուրաքանչյուր տարի աղետներից տուժում էր 226 միլիոն մարդ: Ընդհանուր

առմամբ՝ 10 տարիների ընթացքում աղետների հետևանքով զոհվել է 1.077.683 մարդ, տուժել՝ 2.4 միլիարդ /ԱՀԳԿ՝ Աղետների համաձարակաբանական գիտահետազոտական կենտրոն/:

Միտում. Հետազայում ավելի շատ մարդիկ են մեծ ոխոչերի ենթարկվելու, քանի որ բազմաթիվ մարդիկ ապրում են վտանգավոր քաղաքներում, որոնք ենթակա են ջրհեղեղների, ցիկլոնների և ալիքային գրոհների: Այս միտումն անընդհատ աճում է, եթե նույնիսկ հաշվի չառնվեն այն զգայի տարերային աղետները, որոնք առաջացրել են ավելի քան 10 հազար մարդկային զոհեր, ինչպիսիք են՝ 2004 թ. Հնդկական օվկիանոսի ցունամին, 2008 թ. Նարգիս ցիկլոնը, Պակիստանի, Չինաստանի և Հայիքի երկրաշարժերը, որոնք տեղի են ունեցել համապատասխանաբար՝ 2005, 2008 և 2010 թվականներին:

2. Երկրաշարժերը և երաշտները առավել լուրջ մարդասպաններ են: 2000-2010 թթ. ընթացքում անորակ կառուցված շենքերի պատճառով երկրաշարժերի ժամանակ զոհվել է ավելի քան 680 հազար մարդ: Հաճախ մահվան դեպքերի հիմնական պատճառ եղել են

շենքերի փլուզումները և

երկրաշարժերին հաջորդող հրդեհները:

Ոխոչի առավել բարձր աստիճաններ

դիտարկվում են

եկամուտների միջին մակարդակը ունեցող

երկրներում, քանի որ



այստեղ քաղաքների աճը չի պլանավորվում կամ պատշաճ ձևով չի կարգավորվում: Բոլոր առումներով երկրաշարժերը ավելի մահարեր աղետներ են, սակայն Աֆրիկայում ամենամեծ մարդասպանները մնում են երաշտները: Սկսած 1980 թ.՝ երաշտներն ու սովը խել են մոտ 558 հազար մարդու կյանք, տուժել է ավելի քան 1.6 մլրդ մարդ /ԱԳՀԿ/:

Միտում. Երբ քաղաքների աճին զուգահեռ մարդիկ բնակություն

են հաստատում վատ կառուցված տներում, հավանական է, որ

Երկրաշարժերի հետևանքով զոհերի քանակը պետք է շարունակի ավելանալ:

3. Զքիեղեղներ և փոթորիկներ՝ սպառնալիքներ, որոնք սպառնում են մարդկության մեծամասնությանը: Աղետներ, որոնք տեղի են ունենում բնական այնպիսի սպառնալիքների արդյունքում, ինչպիսիք են՝ արևադարձային ցիկլոնները, հողմերը, ջրհեղեղները և սրանց հետևանքով առաջացած փլուզումները, ոտնձգություններ են մարդկանց մեծամասնության նկատմամբ: Նման տարեքային աղետները կազմել են մյուս բոլոր աղետների 81%-ը, պատճառ են դարձել 72% տնտեսական վնասների և խլել ողջ մարդկային զոհերի 23%-ը՝ 2000-2010 թթ.:



Միջին հաշվով 37 միլիոն մարդ յուրաքանչյուր տարի տուժել է ցիկլոններից, փոթորիկներից և թայֆուններից, մոտ 366 հազար մարդ տուժել է փլուզումներից, 102 միլիոնը՝ ջրհեղեղներից /ԱՀԳԿ/:

Միտում. Մարդկանց մեծ մասն ապրում է կլիմայական ռիսկերի գոտիներում: Առնվազն 8 մլն բնակչությամբ 33 քաղաքներից 21-ը 2015թ. մոտ՝ կհայտնի մերձափնյա գոտիներում: Սպասվում է, որ մերձափնյա տարածքների համալրումը կլինի ավելի արագ, քանի որ բարձրանում է ծովի մակարդակը, իսկ ծովափնյա էկոհամակարգը վատրարանում է, օրինակ, ծովի ջրի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով կրծատվում է մարջանն իսուրերի տարածքը:

4. Ասիան ռիսկերի առավել ենթակա տարածաշրջան է

Ասիան շարունակում է մնալ ամենախոցելի մայրցամաքը. մահվան դեպքերի ավելի քան 62.5 տոկոսը վերագրվում է Ասիայում տեղի ունեցած աղետների հետևանքներին: Աղետների հետևանքով աշխարհում տեղի ունեցած մահվան ընդհանուր դեպքերով՝ 2000-2010 թթ. ընթացքում Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի զոհերի թիվը կազմել է 87 տոկոս: Եվրոպան և Հյուսիսային

Ամերիկան մահվան և
վնասավածքների առումով թիշ են
տուժում, իսկ տնտեսականը՝
ավելին: 66 աղետներ, որ տեղի
են ունեցել Եվրոպայում 2007
թվականին, կրել են աշխարհում
բնական աղետներից
առաջացած ամբողջ
տնտեսական վնասների 28



տոկոսը, սակայն այս տարածաշրջանի զրիերի թիվը կազմել է
աշխարհում զրիվածների ընդամենը 5 տոկոսը:

Միտում. Կիմայի փոփոխության հարցերով միջազգային
փորձագետների խմբի / ԿՓՀՍՓԽ/ 4-րդ գեկույցի տվյալների
համաձայն՝ այսօր մոտ 200 միլիոն մարդ ապրում է մերձափնյա խիտ
բնակեցված շրջաններում, և միայն Հարավյային Ասիայում այդ թիվը
կազմում է 60 միլիոն:

5. Աղքատ մարդիկ ավելի խոցելի են համարվում
Աղքատները մյուս տնտեսական խմբերի համեմատ աղետներից ավելի
շատ են տուժում: Սա օրինաչափ է, ինչպես զարգացող, այնպես էլ
զարգացած երկրների համար: Բոլոր երկրներն էլ խոցելի են բնական
վտանգների հանդեպ, սակայն վերջին 40 տարիների ընթացքում
ազետների հետևանքով 3,3 մլն մահվան դեպքերի մեծ մասը տեղի է
ունեցել առավել աղքատ պետություններում: Աղքատները նմանապես
շատ են տուժում աղետների երկարատև հետևանքներից, քանի որ
նրանք ապահովագրված չեն և վերականգման համար միջոցներ
չունեն, հաճախ կորցնում են տունը, աշխատանքը և գոյամիջոցների
աղբյուրները, ինչը նրանց դարձնում է առավել խոցելի հաջորդ
աղետների նկատմամբ:

Միտում. քանի որ գնալով ավելի շատ մարդիկ են ապրում
քաղաքային ետնախորշերում, աղետների նկատմամբ խոցելի
մարդկանց քանակը ավելանալու է: Ամբողջ աշխարհում մոտ 3
միլիարդ մարդ ապրում է աղքատության մեջ՝ օրական ԱՄՆ 2 դոլարի
հասնող եկամուտով, իսկ 1,3 միլիարդ մարդ՝ օրական մեկ դոլարից

պակաս: UN-Habitat -ի տվյալներով՝ 2030 թ. գրեթե 3 միլիարդ մարդ կապրի էտնախորշերում:

6. Կանայք, երեխաները և հաշմանդամները բնակչության ամենախոցելի խմբերն են

Բնության պահպանության միջազգային միության՝ ԲՊՄՄ-ի տվյալներով՝ աղետի ժամանակ կանաց ու երեխաների զոհվելու հավանականությունը 14 անգամ ավելի է տղամարդկանցից: 2003 թ. Եվրոպայի զարգացած երկրներում խիստ շոգերի պատճառով մահացել են ավելի շատ կանայք, քան տղամարդիկ: Շատ երկրներում կանայք ավելի ցածր պաշտոններ են զբաղեցնում, սահմանափակված են նրանց առաջիսարացման հնարավորությունները, քիչ են նրանց ուսման հնարավորությունները, քիչ է նրանց դերը՝ ընդունվող որոշումներում, և շատ վատ են նրանց աշխատանքի տեղավորման հնարավորությունները, ինչը նրանց ավելի խոցելի է դարձնում: 1998թ. Միտչ փոթորիկի ժամանակ Կենտոնական Ամերիկայում տուժել են



հսկայական թվով
անապաստան երեխաներ:
«Փրկեք երեխաներին»
կազմակերպության
տվյալներով՝ աշխարհում
աղետի զոհ դարձածների
ավելի քան 50 տոկոսը
երեխաներ են:

Միտում. Որոշակի զարգացում է նկատվում կանաց ու երեխաների իրազեկման և նախապատրաստման ուրբությամբ: Սակայն քանի դեռ այս երկու խմբերը հիմնականում դուրս են մնում աղետների ռիսկերի նվազեցման հարցերով որոշումներ ընդունելու գործընթացից և կրթությունից՝ իրական առաջընթացը անհնար կլինի:

7. Տնտեսական վնասները աղետների հետևանքով աճում են

2000-2010 թթ. ժամանակահատվածում աղետների հետևանքով ընդհանուր տնտեսական վնասը կազմել է մոտ մեկ տրիլիոն ԱՄՆ դրամ, իսկ միայն 2010թ. այն կազմել է 109 մլրդ դրամ: Վերջին 20 տարիներին հասցված վնասը շատ ավելի է նախորդ տասնամյակների ցուցանիշներից, ինչը կարող է տեղի ունենալ երկու պատճառով՝ ռիսկերի մեծ ենթարկվածության և վնասներն առավել ճշգրիտ հաշվարկելու:

Հարուստ երկրներում /ԱՄՆ, Եվրոպա և ավելի շատ՝ Ասիա/ բացարձակ վնասները շատ են, քանի որ այստեղ ենթակառուցվածքների գինը բարձր է: Համեմատաբար քիչ վնաս է պատճառվում Աֆրիկայում, քանի որ աղքատ բնակչությունն այստեղ քիչ սեփականություն ունի: 2005թ. տեղի ունեցած ցունամին այստեղ պատճառեց 10 մլրդ դոլարի վնաս, այն դեպքում, երբ Կատրինա փոթորիկից ԱՄՆ-ի տնտեսությունը կրեց ավելի քան 130 մլրդ դոլարի վնաս: Բարձր զարգացած երկրներում աղետների պատճառած տնտեսական վնասների միջին չափը կազմում է 636 մլն դոլար, միջին եկամուտը ունեցող երկրներում՝ 209 մլն, իսկ ցածր եկամուտներ ունեցողներում՝ 79 մլն դոլար:

Միտում. Համաշխարհային քանկի և ՍԱԿ-ի համատեղ հաշվետվությունը ցույց է տալիս, որ բնական սպառնալիքներից առաջացած տարեկան համաշխարհային վնասները այս հարյուրամյակի վերջին կարող են եռապատկվել՝ հասնելով 185 մլրդ ԱՄՆ դոլարի /ընդ որում՝ նույնիսկ հաշվի չի առնվել կլիմայի փոփոխությունների ազդեցությունը/: Կլիմայի փոփոխությունները տարեկան վնասների գումարը կարող են մեծացնել մինչև 28-68 մլրդ ԱՄՆ դոլար, քանի որ ըստ կանխատեսումների՝ միայն արևադարձային ցիկլոնները կդարնան առավել հզոր ու հաճախակի:

8. Փոքրամասշտար աղետները հանգեցնում են երկարաժամկետ հետևանքների: Տարեկան աշխարհով մեկ տեղի են ունենում տասնյակ հազարավոր փոքր ծավալի աղետներ՝ կապված ջրհեղեղների, փլուզումների, հրդեհների և փոթորիկների հետ: Սրանք կարող են հասցնել նույն ավերածությունների հետևանքների,

ինչպիսին խոշորները, առաջացնել վնասվածքներ և մահեր՝ ավերելով գոյության միջոցների ակունքները, պատճառ դառնալով քրոնիկ աղքատության:

Միտում. Փոքրամասշտար աղետները ԶԼՄ-ներով հաճախ չեն լուսաբանվում, սակայն ավելի շատ ազդեցություն են թողնում զարգացումների և աղքատության վրա:

9. Ընդհանուր փրկարարական ֆոնդերի 0.7 տոկոսից պակասը ծախսվում է աղետների ռիսկերի նվազեցման միջոցների համար: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ 2001թ. Միջազգային մարդասիրական օգնության միայն 0.1 տոկոսն է ծախսվել կանխման միջոցների համար և ընդամենը 0.7 տոկոսը՝ 2008թ.: Աղեների ռիսկերի կրծատման հարցերով գլոբալ հարթակի 24-րդ նստաշրջանում, որը կայացել է 2009թ., մասնակիցները համաձայնել են մարդասիրական ֆոնդի 10 տոկոսը ծախսել աղետների ռիսկերի նվազեցման միջոցների համար, բացի այդ, առաջարկվել է 10 տոկոսի ֆինանսավորում հատկացնել հետադեսային վերականգնումների, վերակառուցման նախագծերի և նախապատրաստման ու հակագրման ազգային պլանների մշակման համար: Կոչեր են հնչել զարգացման



համար նախատեսված պետական միջոցներից ծայրագույն դեպքում 1 տոկոս, ինչպես նաև ամբողջ օգնությունը, ուղղել ռիսկերի նվազեցման միջոցների զարգացմանը:

Միտում. Աղետների ռիսկերի նվազեցման միջոցները հաճախ դիտվում են որպես երկարաժամկետ լրացումներ, մինչդեռ սրանք իրականում կարծածամկետ լրացումներ են, որոնք ապահովում են արագ արդյունավետություն և հնարավորություն են տալիս զգային կրծատելու աղքատությունը և պայքարելու կիմայի փոփոխությունների հետևանքների և աղետների ռիսկերի դեմ:

10. Կանխման միջոցները փոխատուցվում են: Արդյունավետ շինարարական նորմերի, կանոնների և ԱՌՆ-ի /աղետների ռիսկերի նվազեցման/ շնորհիվ 2010 թ. Զիլում 8.8 բալանց երկրաշարժի ժամանակ յուրաքանչյուր 596 տուժողի դիմաց գրանցվեց ընդամենը մեկ մարդկային զոհ: Այն դեպքում, եթե Հայիթիի երկրաշարժը, որ հզորությամբ 500 անգամ պակաս էր, սպանեց յուրաքանչյուր 15-րդին՝ տուժողների ընդհանուր թվից: Ոչ մի մարդկային զոհ չեղավ 2010թ.-ին Նոր Ձելանդիայի Կրայստերզ քաղաքում տեղի ունեցած 7.2 բալ ուժգնությամբ երկրաշարժից: Չնայած զոհերի թվի և վնասների չափի մեծությանը, որ խեցին 2011թ.-ին Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժն ու ցունամին, շատ անգամ ավելին կինեին դրանք, եթե Ճապոնական կառավարությունը վերջին 15 տարիներին տարեկան բյուջեի 5 տոկոսը աղետների ռիսկի նվազեցման համար ծախսած չլիներ: 1995 թ.-ի երկրաշարժից հետո կատարված ներդրումը, որ ծախսվել էր շինարարական նորմերի և կանոնների մշակման, նախապատրաստական միջոցների համար, ճապոնիային հնարավորություն տվեց փրկելու շատերի կյանքը:

Միտում. ԱՌՆ-միջոցների համար կատարված ներդրումները եռակի շահ են բերում, սրանք հնարավորություն են տալիս մեղմելու սպառնալիքների հետևանքները, կրծատելու աղքատությունը և համայնքներին օգնում են հարմարվելու կլիմայական փոփոխություններին: ԱՌՆ-ն լրացնուցիչ գումարներ խնդրելու ևս մեկ միջոց չէ, որովհետև նախատեսվում է՝ այն գումարները, որ հատկացվում են զարգացման և մարդասիրական օգնության համար, օգնության համար պետք է ծախսվեն զանազան ձևերով:

ԱՂԵՏՆԵՐԻ ԲՆՉՈՒ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Աղետները լինում են շատ պատճառներով, սակայն գոյություն ունեն չորս հիմնական գործոններ, որոնք մեծացնում են աղետների ռիսկերը՝

- Կլիմայի փոփոխությունը
- արագ ուրբանիզացիան
- արքատությունը
- բնապահպանական պայմանների վատթարացումը

Կլիմայի փոփոխությունը Կլիմայի փոփոխությունները տանում են նոր սպառնալիքների առաջացման, ինչպիսիք են՝ սառցադաշտերի հալքը, ծովի մակարդակի բարձրացումը և նախադեպը չունեցող մասշտաբների եղանակային ծայրահետ պայմանները։ Այս երևույթները մեծացնում են գոյություն ունեցող աղետների ռիսկերը և



խոցելիության մակարդակները, ինչի հետևանքով աշխարհով մեկ կարող են տուժել միլիոննավոր մարդիկ, ովքեր երբիցեւ աղետների չեն ենթարկվել։

Փաստեր Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագետների խումբը /ԿՓՀՍՄՓԽ/ իր 4-րդ գնահատող զեկույցում կանխատեսել է, որ 2100թ.-ին մոտ՝

- Երկրակեղեղի միջին ջերմաստիճանը կրարձրանա 1.1°C-6.4°C-ի սահմաններում
- Ծովի մակարդակը կրարձրանա 18-59 սմ-ով, այն մերձափնյա փոթորիկների համեմատ կմեծացնի ջրհեղեղների ռիսկերը և կսպառնա պաշտպանիչ Էկոհամակարգերին
- Օվկիանոսները կդառնան առավել թթվային և տաք

- Ծայրահեղ բարձր ջերմաստիճանի և զգալի տեղումների ժամանակահատվածները կդառնան ավելի հաճախակի
- Եռությունը ժամանակահատվածների հաճախակիությունը կբարձրացնի ծերերի, երեխաների, քրոնիկ հիվանդների, սոցիալապես առանձնացված մարդկանց մահացության ցուցանիշը
- Առավել բարձր լայնություններում կլինեն առատ տեղումներ, այն դեպքում, եթե մերձարևադարձային երկրներում կլիման կդառնա ավելի չորային
- Մերձարևադարձային ցիկլոնները /ներառյալ թայֆուններն ու փոթորիկները/ կդառնան առավել ուժգին, քանի որ այս գոտիներում ծովի ջրի մակերևույթի ջերմաստիճանի բարձրացման համեմատ կավելանան քամու առավելագույն արագությունը և առատ տեղումների քանակը
- Առավել տուժվող տարածաշրջաններ կդառնան Արկտիկան, Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրները, գետերի դելտաներում և ծովի մերձակայքում գտնվող ասիական տարածաշրջանները
- Երաշտների հաճախակիության մեծացումը որոշ տարածաշրջաններում կհասցնի հողային պաշարների սպառման, թերթի ոչնչացման և բերքատվության իջեցման, ընտանի կենդանիների անկումը և անտառային հրդեհների ռիսկերը կշատանան և գյուղացիական տնտեսությունների հույսով ապրող մարդիկ կրախվեն սննդի և ջրի անբավարարության, կտարածվեն հիվանդությունները, ինչը շատերին կդրդի տարագնացության



- Տեղումների քանակի աճը որոշ տարածաշրջաններում կառաջացնի առավել հաճախակի ջրհեղեղներ և փլուզումներ, ինչը կործանարար ազդեցություն կունենա գյուղացիական տնտեսությունների, քաղաքային ենթակառույցների, առևտրի և տրանսպորտի վրա

➤ Ուժգին ցիկլոնների քանակի և հաճախակիության աճը կազմի մերձավոնյա շրջանների վրա՝ կսպառնա մարդկային զոհերի զգալի հավելումներով և աղքատության ավելացումով

Զերմաստիճանի բարձրացման համեմատ կակավեն սացահալքերը՝ ավելացնելով լճերի ջրի մակարդակի բարձրացման և կործանարար ջրհեղեղների ռիսկերը։ Լեռնային սացադաշտերի



տարածքների կրճատման համեմատ՝ ավելի ներքևներում տարածված ընկերություններն ու քաղաքները, որոնք ամունը կախման մեջ են ընկնում սացահալոցի ջրերից, ավելի շատ են ռիսկերի ենթարկվելու։

Ի՞նչ է պետք անել Պետությունները կարող են կատարել հետևյալը

➤ Ազգային և տեղական գերակայությունների միջոցով միջոցառումներ ձեռնարկել աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ և արյունավետ ինստիտուտներ կազմակերպել որոշումների իրականացման համար

➤ Ստեղծել նախնական ծանուցման համակարգեր, որոնք կընդգրկեն բոլոր մարդկանց, որպեսզի նրանք կարողանան ժամանակին պատրաստվել աղետների դեմ, և զգուշացումներին զուգահեռ տալ օգտակար խորհուրդներ

➤ Հաշվի առնել կլիմայական ռիսկերը՝ ինչպես քաղաքային կառույցների պլանավորումների, այնպես էլ ջրային և անտառային պաշարների տնօրինման գործընթացներում

➤ Կառուցել և ամրացնել աղեկոծություններից պաշտպանող արգելապատճեններ, գետերի ջրամբարներ, ջրագծեր և ջրահեռացման ջրավազաններ՝ ջրհեղեղներից խուսափելու համար

➤ Կառուցել ջրահեռացման համապատասխան համակարգեր՝ ջրհեղեղներից զերծ մնալու համար

➤ Ենթակառուցվածքային նախագծերում հաշվի առնել կլիմայական ռիսկերը, հատկապես, եթե այն վերաբերում է հիվանդանոցներին, դպրոցներին և ջրամատակարար համակարգերին

➤ Պահպանել բազմազանություն՝ ներառելով եկամտի նոր աղբյուրներ, գյուղատնտեսական նոր կուտուրաներ և մեթոդներ, ինչպես նաև նոր միջոցներ, որոնք թույլ կտան մեծացնելու ջրականումը և նվազեցնելու հողի քայլայումը

➤ Ստեղծել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան մարդկանց փրկվելու սպառնալիքներից և հարկադրված տարիանումների դեպքում մարդկանց պաշտպանող ապաստարաններ պատրաստել:

Արագ և չպլանավորված քաղաքային կառուցապատում Կլիմայի փոփոխության և քաղաքային բնակչության կայծակնային աճով պայմանավորված՝ քաղաքների արագ աճը նոր ծանրաբեռնվածություն կստեղծի քաղաքային բնակչության համար և նրանց կտարձնի առավել խոցել:

Փաստեր

➤ Այժմ յուրաքանչյուր երկրորդ մարդ ապրում է քաղաքում և այս համաշխատությունը շարունակարար աճում է: Ինչպես կանխատեսվում է՝ 2030 թ.-ին մոլորակի 8.1 միլիարդ բնակչության 5 միլիարդ կազմի քաղաքներում:

➤ Յուրաքանչյուր երկրորդ բնակիչ քաղաքում ապրում է անկանոն շինություններում կամ չափազանց հագեցված ետնախորշերում, որտեղ կան հիմնախնդիրներ՝ կապված մաքուր ջրի, կոյուղու, տրանսպորտի, դպրոցների և այլ հասարակական ծառայությունների հետ:



➤ Քաղաքի յուրաքանչյուր չորրորդ բնակիչ ապրում է քացարձակ աղքատության մեջ: 2030 թվականին՝ մարդկության 2/3-ը կապրի քաղաքներում, ընդ որում 3 միլիարդ մարդ կապրի ետնախորշերում:

➤ Երկրագնդի առավել բնակեցված 10 քաղաքներից 8-ը խոցելի են երկրաշարժերի, 10-ից 6-ը՝ ջրհեղեղների, փոթորիկների, մրրիկների, ցունամիների հանդեպ:

➤ Հողօգտագործման անարդյունավետ պլանավորումը, շինարարության մեջ շինարարական նորմերի, կանոնների և հաշվարկների անբավարար ներդրումները բազմաթիվ մարդկանց ռիսկերի են ենթարկում:

2015 թվականին մոտ՝ 33 քաղաք կունենա առնվազն 8 միլիոն բնակչություն, ընդ որում, 21 քաղաք կտարածվի ափամերձ գոտիներում և խոցելի կլինի հատկապես եղանակային սպառնալիքների հանդեպ՝ պայմանավորված կիմայի փոփոխություններով /օրինակ՝ Դաքքա, Շանհայ, Մանչժու, Չանգչան, Մունիշ/։ Ոչ արդյունավետ դեկավարվող խոշոր քաղաքները և փոքր ու միջին քաղաքները առավել խոցելի են աղետների հանդեպ, քանի որ



սրանք քիչ ներուժ ունեն քաղաքային շինությունների ընդարձակման, անտառհատումների և ափամերձ համակարգերի ավերման նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար

Հստ UN-HABITAT-ի տվյալների՝ ամբողջ աշխարհում 351 քաղաք տեղակայված է ծովի մակերևույթից ոչ բարձր ափամերձ գոտիներում և ծովի մակերևույթի բարձրացման սպառնալիքի ներքո՝ ոխսկային գոտում են: 10 խոշորագույն քաղաքներից 6-ը նույնպես տարածված են տեկտոնական ձեղքածքների երկայնքով:

Ինչ կարելի է անել Պետությունները կարող են կատարել հետևյալը՝

- Պետական և տեղական բյուջեներում համակարգված ձևով ԱՌՆ նպատակով ներառել միջոցներ, որոնք վերաբերում են քաղաքային զարգացման պլանավորման բոլոր ասպեկտներին
- Պլանավորել քաղաքների զարգացումները և ոխսկի գոտիներում խուսափել շինարարությունից

➤ Խուսափել ետնախտրշերի ընդարձակումից՝ քիչ եկամուտ ունեցող ընտանիքներին առաջարկելով ավելի անվտանգ քնակավայրեր

➤ Կառուցել առավել անվտանգ դպրոցներ, հիվանդանոցներ, ճանապարհներ և կամուրջներ, որոնք անսասան կմնան ցանկացած տարերային հարվածից

➤ Որոշել բարձր ոխսկերի գոտիները, զարգացման ծրագրերում ընդգրկել աղետների ոխսկերի նվազեցման միջոցներ և արդյունավետ քաղաքականություն իրականացնել հետաղետային վերականգնումների համար

➤ Երկրաշարժերի ենթակա գոտիներում շինարարություն կատարելիս սեյսմիկ ոխսկերի գնահատումներ անցկացնել

➤ ԱՌՆ թեմաներով աշխատանքներ տանել ոխսկերի ենթակա բնակչության խմբերի հետ, որոնք նրանց բնակավայրերը կդարձնեն ավելի անվտանգ, ինչն ի վերջո կավելացնի բնակչության՝ աղետներին արձագանքելու ներուժը

➤ Պաշտպանել համայնքները՝ նախնական ազդարարման համակարգերի ծավալումով

➤ Կանոնավոր ուսուցման շնորհիվ նախազգուշացումները դարձնել ավելի արդյունավետ և համայնքների իմացություններին ավելացնել մոտալուս աղետները կանխատեսելու կարողությունը և թե՝ ինչպես այն օգտագործել աղետների դեմ նախապատրաստվելու և պայքարելու համար

➤ Ապահովել աղքատ համայնքների մուտքը ֆինանսավորող կառույցներ՝ պաշտպանելու համար նրանց տներն ու եկամտի աղբյուրները:

Քաղաքները դարձնենք կայուն

Քաղաքների կայունությունը բարձրացնելու համար ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարությունը 2010 թվականին սկիզբ դրեց համաշխարհային արշավի, որն առաջարկում է քաղաքների կայունություն ապահովող 10 կետից քաղկացած հսկողական ցուցակ: Այս կետերը պետք է իրականացվեն համայնքների դեկավարների և տեղական իշխանությունների կողմից: Հսկողական այս ցուցակը կազմվել է հաշվի առնելով «2005-2015թթ. Հյուզոյի գործողությունների ծրագրի» հինգ գերակայությունները, որոնք մշակված են պետության և համայնքների մակարդակով աղետների դեմ պայքարի ներուժի ստեղծման նպատակով և համարվում վճռորդ գործիք ԱՌՆ միջոցառումների իրականացման համար: Այս 10 կետերից թեկուցեն մի քանիսի կատարումը հնարավորություն կտա քաղաքներն ավելի կայուն դարձնել:

Աղքատություն Աղքատությունը և սոցիալ-տնտեսական անհավասարությունը մեծացնում են աղետների ռիսկերը: Սրանք աղքատներին ոչ միայն ավելի խոցելի են դարձնում աղետների հանդեպ, այլ նաև այնպես են անում, որ նրանք հայտնվեն աղքատության փակ շրջանակում:

Փաստեր

➤ Աղքատներն ամենից շատ են տուժում աղետների դեպքում. սա բնորոշ է ոչ միայն զարգացող երկրների, այլ նաև զարգացած պետությունների համար: Խոցելիության աստիճանը զգալիորեն կախված է մարդկանց, համայնքների և պետությունների տնտեսական կարգավիճակից: ԱՄՆ-ում Կատրինա փոթորկի ժամանակ բռնրից շատ տուժել են աղքատ շրջանները: 2008 թվականին Հայթիք փոթորկիների ժամանակ ամենից շատ վնասներ կրել են Կարիքյան ծոցի երկրները:

➤ Աղետների հետևանքով տուժածների 53 տոկոսը բնակվում է զարգացող երկրներում, այն դեպքում, եթե զարգացած երկրներում ապրում են ընդամենը 1.8 տոկոս աղետյալներ: Աղետների հետևանքով զոհվածների 95 տոկոսից ավելին ապրում էին եկամուտի սուր և միջին աղբյուրներ ունեցող երկրներում /ըստ Համաշխարհային բանկի դասակարգման/, որը հաշվարկվում է բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արտադրության չափերով:

➤ Աղետների հետևանքով աղքատ երկրներն ու համայնքները շատ անզամ ավելի են տուժում: Համաշխարհային բանկը հայտարարում է. «Զարգացող երկրների համար անհամաշափ մեծ վնասներն ունեն շատ բացատրություններ: Զարգացման անբավարարությունը ինքնըստինքյան պայմանավորում է աղետների հետևանքներ, սա կապված է շինարարության և շինարարական նորմերի և կանոնների ցածր որակի, գրանցման անարդյունավետ գործնթացների, ինչպես նաև այլ կարգավորող մեխանիզմների բացակայության հետ: Բացի այդ, զարգացման բազմաթիվ հիմնահարցեր շեղում են ուշադրությունը տարերային աղետների հետ կապված ռիսկերից» /«Բնական սպառնալիքներ, զարգացման ռիսկեր» Համաշխարհային բանկ, 2006թ./:

➤ Երկրի զարգացման մակարդակն անմիջականորեն ազդում է բնական սպառնալիքներից առաջացած վնասների վրա: Քիչ զարգացած երկրները տուժում են ամենից շատ, քանի որ այնտեղ աղետներ հաճախ են լինում և հետևանքներն առավել կործանարար են: Թույլ զարգացած ենթակառուցվածքը և կանխման սահմանափակ

ներուժը հարուստ արդյունաբերական երկրների համեմատ սրանց դարձնում են ավելի խոցելի:

➤ Աշխարհի բնակչության կեսը խոցելի է աղետների հանդեպ՝ ելնելով կենցաղային պայմաններից: Ետնախորշերը և քաղաքային աղքատ թաղամասերը բոլորից շատ են ենթարկվում աղետների ռիսկերի:

➤ Ամբողջ աշխարհում մոտ 1 մլրդ մարդ ապրում է ետնախորշերում ու խրճիթներում և նրանք աղետների հանդեպ համարվում են խոցելի:



➤ Լայնածավալ հետազոտությունները ցույց են տալիս, որ աղքատ մարդիկ հաճախ բնակություն են հաստատում վտանգավոր և ոչ ցանկալի վայրերում, օրինակ, գետերի հովտամասերում, գետափերին, զարիվայր թերություններում և ցամաքի չորացած տարածքներում, քանի որ այս տեղերում գները ցածր են:

➤ Աղքատ մարդիկ հաճախ ապրում են ցածրորակ և չպաշտպանված շենքերում, որոնք տարերային հարվածի դեպքում առաջինն են կործանվում:

➤ Աղետների հետևանքով առաջացած վնասները նախ և առաջ բարդացնում են ամենաղքատ խավի կյանքը:

➤ Աղետներն աղքատների համար երկարաժամկետ հետևանքներ են ունենում, քանի որ նրանք վերականգնման քիչ հնարավորություններ են ունենում: Տարերային հարվածի դեպքում աղքատները ոչ միայն կորցնում են ընտանիքի անդամներին, տունը, եկամտի հիմնական աղբյուրները և գոյության միջոցները, այլ նաև դառնում են առավել խոցելի զալիք աղետների հանդեպ:

Ի՞նչ կարելի է անել Պետությունները կարող են կատարել հետևյալը

➤ Մշակել քաղաքային զարգացման ծրագրեր, որոնք ոխսկի օրենքների շրջանակներում կխոչընդոտեն ետնախորշերի ձևավորմանը և թույլ չեն տա շինարարություն իրականացնել վտանգավոր զարիվայրերում կամ գետերի հովտամասերում:

➤ Ապահովել աղքատների մուտքը դեպի անվտանգ գոտիներ:

➤ Ամենաաղքատ համայնքներին ներգրավել աղքատության դեմ պայքարի ծավալման ներուժում, քանի որ նրանք կարող են բռնորդից շատ տուժել, բացի այդ, նրանց կարելի է ներգրավել՝ ակտիվորեն մասնակցելու համայնքի քաղաքական կյանքին:



➤ Ամենաաղքատների համար լիարժեք մուտք ապահովել նախնական իրազեկման համակարգեր, նախապատրաստական միջոցառումներում, միաժամանակ ապահովել նրանց մուտքը ֆինանսավորման մեխանիզմներ, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց տները, առողջությունն ու գոյության միջոցները:

➤ Մշակել կետային ֆինանսավորման մեխանիզմներ, որոնք ներառում են ապառիկներ, կուտակային հաշիվներ և ոչ մեծ գումարների ապահովագրություններ, այս գործիքները հնարավորություն կտան կրծատելու աղքատությունը, ինչպես նաև նվազեցնելու խոցելիությունը բնական սպառնալիքների հանդեպ:

Շրջակա միջավայրի վատթարացումը Համայնքները, ոչնչացնելով անտառները, մարջանե խորթերը և ձահճացած տարածքները, որոնք կարող էին իրենց պաշտպանել, շատ հաճախ մեծացնում են աղետների հետևանքով առաջացած ավերածությունների հավանականությունը:

Փաստեր

➤ Անտառներն ինչոք ժամանակ ծածկում էին երկրի ցամաքային տարածքի 46 տոկոսը: Սրանց կեսն արդեն անհետացած է, և երկրի ամբողջ անտառների միայն 1/5 մասն է անձեռնմխելի մնացել:

➤ Մարջանե խութերը ապաստան են համարվում ծովային բոլոր տեսակների 1/4-ի համար: Հաջորդող 20-40 տարիների ընթացքում մարջանե խութերը հնարավոր է այլև չինեն:

➤ Համատարած անապատացումը և հողային պաշարների սպառումը սպառնում են երկրագնդի ցամաքային տարածքի 1/4-ին: Ավելի քան 250 մլն մարդ անմիջականորեն տուժում են հողերի ամայացումներից, և 1 մլրդ մարդ ապրում է ոխսկի գոտիներում:

➤ Գլոբալ տաքացումը կարող է ուղեկցվել տեսակների համատարած ոչնչացմամբ, Էկոհամակարգի վատքարացմամբ, բնակավայրերի հեղեղմամբ և ավելի հաճախակի ու ինտենսիվ աղետներով՝ պայմանավորված բնական աղետների նկատմամբ խոցելիխությամբ:

Ի՞նչ կարելի է անել Պետությունները կարող են կատարել հետևյալը՝

➤ Հողօգտագործումներ պլանավորելիս ցուցաբերել բնապահպանական մոտեցումներ

➤ Բնապահպանական քաղաքականություն և օրենսդրություն մշակելիս ոխսկերի նվազեցման խնդրում ձանաչել Էկոհամակարգի նշանակությունը

➤ Որոշել և պաշտպանել բնական արգելապատնեշները՝ անտառները, ձահձահողերը և մարջանե խութերը

➤ Վերականգնել անտառներն ու աձեցնել մշտադալար պուրակներ՝ համայնքները պաշտպանելու այնպիսի սպառնալիքներից, ինչպիսիք են փոթորկային մակընթացությունները, մերձափնյա տարածքների հեղեղումները, արևադարձային փոթորկները

➤ Անտառային հրդեհների ոխսկերի նվազեցման համար անտառային պաշարների ձիշտ շահագործում:

Ինչու պետք է պաշտպանել շրջակա միջավայրը Ճահճացած հողերն ու անտառները բնական ծովախորշերի դեր են կատարում, որոնք ներծծում և դանդաղ մատակարարում են մակերեսային ջրեր, հեղեղաջրեր: Նման բնական արգելքների ոչնչացումը կարող է ռիսկի ենթարկել տասնյակ հազարավոր մարդկանց: Օրինակ, մշտադալար անտառները, խութերը, ավագաբուրները բնական ֆիզիկական արգելապատնեշի դեր են կատարում՝ համայնքները պաշտպանելով ափամերձ շրջաններին բնորոշ սպառնալիքներից: Եթե սրանք անհետանում են, ապա համայնքները ենթարկվում են ջրհեղեղների մեծ ռիսկերի: Այս նույնը վերաբերում է նաև անտառհատումներին: Եթե թերություններում ծառեր չկան, ապա սրանք չեն կարող պահել ջրերը: Որպես հետևանք՝ հողի էռողիան նվազեցնում է զյուղատնտեսական հողերի բերքատվությունը, մեծացնում է երաշտի հավանականությունը և ի վերջո հանգեցնում անապատացման: Կան վեց երկրներ, որոնք լավագույնս պայքարում են ռիսկերի գործոնների դեմ՝ կապված վատ պլանավորված և վատ կառավարվող քաղաքային շինության կողմանակարգի վատքարացման և աղքատության հետ և ունեն արյունավետ կառավարություն: Դրանք են՝ Շվեյցարիան, Շվեյցարիան, Դանիան, Իռլանդիան, Նորվեգիան և Ֆինլանդիան: Ցուցակի ստորին մասում հայտնված հաջորդ վեց երկրները /Աֆղանստան, Չադ, Հայիթի, Սոմալի, Էրիթրեա և Կոնգոյի ժողովրդական Հանրապետություն/՝ ցածր եկամուտ ունեցող երկրներ են, որոնք վերջերս քախվել կամ քախվում են կոնֆլիկտների և քաղաքական ճգնաժամ են ապրում:

Ինչպես կարելի է կանխարգելել աղետները

2005 թ. հունվարին, ընդամենը 3 շաբաթ նրանից հետո, երբ Հնդկական օվկիանոսի ցունամին շուրջ 250 000 մարդ սպանեց, կառավարության 168 ներկայացուցիչներ հանդիպեցին Կոբեում (Հյոգո) անցկացվող Աղետների վտանգի նվազեցման 2-րդ համաշխարհային գիտաժողովի շրջանակներում և համաձայնեցրին մինչև 2015 թ. աղետների վնասի

Նվազեցմանն ուղղված 10-ամյա պլանը: Այն կոչվեց «2005-2015 թթ. գործողությունների Հյոդոյի շրջանակային ծրագիր. պետությունների և համայնքների մակարդակով աղետների հակագործության ներուժի ստեղծում»:

Հյոդոյի գործողությունների շրջանակային ծրագիր

Հյոդոյի գործողությունների շրջանակային ծրագրի նպատակն է ապահովել պետությունների, քաղաքների ու համայնքների կայունությունը, ինչպես նաև մինչև 2015 թ. նվազեցնել աղետների ավերիչ հետևանքները, ինչպես գոհերի թվի նվազեցման, այնպես էլ՝ տնտեսական կորուստների առումով: Տվյալ ծրագիրը նպատակային ցուցանիշներ չի պարունակում, սակայն նշում է 3 ռազմավարական նպատակ և գործունեության 5 առաջնահերթ ուղղություն, որոնց իրականացման դեպքում պետությունների ու համայնքների անվտանգությունը կբարձրանա:

Ռազմավարական նպատակները

1. Ընդունել ԱՌՆ միջոցները կայուն գարգացման քաղաքականության, պլանների ու ծրագրերի մեջ:
2. Բոլոր մակարդակներում՝ հատկապես համայնքային, ստեղծել ինստիտուտներ, մեխանիզմներ ու ռեսուրսներ՝ ապահովելու համար կայունությունը սպառնակիքների նկատմամբ:
3. ԱԻ դեպքում նախապատրաստական, արձագանքման և վերականգնողական ծրագրերի մշակման ընթացքում պարբերաբար հաշվի առնել ԱՌՆ միջոցները:

Գործունեության առաջնահերթ ուղղությունները

1. Ապահովել ԱՌՆ միջոցների տեղական և ազգային առաջնահերթությունը և դրված խնդիրների իրականացման համար ստեղծել արդյունավետ ինստիտուտներ

- Օրվա քաղաքական օրակարգը ձևավորելիս և քաղաքականության մշակելիս բարձրացնել ԱՌՆ միջոցների առաջնայնությունը՝ ներգրավելով պետության և համայնքների ամենաբարձր մակարդակի դեկավարությանը
- Ստեղծել ազգային և ինստիտուցիոնալ ենթակառուցվածք, որը կրաշխի առաջադրանքները և կզբաղվի ռիսկի նվազեցմամբ: Տվյալ ենթակառուցվածքը պետք է ընդգրկի բոլոր շահագրգիռ կողմերը, որպեսզի կանխի, մերմայնի ու նախապատրաստվի սպառնալիքների հետևանքներին տարածաշրջանային, ազգային ու տեղական մակարդակներով

2. Բացահայտել, գնահատել ու հետևել աղետների ռիսկին, ինչպես նաև կատարելազործել վաղ ազդարարման համակարգերը

- Գնահատման գործիքների միջոցով, ինչպիսիք են սպառնալիքների ու խոցելիության քարտեզները, որոշել ռիսկի գոտիները, ծավալել վաղ ազդարարման արդյունավետ համակարգեր

3. Կիրառել գիտելիքները, նորարարական մշակումները և ուսումնական դասընթացները բոլոր մակարդակներում կայունության և անվտանգության մշակույթ ձևավորելու համար

- Բարձրացնել աղետների մասին հանրության իրազեկման աստիճանը, դպրոցներում ուսուցանել երեխաներին և ապահովել ստացած գիտելիքների կիրառումը, որպեսզի բոլոր մակարդակներում ձևավորվի կայունության և անվտանգության մշակույթ

4. Նվազեցնել ռիսկի հիմնական գործոնները

- Պլանավորել հողօգտագործումը
- Պահպանել բնական պատվարները

- Աղետակայուն տներ և կարևորագույն ենթակառուցվածքները, ինչպիսիք են հիվանդանոցները, դպրոցները, կառուցքներն ու ձանապարհները, կառուցելանվտանգ շրջաններում
- Տեղերում ձևավորել սոցիալական ու ֆինանսական մեխանիզմներ
- Նվազեցնել ռիսկը բոլոր բնագավառներում (գյուղատնտեսություն, գրուսաշրջություն, առողջապահություն, տրանսպորտ)

5. Բարձրացնել աղետներին պատրաստվածությունը բոլոր մակարդակներում

- Մշակել տարհանման որակյալ պլաններ ու կազմակերպել վարժանքներ
- Մարդկանց ծանոթացնել վտանգի մասին նախազգուշացումներին
- Կազմակերպել ուսումնավարժություններ
- Մշակել աղետից հետո վերականգնման պլաններ

ՀԳԾ-ն պարտադիր կատարման ենթակա փաստաթուղթ չէ. սա միայն միջազգային շրջանակային ծրագիր է մինչ 2015 թ., որը նկարագրում է բնական սպառնալիքների հետ կապված ռիսկերի նվազեցման ռազմավարական ու համալիր մոտեցումները: Աղետի դեպքում միայն արձագանքման միջոցառումների վրա կենտրոնանալու փոխարեն այս ծրագիրն իրենից ներկայացնում է աղետների սկզբնական պատճառների հանդեպ ուշադրության զգալի տեղաշարժ, որը կայուն զարգացման անբաժանելի բաղադրիչն է:

Ով է պատասխանատու ԱՌՆ համար

Չնայած պատասխանատվության հիմնական կրողները կառավարություններն են՝ ՀԳԾ-ն ընդունում է նաև

տարածաշրջանային, քաղաքային և տեղական կառավարման մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների ու առանձին քաղաքացիների մասնակցության կարևորությունը: Առանց շրջանների, համայնքների դեկավարության կամ առանձին անհատների լիարժեք մասնակցության հնարավոր չեր լինի ԱՌՆ քաղաքականության իրականացումը:

ԱՌՆ առանցքային հասկացությունները

1. Աղետները «բնական» չեն: Սպառնալիքները՝ այս: Աղետները հաճախ հնարավոր է կանխել, իսկ հետևանքները՝ մեղմացնել:
2. Կանխարգելմանն ուղղված միջոցները փոխհատուցվում են ու ապահովում արագ օգուտ: Կանխարգելման ֆինանսավորումը ոչ թե ծախս է, այլ՝ ներդրում:
3. Աղետները ոչ միայն հանգեցնում են մարդկային տառապանքների ու ավերածությունների, այլև խոչընդոտում երկարաժամկետ զարգացմանը, քանի որ տուժածները հայտնվում են աղբատության փակ շրջանի մեջ:
4. Աղետների ոխովի նվազեցումը մարդկանց կյանքի փրկությունն է և ապրուստի միջոցների աղբյուրների պաշտպանությունը՝ մարդկանց հայացքները փոխելու միջոցով: Դա անցումն է արձագանքման մշակույթից դեպի կանխարգելման և համայնքների խոցելիության նվազեցման մշակույթ:
5. Մարդիկ ունեն անվտանգ ու արժանապատիկ ապրելու իրավունք: Պետությունը պարտավոր է պաշտպանել իր քաղաքացիներին: Այսպիսով՝ կարևոր է, որպեսզի ԱՌՆ քաղաքականություն մշակողները համակարգային ձևով ընդգրկվեն կայուն զարգացման ռազմավարության բոլոր մակարդակներում՝ ազգայինից մինչև տեղական:
6. Դպրոցների, հիվանդանոցների և բոլոր կարևորագույն ենթակառուցվածքների անվտանգությունը հասարակության խոցելիության նվազեցման կարևորագույն տարրերից է:

Կառավարությունները պատասխանատվություն են կրում բոլոր ծայրահեղ կարևոր շենք-շինությունների (ինչպիսիք են դպրոցներն ու հիվանդանոցները) պաշտպանության համար, ինչը համայնքները դարձնում է ավելի աղետակայուն:

7. Վաղ ազդարարման համակարգերը կարող են կյանքեր փրկել: Եթե նախազգուշական ազդանշանը հնչում է նախքան աղետը, ապա հնարավոր է խուսափել զոհեր ունենալուց:
8. Վանիսարգելման մշակույթ ձևավորելու համար անհրաժեշտ է ուսուցում: Մարդիկ պետք է ստանան զիտելիքներ, հմտություններ ու ռեսուրսներ, որոնք կօգնեն նրանց պաշտպանվել աղետների ռիսկերից, ինչպես դա արդեն արվում է առողջապահության կամ ճանապարհային երթևեկության համար:
9. Վարելոր է ունենալ անվտանգ և առողջ շրջակա միջավայր: Ցուրաքանչյուրի պարտականությունն է պաշտպանել շրջակա միջավայրը, որպեսզի նվազեցվեն բնական սպառնալիքների հետևանքները:
10. Կլիմայի փոփոխություններին հարմարվողականությունը սկսվում է աղետների ռիսկի նվազեցումից: Վանիսատեսվում է, որ կլիմայի փոփոխությունները կավելացնեն փոթորիկների, ջրհեղեղների ու երաշտների ուժգնությունն ու հաճախությունը: Համայնքները պետք է պատրաստ լինեն դիմակայի կլիմայական սպառնալիքներին:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Արտակարգ իրավիճակներում գործածվող հիմնական հասկացությունները

ԱՐՏԱԿԱՐԳ

ԻՐԱՎԻՃԱԿԱՆ ԵՐՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻՑ

Հնդրությունը էլեկտրոնային ձևով հաստատվել է 02.12.1998

արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օրեկտում խոչոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ եկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաձարակի, անասնահամաձարակի (էպիզոոտիա), բռվսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), գենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման.

բնակչության պաշտպանություն՝ արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումներ.

արտակարգ իրավիճակների կանխում՝ արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում.

արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցում՝ նախօրոր իրականացվող միջոցառումների համալիր՝ արտակարգ իրավիճակների ազդեցության հնարավոր մեղմացման համար.

արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝ արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար.

աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օրեկտ) կամ տարածքի մի մաս.

տարիանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում.

պատսպարում՝ արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման գենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում.

անհատական պաշտպանություն՝ մարդկանց՝ ձառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում.

հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտ՝ պետական ու ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող և բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտ:

ՔԱՂԱՔԱՑԻՒԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ Ընդունվել է 05.03.2002

քաղաքացիական պաշտպանություն՝ միջոցառումների համակարգ՝ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում.

քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածք՝ բնակավայր, հատուկ, կարևորագույն ու պատմամշակութային նշանակության օբյեկտներ ընդգրկող տարածք. հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներ՝ պետական և ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող ու բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտներ.

քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում իրենց իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար ստեղծված ծառայություններ.

քաղաքացիական **պաշտպանության** **կազմավորումներ՝**
համայնքներում, կազմակերպություններում ստեղծվող
կազմավորումներ, որոնք հանդերձավորված են փրկարարական և
անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար
նախատեսված տեխնիկայով, հանդերձանքով, գույքով ու
նախատեսված են իրականացնելու քաղաքացիական
պաշտպանության միջոցառումներ և չեն մտնում Հայաստանի
Հանրապետության գինված ուժերի և այլ զորքերի կազմի մեջ.

անհետաձգելի **վթարավերականգնողական** **աշխատանքներ՝**
առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և
առողջությանն սպառնացող այնպիսի գրքունների ազդեցության
վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և
փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ
փլմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի
առյուրների վթարային անշատմանը, բնակչության ու փրկարանների
կենսապահովման առաջնահերթ օբյեկտները ժամանակավոր
սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի
սանիտարական մաքրմանը:

**ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀՀ
ՕՐԵՆՔԻՑ**

Ընդունվել է 25.05.2004

արտակարգ իրավիճակի վայր՝ տարածք, օբյեկտ, ուր առաջացել է
արտակարգ իրավիճակը.

փրկարար՝ փրկարարական աշխատանքներ կատարելու համար
նախապատրաստված և Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորված ֆիզիկական
անձ.

փրկարար ուժեր՝ փրկարարական աշխատանքներ կատարելու համար
նախատեսված, համապատասխան փրկարարական միջոցներով
հագեցված, մասնագիտացված փրկարարներով համալրված
կազմավորումներ.

փրկարարական կազմավորումներ՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման նպատակով պետական կառավարման մարմինների, համայնքների և կազմակերպությունների կազմում ստեղծված մշտական պատրաստության ստորաբաժանումներ, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակը ունեցող կազմակերպություններ՝ համալրված փրկարարներով, փրկարարների գործունեությունն ապահովող անձանցով և փրկարարական միջոցներով.

փրկարարական միջոցներ՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման ու դրանց ղեկավարման համար նախապատրաստված տեխնիկական, գիտատեխնիկական միջոցներ և մտավոր գործունեության արդյունքներ, գույք, հանդերձանք, նյութեր, սարքավորումներ:

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻՑ

Ընդունվել է 18.04.2001

հրդեհային անվտանգություն՝ հրդեհներից անձի, գույքի, հասարակության և պետության պաշտպանվածություն.

հրդեհ՝ չլերահսկվող այրում, որը բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս է հասցնում անձին, հասարակության և պետության շահերին, վտանգում է մարդու առողջությունը և կյանքը.

հրդեհային անվտանգության պահանջներ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ սոցիալական և տեխնիկական բնույթի հատուկ պայմաններ.

հրդեհաշխման (հրդեհի մարման) հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ՝ հրդեհի ժամանակ մարդկանց, գույքը փրկելու, տուժողներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու ուղղությամբ հրդեհային պահպանության մարտական գործողություններ.

հրդեհային պահպանություն՝ հրդեհների կանխարգելման, հրդեհաշխման, ինչպես նաև դրանց հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ անցկացնելու նպատակով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ուժերի և

միջոցների, այդ թվում՝ հակահրդեհային միջոցների ամբողջություն. հրդեհային անվտանգության միջոցներ՝ հրդեհային անվտանգության ապահովմանը, այդ թվում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարմանն ուղղված գործողություններ.

հրդեհատեխնիկական արտադրանք՝ հրդեհային անվտանգության ապահովման համար նախատեսված հատուկ տեխնիկական, զիտատեխնիկական և մտավոր արտադրանք, այդ թվում հրդեհային տեխնիկա և սարքավորում, հրդեհային հանդերձանք, կրակմարիչ, հրապահպան և հրակայուն նյութեր, հատուկ կապի և կառավարման միջոցներ, համակարգչային ծրագրեր, տեղեկությունների բանկ, ինչպես նաև հրդեհների կանխարգելման և հրդեհաշխման այլ միջոցներ.

հրդեհային անվտանգության ապահովման համակարգ՝ հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերի և միջոցների, ինչպես նաև իրավական, կազմակերպական, տնտեսական, սոցիալական և զիտատեխնիկական միջոցառումների ամբողջություն:

ԿԱՐԳ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐՍՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ

I. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
 - ա) տարհանման հանձնաժողով՝ համապատասխան մարզպետի (Երևանի քաղաքապետի) և համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ, որը կազմակերպում ու ղեկավարվում է տվյալ տարածքի բնակչության և կազմակերպությունների տարհանման միջոցառումները.
 - բ) տարհանման հավաքակայան՝ տարհանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքատեղ.
 - գ) ընդունման հավաքակայան՝ հավաքատեղ, որտեղ կատարվում է տարհանված բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումն ըստ ժամանակավոր կացարանների.
 - դ) ընդհանուր տարհանում՝ տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարհանում.
 - ե) մասնակի տարհանում՝ մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքի կազմում չկան տարհանման ենթակա՝ աշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարհանում.
 - զ) տարհանման երթուղի՝ բնակչության և տեղաբաշխման բնակավայրերը միացնող ճանապարհ (ճանապարհահատված).
 - է) տարհանման ավտոշարապյուն՝ տարհանման հավաքակայանից (բնակավայրերից) ընդունման հավաքակայան (բնակավայր) մեկնող երկու կամ ավելի ավտոմեքենայից բաղկացած շարապյուն.
 - ը) տարհանման հետինուն շարապյուն՝ տարհանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) հետինուն կազմակերպված խումբ.
 - թ) տարհանման երկաթուղային շարապյուն՝ չվացուցակային կամ չվացուցակից դրուս երկաթուղային շարժակազմ, որը նախատեսվում է տարհանվող բնակչությանը տեղափոխելու համար.

- Ժ) տարիանման պլան՝ նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, օբյեկտից) մեկ այլ տարածք բնակչության տարիանման միջոցառումները.
- Ժա) վտանգավոր տարածք՝ տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց լյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:
2. Տարիանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:
3. Տարիանումն իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց լյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:
4. Անվտանգ տարածքում տարիանվող բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ օգտագործվում են դպրոցները, ակումբները, հյուրանոցները, հանրակացարանները, բնակելի տները՝ անկախ սեփականության ձևից:
5. Նշված ժամանակավոր կացարանների տրամադրումն իրականացվում է հետագա համարժեք փոխառուցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Բնակչության տարիանում նախատեսվում է՝
- ա) ջրամբարների պատվարների վլուզման կամ գետերի ջրերի հորդացման հետևանքով ջրածածկման ենթակա տարածքներից,
- բ) սողանքների և ձնահյուսերի հետևանքով առաջացած տարածքներից,
- շ) երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից,
- դ) ատոմային էլեկտրակայանի (այսուհետև՝ ԱԷԿ) ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում տարիանման սահմանված միջամտման չափաքանակների գերազանցմամբ ճառագայթային ազդեցության և (կամ) ճառագայթային աղտոտման ենթակա տարածքներից.

- ե) վտանգավոր թունավոր նյութեր արտադրող կամ արտադրական պրոցեսում դրանք օգտագործող արդյունաբերական օբյեկտներին հարակից վարակավտանգ գոտուց.
- զ) ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի հետևանքով արաջացած վտանգավոր տարածքից.
- է) զենքի տեսակների կիրառման դեպքում մասնակի տարհանում սահմանամերձ, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման բնակավայրերից ու տարածքներից:

II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

7. Բնակչությունը կարող է տարհանվել հետիւտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով, երկաթուղային շարժակազմերով և ջրային տրանսպորտով:
8. Առանձին դեպքերում տարհանման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օրային տրանսպորտային միջոցներ:
9. Տարհանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների կիրառումն ու վառելիքաքսութային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

III. ՏԱՐՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10. Տարերային, տեխնածին կամ եկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում բնակչության տարհանման մասին որոշում ընդունում են համապատասխան մարզպետները (Երևանի քաղաքապետը), համայնքների և օբյեկտի դեկավարները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք: Տարհանման որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է ընդունված որոշման մասին վթարային հակազդման պլաններով սահմանված կարգով տեղեկացնել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող համապատասխան մարմիններին և գեկուցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

11. ԱԵԿ-ի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում ԱԵԿ-ին հարակից 5 կմ շառավղով նախահարձակ պաշտպանական գործողությունների իրականացման գոտու բնակավայրերի բնակչության տարհանումը կազմակերպվում է ԱԵԿ-ից ստացված ահազանգի հիման վրա՝ համապատասխան համայնքի դեկավարի կողմից, իսկ 5 կմ շառավղով գոտուց դուրս՝ սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով:

12. Զենքի տեսակների կիրառման դեպքում տարհանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետք՝ իր իրավասության սահմաններում:

Տարհանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է նշել նաև տարհանման ժամկետները (սկիզբ, ավարտը) ձևը (հետիոտն շարայուններով, տրանսպորտային միջոցներով) և այլն:

IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

13. Պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են բնակչության տարհանումն ու տարհանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը:

14. Տարհանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարհանման պլաններով:

15. Բնակչության տարհանման պլանները մշակում են տարհանման համապատասխան հանձնաժողովները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության տարածքային մարմինների հետ համատեղ:

16. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը սահմանում է տարհանման պլանների կառուցվածքը, պաշտոնատար անձանց պարտականություններն ու համապատասխան փաստաթղթերի ձևերը:

17. Բնակավայրերում կարող է ստեղծվել մեկ կամ ավելի տարհանման հավաքակայան՝ մեկ հավաքակայանում 10000 տարհանվողից ոչ ավելի՝ սպասարկման սկզբունքներով:
18. Տարհանման հավաքակայանները ստեղծվում են դպրոցներում կամ նմանատիպ վայրերում, ապահովում կապի միջոցներով, բուժապասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով։ Տարհանման երթուղիները ձգրտվում են տարհանման հավաքակայաններում։
19. Բնակչության տարհանումն իրականացվում է տարհանման հավաքակայաններից, որտեղ տարհանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարհանվողները։
20. Յուրաքանչյուր տարհանվող պարտավոր է՝
 ա) ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, երեք օրվա սննդամթերք և այլ անհրաժեշտ պարագաներ։
 բ) հոսանքագրկել բնակարանը և անվտանգ տեղեր փոխադրել հրդեհավտանգ ու պայյունավտանգ նյութերը և առարկաները։
 գ) տարհանման և ընդունման հավաքակայաններում ու երթի ընթացքում կատարել հավաքակայանների և շարասյան պետերի հրահանգներն ու հանձնարարականները։
21. Ընդհանուր կամ մասնակի տարհանման դեպքում տարհանվողների տեղափոխումն իրականացվում է անշափահասների, հիվանդների և հաշմանդամների առաջնահերթության սկզբունքով։ Հիվանդների և բժշկական հիմնարկների (հիվանդանոցների) բուժանձնակազմի տարհանումն իրականացվում է տեղերից՝ այդ նպատակով նախապես տրամադրված համապատասխան փոխադրամիջոցներով, շրջանցելով տարհանման հավաքակայանները, որտեղ ներկայացվում է տարհանվողների ցուցակը և ձշտվում են երթուղիները։

V. ՏԱՐՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

22. Տարհանման միջոցառումների տրանսպորտային ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարության և համապատասխան մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ծառայությունների միջոցով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության և դրա կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած հայտի։

23. Բնակչության տարիանման համար օգտագործվում են ջրային տրանսպորտ և մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, թերև մարդատար ավտոմեքենաներ): Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել նաև թափքավոր և ինքնաթափ բեռնատար ավտոմեքենաներ ու ավտոկցորդներ, որոնք նախապես պետք է հարմարեցնել մարդկանց փոխադրելու համար: Տարիանումն իրականացնող տրանսպորտային միջոցներն ապահովում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տվյալ անցագրերով:
24. Զինվորական փոխադրումներում ընդգրկված տրանսպորտային միջոցները չեն օգտագործվում բնակչությանը տարհանելու համար:
25. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարմիններն իրականացնում են տարհանման երթուղիների անցողունակության և տարիանվածք բնակավայրերում (տարածքներում) ու օբյեկտներում մնացած գույքի պահպանության միջոցառումները:
26. Տարիանման և բնակչության ընդունման հավաքակայաններում, ժամանակավոր կացարաններում, տարհանման երթուղիներում տարհանվողների բուժօգնության միջոցառումներն իրականացվում են տարհանված բժշկական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության առողջապահության և Հայաստանի Հանրապետության մարզային (Երևան քաղաքի) առողջապահական համապատասխան ծառայությունների կողմից, սեփական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հետագա համարժեք փոխհատուցմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանաձև կարգով:
- Տարիանված բժշկական հիմնարկները տեղաբաշխվում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշմամբ հատկացված տարածքներում (շենքային պայմաններում):

ԴՊՐՈՅԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Յուրաքանչյուր մարդ կենցաղում, աշխատավայրում, ուստիմնական հաստատությունում կամ շրջակա միջավայրի պայմաններում կարող է հայտնվել այնպիսի իրավիճակներում, որոնք դուրս են գալիս մարդու կենսագործունեության բնականոն պայմանների շրջանակներից և ուղեկցվում են մարդու կյանքի և կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններով:

Հայտնվելով նման բարդ և անսովոր իրավիճակներում, եթք անհրաժեշտ են արագ ու հստակ գործողություններ, հաճած մարդը դառնում է միանգամայն անօգնական, անընդունակ՝ լուծելու պարզ, բայց կենսականորեն կարևոր խնդիրներ:

Ինչպէ՞ս խուսափել նման իրավիճակներից կամ հայտնվելու դեպքում ինչպէ՞ս նվազեցնել դրանց ծայրահեղությունը և մեղմել հետևանքները: Արտակարգ իրավիճակներն առաջանում են տարերային, տեխնածին և այլ աղետների հետևանքով: Դրանք կարող են տեղի ունենալ յուրաքանչյուր օր՝ անկախ տարվա եղանակից, օրվա ժամից, մարդկանց պատրաստ կամ անպատրաստ լինելուց: Երբեմն աղետն անսպասելի է, դաժան ու անողոք: Հաճախ ժամանակ չի լինում իրավիճակը գնահատելու, որոշում ընդունելու, իսկ իրավիճակը պահանջում է գործել ակնթարթորեն, արագ, ավտոմատ կերպով:

Մարդկությանը պատուհասած աղետներից քաղած դասերը և կենսափորձը մեզ հուշում են, որ յուրաքանչյուր մարդ պետք է կարողան գործել իրավիճակին համարժեք և արտակարգ իրավիճակներում պահելաձելի, վարքի կանոններին համապատասխան:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցման բնագավառում աճող սերնդի ուսուցումը կարևոր նշանակություն ունի, քանի որ նման իրավիճակներում՝ աղետի հանկարծակիրության, իրավիճակի ծայրահեղության, ունակությունների, հմտությունների, կենսափորձի, բարոյահոգեբանական պատրաստության պակասի և այլ օրյեկտիվ պատճառներով երեխաներն առավել խոցելի են: Եվ, վերջապես, այսօրվա երեխան վաղվա ճարտարագետն է, բժիշկը, օրենսդիրը, քաղաքագետը, շինարարը, ով պետք է կառուցի վաղվա անվտանգ աշխարհը: Իսկ որքանով նրանց կիաջողվի ապահովել մեր վաղվա անվտանգությունը, կախված է նրանից, թե ինչպես մենք այսօր

մեր երեխաներին կմատուցենք կյանքի կարևոր ճշմարտություններն այն մասին, որ աղետների կանխարգելումը և անվտանգության կանոնների պահպանումը կյանքի հրամայականն է և օբյեկտիվ անհրաժեշտություն: Եվ որքան արագ մենք այդ ճշմարտությունն յուրացնենք և հասկանանք, այնքան ավելի հազվադեպ մեր փողոցներում կինչեն փրկարարական և հրշեց մեքենաների շշակների ազդանշանները:

Ուսուցումը պետք է սկսել մանուկ հասակից, փուլ առ փուլ՝ հաշվի առնելով երեխայի զարգացման շրջանները, դրսերումները, հետաքրքրասիրությունները և այլ գործոններ: Չե՞ որ նրանք տարբեր տարիում յուրովի են ընկալում շրջակա միջավայրը, հասկանում այն և կառուցում իրենց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Ուսուցումը նաև պետք է նպաստի երեխաների մոտ սեփական անձի, հասարակության և պետության հանդեպ հոգատար ու սրտացավ վերաբերմունքի ձևավորմանը: Միաժամանակ, մանուկ հասակում է ձևավորվում ապագա քաղաքացու սոցիալական դիրքորոշումը, հասարակական գիտակցությունը և ոչ միայն համընդհանուր արժեքների կուլտուրան, այլև անվտանգության կուլտուրան, ինչը ենթադրում է՝ անվտանգության ապահովման բնագավառում անձի և հասարակության կրթական մակարդակի, բանական կենսագործունեության և անվտանգ գործելակերպի կանոնների իմացություն և կիրառում:



Արտավարդ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսուցման համար ամենահարմար վայրը դպրոցն է, որտեղ տարբեր տարիքի, խառնվածքի, դաստիարակության, մարդկային տեսակի երեխաների մեծ զանգված անց է կացնում իր կյանքի (10-12 տարի) և ժամանակի (օրվա 6-8 ժամը) զգալի մասը:

Դպրոցը նաև մարդկային մեծ կուտակումներով օբյեկտ է: Հետևաբար, դպրոցի կարևոր խնդիրներից մեկը պետք է համարել աշակերտների և

աշխատող անձնակազմի անվտանգության ապահովումը դպրոցի սահմաններում, քանի որ արտակարգ իրավիճակներում դպրոցը կարող է հայուսվել քիմիական և ճառագայթային վարակման, ավերածությունների, սելավավտանգ, հրդեհավտանգ և պայթունավտանգ, սողանքային կամ ջրածածկման գրտում:

Մեծ է մանկական մահացությունը տարերային, տեխնածին աղետների և ռազմական գործողությունների վարման ժամանակ:

- Սպիտակի երկրաշարժի ժամանակ մանկական մահացությունը կազմեց 9,3 տոկոս, իսկ մանկական տրավմատիզմը՝ 27,24 տոկոս:
- Փոքրիկ բնակչության հետևանքով զոհվեցին հարյուրավոր անմեղ երեխաներ՝ ծնողների և ուսուցիչների հետ միասին:
- 2005 թ. Պակիստանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ դպրոցների ավերակների տակ մնաց 16 000 դպրոցական: Արևմտյան Իրանում 2005 թ. տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ ավերվեց 130 դպրոց, որի հետևանքով տուժեց 36 000 դպրոցական:

Մինչդեռ յուրաքանչյուր երեխայի կորուստը հավասարագոր է 40-70 տարվա արյունավետ կյանքի կորստի:

«1988 թ. դեկտեմբերի 7-ին Լենինականի թիվ 9 միջնակարգ դպրոցի փլատակներից փորձում էին փրկել երեխաներին: Ավաղ, շատ քչերն էին կենդանի մնացել: Մեծ Պառնիի դպրոցի փլատակներում էր մնացել 53 աշակերտ: Սպիտակի, Նալբանդի դպրոցներից և մանկապարտեզներից միայն ավերակներ էին մնացել...» Սակայն հնարավոր էր փրկել և փրկվել:

Դպրոցի տարհանման միջոցառումների կազմակերպումը

Տարհանման պլանի մշակում

Օրվա մեծ մասը երեխան անց է կացնում շենքերում՝ տանը, դպրոցում, մանկապարտեզում... Սակայն արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների առաջացման (սպառնալիքի) ժամանակ կարող են առաջանալ գործոններ, որոնց ազդեցությունը վտանգավոր է երեխաների կյանքի և առողջության համար: Նման իրավիճակներում նպատակահարմար է լրել շենքի տարածքը, իրականացնել տարհանում:

Տարհանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում ու տեղաբաշխում («Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք):

Վտանգավոր տարածք՝ տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:

Անվտանգ գոտի՝ տեղանք, բնակավայր, որը գտնվում է հնարավոր ավերածությունների և վտանգավոր տարածքներից ու օբյեկտներից դուրս ու պիտանի է տարհանվող բնակչությանը տեղավորելու համար:

Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատվություն է կրում դպրոցի ողջ անձնակազմի անվտանգության համար: Դպրոցի տնօրենի ղեկավարությամբ է կազմակերպվում և պլանավորվում արտակարգ իրավիճակներում աշակերտների և աշխատողների պաշտպանությունը:

Դպրոցի տնօրենը դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետն է: Համաձայն դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետի համապատասխան հրամանի՝ նշանակվում են դպրոցի քաղաքացիական պաշտպանության պաշտոնատար անձիք:

Դպրոցի ռազմագիտության ռւսուցիչը՝ դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալը, դպրոցի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետն է:

Դպրոցի կազմակերպչական հարցերով փոխտնօրեն՝ դպրոցի տարհանման հանձնաժողովի նախագահ:

Դպրոցի բժիշկը կամ բուժքույրը՝ առաջին բուժօգնության հարցերով պատասխանատու:

Դպրոցի տնտեսվարք՝ նյութատեխնիկական ապահովման հարցերով պատասխանատու:

Տարհանման անցկացումը պահանջում է տարհանման միջոցառումների նախնական պլանավորում և դպրոցի անձնակազմի բազմակողմանի պատրաստում: Դպրոցի տնօրենի համապատասխան հրամանով տարհանման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և անցկացումը դրվում է տարհանման հանձնաժողովի վրա, որի նախագահ է նշանակվում կազմակերպչական հարցերով փոխտնօրենը:

Տարհանման հանձնաժողովի հիմնական խնդիրներն են

- ➔ Տարհանման մարմինների ստեղծումը, համալրումը և պատրաստումը:
- ➔ Դպրոցի տարհանման պլանի մշակումը և ճշգրտումը: Պլանի ճշգրտումը անց է կացվում ուսումնական փորձարկումների միջոցով տարեկան 2 անգամ. գարնանը՝ մարտի 1-ին, աշնանը՝ նոյեմբերի 1-ին:
- ➔ Տարհանման միջոցառումների կազմակերպումը:

Տարհանման հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգվում է տարհանման և մշտական կազմի ազդարարաման պլաններով:

Տարհանման պլան՝ նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (քնակավայրից, օբյեկտից) մեկ այլ տարածք (քնակավայր, օբյեկտ) բնակչության տարհանման միջոցառումները:

Յուրաքանչյուր օբյեկտի, այդ թվում նաև դպրոցի տարհանման պլանը բաղկացած է տերստային և գրաֆիկական մասերից:

Տեքստային մասը բաղկացած է դպրոցի բնութագրից, ելակետային տվյալներից և աղյուսակներից (բոլոր հնարավոր իրավիճակների համար):

1. Դպրոցի համառոտ բնութագիրը.

ա. Դպրոցը գտնվում է _____ հասցեում: Տեղակայված է _____ հարկանի շենքում: Ունի _____ մասնաշենք, ընդհանուր մակերես՝ _____ քառ.մետր: Ունի _____ մուտք և _____ ելք, անցողունակությունը՝ _____ մարդ 1 րոպեում: Գազատարերի, էլեկտրահաղորդագծերի և ջրամատակարարման ցանցի հակիրձ բնութագիրը _____

:
_____:

Տարիանման ուղիների անցողունակությունը _____ մարդ/րոպե:

2. Ելակետային տվյալներն ընդգրկում են.

Տարիանվողների թիվն ըստ հնարավոր ԱԲ-ի, տարիքային խմբերի, սեռի, հերթափոխի, օրվա տարբեր ժամերի, հարկերի, մասնաշենքերի և այլ ցուցանիշների՝ հետևյալ կարգով.

- I-III դաս-----մարդ
- IV-YIII-----մարդ
- IX-XII-----մարդ
- Մշտական անձնակազմը-----մարդ
- այդ թվում՝ զինապարտներ -----մարդ

Տարիանման ձևը

- ավտոտրանսպորտով-----մարդ
- երկաթուղով-----մարդ
- հետիոտն-----մարդ

Տարիանման ընդհանուր տևողությունը-----ժամ, հաշվի առնելով տարիանման ուղիների անցողունակությունը 1 րոպեում.

- տարիանման վայրը,
- տարիանվողների ապահովումը և այլն:

Տարհանման պլանը առավելագույնս նպատակառուղրված դարձնելու համար անհրաժեշտ է «ելակետային տվյալներ» բաժնում նշել դպրոցի տարածքին սպառնացող բոլոր արեսները:

Տարհանման պլանում պետք է նշված լինեն դպրոցի աշակերտների և անձնակազմի ազդարարման կարգը, առկա կապի միջոցները, դպրոցի փաստաթղթերի և ունեցվածքի պահպանման կարգը, տարհանումն իրականացնող ուժերը, միջոցները և այլն:

3. Աղյուսակ (հրդեհի դեպքում)

N	Գործողություններն ըստ հերթականության	Կատարող
1.	Ազդարարում	
2.	Դպրոցի տարհանման կազմակերպումը	Անձնակազմ
3.	Ստուգում՝ արդյո՞ք բոլոր մարդիկ են լրել շենքը	
4.	Հրդեհային ավտոմատիկային համակարգի ստուգում: Գործողությունների համակարգի գործունեության խափանման դեպքում	
5.	Հրդեհաշխօնում	Հրշեցներ
6.	Գույրի տարհանում	
7.	Այլ գործողություններ	

Կատարողներին պետք է նշանակել՝ ելնելով մարդկանց մասնագիտական և անձնական հատկանիշներից և հնարավորություններից: Աղյուսակի տակ պետք է լինեն տարհանման պլանը կազմողների և բովանդակության հետ ծանոթացած աշխատողների ստորագրությունները:

Դպրոցի տարհանման պլանը պետք է կազմել հնարավորինս իրատեսական և իրագործելի՝ հաշվի առնելով տվյալ տարածքի բնակչիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը, հնարավոր ռազմական գործողությունները, վտանգավոր օբյեկտների առկայությունը և դրանց հեռավորությունը դպրոցից, ձանապարհային ցանցի վիճակը և անցողունակությունը, տրանսպորտային ապահովումը, անվտանգ գոտու իրացման և տարհանվողների ապահովման հնարավորությունը և այլն:

Տարհանման պլանը պետք է մշակված լինի այնքան մանրակրկիտ և ճկուն, որպեսզի իրադրության ցանկացած գարգացման դեպքում տարհանման հանձնաժողովը կարողանա ճշգրտել և կանոնակարգել միջոցառումների ուղղվածությունը և ինտենսիվությունը:

Տարհանման պլանը հաստատվում է դպրոցի տնօրենի կողմից՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համապատասխան տարածքային (տեղական) ստորաբաժանման հետ համաձայնեցնելուց հետո:

Գրաֆիկական մասն իրենից ներկայացնում է դպրոցի շենքի գծագիրը առանց ավելորդ մանրամասնությունների: Տարհանման պլանում գծանշվում է տարհանման ընդհանուր ուղին, որը բաժանվում է ընութագրական տեղամասերի (նշվում է դրանց երկարությունը): Տարհանման ուղիները որոշելիս անհրաժեշտ է մարդկային հոսքերը մասնատել, որպեսզի ելքի մոտ նվազի հնարավոր հոսքերի խոռոչունը: Դետք է բացառել հնարավոր հանդիպակաց և խաչահատվող հոսքերը: Դա թույլ կտա խուսափել մարդկային անցանկալի կուտակումներից:

Տարհանման ընդհանուր պլանի տեսակներից է տարհանման անհատական պլանը, որը մշակում է մարդկային մեծ կուտակումներ ունեցող օբյեկտներում (ուսումնական հաստատություններում, մշակույթի, սպորտի օբյեկտներում): Տարհանման անհատական պլանը նույնպես կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից:

Դպրոցի տարհանման անհատական պլանի տեքստային մասը կազմված է տվյալ դասասենյակում (տվյալ օրը, ժամին) դաս անցկացնող ուսուցչի և աշակերտների գործողությունների ցանկից և յուրաքանչյուր հնարավոր ծայրահեղ իրավիճակի համար մշակված անվտանգության կանոններից և հուշարձերինից:

Տարհանման անհատական պլանի գրաֆիկական մասը կազմվում է ընդհանուր պլանի ձևով, իսկ տարհանման ուղիները նշագծվում են կոնկրետ դասասենյակի համար:

Տարհանման առանձնահատկությունները կախված են աղետի բնույթից, մասշտաբներից, տարհանվող բնակչության քանակից:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ դպրոցում գործում է տարհանման երկու եղանակ՝ կանխարգելիչ (նախնական) և անհապաղ (անհետաձգելի): Կանխարգելիչ տարհանման համար հիմք են հանդիսանում հավանական աղետի կամ հակառակորդի

հարձակման մասին համապատասխան մարմինների կարձաժամկետ կանխատեսումը և օպերատիվ իրավիճակի գնահատումը, որից հետո կայի և ազդարարման միջոցներով տեղեկացվում է դպրոցի ղեկավարությունը, որն էլ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ կազմակերպում և իրականացնում է դպրոցի տարհանումը:

Միշտ չէ հնարավոր տարհանումն իրականացնել պլանային «դասական» տարբերակով: Արտակարգ իրավիճակների հանկարծակի առաջացման դեպքում բացառիկ նշանակություն է ստանում ժամանակի գործոնը: Մի շարք աղետներ (հրդեհ, երկրաշարժ, փլուզում, սողանք, հակառակորդի հանկարծակի հարձակում) տեղի են ունենում հանկարծակի, հիմնականում, առանց նախանշանների և արագընթաց, ուստի՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը, իրականացվում է դպրոցի անձնակազմի անհապաղ (անհետագելի) տարհանում: Այս իրավիճակում տարհանման երթուղիներն ընտրվում են հապձեպ՝ ըստ ստեղծված օպերատիվ իրավիճակի և օդերևութաբանական պյամանների (քամու ուղղության, օդի ջերմաստիճանի ևայլն):

Ուսումնական տարհանման կազմակերպումն ու անցկացումը

Դպրոցի տարհանման պլանը առանց գործնական փորձարկման ոչ պիտանի ձևականորեն մշակված և բոլորին անձանոթ փաստաթուղթ է:

Համաձայն հրդեհային անվտանգության կանոնների՝ դպրոցներում և մանկապարտեզներում տարհանման պլանների գործնական փորձարկումները (ուսումնական տարհանում) պետք է գրանցվի տարհանման պլանի փորձարկման մատյանում հետևյալ կերպ.

- փորձարկման անցկացման ժամկետը
- ներմուծյալ տեղեկատվությունը (սցենար)
- տարհանման հնդիանուր ժամանակը
- տարհանման ժամանակ առանձին հատվածների չափագրում
- դպրոցի անձնակազմի գործելակերպում տեղ գտած

թերությունները:

Հրդեհների ժամանակ դրսերվում է գրեթե բոլոր այն գործոնների ասդեցությունը, որոնք առաջանում են այլ աղետների ժամանակ:

Ավելին, հրդեհներ կարող են առաջանալ երկրաշարժի, սողանքի, պայթյունի, զենքի կիրառման և այլ աղետների ժամանակ: Ուստի անդրադարձը՝ հրդեհային անվտանգության կանոններին՝ պատահական չէ:

Ուսումնական տարհանման վերլուծության հիման վրա միջոցներ են ձեռնարկվում հաջորդ անգամ տարհանումն ավելի կազմակերպված և կարճ ժամանակում անցկացնելու համար:

Նախապատրաստական աշխատանքներ

Ուսումնական տարհանման նախապատրաստումը սկսվում է դպրոցի տնօրենի «Դպրոցի անձնակազմի ուսումնական տարհանման նախապատրաստման և անցկացման մասին» հրամանով: Մշակվում է ուսումնական տարհանման սցենար:

Ուսումնական տարհանման բարձր կազմակերպվածությունն ապահովելու նպատակով կանխորոշվում են տարհանման հիմնական նպատակները՝

- դպրոցի անձնակազմի մոտ անվտանգության բնագավառում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումը և կատարելազգործումը

- դպրոցի անձնակազմի արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ստուգումը:

Ուսումնական տարհանմանը մասնակցում է դպրոցի ողջ անձնակազմը: Համաձայն դպրոցի տնօրենի հրամանի՝ նշանակվում է ուսումնական տարհանման և անցկացման հանձնաժողով՝ դպրոցի կազմակերպչական հարցերով փոխտնօրենի դեկավարությամբ:

Տարհանման միջոցառումների վերահսկողությունն իրականացնում է դպրոցի ՔՊ պետի տեղակալը՝ դպրոցի ՔՊ շտաբի պետը, որը հանձնաժողովի նախագահի հետ համատեղ մշակում է «Դպրոցի անձնակազմի ուսումնական տարհանման նախապատրաստման և անցկացման պլանը» և ուսումնական տարհանման սցենարը:

Մշակված պլանը Հայաստանի փրկարար ծառայության տեղական ստորաբաժնման պետի հետ համաձայնեցնելուց հետո հաստատվում է դպրոցի տնօրենի կողմից:

Ուսումնական տարհանման նախապատրաստումը սկսվում է դպրոցի անձնակազմի տարհանման պլանների (ընդհանուր,

անհատական), տարհանման նշանների, հրդեհային ավտոմատիկայի և անվտանգության այլ համակարգերի ուսումնասիրությունից:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղացիական պաշտպանության հարցերով ուսուցմանը հատկացված դասաժամները պետք է անցկացվեն ոչ թե տիտոր, բարոյախրատական գրույցների ձևով, այլ ինտերակտիվ մեթոդով՝ հետաքրքրաշարժ և գրավիչ:

Կրտսեր դասարանների դասվարները պետք է ժամանակ առ ժամանակ անցկացնեն ազդարարման ազդանշանների գործնական գործարկում:

Դպրոցի ուսումնական տարհանման անցկացումը

Համաձայն «Դպրոցի անձնակազմի ուսումնական տարհանման նախապատրաստման և անցկացման մասին» հրամանի՝ նախապես որոշվում է ուսումնական տարհանման օրը և սցենարը:

Օրինակ. 2014 թ. ապրիլի 15-ին ժամը 12.00 Սյունիքի մարզի թագի թագարաններից մեկում (միջանցքում, գրասենյակում, աստիճանակահարքակում և այլն) տեղի է ունեցել հրդեհի բռնկում, ինչը բացահայտել է աշակերտներից մեկը: Աշակերտը հրդեհի մասին տեղեկացրել է դասը անցկացնող ուսուցչին, իսկ ուսուցիչը՝ տնօրենին:

Ենելով իրավիճակից՝ ի՞նչ գործողություններ պետք է կատարեն դպրոցի տնօրենը, ուսուցիչները, աշակերտները:

Տեղեկանալով ստեղծված արտակարգ իրավիճակի մասին՝ դպրոցի տնօրենը ճշտում է ստացված տեղեկատվության հավաստիությունը և, համոզվելով տարհանման անհրաժեշտության մեջ, դպրոցում առկա ազդարարման միջոցներով հայտարարում է տարհանում: Միաժամանակ դպրոցի տնօրենը կամ տնօրենի հրամանով որևէ մեկը ստեղծված իրավիճակի մասին հայտնում է ՀՀ ԱԽՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահին՝ 911 հեռախոսահամարով:

Ուսուցիչները, աշակերտների հետ լրելով դասարանը, վերցնում են դասամատյանները, հոսանքագրելում են դասարանները և փակում դասարնների դրները: Աշակերտները ուսուցիչների ուղեկցությամբ բազմիցս փորձարկված տարհանման ուղիներով (հիմնական կամ երկրորդական) շատ արագ և կազմակերպված ուղղվում են դեպի տարհանման ելքերը:

Անհրաժեշտության և հնարավորության դեպքում բարձր դասարանցիներն օգնում են կրտսերներին: Պետք չէ փրկել իրերը: Վյանըն անհամեմատ թանկ է:

Դպրոցի շենքը լրելուց հետո բոլոր տարիանվողները հավաքվում են դպրոցի մերձակայքում՝ հեռու հաղորդալարերից և խոչոր շինուալիյուններից, ու սպասում են մինչև հետագա գործողությունների մասին հրահանգ ստանալը: Ուսուցիչը, որի ուղեկցությամբ երեխաները լրել են դպրոցի շենքը, ներկա բացակայի միջոցով ճշտում է՝ արդյոր բոլոր աշակերտներն են հասցրել դուրս գալ դպրոցից:

Դպրոցի տնօրենը դիմավորումը է օգնության հասած հրշեցներին և զեկուցում ստեղծված իրավիճակի մասին:

Դպրոցի տարիանման խութերը

Տարիանման ընթացքում տարիանման ուղիներում հնարավոր է խմբերի միաձուլում և հոսքերի խոսության մեծացում, ինչը հանգեցնում է շարժման արագության նվազման: Շարժման արագությունը կախված է տարիանման ուղիների բնույթից (միջանցք, աստիճաններ, աստիճանահարթակ, նախարան և այլն): Նեղ միջանցքներում երեխաների մեծ խմբերի միաժամանակյա արագ ընթացքը կարող է հանգեցնել կուտակումների, խցանումների և, որպես կանոն, շարժման արագության նվազման: Նման իրավիճակներում ոմանք, ֆիզիկական ուժ գործարելով, իրելով ընկերներին և խցկվելով ամբողի մեջ, կարող են խցանումներ առաջացնել:

Վախր, անտրոշությունը, անելանելիության զգացողությունը կարող են երեխաներին խուճապի մատնել, դառնալ խեղվածքների և անզամ զոհերի պատճառ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ մարդկային մեծ կուտակումներով օրյակտներում զոհերի ընդհանուր թվի 50%-ը զոհվում է ոչ թե ստացած վնասվածքներից, այլ արտակարգ իրավիճակներում գործելու կանոնների շիմացության պատճառով չկողմնորոշվելու, խուճապի մատնելու, իրարանցում և խցանումներ առաջացնելու հետևանքով, որոնք առաջացնում են նյարդային գրգռվածություն, մտքի և գործողությունների արգելակում (նկատվում է մարդկանց 10-15% մոտ): Ումանց մոտ հետաքրքրասիրությունը մարում է ինքնապահութանության բնագդը, և նրանք դեպի կրակի այրող լույսը թոշող թիթենների նման սլանում են պայթյունի ձայնի կամ հրդեհի բոցի ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակներում չպետք է խուժապի մատնվել, այլ պետք է գործել սրափ, արագ և հստակ: Չմոռանալ, որ ամենուր կան պահուստային վթարային ելքեր, արտաքին հրդեհային սանդուղքներ: Աստիճաններով իշնելիս չվազել, քանի որ հնարավոր է աստիճանների փլուզում: Շենքի ստորին հարկերում գտնվելիս ծայրահեղ դեպքում դուրս ցատկել պատուհանի խոռոչից: Վերելակի արկայության դեպքում չօգտվել վերելակից, քանի որ այն կարող է հոսանքագրկվել և ծուղակ դառնալ տարհանումների համար:

Դպրոցում տարհանման և ազդարարման պլանների, կապի և ազդարարման միջոցների արկայությունը, դպրոցի անձնակազմի պարտականությունների ճիշտ բաշխումը և իմացությունը, գործնական պարապմունքների և ուսումնական տարհանումների անցկացումը նպաստում են երեխանների մոտ ծայրահեղ իրավիճակներին արագ արձագանքելու ունակությունների զարգացման և մտքի ու գործողությունների ավտոմատիզմի ձևավորման:

Մեր ձեռքերում է մեր երեխանների՝ հասարակության ամենաթանկ և ամենախոցելի հատվածի կյանքը, և թե որքանով են նրանք պաշտպանված, կախված է մեզանից:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ միայն գիտելիքներով, ունակություններով և հմտություններով կարող է դիմակայել աղետներին:

Ուսումնական հաստատություններին (դպրոցների) ներկայացվող իրդեհային անվտանգության պահանջները

1. Բոլոր ուսումնական հաստատությունները (դպրոց, մանկապարտեզ և այլն) ուսումնական տարվա սկզբին պետք է ընդունվեն համապատասխան հանձնաժողովների կողմից, որոնց կազմում պետք է ընդգրկվեն Հայաստանի փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորարաժանման և պետական հրդեհային տեսչության ներկայացուցիչները:

2. Դպրոցում պետք է գործի երկկողմանի կապ ապահովող ռադիոհեռախոսորդակցման հանգույց (տնօրենի կարինետում կամ ուսուցչանցում), որով ստացված ազդանշանները պետք է կրկնօրինակվն դպրոցի էլեկտրական զանգի միջոցով կամ ազդարարման այլ ստվարական միջոցներով՝ ազդարարելով ստեղծված իրավիճակի մասին: Դպրոցի ռադիոֆիկացիան նախատեսվում է տվյալ

բնակավայրի հեռահաղորդակցման ցանցից: Պարբերաբար պետք է ստուգել հեռահաղարդակցման համակարգի տեխնիկական վիճակը:

3. Դպրոցի շենքի ճարտարապետական բովանդակությունը պետք է համապատասխանի դպրոցներին ներակայացնող քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների չոփորոշչիների պահանջներին:

4. Տարհանման ելքերի քանակը, չափերը, լուսավորության պայմանները (աստիճանավանդակները չմթեցնել, չկառուցապատել) տարհանման ուղիների երկարությունը և ջիսապատման ապահովումը պետք է համապատասխանեն շինարարական նախագծման հակարդեհային նորմերին:

5. Դպրոցի շենքը պետք է ունենա չայրվող տանիքածածկ (ոչ օրգանական նյութերից):

6. Տարհանման ուղիները չպետք է հարդարված լինեն դյուրավառ նյութերով (պլաստիկ): Արգելվում է տարհանման ուղիների պատերի, առաստաղների վերանորոգման, երեսպատման և ներկման համար օգտագործել դյուրավառ նյութեր:

7. Նկուլները, միջանցքները, ձեղնահարկերը պետք է ազատել դյուրավառ նյութերից:

8. Աստիճանավանդակների, միջանցքների, նախաշեմերի ինքնափակվող դռները (եթե այդպիսիք կան) ֆիքսել բաց դիրքում կամ հանել:

9. Դպրոցի միջանցքները, նախարարը, աստիճանավանդակները, տարհանման այլ ուղիները պետք է ազատ լինեն մեծածավալ առարկաներից:

10. Դասասենյակների կահույքը պետք է ներկառուցված լինի կամ ամրակներով ամրացված պատին կամ հատակին:

11. Դպրոցի ցածր հարկերի դասասենյակները պետք է տրամադրել ցածր դասարանցիներին, բարձր հարկերը՝ բարձր դասարանցիներին:

12. Դասասենյակներում և աշխատասենյակներում դպրոցական նստարանների (սեղանների) քանակը չպետք է գերազանցի նախագծման նորմերով սահմանված քանակը:

13. Դասասենյակների նստարանների շարքերի միջև հեռավորությունը պետք է լինի 60 սմ-ից ոչ պակաս, իսկ առաջին նստարանից կամ ուսուցչի սեղանից մինչև գրաստախտակը՝ 65 սմ-ից ոչ պակաս:

14. Լաբորատորիաներում և այլ սենյակներում պահվող այրվող և դյուրավառ նյութերի քանակը չպետք է գերազանցի մեկ

հերթափոխային պահանջմունքը: Դյուրավատ նյութերը պետք է աշխատանքային օրվա վերջում լցվեն հատուկ տարողության մեջ և լարորատորիայից դուրս բերվեն: Չի թույլատրվում այրվող և դյուրավատ նյութերը թափել կոյուղի:

14. Լարորատորիաներում և այլ սենյակներում պահվող այրվող և դյուրավատ նյութերի քանակը չպետք է գերազանցի մեկ հերթափոխային պահանջմունքը: Դյուրավատ նյութերը պետք է աշխատանքային օրվա վերջում լցվեն հատուկ տարողության մեջ և լարորատորիայից դուրս բերվեն: Չի թույլատրվում այրվող և դյուրավատ նյութերը թափել կոյուղի:

15. Դպրոցի, հատկապես միջանցքների հատակի ծածկույթը չպետք է լինի սայթաքուն: Գորգերը, ուղեգորգերը և այլ հատակային ծածկերը պետք է հուսալի ամրացվեն հատակին:

16. Ստորին հարկերի պատուհանների մետաղյա վանդակները պետք է հանել կամ դարձնել շարժական: Դպրոցի մուտքի փայտե դրները խորհուրդ չի տրվում փոխարինել երկաթյա դրներով, քանի որ հնարավոր ցնցումների կամ հրդեհի դեպքում նրանք կարող են դեֆորմացվել և չբացվել:

17. Տարիհանման ելքերի դրները պետք է ազատ բացվեն դեպի դուրս: Շենքում մարդկանց գոնվելու ժամանակահատվածում արգելվում է դպրոցի մուտքի դրները փակել առանձնապես դժվար բացվող փականներով կամ կողղակեններով: Դրները կարող են փակվել ներսից հեշտ բացվող փականներով: Պարբերաբար պետք է ստուգել տարիհանման ուղիների և դրների գործածելիության վիճակը:

18. Ուսումնասպորտային դահլիճները պետք է գտնվեն 2-րդ հարկից ոչ բարձր: Դահլիճի նստատեղերի քանակը չպետք է գերազանցի դպրոցի կոնտինգենտի 20%-ը: Դահլիճի աթոռները պետք է ամրակներով ամրացնել հատակին:

19. Դպրոցի նախարարություն պետք է փակցնել դպրոցի տարիհանման պլան-սխեման, որտեղ ցուցալաքներով նշվում են տարիհանման ուղիներ, պահուստային վթարային ելքերը: Տարիհանման նշանները պետք է փակցնել տարիհանման ուղղությամբ (կանաչ գույնի քառակուսիներ կամ ուղղանկյուններ): Առանձին հարկաբաժիններում և դասասենյակներում նույնպես պետք է փակցնել տարիհանման պլան-սխեմաներ (տվյալ հարլի կամ դասասենյակի համար):

20. Պարբերաբար պետք է ստուգել դպրոցում հակահրդեհային պաշտպանության միջոցների առկայությունը:

21. Ներքին հրդեհային ծորակները ոչ պակաս, քան տարեկան 2 անգամ (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) պետք է ենթարկել տեխնիկական զննման և ստուգել դրանց գրծածելիությունը ջրի բացթողման ճանապարհով:
22. Դպրոցի հարակից տարածքը պետք է պահել մաքուր վիճակում: Այրվող կյութերի թափոնները, թափիված տերևները, աղբը պետք է կանոնավոր հավաքել հատուկ արկղերում և դուրս բերել դպրոցի տարածքից:
23. Դպրոցի շենքի հրդեհաշխման համար նախատեսված ջրամբարներին, անշարժ հրդեհային սանդուղներին, հրդեհային գույքին մոտեցման ճանապարհները և անցումները պետք է ազատ լինեն: Վերակառուցման հետևանքով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:
24. Կիսամյակում մեկ կամ ավելի անգամ անցկացնել դպրոցի տարհանման պլանի փորձարկում՝ ուսումնական տարհանման միջոցով: Փորձարկման արդյունքները գրանցել փորձարկման մատյանում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



Մեզանից ոչ մեկը, ցավոք, ապահովագրված չէ դժբախտ պատահարներից, աղետներից, իսկ արտակարգ իրավիճակներում գործելու համար բավարար չէ միայն օգնության հասնելու բարի կամքը, ինչով, համոզված ենք, օժտված եք բոլորդ: Պետք է պատրաստ լինել նաև իմացությամբ: Իսկ արդյոք մենք ունե՞նք բավարար գիտելիքներ արտակարգ իրավիճակներում գործելու համար: Դժբախտ պատահարների դեպքում ցանկացած մասնագիտական օգնության հասնելու համար ժամանակ է անհրաժեշտ: Բայց երբեմն տուժածի կյանքը փրկելու համար կարող է լինել ընդամենը մի քանի րոպե եւ հնարավոր է, որ տուժածի կողքին Ձեզանից բացի ոչ որ չի-նի: Յիշեք՝ Զեր հնուտ գործողություններով դուք կարող եք կյանքեր փրկել: Առաջին օգնության գիտելիքները կօգնեն Ձեզ արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու, ճիշտ որոշում ընդունելու եւ իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկելու:

Առաջին օգնություն

Առաջին օգնությունն արտակարգ իրավիճակում ձեռնարկվող գործողությունների համակարգ է, որի խնդիրն է օգնել տուժածին կամ տուժածներին մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը: Պատահարների դեպքում տուժածին առաջին օգնություն ցուցաբերելու նպատակներն են.

- պահպանել տուժածի կյանքը.
- կանխել տուժածի վիճակի վատթարացումը.
- նպաստել տուժածի վիճակի բարելավմանը.
- պաշտպանել անօգնական տուժածին:

Մենք բոլորս սովոր ենք մեզ շրջապատող երեւությներին ու իրավիճակներին: Սովորական իրականություննից շեղումը շատ հաճախ լինում է արտակարգ իրավիճակի առաջին նշանը: Սակայն երբեմն

դժվար է կողմնորոշվել եւ իրադրությունը բնորոշել որպես պատահար: Ինանալով արտակարգ իրավիճակներին բնորոշ նշանները՝ դուք հեշտությամբ կարող եք ճանաչել դրանք ու համապատասխան գործել: Այդ նշաններից են տարօրինակ տեսարանները, օրինակ՝ ճանապարհից անքնական շեղված ավտոմեքենան, հավաքված մարդիկ, արտասովոր ձայները, հոտերը եւ այլն: Արտակարգ իրավիճակներում հաճախ լինում են տուժածներ, եւ առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն:

Առաջին օգնությանը ցուցաբերելուն խանգարող հանգամանքներ

Երբեմն մարդիկ դժբախտ պատահարի ժամանակ խուսափում են որեւէ գործողության դիմելուց: Կան հանգամանքներ, որոնք խանգարում են մարդկանց ցուցաբերել առաջին օգնություն, նրանք վարանում են, տատանվում են գործողություններ չեն ձեռնարկում:

1. Նախ պետք է նշել առաջին օգնություն ցուցաբերելու գիտելիքների բացակայությունը եւ սխալվելու վախը:

Դժբախտ պատահարի ժամանակ հնարավոր է, որ չինամաք ինչ անել կամ վախենաք սխալվել եւ էլ ավելի վատացնել տուժածի վիճակը: Եթե նման դեպքերում երկմտում եք, թե ինչպես գործել, ավելի լավ է ահազանգեք շտապօգնություն: Եթե դեպքի վայրում կան օգնություն ցուցաբերող մասնագետներ, կատարեք նրանց հրահանգները: Չիշե՛ք, ոչինչ չանելն ավելի վատ է:

2. Մեզնից շատերին կարող են չփոթեցնել անծանոթ մարդիկ, որոնք հաճախ խնդրվում են դեպքի վայրում: Չէ՞ որ ոչ բոլորը կարող են անկաշկանդ գործել ցանկացած իրավիճակում: Նման դեպքերում մոտեցեք, ներկայացեք, ասեք, թե ինչ եք պատրաստվում անել: Չավատացեք, որ դրանից հետո ներկաներից շատերը կդառնան ձեր օգնականները: Դուք կարող եք նրանց ուղարկել ահազանգելու, օգնության համար անհրաժեշտ նյութեր բերելու եւ այլն:

3. Օգնություն ցուցաբերելիս շատերին կարող է խանգարել տուժածի վնասվածքի բնույթը: Արյունը, փսխութը, պատառութված կամ այրված մաշկը կարող են վանել գրեթե յուրաքանչյուրին: Նման դեպքերում, մինչեւ տուժածին օգնելը, մի պահ շրջվեք եւ մի քանի անգամ խորը շունչ քա-



շեք եւ կրկին փորձեք օգնություն ցուցաբերել: Եթե վնասվածքի կամ հիվանդության բնույթը վանում է ձեզ այնքան, որ ի վիճակի չեք մոտենալ նրան, ապա փորձեք օգնությունը կազմակերպել՝ ներկաներից ավելի համարձակին հրահանգներ տալով:

4. Շատ մարդիկ խուսափում են առաջին օգնություն ցուցաբերել՝ վախենալով վարակվելուց: Շատերը հատկապես վախենում են վարակիչ հիվանդություններից՝ ՄԻԱՎ, ԶԻԱՅ-ից: Իհարկե, վարակվելու վտանգ կա, սակայն այն շատ ավելի փոքր է, քան ենթադրում եք: Ստորև բերված տարրական կանոններին հետեւելը գրեթե անհնարին է դարձնում այդ հիվանդությամբ վարակվելը:
 - Լվացեք ձեռքերն օճառով եւ ջրով՝ օգնություն ցուցաբերելուց առաջ եւ հետո:
 - Խուսափեք արյան կամ մարմնի այլ հեղուկների հետ անմիջական շփումից:
 - Աշխատեք օգնություն ցուցաբերել ռետինե ձեռնոցներով:

Բացի թվարկածը՝ ամեն ոք կարող է ունենալ իրեն յուրահատուկ խանգարող հանգամանք: Նման հարցերի մասին նախապես մտածելը, ինքներդ ձեզ զանազան պատահարների դեպքում գործելուն մտովի նախապատրաստելը հնարավորություն կտան ավելի լավ կողմնորոշվելու եւ դժբախտ պատահարի դեպքում ճիշտ գործելու:

Դիշեք, սուրֆածների մեծամասնությունը փրկվում է պատահարի պահին դեպքի վայրում գտնվող անձանց առաջին օգնության հմուտ գործողությունների շնորհիվ:

Տուժածի համաձայնությունն իրեն օգնություն ցուցաբերելու համար

Դժբախտ պատահարի արդյունքում սուրֆածը կարող է լինել նյարդային, գրգռված եւ անհանգիստ վիճակում: Նա կարող է բա-



ցասաբար վերաբերվել օգնություն ցուցաբերող անձանց, որը, թերեւս, էլ ավելի կժանրացնի տուժածի վիճակը: Նա իրավունք ունի մերժելու կամ ընդունելու օգնությունը: Տուժածի համաձայնությունը ստանալու համար պետք է հայտնել նրան, թե ո՞վ եք դուք, ի՞նչ գիտելիքներ ունեք առաջին օգնություն ցուցաբերելու համար եւ ի՞նչ եք պատրաստվում անել: Ապա, եթե դեմ չէ, գործի անցեք:

Երբ մոտենում եք տուժածին, աշխատեք գրավել այնպիսի դիրք, որ նա ձեզ տեսնի: Խոսեք հանգիստ, Վատահ: Եթե տուժածը ձեզ թշնանաբար է վերաբերվում, մնացեք հանգիստ եւ փորձեք նրան բացատրել, որ պարզապես ցանկանում եք օգնել իրեն: Սակայն, եթե տուժածը թշնանական վերաբերնունքը չի փոխում, մի վիճեք նրա հետ եւ մի փորձեք ստիպելով օգնություն ցուցաբերել: Նրա ընկերը կամ ընտանիքի անդամը կարող են հանգստացնել նրան եւ համոզել, որ նա ընդունի ձեր օգնությունը: Յիշեք, առանց տուժածի համաձայնության չեք կարող նրան օգնել: Նման իրավիճակում ահազանգեք եւ հետեւեք դեպքերի հետագա ընթացքին՝ հնարավոր վտանգը կանխելու նպատակով:

Եթե տուժածը երեխա է, ապա նրան օգնություն ցուցաբերելու համաձայնությունը պետք է ստանալ երեխային ուղեկցող չափահասից: Նաև անդամություն ստանալը պարտադիր չէ, եթե տուժածը՝

- անգիտակից է.
- իիվանդության կամ վնասվածքի պատճառով ի վիճակի չէ պատասխանելու.
- երեխա է առանց չափահաս ուղեկցողի:

Խուսափեք տուժածից թույլտվությունը ստանալու խիստ պաշտոնական ոժից. դա կարող է նրան անհասկանալի լինել: Ինքներդ կողմնորոշվեք յուրաքանչյուր դժբախտ պատահարի դեպքում տուժածից թույլտվություն ստանալու հարցում, սակայն միշտ անհրաժեշտ է խոսել տուժածի հետ եւ բացատրել, թե ինչ եք պատրաստվում անել:



ՏՈՒԺԱԾԻ ԶՍՆՈՒՄ



Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում տուժածին արդյունավետ օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է պարզել, թե նա ինչ վնասվածքներ ունի եւ ինչ վիճակում է, այսինքն՝ անհրաժեշտ է կատարել տուժածի զննում:

Տուժածին զննելիս առաջին հերթին պետք է ստուգել կենսական կարեւոր համակարգերի գործունեությունը, այսինքն՝ գիտակցությունը, շնչուղիների անցանելիությունը եւ շնչառությունը, անոթազարյունը եւ ուժեղ արյունահոսության առկայությունը: Այս զննումն անվանում ենք առաջնային, որի ժամանակ պարզվում են կյանքին անմիջական վտանգ սպառնացող իրավիճակները:

Նախ անհրաժեշտ է հնարավորին չափ չուտ հայտնաբերել եւ դադարեցնել ուժեղ արյունահոսությունը: Ուժեղ արյունահոսության առկայությունը պարզելու համար ուշադիր զննեք տուժածին ոսքից գլուխ: Սովորաբար այն ակնհայտորեն երեւում է շիթով բխող արյան, գոյացած արյան լճակի տեսքով: Այնուհետեւ ստուգեք տուժածի գիտակցությունը: Այդ նպատակով զգուշորեն բռնեք տուժածի ձեռքը, ցնցեք նրա ուսը: Խոսեք նրա հետ, տվեք պարզ հարցեր եւ հրահանգներ. «Գոյ ինձ լսո՞ւմ ես, եթե լսում ես, աչքերդ բացիր, ձեռքս սեղմիր, որեւէ նշան տուր»: Եթե տուժածը ոչ մի կերպ չի արձագանքում, նշանակում է՝ նա գիտակցություն չունի: Անգիտակից վիճակում տուժածի մկանները, այդ թվում նաև լեզուն, թուլանում են: Եթե տուժածը պառկած է մեջքի վրա, նրա լեզուն հետ է գնում դեպի ընպան փակելով շնչուղիները: Ժողովրդի մեջ ընդունված է այն կարծիքը, որ գիտակցությունը կորցրած տուժածի լեզուն կուլ է գնում: Եվ մարդիկ փորձում են տարբեր կերպ բացել տուժածի բերանը, լեզուն բռնել՝ վնասելով տուժածին: Մի՛ արեք նման բան: Կարելի չ ավելի հեշտ ու անվնաս օգնություն ցույց տալ:

Ծնչուղիների բացում կատարելու համար ձեր մի ձեռքը որեք տուժածի ճակատին, իսկ մյուս ձեռքով բռնելով կզակից՝ գլուխը զգուշությամբ հետ տարեք, կզակը բարձրացրեք: Այս գործողության շնորհիվ լեզուն ազատում է շնչուղիների մուտքը: Բուր մատը տեղադրեք

ēi áñçÝ BñÁáóÝùçó Ý»ñù»ô »ô ½· áóßáñ»Ý µ³ ó»ù i áóÀ³ í ç µ»ñ³ ÝÁ: 2Ýññ³ Á»Bí áóÀ³ Ý ¹»áñáðU ³ Ýó»éáóçí áí T³ Ù Á³ BÍÇY³ Táí Ü³ ùñ»ù i áóÀ³ í ç µ»ñ³ YáðU Táoi ³ Tí ³ I ÉáñÓÁ, N»ÓáðI Ý»ñÁ »ô ³ ÚÉÝ: 2Ýá³ ÷ ³ N³ eÝ»ñC ¹»áñáðU · ÉáðEÁ á»i ü i ³ i »Éç úçá N»i i ³ Ý»É, ÇeÍ Tí Tí »ñY»ñC Úáí ` µ³ nñóñ³ ðÝ»É Úç³ ÙÝ Tí ³ TÁ: BÝááóçY»ñÁ µ³ ó»- ÉáðóN»i á, ³ é³ Yó. EÉç ¹çñùÁ ÷ áE»Éáð eí áó»ù i áóÀ³ í çßY³ éáðA- lláóÝÁ: Øáí »ññù Ó»ñ ³ Tí ³ YçÁ i áóÀ³ í ç µ»ñ³ YçY, N³ l³ òúÝ áóðO»ù Ýñ³ Tíñl ñü ³ Yí ³ Tí ³ YçY »o áñáí ³ ÚÝçY: ÓáñðO»ù i »eÝ»É, Eé»É »ô ³ Ùí áí ½· ³ E BÝá³ éáðAñáðÝÁ 5-10 1 ³ ññl ñü ³ Yç ÁYÁ³ óúáðU: i áóÀ³ í ç ïÝÝU³ Ý Ülláðe û³ ÚÉÝ ³ YáÄ³ ½³ nñl C eí áó· áóðU ÿ: 2Y. Çi ³ Tíçó i áóÀ³ í ç ³ Yá- Ä³ ½³ nñl Á Yá ³ Tí ³ Tí ³ ññl ñü ³ ñl Bß³ ÷ »E ÚÝ³ ïçY ½³ nñl »ñ³ Tíç i ñ³ : 2YáÄ³ ½³ nñl Á eí áó· »Éáð N³ Úù ³ Tí ³ Ù ³ Tí ³ Y»ñÁ µµ³ óç µáðÁ Ü³- tñhg) á³ ññl YáðC ³ Ú»Y³ µ³ nñóñ ³ Tíçó e³ ññ»óñ»ù TáðU³ á³ ññl YáðC TáðU³ ïçY Ü3 éáðU · i Yí áó ³ Táëç Ü»ç: °Á» Úç TáðUçó ³ YññY³ nñl Bß³ ÷ »E ³ YáÄ³ ½³ nñl Á, ÷ áñðO»ù 1 ³ ³ Y»É Ülláðe TáðUçó: DçB»ù, áç Tí ³ nñl Eç e»ØÜ»E 2 ÚÝ³ ïçY ½³ nñl »ñ³ TíY»ñÁ Üç³ Á³ Ü3 Y³ Tí:] Tí »ñ»- E³ Y»ñC ³ YáÄ³ ½³ nñl Á eí áó· áóðU »Y. ³ Õí áóYç i ñ³ Tí ³ Ù µ³ ½l c Úç- ççY Ü³ éáðU, Y»ñèç TáðUçó:

°Á» Ü³ nñl Á Táñóñ»É i · Çi ³ TíóáðAñáðÝÁ

¶Çi ³ TíóáðAñ³ Y Táñáðeí Á Ü3 nñl áó Tí³ YùçY eá³ éÝ³ óáð Í ç- x³ Tí: nñ³ á³ Tí x³ é Tí ³ nñáðU »Y EçY»É µ³ ½Ü³ Áçí 1 Y³ eí ³ ÙñY»ñ »ô NñCí 3 YíáðAñáðÝY»ñ, ÇYáå»é ûñçY³ Tí eñtí ç ³ BÉ³ Tí ³ Yùç E³ Y. 3 - nñáðUÝ»ñÁ, · EÉáðO»Oçí Y³ eí ³ Tíññ»ñÁ, N³ Yí ³ ññl ³ ññl eñCí 3 Yí 3. ÇY í ç x³ TíY»ñÁ: ³ òç ³ YÜ, áñ ³ Y. Çi ³ Tíçó i áóÀ³ í ç µáðÁñ Ül ³ YÝ»ñÁ ÁáðE³ YáðU »Y, »o »Á» Y³ Ü»çùçí ññl ³ ñl Bß³ eí ³ Tí, E»½áðY Tí ³ nñáðU ÿ: i . Y³ E áó ÷ ³ Tí »E BÝááóçY»ñÁ, Yñ³ Üáí µ³ ññl ³ ÜlláðU »Y Y³ »ô TíÉÜ³ Y áó N³ ½ç E»Yé»ùéY»ñÁ: nñ³ N»i »ô³ Yùáí ÷ E»Ü³ Y ½³ Y. 1 ³ TíY»ñÁ, ³ nñláðÝÁ Tí ³ Ü ³ Ú ³ ÚÉ N»ÓáðI Y»ñ Tí ³ nñáðU »Y E»³ Y»É BÝááóçY»ñÁ, ÇYáÁ BÝá³ éáðAñáðÝÁ 1 3 1 3 nñ»éáð á³ Tí x³ e Tí ³ nñáðU ÿ EçY»É: ¶Çi ³ TíóáðAñáðÝ ááðÝ»óáð, µ³ ló BÝááð i áóÀ³ í çY á»i ü i TáðUç ³ á³ ññl áóðU³ Y ¹çñùç µ»ñ»E: ä³ nñl»éáí, áñ Ü3 nñl Á ááðÝç · Çi ³ TíóáðAñáðÝ, µ³ ló BÝááðU ÿ, ³ é³ Yó Á³ Ü3- Y³ Tí TáñóÝ»éáð Yñ³ Y Bñç»ù TáðUç ³ á³ ññl áóðU³ Y ¹çñùç: 2ÜÝ NÝ³ nñ³ i áñáðAñáðY ÿ Tí ³ - Eçé ³ á³ ññl »E BÝááóçY»ñC ³ Yó³ Y»ÉçáðAñáðÝÁ »ô µ»ñ³ - Yç Eáéáç á³ ññl ññl TíáðU³ Y ³ nñl ³ ññl èñáð: 2Ü1 ¹çñùç µ»ñ»- Eáð N³ Ü3 nñl Tí »O³ I áññ »ù i áó-



Ժամի մարմնին մոտ, ծեր կողմի ծեռքը բացեք նրա մարմնի նկատմամբ մոտավորապես ուղղի անկյան տակ եւ բռնելով նրա՝ ծեզնից հեռու կողմի ուսից ու կոնքից՝ տուժածին համաշափ շրջեք դեպի ծեզ՝ կողքի: Վերեւում հայտնված ոտքը ծալեք եւ դրեք մյուս ոտքին:

Տուժածի շնչուղիների անցանելիության ապահովման նպատակով՝ բռնեք նրա ճակատից եւ կզակից, հետո գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ միաժամանակ դեմքը շրջելով դեպի ներքեւ, եւ բացեք նրա բերանը: Շրջելուց հետո տուժածը պետք է հենված լինի ծալված ոտքի եւ ուսի վրա: Տարբերություն չկա, թե որ կողմի վրա դուք կշրջեք տուժածին: Սակայն, եթե տուժածը հոդ կին է, ապա նրան պետք է շրջել ձախ կողմի վրա: Տուժածի շնչուղիների անցանելիությունն ապահովելու համար գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ միաժամանակ դեմքը շրջելով դեպի ներքեւ: Բացեք նրա բերանը: Կողքի ապահովության դիրքի բերելիս զգույշ եղեք, հատուկ ուշադրություն դարձրեք գլխին եւ պարանոցին: Հնարավորության դեպքում տուժածին շրջեք առնվազն 2 հոգով, որոնցից մեկը պետք է պահի գլուխը: Կողքի ապահովության դիրքի բերելուց հետո՝ անհրաժեշտ է պահպանել տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը, որի համար կարելի է նրա վրա ծածկոց գցել: Գիտակցության բացակայությունը լուրջ իրավիճակ է, եւ յուրաքանչյուր դեպքում պետք է ահազանգել շտապ օգնություն: Մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը՝ պարբերաբար ստուգելով նրա անոթազարկը, շնչառությունը եւ գիտակցությունը: Ինչպես արդեն ասվեց, անգիտակից տուժածի մոտ բացակայում են կլլման եւ հազի ռեֆլեքսները, այդ իսկ պատճառով չի կարելի անգիտակից տուժածին խնեցնել, կերակրել կամ նրա մոտ փսխում առաջացնել: Անոթազարկը ստուգելով՝ դուք կարող եք գաղափար կազմել սրտի աշխատանքի մասին: Փորձեք հաշվել անոթազարկի հաճախականությունը: Նորմալ վիճակում անոթազարկի հաճախությունը րոպեում հետեւյալն է՝



Չափահաս՝ 60-85 զարկ
Անշափահաս՝ 80-110 զարկ
Ծծկեր՝ 120-140 զարկ

Ծնչառությունը ստուգելու համար ձեռքը դրեք տուժածի որովայշին եւ հաշվեք շնչառական շարժումները: Նորմալ վիճակում անորթազարկի հաճախականությունը րոպեում հետեւյալն է՝

Չափահաս՝ 14-18 շնչառական շարժում
Անչափահաս՝ 20-25 շնչառական շարժում
Ծծկեր՝ 40-60 շնչառական շարժում

Ծնչառության եւ սրտի աշխատանքի՝ նորմայից շեղումները խոսում են տուժածի վիճակի փոփոխության մասին: Ուստի դրան պետք է ուշադրություն դարձնել: Վերահսկման տվյալները գրանցեք եւ առաջնային ու երկրորդային զննման տեղեկությունները հանձնեք ժամանող շտապ օգնության անձնակազմին: Առաջնային զննում կատարելուց եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան անհապաղ օգնություն ցուցաբերելուց հետո պետք է կատարել երկրորդային զննում՝ հայտնաբերելու համար տուժածի կյանքին անմիջական չսպառնացող վնասվածքները եւ վիճակները: Երկրորդային զննման քայլերն ավելի մանրամասն կքննարկենք հաջորդ համարներում:



Այսպիսով, անգիտակից տուժածին օգնելու համար պետք է նրան շրջել կողքի դիրքի եւ անընդիհատ վերահսկել նրա վիճակը, մինչեւ շտապ օգնության ժամանումը:

ԳԻՏԱԿԻՑ ՏՈՒԺԱԾԻ ԶՍՆՈՒՄ



Հայտ հաճախ համապատասխան օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է լինում ավելի մանրանասն տեղեկություններ իմանալ տուժածի վիճակի մասին: Այդ տեղեկությունները կարող եք ստանալ հենց տուժածից, նրա բարեկամներից, ընկերներից կամ պարզապես դեպքի ականատեսներից: Տուժածի զննումը կատարվում է երեք հիմնական եղանակով՝ հարցուփորձ, մանրակրկիտ զննում եւ վերահսկում:

Հարցուփորձ

Եթե տուժածն անծանոթ է, ներկայացեք եւ նրան առաջարկեք ձեր օգնությունը: Եթե տուժածը փոքր երեխա է, ձեր գործողությունները միշտ համաձայնեցրեք նրան ուղեկցող չափահասի հետ: Տուժածի հետ եղեք մեղմ եւ հոգատար: Յամբերությամբ լսեք նրան: Հարցորեք տուժածի անունը եւ այդուհետ դիմեք նրան անունով. դա անմիջական մթնոլորտ կատեղի: Խոսելիս գրավեք այնպիսի դիրք, որ տուժածը ձեզ տեսնի: Հարցուփորձի ժամանակ պարզեք, թե ինչ է զգում տուժածը եւ ինչ գանգատներ ունի:

Կան դեպքեր, երբ անհրաժեշտ է տուժածից ստանալ որոշ հարցերի պատասխաններ: Օրինակ՝ պարզեք՝ ումի՞ արյոց տուժածն ալերգիա որեւէ դեղամիջոցից, սննդից, միջատի խայթոցից կամ այլնից: Յնարավոր է, որ հենց ալերգիկ ռեակցիան էլ լինի տվյալ իրավիճակի պատճառը:

Եթե տուժածը տառապում է որեւէ հիվանդությամբ, ապա պարզեք՝ օգտագործու՞մ է, արյոցը, որեւէ դեղամիջոց: Եթե այո, ապա օգնեք ընդունել բժշկի նշանակած դեղերը:

Հարցորեք, թե վերջին անգամ երբ եւ ինչ է կերել կամ խմել տուժածը: Դրանով կպարզեք՝ նրա ծարավի կամ թուլության պատճառը կապվա՞ծ է, արյոցը, սննդն կամ հեղուկներ ընդունելու հետ, թե՝ ոչ:

Ցավ

Ցավը ստիպում է մեզ ուշադրություն դարձնել հիվանդության կամ վնասվածքին: Երբեմն պատճառն ակնհայտ է, օրինակ՝ երբ

կտրում եք ձեր մատը: Այլ դեպքերում ցավի պատճառն ավելի դժվար է բացահայտել: Օրինակ՝ ցավը որովայնի շրջանում կարող է թվականում նարսողության խանգարման հետեւանք, բայց իրականում արտանականի հնֆարկտի նշան լինել: Որոշ դեպքերում ցավը վկայում է վիճակի լրջության մասին, իսկ այլ իրավիճակներում այն ինքնին առաջնային խնդիր է: Ցավի զգացողության արտահայտումը որոշ չափով կախված է տուժածի անհատական առանձնահատկություններից: Եթե տուժածը գանգատվում է ցավից, խնդրեք բնութագրել այն: Ցավը կարող է լինել այրող, ճնշող, սուր, բութ եւ այլն: Եթեք մի՛ անտեսեք ցավը կամ մի՛ ենթադրեք, որ նրա պատճառն այնքան էլ լուրջ չէ:

Փորձեք մեղմել ցավը մինչեւ շտապօգնության ժամանումը: Երեմն ցավը կարելի է մեղմել միայն տուժածին հանգստացնելով եւ նրան հարմար դիրքի բերելով:

Եթե տուժածը կենտրոնացած է միայն ցավի վրա, ապա այն ավելի սուր է զգում: Փորձեք նրան հնարավորին չափ շեղել, որի լավագույն միջոցն է նրա հետ խոսելը: Աշխատեք խոսել բնական եւ անբռնազբռն՝ տուժածին ներգրավելով խոսակցության մեջ: Եթե նա երեխա է, զբաղեցրեք նրան՝ ցույց տալով որեւէ հետաքրքիր տեսարան, պատմելով հեքիաթ եւ այլն: Մի՛ շարունակեք, եթե զգում եք, որ այն, ինչ անուն եք, հաճելի չէ տուժածին:



Մանրակրկիտ զննում

Տուժածի մարմինը կարելի է զննել նայելով, շոշափելով, կամ կարող եք խնդրել նրան՝ շարժել մարմնի մասերը: Այդ ընթացքում ուշադրություն դարձրեք տուժածի դեմքի արտահայտությանը, ձայնին, մաշկի վիճակին: Տուժածի զննումը սկսեք գլխից: Ուշադրույուն դարձրեք այտուցված կամ փոս ընկած մասերին: Մանրակրկիտ շոշափեք գլխի հատկապես մազածածկ շրջանը, քանի որ այդ մասում դժվար է նկատել վնասվածքները: Խնդրեք տուժածին գլուխը դանդաղ թերել աջ եւ ձախ, շարժել ուսերը: Եթե շարժելիս տուժածը ցավ է զգում, անմիջապես դադարեցրեք այդ գործողությունը:

Կրծքավանդակը եւ որովայնը զննելիս առաջարկեք տուժածին խոր ներշնչել եւ արտաշնչել: Հարցուեք, կա՞ն, արդյոք, ցավեր կրծքավանդակի կամ որովայնի շրջանում, թե՝ ոչ:

Այնուհետև շոշափեք յուրաքանչյուր վերջույթն առանձին: Խնդրեք տուժածին շարժել սկզբում ձեռքի մատները, ապա դաստակը, արմունկը, ուսը: Նույն հերթականությամբ զննեք նաեւ ստորին վերջույթները:

ՎԵՐԱՀԵԿՈՒՄ

Այսպիսի կարեւոր նշաններ, ինչպիսիք են տուժածի գիտակցության խանգարումները, շնչառության, անոթազարկի փոփոխությունները, կարեւոր տեղեկություններ են տալիս տուժածի վիճակի մասին: Մաշկի վիճակի փոփոխությունները նույնպես կարող են ձեզ որոշակի տեղեկություններ տալ տուժածի վիճակի մասին:

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գիտակցության մակարդակը պարզելու համար տուժածին տվեք պարզ հարցեր: Գիտակցության խանգարումների մասին կարող են վկայել տուժածի խոսքի, հիշողության, լսողության, տեսնողության խանգարումները, տարածության եւ ժամանակի կողմնորոշման խանգարումները եւ այլն:

Մաշկ

Մաշկը կարող է դաշնալ գումատ, կարմրած, կապտավուն եւ այլն: Մաշկի գույնի փոփոխություններն ավելի հեշտ կարող եք հայտնաբերել տուժածի շրթումքների շրջանում: Մաշկի ջերմաստիճանը կարելի է որոշել ձեռքի ափով տուժածի մաշկի ջերմությունը զգալով եւ համեմատելով ձեր մաշկի ջերմաստիճանի հետ: Մաշկը կարող է լինել սովորականից չոր, խոնավ կամ առատ քրտնարտադրության հետեւանքով՝ թաց:

ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՆՈԹԱԶԱՐԿ

Նորմալ վիճակում մարդու շնչառությունը համաշափ է, անաղմուկ եւ հանգիստ: Չափահաս մարդկանց եւ ութ տարեկանից բարձր երեխաների շնչառության հաճախությունը սովորաբար կազմում է րոպեում 14-18 շնչառական շարժում: Երեխաների շնչառությունն ավելի արագ է: Տուժածի շնչառությունը կարող է դաշնալ աղմկոտ, մակերեսային կամ խորը, արագանալ կամ դանդաղել: Աշխատեք տեսնել եւ լսել շնչառության յուրաքանչյուր փոփոխություն:

Իսկ հիմա անդրադաշնանք անոթազարկի փոփոխություններին: Առօդ սիրտն աշխատում է կանոնավոր եւ համաշափ: Հանգիստ վիճակում չափահաս մարդկանց սրտի կծկումների հաճախականությունը կազմում է րոպեում 60-80 զարկ: Ութ տարեկանից փոքր երեխաների սիրտը րոպեում ավելի արագ է կծկվում, իսկ ծծկեր երեխայի մոտ լինում է 120: Գիտակից տուժածի մոտ անոթազարկի փոփոխությունները կարող եք զգալ՝ շոշափելով այն տուժածի ճաճանչային զարկերակի վրա: Անոթազարկը կարող է լինել անկանոն, թույլ կամ դժվար շոշափվող: Այն կարող է լինել չափազանց արագ կամ դանդաղ:

Հնարավոր է, որ տուժածի վնասված կողմի վրա անոթազարկը չշոշափվի: Այդ դեպքում շոշափեք այն հակառակ կողմի վրա:

ԾՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ



Մարդու մարմնի նորմալ կենսագործումնեության համար անհրաժեշտ է թթվածնի անընդհատ մատակարարում: Ծնչառական համակարգը շնչառության միջոցով մարմինն ապահովում է թթվածնի անհրաժեշտ քանակով եւ հեռացնում ածխաթթու գազը:

Ծնչառությունը կատարվում է շնչառական, սրտանորային, նյարդային եւ հեճաշարժի համակարգերի համատեղ գործունեության շնորհիվ: Այս համակարգերից յուրաքանչյուրի գործունեության խարարումը, որը լինում է որոշ վնասվածքների եւ հիվանդությունների դեպքում, կարող է բերել շնչառության խանգարումների եւ դժվարացնել շնչառությունը: Իսկ շնչառության խանգարումները շատ հաճախ կյանքին անմիջական վտանգ են սպառնում, քանի որ խախտվում է թթվածնի մատակարարումը հյուսվածքներին, մասնավորապես դա խիստ է անդրադառնում նյարդային համակարգի գործունեության վրա: Ծնչառության խանգարման արագ հայտնաբերումն ու ժամանակին ցուցաբերած առաջին օգնությունը կարող են թերեւացնել տուժածի վիճակը եւ կանխել հետագա բարդությունները:

Ի՞նչպէ՞ս ճանաչել

Սովորաբար մարդը շնչում է հանգիստ եւ ազատ, առանց որեւէ դժվարության: Ծնչառության խանգարման դեպքում բավական է նայել մարդու դեմքին եւ ուշադրություն դարձնել նրա շնչառությանը եւ դուք կարող եք որոշել, որ նրա շնչառությունը դժվարացած է: Տուժածն այնպիսի տեսք է ունենում, ասես չի կարողանում շունչ քաշել կամ շնչահեղծ է լինում: Ծնչառությունը կարող է սովորականից ավելի արագ, ավելի դանդաղ կամ անկանոն լինել, ավելի խոր կամ ճակերեսային լինել: Տուժածի շնչառությունը կարող է աղմկոտ լինել, այսինքն՝ ուղեկցվել խզողներով, կլկոցով, խոխոցով:

Ծնչառության դժվարացման մասին վկայում է նաև մաշկի վիճակը, այն լինում է անսովոր խոնավ ու կարմրած, հետո՝ գունատ կամ կապտավլուն: Տուժածը կարող է գլխապտույտ օգալ, զանգատվել կրծքավանդակի ցավից, ձեռքերի եւ ոտքերի թրմածությունից, ծակծկոցներից: Սովորաբար նա լինում է տագնապած, անհանգիստ կամ վախեցած:

Ի՞նչ անել

Զանազան պատճառներից առաջացած դժվար շնչառության դեպքում պարտադիր չէ հստակ իմանալ պատճառը, քանի որ նման դեպքերում ձեր կողմից տուժածին ցուցաբերվող օգնության գործողությունները նույն են: Եթե տուժածի մոտ դժվարացած շնչառության նշաններ եք հայտնաբերում, նախ ուշադիր գննեք շրջապատը եւ ապահովեք անվտանգությունը, քանի որ նրա վիճակի պատճառ կարող են հանդիսանալ թունավոր գազերը, որոնք հնարավոր է դեռևս առկա են դեպքի վայրում:



Անվտանգությունն ապահովելու համար օդափոխեք տարածքը՝ բացեք դուռը, պատուհանները, իսկ եթե անհնար է ապահովել անվտանգությունը, դուրս բերեք տուժածին այդ վտանգավոր տարածքից:

Շնչառական խանգարումների ժամանակ տուժածին ցուցաբերվող առաջին օգնության քայլերը բավական պարզ են, բայց դրանց շիմացությունը կարող է բերել նրա վիճակի վատացման:

Սատեցեք տուժածին հարմար դիրքով, ցանկալի է՝ իրանով առաջ թերված: Արձակեք սեղմող կապերը՝ օծիքը, վզնոցը, փողկապը, գոտին եւ այլն: Խորիուրդ տվեք նրան հնարավորին չափ քիչ շարժվել: Վատահություն ներշնչեք եւ հանգստացրեք տուժածին, մի թողեք որ հուզվի, հանգիստ վիճակը նույնականացնեք:

Ապահովեք բարմ օդի բավարար քանակ՝ բացեք պատուհանը կամ դուռը եւ խնդրեք այդ տարածքում գտնվող մարդկանց հեռանալ: Պարբերաբար վերահսկեք տուժածի շնչառության ու անթագարկի վիճակը, գրանցեք տվյալները: Եթե տուժածն ունի բժշկի կողմից նշանակված դեղամիջոցներ, ապա օգնեք ընդունել դրանք:

Եթե տուժածը չունի դեղեր կամ դեղերը չեն օգնում ու շնչառությունը չի բարելավվում, ահազանգեք շտապ օգնություն:

Բրոնխիալ ասթմա

Հիմա եկեք անդրադարձ շնչառական համակարգի բավական տարածված մի հիվանդության՝ բրոնխիալ ասթմային: Բրոնխիալ ասթման հիվանդություն է, որի դեպքում տարբեր պատճառներից պարբերաբար կարող են առաջանալ ծայրամասային շնչառական ուղիների մկանների կծկում, լորձաթաղանթի այտուց եւ առատ լորձարտադրություն, ինչի հետեւանքով դժվարանում է տուժածի

շնչառությունը, հատկապես՝ արտաշնչումը: Այս վիճակն անվանում են բրոնխիալ ասթմայի նոպա: Ասթմայի նոպայի առաջացմանը կարող են նպաստել տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ եղանակի փոփոխությունները, ֆիզիկական լարվածությունը, ալերգիկ ռեակցիաները, օգացմունքային սթրեսը, շնչառական ուղիների սուր վիրուսային հիվանդությունները, օրինակ՝ գրիպը:

Ինչպե՞ս ճանաչել ասթմայի նոպան

Նոպայի ժամանակ արտաշնչումը դժվարանում է, օդը, կարծես, «մնում է տուժածի թոքերում», առաջանում է շնչահեղձություն: Տուժածը հարկադրական դիրք է ընդունում՝ մարմնով առաջ թեքված, քանի որ այս դիրքում շնչելը նրա համար ավելի հեշտ է: Տուժածի շնչառությունը ուղեկցվում է չոր, խեղդող հազով, սուլող խզողութով: Մաշկը պատվում է սաօթ քրտինքով, գունատվում է եւ ստանում կապտավուն երանգ: Կրծքավանդակի եւ պարանոցի երակները արտահայտվում են: Զայնը դառնում է խռպոտ: Սովորաբար ասթմայով հիվանդները գտնվում են թժկի հսկողության տակ ու զիտեն, թե ինչպես գործել մինչեւ նոպայի սկսվելը եւ նոպայի դեպքում: Հաճախ ասթմայով տառապողները դեղերի միջոցով կարողանում են կանխել նոպան կամ թեթեւացնել նրա ընթացքը: Այդ դեղերը թուլացնում են շնչառական ուղիների մկանների կծկումը, լայնացնում են շնչուղիներն ու հեշտացնում շնչառությունը:

Ի՞նչ անել

Ասթմայի նոպայի մեջ գտնվող տուժածին հայտնաբերելիս պարզեր՝ նա ունի՝ արդյոյք թժկի կողմից նշանակված դեղեր եւ եթե այն, ապա օգնեք նրան ընդունել այդ դեղերը:

Օգնեք տուժածին ընդունել շնչառությունը հեշտացնող դիրքը: Հիմնականում շնչառության դժվարություններ ունեցող տուժածներն իրենք փորձում են ընդունել ամենահարմար դիրքը: Կարելի է տուժածին նստեցնել՝ իրանը առաջ թեքած, արմունկներով սեղանին կամ ծնկներին հենված: Համաստացրեք տուժածին: Վախը, լարվածությունը մեծացնում են թթվածնի պահանջը: Մնացեք տուժածի մոտ եւ քաջակերեք նրան: Խորհուրդ տվեք նրան հնարավորին չափ քիչ շարժվել, չխոսել, ինչը կնվազեցնի մարմնում թթվածնի պահանջը:



Սովորաբար դեղերի ընդունումից եւ առաջին օգնության մյուս նշված քայլերից հետո նոպան ավարտվում է: Դազը դառնում է թաց, ուղեկցվում է մասուցիկ, թափանցիկ, անգույն խորիսի արտազատումով: Տուժածի շնչառությունն ու ընդհանուր վիճակը բարելավվում են: Դակառակ դեպքում, եթե ձեռնարկած քայլերը չեն հանգեցնում տուժածի վիճակի բարելավմանը կամ եթե դա տուժածի մոտ ասթմայի նոպայի առաջին դեպքն է, անմիջապես ահազանգեք շտապ օգնություն:

ՀԵԼՈ

Հելոցը բավական հաճախ հանդիպող շնչառական խանգարում է, որը հաճախ կարող է առաջանալ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից: Անգամ 3-4 հարկ արագ բարձրանալիս մարդը կարող է հելալ: Ինքնին հելոցը վտանգավոր չէ եւ երբեմն կարող է անցնել նաեւ առանց առանձնահատուկ օգնության, բայց այն կարող է լինել նաեւ վնասվածքի կամ հիվանդության արդյունք: Հելոցի ժամանակ շնչառությունը արագացած է, մակերևսային, մարդն օդի պակաս է օգում, շնչահեղձ լինում, հնարավոր է ունենա գլխապտույտ: Կարող են լինել վերջույթների մատների թմրածություն կամ ծակծկոցներ:



Ի՞նչ անել

Ինքներդ մնացեք հանգիստ ու փորձեք հանգստացնել տուժածին: Խորհուրդ տվեք նրան քիչ շարժվել:

Բարձրածայն հաշվեք տուժածի յուրաքանչյուր շնչառական շարժումը եւ աստիճանաբար դանդաղեցրեք հաշիվը: Տուժածը կփորձի ծեզ հետ կենտրոնանալ եւ աշխատել դանդաղեցնել շնչառությունը, նրա վիճակն արագ կբարելավվի:

Եթե հելոցի պատճառը հոլգմունքն է, խորհուրդ տվեք տուժածին շնչել ծեռքերի ափերի մեջ կամ եթե ծեռքի տակ կա թղթա տոպրակ՝ տոպրակի մեջ: Մինչեւ տոպրակը տալը բացատրեք տուժածին՝ ինչ եք պատրաստվում անել, եթե տուժածը վախսենում կամ ընկճվում է տոպրակից, մի պահ հեռացրեք այն դեմքից, ապա նորից փորձեք առաջարկել շնչել տոպրակի մեջ:

Եթե հելոցի պատճառը վնասվածք կամ հիվանդություն է, կամ այն չի անցնում ձեռնարկած միջոցներից, ահազանգեք շտապ օգնություն:

ԱՐՅՈՒՆԱ- ՀՈՍՈՒԹՅՈՒՆ



Աշօրյա կյանքում շատ հաճախ են հանդիպում վնասվածքներ, որոնք ուղեկցվում են արյունահոսությամբ: Բարեբախտաբար արյունահոսությունները լինում են թույլ, հեշտ դադարեցվող եւ չեն պահանջում բժշկական միջանտություն: Բայց երբեմն արյունահոսության դադարեցման հասարակ քայլերի չինացությունը մարդու կյանք է արժեցել:

Մարդու մարմինն առանց հետագա բարդությունների կարող է կորցնել մինչեւ 10 տոկոս արյուն: Զափահաս մարդու մոտ դա կազմում է մոտ 350-500մլ: Այս ծավալից ավելին կյանքի համար վտանգավոր է:

Արտաքին արյունահոսություն

Արտաքին արյունահոսությունն արյան արտահոսքն է մարմնից դուրս: Արյունահոսություն ունեցող տուժածը սովորաբար լինում է տագնապած, անհանգիստ, իսկ մեծ քանակով արյան կորստի դեպքում տուժածը լինում է թույլ, ունենում է գլխապտույտ: Նրա անոթազարկն արագանում է, դժվար է շշափվում, հաճախանում է նաեւ շնչառությունը: Փոխվում են տուժածի մաշկի գույնն ու վիճակը՝ այն գունատվում է, դառնում սառը, կարող է կապտավուն երանգ ստանալ: Տուժածի տեսողությունը մթագնում է, նա ուժեղ ծարավ է գում:

Ի՞նչ անել

Արյունահոսության դեպքում արյան տեսքը շատերին խուճապի է մատնում, եւ վերքը թվում է ավելի սարսափելի, քան կա իրականում: Խուճապի մի՛ մատնվեք. վախն ու հուզմունքը վատ օգնականներ են: Հանգստացրեք նաեւ տուժածին, շեղեք նրա ուշադրությունը:

Ուժեղ արյունահոսությունը դադարեցնելու համար առաջին հերթին ուղղակի ճնշում գործադրեք՝ ձեռքի ափով սեղմեք վերքը: Վերքի վրա տեղադրեք ստերիլ անձեռոցիկ կամ մաքուր գործվածքի կտոր, օրինակ՝ արդուկած թաշկինակ: Եթե անձեռոցիկը ներծծվում է արյունով, նոր անձեռոցիկ տեղադրեք առաջինի վրա եւ լրացուցիչ ճնշում գործադրեք: Չի կարելի վերքի վրայից հեռացնել արյունով ներծծված անձեռոցիկը: Դա կբերի մակարդուկի պոկվելուն, եւ

դադարած արյունահոսությունը կարող է վերսկավել: Վիրակապեք վերքը փաթութային վիրակապի (բինտ) օգնությամբ: Վիրակապի ծայրն ամրացնելու համար վերջույթի շուրջը մեկ լրիվ պտույտ կատարեք եւ շարունակեք վիրակապել՝ ամեն փաթույթով ծածկելով նախորդի 2/3-ը: Անրացրեք կամ հանգուցեք վիրակապի ծայրը: Բարձրացրեք տուժածի վճառված նասա սրտի մակարդակից բարձր: Դա կնպաստի արյունահոսության նվազեցմանը:

Եթե արյունահոսությունը դեռ չի դադարել եւ վիրակապը ներծծվում է արյունով, ապա վերքի շրջանում տեղադրեք նոր անձեռոցիկ, բինտի գլանակ կամ այլ գործվածք եւ ճնշումով վիրակապեք: Այն ամրացրեք: Վիրակապը դնելուց հետո պարբերաբար ստուգեք արյան շրջանառությունը վիրակապից ներքեւ: Դրա համար սեղմեք եղունգը մինչեւ այն սպիտակի: Եթե եղունգը բաց բողնելուց հետո նրա գույնն արագ չի վերականգնվում, նշանակում է՝ վիրակապը չափից ավելի ծիգ է, եւ արյան շրջանառությունը խանգարված է: Արյան շրջանառության խանգարման նախն է վկայում նաեւ վիրակապված վերջույթում անդրազարկի բացակայությունը, մատների սարնությունը, մատները շարժելու անկարողությունը: Վիրակապված վերջույթի արյան շրջանառությունը միշտ համեմատեք առողջ կողմի հետ: Արյունահոսությունը դադարեցնելու նպատակով կարելի է ճնշում գործադրել սեղմնան կետերում:

Սեղմնան կետերը մարմնի վրա որոշակի հատվածներ են, որտեղ հնարավոր է հիմնական սնուցող զարկերակը սեղմել ոսկրին՝ դրանով իսկ խիստ նվազեցնելով մարմնի համապատասխան մասում արյունահոսությունը: Նկարում դուք տեսնում եք մի շարք սեղմնան կետեր, որոնց վրա ճնշում գործադրելով կարող եք համապատասխան մասում արյունահոսությունը դադարեցնել: Դրանք այն հատվածներն են, որտեղ դուք շոշափում եք անոթազարկը:

Գլխի շրջանում արյունահոսության դեպքում կարող եք սեղմել քնային զարկերակը, սակայն հիշեք, որ չի կարելի 2 քնային զարկերակները սեղմել միաժամանակ:

Վերին վերջույթի արյունահոսության դեպքում սեղմելով բազկի միջին մասը՝ դուք կարող եք փակել բազկային զարկերակը:

Ստորին վերջույթի ուժեղ արյունահոսության ժամանակ աճուկային նաև բռունցքով սեղմեք ազդրային զարկերակը:

Եթե տուժածը շատ արյուն է կորցրել կամ չեք կարողանուն դադարեցնել արյունահոսությունը, ահազանգեք շտապ օգնություն:

Վարակի կամխարգելումը

Արյունահոսության դադարեցման ընթացքում վարակի ներքափանցումը կանխելու նպատակով խուսափեք արյան հետ անմիջա-

կամ շփումից, հագեք մանրէազերծ (ստերիլ) ձեռնոցներ կամ օգտագործեք այլ պաշտպանիչ միջոցներ՝ օրինակ պոլիէթենի տոպրակ։ Եթե տուժածն ի վիճակի է, խնդրեք նրան, որ ինքը սեղմի վերքը։ Այն սեղմեք մանրէազերծ անձեռոցիկով կամ ձեռքի տակ եղած որեւէ մաքուր գործվածքով։ Վերքը մշակելուց առաջ եւ հետո օճառով լվացեք ձեռքերը։ Խուսափեք վերքին դիպչելուց։

Ներքին արյունահոսություն

Ներքին արյունահոսությունն արյան արտահոսքն է մարմնի ներքին տարածություններ։ Ներքին արյունահոսություն առաջանում է կոտրվածքների, ծանր վնասվածքների հետեւանքով (ավտովթար, բարձրությունից ընկնել եւ այլն), որոշ հիվանդությունների պատճառով (ստամոքսի խոց, հեմոֆիլիա)։ Որովայնի խոռոչում գտնվող օրգանները (կայծաղը կամ սարդը) կարող են վնասվել եւ արյունահոսել իրանին հասցված բութ հարվածից։ Ներքին արյունահոսության ժամանակ արյան կորստի ընդհանուր նշանների հետ մեկտեղ (թուլություն, գլխապտույտ, հաճախացած անոթազարկ, գունատություն) ենթադրվող ներքին արյունահոսության տեղում լինում է ցավ, հյուսվածքների պնդացում, այտուցվածություն, մաշկի գույնի փոփոխություն։

Ի՞նչ անել

Ներքին արյունահոսության դեպքում օգնություն ցուցաբերելիս հանգստացրեք տուժածին, պառկեցրեք։ Խորհուրդ տվեք նրան չշարժվել։

Արյունահոսությունը նվազեցնելու եւ ցավը մեղմելու նպատակով՝ ներքին արյունահոսության տեղում դրեք սառը թրջոց։ Դուք արդեն գիտեք, որ արյան մեծ քանակի կորուստի դեպքում տուժածն ունենում է ծարավի ուժեղ գացում։ Սակայն ներքին արյունահոսության դեպքում տուժածին արգելվում է խմելու կամ ուժելու որեւէ բան տալ։

Անհապաղ ահազանգեք շտապ օգնություն։



ԾԱՍԱՊԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԱՐԱՐՆԵՐ



Մեր օրերում գրեթե ամեն օր կարելի է լսել ճանապարհատրանսպորտային պատահարների մասին կամ դրանց ականատեսը լինել: Այդ պատահարների հետեւանքով մահացության եւ հաշմանդամության տոկոսը շատ բարձր է:

Ի՞նչ անել

Անվտանգության ապահովում

Եթե ականատես եք ավտովքարի, եղեք շատ ուշադիր, քանի որ ննան իրավիճակներում դեպքի վայրը հաճախ վտանգավոր է: Ավտովքարի դեպքում տարածքը կարող է լինել պայթունավտանգ, կամ շարունակվող երթեւեկության արդյունքում՝ առաջանալ նոր բախումներ: Եթե դուք մեքենայով եք, ապա կանգնեցրեք այն ապահով հեռավորության վրա: Եթե վրարը տեղի է ունեցել երթեւեկելի վայրում, ապա մեքենաների հետագա բախման վտանգը կանխելու նպատակով, վրարից որոշ հեռավորության վրա, տեղադրեք նախագծուացնող նշաններ կամ շրջապատող անձանց խնդրեք փակել երթեւեկությունը: Ներկաներից որևէ մեկին ուղարկեք ահազանգելու: Արգելեք ծխել կամ կրակ վառել դեպքի վայրում, քանի որ դա կարող է հրդեհի կամ պայթյունի պատճառ դարձնալ:

Սանրամասն զննեք դեպքի վայրը: Վտանգավոր նյութեր փոխադրող մեքենաների վրա լինում են հասուլ վահանակներ:

Նման մեքենաների վրարի դեպքում ահազանգի ժամանակ շտապօնության կամ վրարային ծառայության հերթապահին մանրամասն տեղեկացրեք վահանակի վրա պատկերվածի եւ գրվածի մասին:

Օգնություն տուժածներին

Մոտենալով մերենային՝ առաջին հերթին անշատեք շարժիչը եւ քաշեք ձեռքի արգելակը: Յամոզվելով, որ ավտովթարի վայրն անվտանգ է, տուժածին զննեք եւ օգնություն ցուցաբերեք մերենայի մեջ, խուսափեք ավելորդ շարժումներից եւ անցանկալի տեղափոխությունից: Մերենաների բախման ժամանակ կտրուկ շարժման հետեւանքով տուժածներից շատերը ստանում են ողնաշարի վնասվածք, եւ մինչեւ տուժածին տեղափոխելը ցանկալի է անշարժացնել նրա պարանոցը: Դրա համար կարող եք ձեռքի տակ եղած միջոցներից պատրաստել «օձիք»:

«Օձիքը» տեղադրեք տուժածի կզակի տակ, փաթաթեք պարանոցի շուրջը, ծայրերը հետ բերեք եւ կապեք կզակի տակ: «Օձիքը» տեղադրելիս ցանկալի է, որ որեւէ մեկը պահի տուժածի պարանոցը եւ գլուխը: Սակայն, եթե դեպքի վայրում կա վտանգ, օրինակ, եթե նկատում եք վարելիքի արտահոսք, գգում բենզինի կամ գազի հոտ, կամ էլ վթարի հետեւանքով մերենայի առաջանասը խիստ ձեւախախտված է, ապա պետք է արագ կողմնորոշվել եւ տուժածներին տեղափոխել ավտոմերենայից կամ այդ տարածքից: Տուժածին տեղափոխեք նաեւ այն դեպքում, եթե չեք կարող առաջին օգնությունը կազմակերպել մերենայի մեջ, օրինակ, եթե տուժածն անգիտակից է:

Եթե տուժածը կապել է ամրագոտի, արձակեք այն: Զգուշությանը հանեք տուժածի ոտքերը ոտնակներից: Թիկունքի կողմից գրկեք տուժածի իրանի ստորին մասը եւ բռնեք նրա գոտուց: Մի ձեռքով քաշելով գոտուց, մյուսով հրելով տուժածի ծնկները՝ նրան




շրջեք եւ թիկունքով հենեք ձեզ: Այնուհետեւ, տուժածի մի ձեռքը արմճնկում ծալեք եւ ձեր ձեռքը նրա մյուս՝ չծալված ձեռքի թեւատակով անցկացնելով՝ ամուր բռնեք ծալված ձեռքի նախաբազկից՝ ձեր բուք մատը պահելով մյուսների հետ միասին: Զեր մյուս ձեռքը ծալված ձեռքի թեւատակով անցկացնելով՝ բռնեք տուժածի ծնոտը: Ծնկները ծալելով եւ մարմնով հետ ընկնելով՝ տուժածին հենեք ձեր ազդեցին:

Այնուհետեւ, նրան քաշելով՝ քայլեք դեպի հետ: Ցանկալի է, որ որեւէ մեկը օգնի ձեզ եւ բռնի տուժածի ոտքերը, որպեսզի դրանք չվնասվեն մերենայից հանելու պահին: Տուժածին անվտանգ տեղ հասցնելով՝ գգուշորեն իջեցրեք՝ հատուկ ուշադրություն դարձնելով զլիսին եւ պարանոցին: Բանապարհատրանսպորտային պատահարների դեպքում հնարավոր է, որ գործ ունենաք ոչ թե մեկ, այլ բազմաթիվ տուժածների հետ: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում: Նման դեպքերում պետք է որոշեք, թե ով ավելի շատ օգնության կարիք ունի: Առաջին հերթին անհրաժեշտ է օգնել անհապաղ օգնության կարիք ունեցող տուժածներին, օրինակ՝ ուժեղ արյունահոսությամբ, շոկի մեջ գտնվող կամ անգիտակից տուժածներին: Նրանց առաջին օգնություն ցուցաբերելուց հետո միայն անցեք ավելի թեթև վնասվածքներ ունեցողներին: Աշխատեք անել այն ամենն, ինչը թույլ կտա ձեզ հնարավորինս շատ կյանքեր փրկել:



ՓԱՓՈՒԿ ԴՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ



Առօրյայում հաճախ են պատահում նման վնասվածքներ՝ քերծվածքներ, կտրած, պատռած վերքեր եւ այլն: Դժվար թե լինի մի մարդ, որն իր կյանքում գոնե մեկ անգամ չի ունեցել նման վնասվածքներ: Բարեբախտաբար, որանց մեջ մասը փոքր է լինում եւ առանձնահատուկ վտանգ չի ներկայացնում: Սակայն հնարավոր են նաև լուրջ վնասվածքներ, որոնք պահանջում են շտապ բժշկական միջամտություն:

Փափուկ հյուսվածքների վնասվածքները լինում են փակ եւ բաց:

Փակ վնասվածքներ

Փակ վնասվածքների ժամանակ մաշկի ամբողջականությունը չի խախտվում: Անենահասարակ փակ վնասվածքը ենթամաշկային արյունազեղումը կամ կապուլկում է, որի ժամանակ ոչ ուժեղ հարվածի հետեւանքով մաշկի տակ վնասվում են մազանոթները:

Այդունք կուտակվում է մաշկի տակ, այդ մասում մաշկի գույնը փոխվում է, առաջանում են այտուց եւ կապուկ: Անմիջապես հարվածից հետո վնասվածքի տեղը կարմրում է, որոշ ժամանակ անց մաշկն այդ տեղում դառնում է մուգ կարմիր կամ մանուշակագույն: Մի քանի օր անց մաշկի գույնը դառնում է կապտականաչավուն, ապա՝ դեղին:

Ի՞նչ անել

Փակ վնասվածքների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելիս վնասված մասը բարձրացրեք, սահմանափակեք շարժումները: Սառեցրեք վնասված մասը սառը թրջոցներով կամ սառցապարկերով: Սառեցումը շարունակեք վնասվածքը ստանալու պահից սկսած 24-48 ժամվա ընթացքում: Մաշկի եւ սառցապարկի միջեւ միշտ դրեք որեւէ սրբիչ կամ գործվածքի կտոր:

Վերքեր

Փափուկ հյուսվածքների բաց վնասվածքներն այլ կերպ կոչվում են վերքեր: Վերքը փափուկ հյուսվածքի վնասվածք է, որի ժամանակ խախտվում է մաշկի ամբողջականությունը: Վերքերը վտանգավոր են վարակի ներթափանցման, արյունահոսության եւ ցավի պատճառով:

Բավական հաճախ հաճիպող վերք է քերծվածքը: Դա մաշկի մակերեսային վնասվածքն է: Չնայած քերծվածքները բավական ցավոտ են լինում, սակայն սովորաբար լուրջ վտանգ չեն ներկայացնում: Այս վնասվածքի դեպքում արյունահոսությունը հեշտությամբ դադարում է, քանի որ վնասվում են միայն մանր արյունատար անոթներ: Եթե քերծվածքները լայնատարած են, կարող է պահանջվել բժշկական միջամտություն: Ծակած վերքերը սովորաբար առաջանում են այնպիսի իրերից, ինչպիսիք են դանակը, ասեղը, ապակու կտորները կամ կենդանու ճանկերը: Դրանք կետային, խոր, փոքր մակերես ունեցող վերքերն են: Արտաքինից վերքի բացվածքը փոքր է, արտաքին արյունահոսությունը հաճախ աննշան է, ոչ ուժեղ: Այս վերքերը շատ վտանգավոր են, քանի որ մեծ է վարակման եւ ներքին օրգանների վնասման վտանգը:

Կտրած վերքերը հարթ եզրերով վերքերն են: Դրանք սովորաբար առատ արյունահոսում են եւ ցավոտ են:

Վերքերի մյուս տեսակը պատռած վերքերն են: Դրանք ունենում են անհարթ եզրեր: Այսպիսի վերքեր ավելի հաճախ առաջանում են այն մասերում, որտեղ ոսկրերը մաշկին մոտ են գտնվում, օրինակ ճակատին, կզակի շրջանում, սրունքի առանձային մակերեսին եւ այլն: Ի տարբերություն կտրած վերքի, պատռած վերքն ավելի դժվար է լավանում, իսկ լավանալուց հետո կարող է կոպիտ սպի մնալ:

Պոկած վերքն այն վերքն է, որն առաջանում է փափուկ հյուսվածքների մի հատվածի մասամբ կամ ամբողջովին պոկումից: Մասամբ պոկված հյուսվածքի կտորը մի մասով կպած է լինում



մարմնին: Այն կարող է անբնական կերպով շրջված լինել: Վերքից կախված հյուսվածքները մի... պոկեր, այլ փորձեք դնել պոկված հյուսվածքի կտորները նախևին բնական դիրքով եւ վիրակապել: Վերքեր առաջանում են նաեւ տարբեր կենդանիների կամ մարդու կօնլուց: Կծած վերքերն աղտոտված են թքով եւ վտանգավոր են նաեւ կատաղություն հիվանդությամբ վարակվելու տեսանկյունից: Նման վմասվածքներ ստանալուց անմիջապես հետո անհրաժեշտ է կատաղության դեմ պատվաստում կատարել: Դրազենային վերքերը հրագենի գնդակից կամ արևերի թեկորներից առաջացած վերքերն են: Դրանք միշտ վտանգավոր են: Նման դեպքերում կարող են լինել մուտքի եւ ելքի անցքեր: Շնարավոր է լինի միայն մուտքի անցք: Դատուկ ուշադրություն պիտի դարձնել ելքի անցքին, քանի որ այն շատ ավելի մեծ ու վտանգավոր է, քան մուտքինը:

Ի՞նչ անել

Տուժածին օգնություն ցուցաբերելիս նախ պարզեք վերքի վտանգավորության աստիճանը:

Փոքր վերքեր

Քիչ վտանգավոր են համարվում 2,5 սմ-ից ոչ մեծ չափսերի, ոչ խոր վերքերը, երբ արյունահոսությունն աննշան է կամ հեշտ է դադարեցվում: Մնացած բոլոր վերքերը համարվում են վտանգավոր եւ պահանջում են բժշկական միջամտություն:

Քիչ վտանգավոր վերքերի ժամանակ առաջին օգնություն ցուցաբերելիս վերքը լվացեք օճառով եւ մաքուր ջրով: Օգտագործեք վերքերի մշակման համար նախատեսված հատուկ քսուրներ: Խուսափեք սպիրուտային հիմքով նյութերը, օրինակ յոդը, օղին, օծանելիքն անմիջապես վերքի վրա քսելուց: Դրանցով մշակեք միայն վերքի շրջակա մաշկը: Ծածկեք վերքը կպչուն սպեղանիով կամ մանրէազերծ (ստերիլ) վիրակապով:



Վտանգավոր վերքեր

Վտանգավոր վերքերը երբեք մի՛ փորձեք ինքուրույն մշակել: Վերքի վրա անձեռոցիկ տեղադրեք, վիրակապեք եւ դադարեցրեք արյունահոսությունը: Զեռք մի՛ տվեք արդեն տեղադրած վիրակապին կամ անձեռոցիկին: Եթե այն ներծծվում է արյունով, վրայից տեղադրեք նորը եւ վիրակապեք: Յակառակ դեպքում արյունահոսությունը կարող է վերսկսվել կամ ուժեղանալ: Վիրակապելուց հետո ահազանգեք շտապօգնություն կամ տուժածին խորհուրդ տվեք դիմել բժշկի:

Վարակի ներթափանցման կանխարգելում

Վեռքը մշակելուց առաջ եւ հետո ձեռքերը լվացեք օճառով եւ ջրով կամ ձեռքի տակ եղած որեւէ ախտահանիչ միջոցով՝ օրինակ օղիով: Խուսափեք անմիջապես վերքին ձեռքով դիաբելուց:

Աշխատեք օգտվել մանրէազերծ ձեռնոցներից կամ այլ պաշտպանիչ միջոցից, օրինակ՝ ձեռքերին հազցրեք սովորական պլաստիկ տոպրակ: Օգտագործված ձեռնոցները մի՛ փորձեք մաքրել կամ երկրորդ անգամ օգտագործել: Զեռնոցները հանեք ներսի մակերեսից բռնած: Դրանք շրջեք հակառակ երեսով եւ զցեք հատուկ առանձնացված աղբատուփի մեջ: Յնարավորության դեպքում օգտագործեք միայն մանրէազերծ վիրակապական միջոցներ կամ ծայրահեղ դեպքում մաքրուր եւ արդուկած գործվածք: Աշխատեք վերքի վրա չշնչել, չհազար, չփոշտալ: Օգնություն ցուցաբերելու ընթացքում մի՛ դիմեք ձեր բերամին, քթին, աչքերին եւ խուսափեք որեւէ բան ուտելուց կամ խմելուց:

Բորբոքված վերքեր

Ամեն դեպքում վնասված մաշկը վարակի ներթափանցման ճանապարհ է: Եկ եթե վնասվածը ստանալուց հետո նարմնի պաշտպանական ուժերը չեն կարողանում վնասազերծել ներթափանցած վարակը, ապա վերջը բորբոքվում է:

Այդ դեպքում վերքի շրջանում ի հայտ է գալիս բարախող ցավ, մաշկը կարմրում է, տաքանում: Վերքի շրջանը այտուցվում է, կարող է վերքից թարախսային արտադրություն լինել: Յնարավոր է մոտակա ավշային հանգույցների մեծացում, ցավոտություն:

Որոշ դեպքերում վարակը կարող է արյան միջոցով տարածվել մարմնով մեկ եւ դաշնակ կյանքի համար վտանգավոր: Բորբոքված վերքերի դեպքում հետևեք, որ վերքի շրջանը լինի մաքրուր: Տուժածի մոտ վերքի բորբոքման նշաններ ի հայտ գալուն պես անհապաղ դիմեք բժշկի:

ՈՍԿՐԱՅԻՆ ՉԱՍՎԱՐԳԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ



Յազարավոր մարդիկ իրենց ամենօրյա գործունեության ընթացքում վնասում են մկանները, հողերը, ոսկրերը: Այս վնասվածքները հիմնականում անփութության եւ անզգույշ շարժումների հետեւանք են: Ժամանակին ճիշտ օգնություն չուցաբերելու դեպքում ոսկրամկանային վնասվածքները կարող են լուրջ հետեւանքներ ունենալ եւ նույնիսկ հաշմանդամության պատճառ դառնալ:

Ոսկրամկանային համակարգի վնասվածքներն են՝ կոտրվածքը, հոդախախտը, կապանների, մկանների եւ ջլերի ծգումն ու պատռումը: Կոտրվածքը ոսկրի ամրողականության եւ անընդհատության խախտումն է: Ուժեղ հարվածը, անհաջող ընկնելը, ոլորումները եւ մկանների ուժեղ կծկումները կարող են կոտրվածքի պատճառ հանդիսանալ: Կոտրվածքները լինում են բաց եւ փակ: Բաց կոտրվածքների դեպքում մաշկի ամրողականությունը խախտվում է, եւ մեծ է վարակի ու արյունահոսության հավանականությունը:

Յոդախախտը հողը կազմող ոսկրերի՝ միմյանց նկատմամբ կայուն տեղաշարժն է հոդի շարժման առանցքի նկատմամբ: Յոդախախտը հեշտ է ճանաչել, քանի որ այն ուղեկցվում է հոդի ծելի զգալի փոփոխություններով: Յոդախախտերի դեպքում մի՛ փորձեք ոսկրերը տեղը գտել: Մկանների ու ջլերի վնասվածքների պատ-





ճառ կարող են դառնալ մեծ ուժի ազդեցությունը կամ հանկարծակի անհաջող շարժումը, օրինակ՝ անզգույշ քայլելիս ոտքի ոլորումը: Կապանների, մկանների ու ջերի թերեւ ձգման ժամանակ ցավը կարող է բավական արագ անցնել, այդ իսկ պատճառով մարդիկ սովորաբար անուշադրության են մատնում նման վնասվածքները: Սակայն մեկ-երկու անգամ վնասվելուց հետո այդ հյուսվածքները կորցնում են իրենց անրությունը, եւ դա մեծացնում է նրանց կրկին վնասվելու հավանականությունը:

Ինչի՞ վրա ուշադրություն դարձնել

Բոլոր ոսկրամկանային վնասվածքների ժամանակ տուժածը գանգատվում է ցավից, որն ուժեղանում է վնասված հատվածը շարժելիս: Տուժածը կարող է ասել ձեզ, որ ընդհանրապես չի կարող շարժել վերջույթը: Վնասված նաև նաշխի գույնը փոխվում է եւ այտուցվում: Այտուցը կարող է զարգանալ վնասվածքից անմիջապես հետո կամ աստիճանաբար: Սկզբնական շրջանում նաշկը կարմրում է, որոշ ժամանակ անց այն դառնում է մոռճ կարմիր կամ մանուշակագույն, առաջանում է կապուտկ: Դնարավոր է, որ լինի վնասված նաև ձեւի փոփոխություն: Դամենատելով վնասված նաև չվնասված կողմի հետ՝ դուք կկարողանաք հայտնաբերել ձեւափոխությունը: Կարող եք տեսնել անսովոր դուրս ցցված կամ փոս ընկած հատվածներ կամ անբնական շրջված, ոլորված վերջույթ: Երբեմն հնարավոր է, որ փոխվի վնասված վերջույթի երկարությունը. այն կարող է առողջ վերջույթից ավելի կարծ կամ երկար լինել: Որոշ դեպքերում անմիջապես կարող եք ճանաչել կոտրվածքը՝ տուժածն ինքը կարող է վնասվածքը ստանալու պահին լսել ոսկրի կոտրվելու ձայնը, կամ տեսնել վերքից դուրս ցցված ոսկրեր, լսել ոսկրի բեկորների՝ միմյանց հայվելու խորխորքը:

Ի՞նչ անել

Ոսկրամկանային բոլոր վնասվածքների դեպքում ցուցաբերվող առաջին օգնությունը հիմնականում նույն է:

Գնահատեք տուժածի վիճակը եւ անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապօգնություն կամ տուժածին հասցրեք հիվանդա-

նոց: Եթե կա արտաքին արյունահոսություն, ապա առաջին հերթին դադարեցրեք այն, սակայն անմիջապես կոտրվածքի վրա ճնշում մի՛ գործադրեք: Ուժեղ արյունահոսության դեպքում սեղմեք սեղմնան կետերը: Վարակի ներթափանցումը նվազեցնելու համար վերքը ծածկեք մաքուր վիրակապական անձեռոցիկով:

Օգնեք տուժածին հարմար դիրք ընդունել: Սովորաբար տուժածն ինքը վնասված վերջույթը պահում է իրեն ամենահարմար դիրքում: Դանգստացրեք տուժածին:

Սառեցրեք վնասված մասը՝ դնելով սառը թրջոցներ կամ սառցապարկեր: Վնասված մասի սառեցումը նպաստում է ներթին արյունահոսության, այսուցի եւ ցավի նվազեցմանը: Ուկրամկանային բոլոր վնասվածքների ժամանակ անհրաժեշտ է տեղադրել սառը թրջոցներ կամ սառցապարկ, բացառությամբ բաց կոտրվածքի: Տեղադրվող սառը թրջոցներն անհրաժեշտ է պարբերաբար փոխել կամ զգուշորեն սառը ջուր լցնել դրանց վրա: Սառցապարկ պատրաստելու համար սառույցի կտորները դրեք որեւէ գործվածքի կամ պլաստիկ տոպրակի մեջ: Մաշկի եւ սառցապարկի միջեւ միշտ դրեք որեւէ սրբիչ կամ գործվածքի կտոր: Սառույցը դրեք յուրաքանչյուր ժամը մեկ 15 րոպեով՝ 24-48 ժամվա ընթացքում:

Ուկրամկանային վնասվածքների դեպքում անհրաժեշտ է անշարժացնել վնասված մասը: Դրա շնորհիվ նվազում է ցավը, կանխվում վնասվածքի շրջանի փափուկ հյուսվածքների հետագա վնասումը:

Անշարժացում

Անշարժացումը բեկակալների կամ ձեռքի տակ եղած միջոցների օգնությամբ վնասված մասի շարժումների սահմանափակումն է: Այդ նպատակով կարող եք օգտագործել փայտյա, մետաղյա, ստվարաթղթ կամ պլաստմասայից պատրաստված առարկաներ, օրինակ՝ փայտի կտորներ, ծալված ամսագրեր, ոլորած ծածկոցներ, վիրակապեր եւ այլն: Որոշ դեպքերում վնասված մասը, օրինակ՝ ոտքը, կարող եք անշարժացնել՝ առողջ ոտքին կապելով: Մկանների, ջլերի եւ կապանների վնասման դեպքում վնասված հատվածը կապեք առած-



գական վիրակապով: Անշարժացման շնորհիվ կանխվում է վնաս-վածքի բարդացումը: Սակայն միշտ եղեք շատ զգույշ եւ ուշադիր: Եթե անշարժացումը տուժածին ցավ է պատճառում, ավելի լավ է չկատարել այն, միայն ֆիքսեք տուժածի վնասված հատվածն այն դիրքում, որում պահում է տուժածը: Առանց անհրաժեշտության մի շարժեք վերջույթը, մի փոխեք վերջույթի դիրքը: Անշարժացնելիս սահմանափակեք վնասված մասից վերեւ եւ ներքեւ ընկած հոդերի շարժումները:

Անշարժացումից առաջ, հետո եւ յուրաքանչյուր 10 րոպեն մեկ ստուգեք վերջույթի արյան շրջանառությունը: Արյան շրջանառությունը խանգարված է, եթե անշարժացված վերջույթի եղունգը սեղմելուց եւ բաց թողնելուց հետո նրա գույնն արագ չի վերականգնվում, վերջույթը սառն է կամ տուժածը գանգատվում է նրանից, որ մատները թնրում են: Եթե անշարժացումից հետո նկատում եք թվարկված նշանները, ապա մի փոքր թուլացրեք կապերը:

Վերին վերջույթի անշարժացում

Սատների ոսկրերի կոտրվածքի կամ հոդախախտի դեպքում կարող եք տեղադրել փոքր բեկալամեր, օրինակ՝ պաղպաղակի փայտիկ, եւ ամրացնել այն կազուն ժապավենով:

Բազկի, նախաբազկի եւ ուսագոտու վնասվածքների դեպքում անհրաժեշտ է անշարժացնել ամբողջ վերջույթը: Դրա համար կարող եք օգտագործել եռանկյունաձև վիրակապ կամ պարզապես սովորական գլխաշոր: Խնդրեք տուժածին, որ վնասված ծեռքն արմունկում ծալված պահի իրանին մոտ՝ նախաբազուկը հորիզոնական դիրքով:

Եռանկյունաձև վիրակապն անցկացրեք ծալված ծեռքի տակով այնպես, որ նրա մի ծայրը հայտնվի առողջ ուսի վրա, իսկ գագաթը՝ արմունկի մոտ: Վիրակապը ծալեք վնասված ծեռքի վրա եւ մյուս ծայրն անցկացրեք վնասված կողմի ուսի վրայով:

Վիրակապի ծայրերը հանգրւեք առողջ կողմի անրակի շրջանում: Վիրակապի գագաթը ծալեք եւ ամրացրեք անգլիական քրորցի օգնությամբ կամ պարզապես հանգույց արեք: Ժապավենաձև ծալված մեկ ուրիշ եռանկյունաձև վիրակապով փաթաթեք վնասված ծեռքը (բազկի միջին մասում) կրծքավանդակի հետ եւ հանգուցեք ծայրերը:

Ստորին վերջույթի անշարժացում

Դուք կարող եք անշարժացնել վնասված վերջույթն առողջի օգնությամբ: Հնարավորության դեպքում ծածկոց կամ որեւէ այլ փափուկ ներդիր տեղադրեք տուժածի ոտքերի արանքում, ոսկրե-

րի տեղաշարժից խուսափելու համար: Առողջ ոտքը զգուշությանք մոտեցրեք վնասված ոտքին, ծնկների եւ կոճերի տակով անցկացրեք եռանկյունաձեւ վիրակապերը: Զգուշությանք սահեցրեք եռանկյունաձեւ վիրակապերը վնասվածքից վերեւ եւ ներքեւ, այնուհետեւ հանգուցեք դրանք:

Սրունքաթարային հողի եւ ոտնաթարի կապանների ձգման եւ պատռվածքների դեպքում դրեք ճնշող ուժաձեւ վիրակապ: Կոտրվածքների դեպքում անհրաժեշտ է տեղադրել փափուկ բեկալալներ (օրինակ՝ ծալած ծածկոց) եւ ամրացնել դրանք եռանկյունաձեւ վիրակապերի օգնությամբ:

Անշարժացումից հետո կարելի է բարձրացնել վնասված հատվածը սրտի մակարդակից վեր: Մի՛ բարձրացրեք վերջույթն ազդրի կոտրվածքի դեպքում կամ եթե դա տուժածին լրացնեցիչ ցավ եւ անհարմարություն է պատճառում:



ՈՂԱՇԱՐԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ



Անդրադառնանք ողնաշարի վնասվածքներին: Այս վնասվածքների հետեւանքով առաջացած հաշմանդամությունն ու նահացությունը շատ բարձր է: Ողնաշարի վնասվածքները հաճախ ավտովքարի, բարձրությունից վայր ընկնելու կամ սպորտային պատահարների հետեւանք են: Դրանք կարող են կյանքի համար վտանգավոր լինել, այդ իսկ պատճառով շատ կարենոր է համապատասխան ճիշտ օգնություն ցուցաբերելը: Դաճախ վնասվածքի ճիշտ ախտորոշումը հնարավոր է լինում միայն ռենտգեն հետազոտությունից հետո: Ուստի, քանի որ դուք չեք կարող անմիջապես գնահատել վնասվածքի ծանրությունը, միշտ ենթադրեք, որ գործ ունեք լուրջ վնասվածքի հետ:

Ի՞նչպե՞ս ճանաչել

Մի շարք նշաններ կարող են հուշել ողնաշարի վնասվածքների մասին: Դրանց լրջությունը որոշելիս ձեզ կօգնեն դեպքի վայրի գննումը եւ վնասվածքի պատճառը, օրինակ ավտովաթարը, բարձրությունից ընկնելը, ուժեղ հարվածը մեջքին եւ այլն:

Տուժածը կարող է պարանոցում, մեջքում ուժեղ ցավ կամ ճնշում զգալ: Մեջքի վրա կարող եք նկատել անսովոր այտուցվածություն, դուրս ցցված կամ փոս ընկած մասեր: Տուժածը վերջույթներում կարող է թմրածություն կամ ծակձկոցներ ունենալ: Հնարավոր է, որ նա չզգա ձեռքերն ու ոտքերը եւ չկարողանա դրանք շարժել: Տուժածի գիտակցությունը կարող է խանգարված լինել:

Ի՞նչ անել

Եթե անգամ ողնաշարի վնասվածքի չնչին իսկ կասկած ունեք, գործեք շատ զգույշ, հնարավորին չափ սահմանափակեք տուժածի գլխի եւ ողնաշարի շարժումները: Գլխի եւ ողնաշարի յուրաքանչյուր շարժում կարող է վնասել ողնութեղը եւ զգալիորեն վատթարացնել տուժածի վիճակը, հանգեցնել անդառնալի հաշմանդամության, անդամալուժության:

Ուստի ողնաշարի վնասվածքների դեպքում օգնության հիմնական քայլը, որ կիրառվում է, մեկ առանցքով անշարժացման տեխնիկան է: Մեկ առանցքով մարմինն անշարժացնելու համար երկու ձեռքով բռնեք տուժածի գլուխը կողքերից, զգուշորեն բերեք այն մարմնի հետ նույն առանցքի վրա եւ այս դիրքում պահեք մինչեւ շտապօգնության գալը: Գլխի դիրքը չի կարելի փոխել, եթե այն անբնականորեն մի կողմ է թեքված կամ շարժելուց տուժածը ցավ, դիմադրություն կամ ճնշում է զգում: Բոլոր այդ դեպքերում անշարժացրեք տուժածի գլուխն ու պարանոցը եղած դիրքում՝ կողքերից դնելով բարձեր, ծածկոց, փափուկ պայուսակ եւ այլն:

Ամեն դեպքում ողնաշարի վնասվածքով տուժածի հետ եղեք զգույշ, խուսափեք ցանկացած շարժումներից:

Ողնաշարի պարանոցային հատվածի վնասվածքների դեպքում անհրաժեշտ է պարանոցն անշարժացնել: Դրա համար կիրառվում են պարանոցային բեկականեր օձիքի տեսքով: Կարող եք նաև ձեռքի տակ եղած միջոցներից պատրաստել «օձիք»: Դրա համար կարելի է օգտագործել եռանկյունաձեւ վիրակապ կամ որեւէ նման կտոր:

Եռանկյունաձեւ վիրակապի միջին երրորդ մասում տեղադրեք մի քանի տակ ծալված եռանկյունաձեւ վիրակապեր, փոքր սրբիչներ կամ այլ գործվածքներ: Եռանկյունաձեւ վիրակապի ազատ մնացած եզրերը փաթաթեք այնպես, որ ստացվի 8-10 սմ լայնությամբ գոտի, որի ներսում փափուկ գործվածքներն են, իսկ ծայրերը կարելի է կապել: Օձիքը տեղադրեք երկու հոգով, դրա համար ստացված գոտին մեջտեղի մասով տեղադրեք տուժածի կզակի տակ, փաթաթեք պարանոցի շուրջը, ծայրերը հետ բերեք եւ կապեք կզակի տակ: Այս դիրքում տուժածի պարանոցը համեմատաբար անշարժ է:



Եթե տեղափոխելու կարիք կա

Ողնաշարի վնասվածքներով տուժածին չի կարելի տեղաշարժել: Տեղափոխեք նրան միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, կամ եթե մասնագիտական օգնությունը չի կարող մոտենալ տուժածին: Տեղափոխման ընթացքում հատուկ ուշադրություն դարձրեք տուժածի գլխին եւ ողնաշարին՝ խուսափելով լրացուցիչ շարժումներից եւ ոլորումներից: Դարավորության դեպքում մենակ մի տեղափոխեք տուժածին, խնդրեք մոտակայքում գտնվող մարդկանց օգնել ձեզ: Միշտ հիշեք, որ մի քանի հոգով տեղափոխում կատարելիս պետք է նախ համոզվել, որ բոլորը գիտեն, թե ինչ պետք է անեն եւ նախապես որոշեք, թե ով պիտի տա հրահանգները: Սովորաբար հրահանգները տալիս է գլխի մոտ կանգնած անձը:

Ողնաշարի վնասվածքով տուժածին տեղափոխելիս պետք է ապահովել մեկ առանցքով անշարժացման սկզբունքը, ուստի պետք է տեղափոխել պատգարակով կամ եթե հնարավոր չէ՝ ծածկոցով: Ծածկոցով տեղափոխելու համար անհրաժեշտ է առնվազն 4 հոգի: Մինչեւ տեղափոխելը պետք է համոզված լինեք, որ ծածկոցը շատ ամուր է: Ծածկոցը երկարությամբ փուեք տուժածի կողքին եւ նրան մոտ գտնվող եզրը փաթաթեք ծածկոցի լայնության կեսի չափով:

Ապա մյուս կողմուն գտնվող երկու փրկարարները բռնելով տուժածի ուսից, կողքից ու ֆիբսելով ոտքերը՝ տուժածին համաշափթեքում են կողքի, այդ ծածկոցի կողմուն գտնվող փրկարարները ծածկոցի գալարը հնարավորին չափ խոր տեղադրում են տուժածի մեջքի տակ: Ցանկալի է, որ հինգերորդ մարդն այդ ընթացքում մարմնի հետ մեկ գժի վրա պահի տուժածի գլուխն ու պարանոցը եւ մարմնի հետ համաշափթեք: Նույն կերպ հակառակ կողմից զգուշորեն



շրջելով տուժածին մյուս կողմի վրա՝ պետք է մեջքի տակից բացել ծածկոցի գալարը:

Տուժածին մեջքով պառկեցրեք ծածկոցի վրա, ապա նրա երկու կողմերից փաթաթեք ծածկոցի եզրերը հնարավորին չափ տուժածին մոտ: Այնուհետեւ, փրկարարներից երկուսը պետք է կանգնեն ուսերի կողմը, մյուս երկուսը՝ ոտքերի, եւ ամուր բռնելով ծածկոցի փաթաթված եզրերը, սպասեն գլխի մոտ կանգնած փրկարարի հրահանգին: Հրահանգի համաձայն բոլորը միաժամանակ բարձրացնում եւ տեղափոխում են տուժածին:

Պատգարակով տեղափոխում

Կարելի է օգտագործել պատրաստի պատգարակ կամ ինքնուրույն պատրաստել այն՝ օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցներ, ինչպես օրինակ, ծածկոց, հագուստ, մետաղյա կամ փայտյա ձողեր: Տուժածին պատգարակով տեղափոխելու համար անհրաժեշտ է առնվազն երկու մարդ, սակայն ցանկալի է չորս հոգի: Շատ կարեւոր է համաձայնեցված գործելը:

Առաջին հերթին պետք է տուժածին գգուշորեն տեղափոխել պատգարակի վրա: Դրա համար դրեք պատգարակը տուժածի անմիջապես կողքին: Գլխի եւ ոտքերի մոտ կանգնածները պետք է ոտքով պահեն պատգարակի բռնակները, որպեսզի այն չհեռանա կամ չտեղաշարժվի տեղափոխման ժամանակ: Երեք կամ չորս հոգով հավասարաչափ բաշխելով տուժածի մարմնի ծանրությունը, այսինքն բռնելով նրան ուսերից, մեջքից, կոնքից ու ոտքերից, գգուշորեն բարձրացրեք եւ համաշափ տեղափոխեք նրան պատգարակի վրա՝ մարմինը մեկ գժով ուղիղ պահելով:

Այնուհետեւ կրանստեք եւ բռնեք պատգարակի բռնակներից: Տուժածի գլխի մոտ կանգնած փրկարարի ազդանշանով բոլորդ



միաժամանակ կանգնեք: Գլխի մոտ կանգնած փրկարարի հրահանգով բոլորդ սկսեք քայլել, ընդ որում՝ տարբեր ոտքերից՝ պատզարակի ուժեղ տատանումներից խուսափելու համար:

Դոգեբանական օգնությունը

Ողնաշարի վնասվածքների դեպքում, հատկապես եթե դրանք ուղեկցվում են զգայունության եւ շարժունակության կորստով, միշտ հաշվի առեք տուժածի հոգեբանական վիճակը: Սովորաբար այդ վնասվածքով տուժածը լինում է շատ վախեցած, քանի որ չի հասկանում ինչ է կատարվել իր հետ, լինում է ընկճված, ապագայի հանդեպ անորոշության զգացումով, ամբողջ կյանքում հաշմանդամ մնալու վախով եւ այլն: Այս պարագայում շատ կարեւոր է ոչ միայն սահմանափակել շարժումները եւ փորձել կանխել ողնութեղի վնասումը, այլև ցուցաբերել հոգեբանական աջակցություն: Չեր խոսքը պետք է լինի համոզիչ, հանգիստ, կարեկցանքով լի, սակայն միաժամանակ հուսադրող: Չպետք է փորձել կեղծ տպավորություն ստեղծել տուժածի մեջ, ասելով, որ ոչ մի լուրջ բան չի պատահել, որ անեն ինչ շատ լավ կլինի. դրանով դուք կկորցնեք տուժածի վստահությունը ձեր հանդեպ, քանի որ նա ինքն էլ զգում է վիճակի լրջությունը: Պետք է փորձել իրականության սահմաններում հուսադրել նրան ու թույլ չտալ, որ նա իրեն լրված ու միայնակ զգա իր դժբախտության հետ: Հիմնականում դուք խոսեք, ոչ թե խոսեցրեք տուժածին, քանի որ այդ դեպքերում նրա համար դժվար է ոչ միայն խոսելը, այլ նույնիսկ շնչելը: Եթե ձեզ պետք է ստանալ որեւէ հարցի պատասխան, աշխատեք հարցը ձեւակերպել այնպես, որ պատասխանը լինի այս կամ ոչ, եւ տուժածին առաջարկեք պայմանական պատասխանի ձեւ, օրինակ՝ աչքերը բացել կամ փակելով:



ՅՈՒՐԱԺԱՏՈՒԿ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ



Այս գլխում մենք կխոսենք մի շարք յուրահատուկ վնասվածքների մասին: Դրանցից յուրաքանչյուրի դեպքում առաջին օգնության ցուցաբերման ժամանակ կիրառվում են սովորական վեքերից տարբերվող յուրահատուկ քայլեր:

Անդամահատություն

Առաջին հերթին եկեք խոսենք անդամահատության մասին: Վնասվածք առաջացնող գործոնը, օրինակ՝ հարվածը, կարող է բավական ուժեղ լինել եւ պոկել մարմնի որեւէ մասը, օրինակ՝ մատը: Նման վերքերն անվանում են անդամահատված վերքեր: Փայտ կոտրելիս կամ սղոցով աշխատելիս մի փոքր անզգուշությունը կարող է բերել անդամահատության: Անդամահատությունը հաճախ է հանդիպում նաև հաստոցների մոտ աշխատելիս:

Չեզ կարող է թվական, որ այս դեպքում արյունահոսությունը պետք է որ ուժեղ լինի: Սակայն վնասված հատվածում արյունատար անորոշելի արագ կծկվում են նվազեցնելով արյան արտահոսքը: Իհարկե, վնասվածքը կարող է շատ սարսափելի տեսք ունենալ: Տուժածն ինքը կարող է խուժապի մատնված լինել: Սակայն իմացեք. որքան շուտ ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն, այնքան մեծ կլիմի տուժածի անդամահատված օրգանը վերականգնելու հավանականությունը:

Ի՞նչ անել

Օգնություն ցուցաբերելիս նախ հոգացեք տուժածի մասին: Վիրակապեք եւ դադարեցրեք արյունահոսությունը: Միաժամանակ հանգստացրեք տուժածին: Օգնեք նրան ընդունել հարմար դիրք՝ նստեցրեք կամ պառկեցրեք նրան: Արյունահոսությունը դադարեցնելուց հետո անմիջապես անդրադարձեք անդամահատված օրգանին, քանի որ ճիշտ խնամքի դեպքում, ինչպես նշեցինք, հնարավոր է, որ իհվանդանոցում վերականգնեն վնասված հատվածի ամբողջականությունը:

Գտեք անդամահատված մասը, փաթաթեք մանրէազերծ անձեռոցիկով եւ դրեք պլաստիկ տոպրակի մեջ: Տոպրակի մեջ որոշ քանակությամբ օդ ներփչեք, փակեք այն եւ տեղադրեք սառույցի կտորներով ու ջրով լցված մեկ այլ պարկի կամ որեւէ անորի մեջ: Սառը նիշավայրը դանդաղեցնում է հյուսվածքների մահացումը: Բացառեք անդամահատված մասի անմիջական շփումը սառույցի եւ ջրի հետ:

Թողի վրա նշեք տուժածի անունը, դեպքը կատարվելու ժամը եւ ամրացրեք այն տոպրակին:

Անպայման ահազանգեք շտապօգնություն եւ հավաստիացեք, որ մարմնի անդամահատված մասը տուժածի հետ տարվում է հիվանդանոց:

Օտար մարմին վերքի մեջ

Լինում են դեպքեր, երբ վերքը առաջացնող առարկան, թափանցելով հյուսվածքներ, մնում է վերքի մեջ:

Ի՞նչ անել

Եթե օտար մարմինը շատ փոքր է, օրինակ՝ մանր ավազահատիկներ, ապակու փոքր կտորներ կամ այլ մանր օտար մարմիններ, ապա հեռացրեք օտար մարմինները վերքի միջից, նոր միայն մշակեք վերքը որպես սովորական վերք:

Վերքի մեջ խոշոր օտար մարմնի դեպքում անհրաժեշտ է վերքի մեջ անշարժացնել այն, որպեսզի կանխեք փափուկ հյուսվածքների հետագա վնասվելը: Այս դեպքում օտար առարկան չի կարելի տեղաշարժել կամ հանել վերքից, քանի որ այն հանելիս արյունահոսությունը կուտեղանա: Բացի այդ, օտար մարմինը վնասում է հյուսվածքներն ինչպես մտնելիս, այնպես էլ դուրս գալիս: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ օտար մարմինը գտնվում է այտի մեջ: Այդ դեպքում փորձեք զգուշորեն հեռացնել օտար մարմինը եւ այնուհետեւ ծածկեք վերքը՝ անձեռոցիկ տեղադրելով նաեւ այտի ներքին մակերեսին:



Անշարժացնելու համար օտար մարմնի շուրջը գգուշորեն մանրէագերծ անձեռոցիկներ տեղադրեք՝ վերջի եզրերը սեղմելով ու նոտեցնելով իրար: Այնուհետեւ անձեռոցիկների վրայից պետք է տեղադրել փափուկ ներդիրներ՝ օրինակ ծալված գործվածքի կտորներ կամ փաթութային վիրակապի (բինտի) գլանակներ: Որպես ներդիր կարող եք օգտագործել նաև եռանկյունաձև վիրակապից կամ որեւէ գործվածքի ժապավենից պատրաստված օղակաձեւ վիրակապ, որի ներքին տրամագիծը պետք է մի փոքր գերազանցի օտար մարմնի չափը:

Վիրակապելով ամրացրեք օտար մարմնի շուրջը դրված անշարժացնող օղակաձեւ կամ փաթութային վիրակապերը: Եթե օտար մարմնի ծայրը բաք է, վիրակապելիս այն չպետք է ծածկվի: Աշխատեք վիրակապման ընթացքում չշարժել օտար մարմնը:

Ահազանգեք շտապօգնություն կամ տուժածին տեղափոխեք հիվանդանոց:

Դյուսվածքների

Երկարատեւ ճզմում

Փափուկ հյուսվածքների վնասվածքների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում հյուսվածքների երկարատեւ ճզմումը:

Այսպիսի վնասվածքներ սովորաբար հանդիպում են երկրաշարժերի, փլուզումների ժամանակ, երբ տուժածի մարմնի որեւէ մասը (սովորաբար վերջույթը) մեկ ժամից ավելի մնում է ծանր առարկայի տակ:

Նման դեպքերում տուժածի մեջ զարգանում է երկարատեւ ճզման համախտանիշ: Այն նաև հայտնի է վնասվածքային տոքսիկոզ կամ կրաշ սինդրոմ անունով: 1988 թ. աղետալի երկրաշարժից հետո փլատակներում մնացած շատ-շատերը մահցան այս վնասվածքից: Եթե նարդիկ կարողանային ճիշտ օգնություն ցույց տալ, այդ դեպքում, հարյուրավոր մարդիկ կփրկվեին:

Երկարատեւ ճզման եւ տվյալ հատվածի արյունամատակարարման դադարեցման հետեւանքով վնասվում են մկանների բջիջները եւ նրանցից արտազատվում են քայքայման արգասիքներ: Ճնշող առարկան հեռացնելուց հետո այդ արգասիքներն անցնում են արյան մեջ, առաջացնում երիկամների գործունեության լուրջ խանգարում, որը բերում է նարմնի ընդհանուր բունավորման:

Ծանր առարկայի ընկնելուց կես ժամից մեկ ժամ հետո տուժածի վնաս-



ված հատվածի գգայունությունը խանգարված է լինում, նա գգում է բնրածություն, ընդարձացում:

ճնշող առարկան հեռացնելուց մոտ կես ժամ հետո վնասված հատվածն այսուցվում է, եւ ի հայտ են գալիս կապտուկներ, հեղուկով լցված բշտեր: Մաշկի վրա երեւում են ճզմվածության հետքեր: Վնասված վերջույթում անթազարկը չի շոշափվում, գգայունությունը բացակայում է: Տուժածը չի կարողանում շարժել վնասված մասը: Կարող են ի հայտ գալ շոկի նշաններ:

Ի՞նչ անել


Ապահովեք տուժածի շնչուղիների անցանելիությունը, քանի որ փլատակներում հողն ու փոշին կարող են լցվել տուժածի բերանը: Մինչեւ տուժածին ճնշող առարկայի տակից ազատելը վնասված հատվածից վերեւ տեղադրեք լարան:

Որպես կանոն, վերջույթների վրա լարանը դրվում է այնտեղ, որ տեղ հնարավոր է զարկերակը սեղնել միակ ոսկրին: Վերին վերջույթի զարկերակային վնասվածքի դեպքում լարանը պետք է տեղադրել արմունկից վեր՝ բազկի վրա, իսկ ստորին վերջույթի վնասվածքի դեպքում՝ ծնկից վեր, ազդրի վրա: Լարանը պետք է տեղադրել ճնշող առարկային հնարավորին չափ մոտ: Լարան տեղադրելու համար եռանկյունաձև վիրակապը ծալեք այնպես, որ ստացվի 7-10 սմ լայնության ժապավեն: Եռանկյունաձև վիրակապի փոխարեն կարելի է օգտագործել ձեռքի տակ եղած ցանկացած հարմար միջոց՝ վզկապ, մեծ թաշկինակ: Սակայն պետք է հիշել, որ չի կարելի օգտագործել բարակ պարան կամ թել, որոնք կարող են վնասել մաշկը: Լարանը երկու անգամ փաթաթեք վերջույթի շուրջը եւ սովորական հանգույցով այն կապեք: Յանգույցի վրա դուք փայտիկ, ձող կամ այլ հարմար միջոց եւ կապեք: Այնուհետեւ ոլորելով լարանը՝ ճգեք այնքան, մինչեւ վերջույթում անթազարկը չշոշափվի, այսինքն՝ դադարի արյան շրջանառությունը: Լարանի ծայրերով կամ նոր վիրակապով ամրացրեք փայտիկը: Լարանի շնորհիկ վնասված վերջույթից քայլայնան արգասիքները չեն տարածվի մարմնով մեկ:

Դիշեք, այս դեպքում, որպես բացառություն, լարանը տեղադրելուց հետո չի կարելի թուլացնել: Բաց վնասվածքների վրա անձեռոցիկներ տեղադրեք: Վերջույթը անշարժացրեք եւ շուրջը տեղադրեք սարը թրջոցներ կամ սառցապարկեր: Տուժածին նեծ քանակով հանքային հեղուկներ տվեք: Անհապաղ ահազանգեք շտապօգնություն: Ցանկալի է տուժածին շտապ տեղափոխել խոշոր բժշկական կենտրոն, որը կունենա «արհեստական երիկամ» կոչվող սարքը:

Զեր այդ գործողություններով ոչ միայն կփրկվի տուժածի կյանքը, այլև կմեծանա վերջույթը վերականգնելու կամ պահպանելու հավանականությունը:

ՎԻՐԱԿԱՊԵՐ



Կյանքում շատ հաճախ են հանդիպում տարրեր վնասվածքներ. խոհանոցում աշխատելիս երբեմն կտրում ենք մատը կամ այրում ձեռքը, վնասում ոտքը եւ այն, եւ այս: Այս վնասվածքների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելու համար հաճախ անհրաժեշտ է լինում օգտագործել վիրակապեր: Սակայն դրա ծիշտ հմտություններին շատերն անծանոթ են:

Ինչպե՞ս վիրակապել

Վիրակապելու ժամանակ տուժածը պետք է լինի հարմար դիրքում, նրա մկանները՝ թուլացած, որպեսզի վիրակապը հետագայում չսահի: Աշխատեք կանգնել տուժածի դիմաց եւ հետեւեք նրա դեմքի արտահայտությանը՝ վիճակը որոշելու համար: Վիրակապումից առաջ եւ հետո լվացեք ձեռքերը: Ցանկալի է նաև հագնել մանրէազերծ ռետիններ: Վերքը ծածկեք մանրէազերծ անձեռողիկով՝ մոտ 2սմ ծավալվելով վերքի շուրջը: Մանրէազերծ անձեռողիկի փաթեթը բացելուց հետո բռնեք անձեռողիկի անկյունից՝ մանրէազերծությունը չխախտելու համար: Վերջույթների վրա վիրակապ դնելիս վիրակապումը սկսեք մեղ մասից: Վիրակապելուց հետո համգուցեք կամ ամրացրեք վիրակապի ծայրը անգիլական քորոցով, կպչուն ժապավենով: Վիրակապը դնելուց հետո պարբերաբար ստուգեք արյան շրջանառությունը վիրակապից ներքեւ: Դրա համար սեղմեք եղունգը մինչեւ այն սպիտակի: Եթե եղունգը բաց թողնելուց հետո նրա գույնն արագ չի վերականգնվում, նշանակում է՝ վիրակապը չափից ավելի ծիգ է, եւ արյան շրջանառությունը խանգարված է: Արյան շրջանառության խանգարման մասին է վկայում նաև վիրակապված վերջույթում անոթազարկի բացակայությունը, մատների սառնությունը, մատները շարժելու անկարողությունը: Վիրակապված վերջույթի արյան շրջանառությունը միշտ համեմատեք առողջ կողմի հետ: Եթե արյան շրջանառությունը ծիգ դրված վիրակապի պատճառով խանգարված է, ապա վիրակապը մի փոքր թուլացրեք:

Փաթութային վիրակապ

Փաթութային վիրակապ գործածելիս գլանակը պահեք բացվող մասով դեպի վեր: Սկզբում վիրակապի ծայրն ամրացնելու նպատակով կատարեք մեկ-երկու պտույտ: Վիրակապի ամեն մի պարույրը պետք է ծածկի նախորդի մոտ 2/3 մասը: Կատարեք մի քանի պարուրաձեւ փաթույթներ վերջույթի շուրջը եւ ամրացրեք վիրակապի ծայրը:

Կարելի է դնել նաեւ ութաձեւ վիրակապ, որի համար վիրակապի ծայրն ամրացնելուց հետո պետք է կատարել մի շարք ութաձեւ փաթույթներ:


Այժմ տեսնենք, թե ինչ վիրակապ է պետք դնել, եթե վնասվածքը արմունկի շրջանում է: Տեղադրեք վիրակապի ծայրը արմնկափոսում եւ ամրացնելու նպատակով կատարեք մեկ ամբողջ պտույտ: Դաջորդ փաթույթը կատարեք հողից վերեւ՝ ծածկելով նախորդ փաթույթի 2/3 մասը, որից հետո՝ հողից ներբեւ՝ նույնաես ծածկելով առաջինի 2/3-ը: Նույն սկզբունքով կարող եք դնել ծնկի վիրակապ:

Ավիի եւ նախադաստակի շրջանում վիրակապ տեղադրելիս առաջին փաթույթը դրեք դաստակի հողին: Տարեք վիրակապը ձեռքի արտաքին երեսով՝ անցնելով անկյունագծով, ապա փաթույթը դուրս բերեք ափի կողմից: Մի շարք այսպիսի ութաձեւ փաթույթներ կատարեք, ծածկելով վիրակապական անձեռոցիկն ամբողջությամբ: Մատների ծայրերը բաց թողեք: Վիրակապն ամրացրեք դաստակի շրջանում:

Նույն ձեւով կարելի է վիրակապել ոտնաթաթի վնասվածքները: Այս վիրակապերն օգտագործվում են տվյալ հատվածներում վերքը ծածկելու, ինչպես նաեւ այդ հողերի շարժումները սահմանափակելու նպատակով:

Եռանկյունաձեւ վիրակապ

Դաստակի կամ ոտնաթաթի վնասվածքների դեպքում վերքն անձեռոցիկով ծածկելուց հետո ձեռքը կամ ոտնաթաթը դրեք եռանկյունաձեւ վիրակապի վրա՝ մատներով դեպի գագաթը: Ապա ծալեք վիրակապի գագաթը եւ խաչելով ծայրերը՝ հանգուցեք դրանք գագա-



թի վրա՝ դաստակի կամ կոճերի շրջանում: Գագաթի ծայրը հանգույցի վիայով կարող է շրջել եւ անրացնել:

Ծունկը վիրակապելու համար եռանկյունաձեւ վիրակապը դրեք ծնկին՝ հիմքով սրունքի վրա, գագաթն ուղղված դեպի ազդրը: Ընդգրկելով ծունկը՝ վիրակապի ծայրերն անցկացրեք ծնկափոսով եւ հանգուցեք ծնկից վեր՝ ազդրի վրա: Վիրակապի գագաթը ձգեք եւ մտցրեք հանգույցի տակ: Նույն ձեւով կարելի է վիրակապել արմունկը:


Եռանկյունաձեւ վիրակապը կարելի է օգտագործել գլխի վրա վիրակապական անձեռոցիկը պահելու համար: Դրա համար վիրակապի հիմքը տեղադրեք ճակատի վրա այնպես, որ գագաթը հասնի ծոծրակին: Վիրակապի ծայրերը խաչեք գլխի հետեւում, առաջ բերեք եւ հանգուցեք ճակատի վրա: Վիրակապի գագաթային մասը ձգելով՝ ծալեք եւ անրացրեք խաչված ծայրերի տակ:

Եթե ձեռքի տակ չկան պատրաստի վիրակապեր, կարող եք վերցնել սավանի կամ որեւէ մաքուր գործվածքի եռանկյունաձեւ կտոր եւ դրանով վիրակապել վնասված հատվածը:

ԱՕ արկղիկներ

Այս ամենն իմանալուց բացի պետք է միշտ ձեռքի տակ ունենալ առաջին անհրաժեշտության վիրակապական պարագաներ: Դուք ինքներդ ձեր տանը կարող եք պատրաստել առաջին օգնության արկղիկ, որի մեջ պետք է դնել կազչուն սպեղանիներ, տարրեր չափերի մանրեացերծ անձեռոցիկներ, փարութային վիրակապեր, եռանկյունաձեւ վիրակապեր, անգլիական քորոցներ, կազուն ժապավեն, մանրեացերծ ռետիններ ձեռնոցներ, մկրատ, հականեխիչ քսուքներ եւ այլն:

Առաջին օգնության շատ հարմար տարրեր արկղիկներ է առաջարկում Հայկական կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը: Դրանց մեջ դուք կարող եք գտնել առաջին օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ նյութերը: Ձեր տանը, աշխատավայրում, մեքենայի մեջ միշտ ունեցեք անհրաժեշտ վիրակապական նյութեր: Միաժամանակ եկեք հավատանք, որ դուք դրանց կիրառման կարիքը չեք ունենա:




ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

Մարդու ամենօրյա գործունեության ընթացքում հաճախ են հանդիպում տարբեր տեսակի ու աստիճանի այրվածքներ: Դրանք շատ ցավոտ են, հաճախ հաշմող ու այլամղակող եւ կարող են վարակի, շոկի պատճառ դառնալ: Այրվածքի դեպքում, ինանակով առաջին օգնության ճիշտ քայլերը, դուք զգալիորեն կրեթեացնեք տուժածի վիճակը եւ կանխիք բարդությունները: Ըստ առաջացման պատճառի այրվածքները լինում են ջերմային, քիմիական, էլեկտրական եւ ճառագայթային:

Ջերմային այրվածքների առաջացման պատճառը բարձր ջերմաստիճանն է, օրինակ՝ տաք հեղուկները կամ առարկաները, գոլորշիները կամ բոցը: Քիմիական այրվածքները սովորաբար առաջանում են թքուներից կամ իմքերից: Այս նյութերն արագ քայբայում են հյուսվածքները եւ առաջանում այրվածքներ:

Էլեկտրական այրվածքներն առաջանում են, երբ էլեկտրակամ հոսանքը անցնում է մարդու մարմնով: Նման այրվածքները հիմնականում խորն են եւ տուժածի մարմնի վրա տեղակայված են լինում հոսանքի մուտքի եւ ելքի տեղերում: Այս կարգի վնասվածքները շատ վտանգավոր են, քանի որ կարող են դառնալ ներքին օրգանների վնասվելու եւ նույնիսկ սրտի կանգի պատճառ: ճառագայթային այրվածքներն ավելի հաճախ առաջանում են արեւի ճառագայթներից եւ նման են ջերմային այրվածքներին: Սովորաբար դրանք նակերեսային են, տարածուն եւ ցավոտ:

Այրվածքները կարող են լինել տարբեր խորության: Մակերեսային այրվածքը մաշկի վերին շերտը ընդգրկող այրվածքն է: Վնասված մասի մաշկը կարմրած է, չոր, այտուցված: Մասամբ թափանցող այրվածքը ընդգրկում է մաշկի երկու շերտերը: Այս դեպքում մաշկը կարմրում է, առաջանում են հեղուկով լցված բշտեր: Խոր թափանցող այրվածքը վնասում է մաշկը եւ խորանիստ հյուս-



Վածքները: Այրվածքի մակերեսը լինում է շագանակագույն կամ գորշ: Խոր թափանցող այրվածքների ապաքինումից հետո առաջանում են կոպիտ սպիներ:

Այրվածքների ծանրության գնահատում

Ծանր այրվածքները վտանգավոր են վարակի անցնան, ջրազրկման ու շոկի զարգացման տեսակետից եւ պահանջում են անհապաղ մասնագիտական բուժօգնություն: Դրա համար շատ կարեւոր է ժամանակին ճանաչել ծանր այրվածքները:


Այրվածքի ծանրությունը պայմանավորված է դրա խորությամբ, մակերեսով, տուժածի տարիքով, առողջական վիճակով, մարմնի վրա այրվածքի տեղակայմամբ:

Բնականաբար, որքան խոր է այրվածքը, այնքան այն վտանգավոր է: Հատ կարեւոր է ծիշտ գնահատել այրվածքի մակերեսը, քանի որ ինչքան մեծ է այն, այնքան մեծ է շոկի զարգացման վտանգը: Այրվածքի մակերեսը կարելի է որոշել, գիտենալով, որ ձեռքի ափը կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 1 տոկոսը: Զափահաս մարդու գլխի եւ պարանոցի մակերեսը կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 9 տոկոսը, յուրաքանչյուր ձեռքը՝ 9 տոկոս, յուրաքանչյուր ոտքը՝ 18 տոկոս, իրանի առջեւի կամ հետեւի մասը՝ 18 տոկոս եւ շերի շրջանը՝ 1 տոկոսը:

Եթե վնասվել է մարմնի մակերեսի 1 տոկոսից ավելին, ապա պետք է դիմել բժշկի:

Իսկ եթե վնասվել է չափահաս մարդու մարմնի մակերեսի 10 տոկոսից ավելին, ապա պետք է անհապաղ ահազանգել կամ տուժածին հասցնել հիվանդանոց, քանի որ այս չափերի այրվածքները կյանքին անմիջական վտանգ են սպառնում:

Փոքր երեխաների եւ տարեց մարդկանց կյանքի համար վտանգավոր են մարմնի մակերեսի 5-7%-ից ավելին ընդգրկող այրվածքները: Հատ վտանգավոր են նաև այն այրվածքները, որոնք տեղակայված են տուժածի գլխի եւ պարանոցի շրջանում, քանի որ դրանք կարող են դժվարացնել շնչառությունը: Վտանգավոր են նաև ձեռքի ափի, սեռական օրգանների շրջանում տեղակայված այրվածքները, քանզի շատ ցավոտ են եւ կարող են շոկի պատճառ դառնալ:



Ի՞նչ անել

Այրվածքների դեպքում ճիշտ առաջին օգնություն ցուցաբերելով՝ կկարողանաք զգալիորեն թերեւացնել տուժածի վիճակը: Քիչ չեն այն դեպքերը, երբ այրվածքների ժամանակ սխալ օգնության հետեւանքով տուժածի վիճակը դարձել է խիստ ծանր:


Այրվածք ստանալու դեպքում առաջին հերթին դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:

Եթե բռնկվել է ձեր հագուստը, ապա կիրառեք «կանգնիր», ընկիր եւ գլորվիր» սկզբունքը: Ընկեր գետնին եւ գլորվեք այնքան, մինչեւ կրակը մարի:

Եթե բռնկվել է մեկ ուրիշի հագուստը, ապա թույլ մի՛ տվեք նրան խուճապի մատնվել եւ վազել: Անմիջապես զցեք նրան գետնին եւ որեւէ հաստ գործվածքով հանգցրեք կրակը:

Արձակեք եւ այրվածքի մակերեսից հեռացրեք տաք հեղուկով ներծծված հագուստը: Որոշ սինթետիկ գործվածքներ ջերմությունից հալվում են եւ կպչում մաշկին: Մի՛ պոկեք մաշկին կպած հագուստը, որպեսզի մաշկը լրացուցիչ չվնասեք, այլ մկրատով զգուշությամբ կտրելով՝ հեռացրեք հագուստի ազատ մասերը:

Եթե վնասված է վերջույթը, ապա հնարավորին չափ արագ հեռացրեք մատանիները, ժամացույցը, այլ զարդերը եւ բոլոր ճնշող իրերը:



Քիմիական նյութերով այրվածքի դեպքում պետք է շտապ հեռացնել այն մաշկի վրայից՝ լվանալով հոսող ջրի տակ, որովհետեւ քանի դեռ քիմիական նյութը մաշկի վրա է, նրա ազդեցությունը շարունակվում է: Որոշ նյութեր, օրինակ՝ չիանգած կիրը, նաեւ որոշ թրուներ, ջրի հետ փոխադրելով՝ ջերմություն են արտադրում, այդ պատճառով մինչեւ ջրով լվանալը աշխատեք հնարավորին չափ արագ հեռացնել քիմիական նյութը չոր գործվածքով կամ փափուկ խոզանակով:

Եթե քիմիական նյութը վնասել է աչքը, ապա առնվազն 15 րոպե լվացեք այն հոսող ջրի տակ: Վնասված աչքը պահեք առողջ աչքից ներքեւ: Աշխատեք, որ ջուրը մուտք գործի կոպերի տակ:

Սույնիսկ այրվածք առաջացնող գործոնը հեռացնելուց հետո հյուսվածքները շարունակում են ենթարկվել ջերմային վնասնան: Հետեւաբար պետք է սառեցնել այրված մակերեսը: Դեմքին կամ մարմնի այն մասերին, որոնք հնարավոր չեն սառեցնել հոսող ջրով,

տեղադրեք սառը թաց սրբիչ, սավան կամ այլ գործվածք: Այրվածքի մակերեսը պեսը է սառեցնել առնվազն 15-20 րոպե: Եթե այրված մասը ջրից հանելիս տուժածը շարունակում է ցավ զգալ կամ այրված մակերեսը դեռ տաք է, ապա շարունակեք սառեցումը: Տարածուն այրվածքները երկար ժամանակ ջրի տակ մի՛ պահեք՝ մարմնի գերսառեցումից խուսափելու համար:

Վարակի ներթափանցումը նվազեցնելու համար ծածկեք այրված մակերեսը մանրէազերծ անձեռոցիկով կամ մաքուր գործվածքով եւ բույլ վիրակապեք: Եթե այրվածքը ընդգրկում է մեծ մակերես, ապա այն ծածկեք մաքուր չոր սավանով կամ մազախավ չունեցող այլ մաքուր գործվածքով: Ինչպես արդեն նշեցինք, այրվածքները վտանգավոր են շոկի զարգացման տեսակետից: Շոկի զարգացումը կանխելու համար, եթե տուժածի շնչառությունը դժվարացած չէ, պառկեցրեք նրան, ոտքերը բարձրացրեք 20-30 սմ: Բարձր պահեք նաև տուժածի վնասված հատվածը: Եթե տուժածը գիտակից է, տվեք նրան հեղուկներ՝ հյուրեր, հանքային ջրեր: Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապօգնություն կամ տուժածին հասցրեք հիվանդանոց: Յշշեք, որ բուժօգնության ուշացումը կարող է նույնիսկ մասամբ թափանցող, բայց տարածուն այրվածքների դեպքում մահվան պատճառ դառնալ: Ժամանակին ցուցաբերված ճիշտ մասնագիտական օգնությունը կարող է ոչ միայն կյանք փրկել, այլև նվազեցնել տառապանքները եւ այրվածքների անցանկալի հետեւանքները: Այս ամենն առավել կարեւոր է, եթե տուժածը փոքր երեխա է կամ տարեց մարդ:

Ի՞նչ չի կարելի անել

Մենք հատուկ ուզում ենք անդրադառնալ այն բանին, թե ինչ չի կարելի անել այրվածքների ժամանակ, քանի որ այս դեպքում սխալ ցուցաբերված օգնությունը հաճախ է դառնում բարդությունների եւ լրացուցիչ տառապանքների պատճառ:

Երբեք մի՛ փորձեք այրվածքի վրա քսել ծեթ, յուր կամ նման այլ միջոցներ: Դրանք, պատելով այրված մակերեսը, խանգարում են ջերմատվությանը: Արդյունքում այրվածքը ծանրանում է: Այս միջոցները կարող են նաև վարակի աղբյուր հանդիսանալ: Բացի այդ, պատելով այրված մակերեսը, դրանք փոխում են այրվածքի տեսքը, դժվարացնում ախտորոշումը եւ բուժումը: Երբեք մի՛ բացեք եւ մի՛ վնասեք բշտերը, այլապես շատ կմեծանա վարակի ներթափանցման վտանգը: Մի՛ դիպեք այրվածքին եւ մի՛ շնչեք նրա վրա: Մի՛ պոկեք մարմնին կպած հագուստը:

Կանխարգելում

Շատ հաճախ այրվածքներն առաջանում են անզգուշության պատճառով: Յետեւելով պարզ նախազգուշական քայլերի՝ կարելի է կանխել այրվածքները: Ելեկտրական սարքավորումների լարերը ծալեք կամ փաթաթեք: Մի՛ թողեք երեխաներին առանց հսկողության լոգարանում, խոհանոցում կամ այն տեղերում, ուր միացրած ջեռուցիչներ, սալօցախներ կան: Տնային ջեռուցիչներն օգտագործեք նվազեցրած ռեժիմով, ջուրը շատ մի՛ տաքացրեք:


Սալօցախի վրա կաթսաների բռնակները դարձրեք այնպես, որ երեխաները չկարողանան դրանց հասնել:

Քայքայիչ նյութերի սրվակների վրա ունեցեք նախազգուշական պիտակներ եւ դրանք պահեք երեխաներին անհասանելի տեղերում: Զգույշ եղեք կրակի հետ: Մի՛ թողեք երեխաներին խաղալ լուցկու, զազայրիչների եւ կրակի այլ աղբյուրների հետ: Մի՛ ծխեք անկողնում:

Զգույշ եղեք արեւային լոգանքներ ընդունելիս, հատկապես երբ գտնվում եք բարձադիր գոտիներում, Սեւանա լճի ափին, որտեղ արեւի ճառագայթների ինտենսիվությունը քարձը է: Օգտագործեք հատուկ պաշտպանիչ քսութքներ: Արեւային լոգանքի չարաշահումը կարող է հանգեցնել ոչ միայն արեւային այրվածքների, այլև կարող է նպաստել այնպիսի ծանր հիվանդությունների զարգացմանը, ինչպիսին է օրինակ մաշկի քաղցկեղը: Խսկ այն մարդիկ, ովքեր բազմաթիվ խալեր ունեն մարմնի վրա, պետք է հնարավորին չափ խուսափեն արեւի ուղղակի ազդեցությունից:



ԲԱՐՁՐ ՉԵՐՄԱՍԻՆԱԾԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ՉԵՐՄԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ



Դայաստանում ամռան շոգ ու տապ օրերին, երբ ջերմաստիճանը հասնում է մինչեւ 40 աստիճան եւ ավելի, հաճախ են հանդիպում բարձր ջերմաստիճանի գերազանցության հետեւանքով առաջացած ջերմային խանգարումներ: Ցավոք, փորձը ցույց է տալիս, որ մեծ մասնիք անտեղյակ ենք, թե ինչպես վարվել այդ դեպքում, ինչ անել:

Մարդու մարմնի նորմալ ջերմաստիճանը 36.6°C է, որի կայունությունն ապահովվում է ջերմակարգավորման համակարգի միջոցով: Յենց այդ համակարգի նորմալ գործունեության արդյունքում է, որ մարդու մարմնինը կարողանում է դիմակայել արտաքին միջավայրի ջերմաստիճանի բավական մեծ տատանումներին: Սակայն բարձր ջերմաստիճանի երկարատեւ ազդեցության հետեւանքով մարմնի ջերմակարգավորման համակարգը կարող է խարարվել՝ հանգեցնելով տարրերի հիվանդագին վիճակների, ինչպիսիք են արեւահարությունը, ջերմային հյուծումը:

Կան որոշակի գործոններ, որոնք ազդում են մարմնի ջերմակարգավորման վրա: Դրանք են ջրազրկումը, թերսնումը, վնասվածքների առկայությունը, առողջական վիճակը, տարիքը, ինչպես նաև տարած ջերմային խանգարումների նախադեպերը:

Արեւահարություն

Արեւահարությունը հիվանդագին վիճակ է, որն առաջանում է զլիի վրա արեւի ճառագայթների անմիջական եւ երկարատեւ ազդեցության հետեւանքով: Պետք է նշել, որ մանկահասակ երեխաներն ավելի խոցելի են արեւի ճառագայթների անմիջական ազդեցության նկատմամբ, քանի որ նրանց գանգի ոսկրերը բարակ են, մաշկն ու մազերը՝ նուրբ:

Ի՞նչի վրա ուշադրություն դարձնել

Արեւահարության նշանները կարող են ի հայտ գալ ինչպես անմիջապես հետո, այնպես էլ արեւի ճառագայթների ներգործությունից մի քանի ժամ անց: Արեւահարման ժամանակ տուժածի մարմնի

Չերմաստիճանը բարձրանում է մինչեւ 39 աստիճան եւ ավելի, դեմքի եւ պարանոցի մաշկը լինում է կարմրած ու չոր: Տուժածը գանգատվում է գլխացավից, գլխապտույտից, թուլությունից: Նա կարող է ականջներում աղմուկ զգալ, ունենալ սրտխառնոց, փսխում, արյունահոսություն քից, հնարավոր են գիտակցության խանգարումներ եւ կորուստ: Արեւահարությունը շատ լուրջ իրավիճակ է: Դա կարող է մարդու կյանքին անմիջական վտանգ սպառնալ: Երբեք անուշադրության մի՛ մատնեք այս վիճակը, անհապաղ սկսեք ցուցաբերել առաջին օգնություն եւ դիմեք բժշկի:

Ի՞նչ անել

Երբ մարդու մոտ նկատում եք արեւահարության նշաններ, ապա նրան անմիջապես տեղափոխեք հով, ստվերոտ վայր, օգնեք հարմար դիրք ընդունել: Արձակեք ճնշող կապերը, թեթեւացրեք հագուստը: Տուժածի գլխին դրեք սառը թրջոցներ, ծածկեք նրան խոնավ սավանով: Եթե տուժածը գիտակցությունը չի կորցրել, տվեք խմելու սառը, քաղցր հեղուկներ:

Եկեք վերհիշենք, որ քից արյունահոսության դեպքում տուժածի գլուխը պետք է առաջ քեքել, որ արյունը շնչուղիների խցանման պատճառ չդառնա: Անհապաղ ահազանգեք շտապօգնություն, եթե մարմնի չերմաստիճանը հասնում է 39-ի եւ դրանից բարձր կամ տուժածն ունի գիտակցության խանգարումներ: Մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները:

Չերմային հյուծում

Չիմա եկեք անդրադառնանը չերմային մյուս խանգարմանը՝ չերմային հյուծնանը: Չերմային հյուծումը շոկի մի տեսակ է, որը զարգանում է առատ քրտնարտադրության հետեւանքով մարմնի ջրազդումից: Տաք միջավայրում գտնվելու ընթացքում քրտնարտադրությունն ուժեղանում է, որի հետեւանքով տուժածը մեծ քանակով հեղուկ եւ աղեր է կորցնում (շոգ օրվա ընթացքում մարդը կարող է կորցնել մինչեւ 10 լիտր հեղուկ): Այս կորուստը բերում է շրջանառող արյան ծավալի նվազեցման: Արյունքում անբողջ մարմնի արյունանամատակարարումը խանգարվում է: Զարգանում է շոկային իրավիճակ՝ չերմային հյուծում:

Ինչի՞ վրա ուշադրություն դարձնել

Չերմային հյուծումով տուժածի մաշկը գունատ է, խոնավ, սառը: Նա գանգատվում է գլխացավից, գլխապտույտից, ծարավի զգացումից: Տուժածը լինում է թույլ, ունենում է սրտխառնոց, փսխում: Նրա

անոթազարկն ու շնչառությունը հաճախացած են: Փաստորեն նրա մոտ նկատվում են այն բոլոր նշանները, որոնք բնորոշ են շոկին: Ննարավոր է, որ տուժածի մարմնի ջերմաստիճանը լինի նորմայի կամ սովորականից մի փոքր բարձր կամ ցածր:

Ի՞նչ անել

Նանդիպելով նման վիճակում գտնվող տուժածի՝ խորհուրդ տվեք դադարեցնել աշխատանքն ու աննիշապես տեղափոխեք նրան հով, ստվերոտ վայր: Պառկեցրեք, բարձրացրեք ոտքերը մոտ 20-30սմ: Թուլացրեք ճնշող կապերը եւ թեթեւացրեք հագուստը: Եթե տուժածը գիտակցությունը չի կորցրել, տվեք խմելու սառը հանքային ջրեր կամ ջրազրկման ժամանակ տրվող հեղուկից:

Անհապաղ ահազանգեք շտապօգնություն եւ մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները:

Կանխարգելում

Սովորաբար բարձր ջերմաստիճանից առաջացած արտակարգ իրավիճակները հնարավոր է կանխել՝ հետեւելով ստորեւ բերված խորհուրդներին.

- Անռանը, շոգ եղանակին խմեք շատ հեղուկներ՝ օրը 2-3 լիտրի չափ: Ցանկալի է օգտագործել հանքային ջրեր, հյութեր:
- Արեւի տակ գտնվելիս պաշտպանեք գլուխս՝ դնելով գլխարկ կամ գլուխը հովքանոցով պաշտպանելով: Շոգ եղանակին հնարավորության դեպքում հագեք բաց գույնի բամբակյա հագուստ: Խուսափեք օրվա ամենաշոգ եւ արեւի բարձր ակտիվության ժամերին՝ 12-ից 15-ը դուրս գալուց:
- Անռանը դրսում աշխատելիս ծրագրավորեք ծեր աշխատանքը վաղ առավոտյան կամ երեկոյան ժամերին, երբ արեւի ակտիվությունն այնքան էլ բարձր չէ: Կաճախակի ընդմիջումներ կատարեք: Դա թույլ է տալիս դիմակայել բարձր ջերմաստիճանի կարծատեւ ազդեցությանը:



ԶՐԱՐԵՂՈՒՄ



Հայաստանում բավական շատ են լինում ջրահեղձնան ողբերգական դեպքեր: Դուք ինքներդ էլ երեւի հաճախ լսում եք Սեւանա լճում եւ այլ ջրավազաններում մարդկանց ջրահեղձվելու մասին:

Ջրում պատահար կարող է տեղի ունենալ յուրաքանչյուրի հետ, անկախ այն բանից, թե որքան լավ լողորդ է նա: Նույնիսկ լավ լողորդը կարող է ջրահեղձ լինել հանկարծահաս հիվանդության կամ հոգնածության պատճառով:

Ի՞նչ անել

Պատահարը գնահատելու համար եղեք զգոն եւ ուշադիր ցանկացած արտասովոր նշանի նկատմամբ: Դուք կարող եք նկատել լողորդի տարօրինակ վարքագիծը, լսել նրա ճիշը կամ ջրի հանկարծակի ճողփյուն: Յաշվի առեք, որ ջրում խեղդվող մարդկանց մեծ մասն օգնություն կանչել չի կարողանում: Նրանք ամեն ինչ անուն են գլուխը ջրի մակերեսին պահելու համար: Ուշադիր եղեք, եւ եթե տեսնում եք որեւէ մեկին, որը ջրում տարօրինակ շարժումներ է կատարում կամ փորձում է լողալ եւ առաջ չի գնում, ապա հնարավոր է, որ նա օգնության կարիք ունի:

Պատահարը ճանաչելուց եւ գնահատելուց հետո, ինչպես յուրաքանչյուր դժբախտ պատահարի դեպքում, գործեք զգուշորեն: Եթե տուժածը գտնվում է ջրում, ապա առաջին հերթին փորձեք նրան օգնություն ցույց տալ առանց ջուր մտնելու: Օգնելու նպատակով ջուր նետվելով՝ դուք նույնպես կարող եք տուժած դառնալ:

Քաջալերեք ջրում գտնվող տուժածին, խսեք նրա հետ: Դնարավոր է, որ հետեւելով ձեր համգիստ եւ քաջալերող խորհուրդներին՝ տուժածն ինքնուրույն հասնի ապահով տեղ: Յակառակ դեպքում դուք կարող եք նրան մեկնել որեւէ առարկա, օրինակ՝ ձող, ծառի ճյուղ, գոտի եւ այլն: Եթե տուժածն ամուլ բռնի առարկայից, մի փոքր կրացեք եւ մարմնով հետ ընկնելով՝ դանդաղ ու զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ: Եթե ձեռքի տակ ոչ մի հարմար առարկա չունենք, պառկեք ջրավազանի եզրին եւ ձեր ձեռքը մեկնեք տուժածին:

Զեզանից հեռու գտնվող տուժածին փրկելու համար կարելի է նրա կողմը նետել ջրի մակերեսին լողացող որեւէ առարկա՝ պարանով կապած: Օրինակ՝ փրկարար օդակ, կիսով չափ ջրով լցված պլաստնասսայէ տարողություն, անվադող եւ այլն:


Կանգնեք նետող ձեռքի կողմի ոտքը մի փոքր հետ, իսկ մյուս ոտքով կանգնեք պարանի ծայրին: Պարանի կեսը փաթաքած վիճակում պահեք ձեր մի ձեռքում, մյուսով նետեք առարկան՝ ներքեւից դեպի վեր ուղղված շարժումով:

Փրկարարական միջոցը նետեք տուժածից մի փոքր հեռու, այնուհետեւ բաշելով բերեք նրան մոտ: Ասեք տուժածին, որ ամուր բռնվի դրանից: Երբ տուժածն անուր կառչի առարկայից, մարմնով հետ ընկնելով դանդաղ եւ զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ: Որոշ դեպքերում, եթե հանգված եք, որ ջուրը ծանծաղ է եւ կանգնած վիճակում չի ծածկում ձեր գլուխը, տուժածին փրկելու համար կարող եք մտնել ջուրը: Գտնվելով ջրի մեջ՝ դարձյալ ավելի ապահով է տուժածին որեւէ առարկա մեկնելո: Աշխատեք այնպես անել, որ առարկան լինի ձեր եւ տուժածի միջեւ, որպեսզի վերջինս չկառչի ձեզնից:

Եթե կարող եք տուժածին հասնել, եւ եթե նա երեսնիվայր է պառկած ջրի մեջ, զգուշորեն շրջեք նրան եւ թեւատակերից բռնելով՝ հետ-հետ քայլելով տեղափոխեք նրան ջրի միջով մինչեւ լողավազանի եզրը, հետո հանեք նրան ջրից:

Եթե կասկածում եք, որ տուժածն ունի ողնաշարի վնասվածք, ապա ձեր հիմնական խնդիրը տուժածի դեմքը ջրից դուրս պահելն ու գլխի եւ ողնաշարի շարժումները կանխելն է: Այդ նապատակով զգուշորեն բռնեք նրա բազուկներից, վեր բարձրացրեք ձեռքերը գլխի երկայնքով: Տուժածի ձեռքերը գլխին սեղմելով՝ նրան շրջեք երեսով դեպի վեր: Մի ձեռքով պահեք տուժածի գլուխը բազուկների միջեւ, իսկ մյուս ձեռքը անցկացրեք ազդրերի տակով: Աշխատեք տուժածի մարմինը պահել հորիզոնական դիրքով՝ դեմքը ջրից դուրս: Մինչեւ օգնության ժամանումը պահեք տուժածին ջրի մեջ այս դիրքում:

Տուժածին ափ հանելուց հետո շնչուտիներից ջրի եւ այլ հեղուկների արտահոսքն ապահովելու համար նրան շրջեք երեսնիվայր,



այնուհետեւ զննեք տուժածին եւ գործեք իրավիճակին համապատասխան: Եթե ինքներդ եք հայտնվել խեղովողի դերում, առաջին հերթին խուժապի մի՛ մատնվեք, փորձեք օգնության ազդանշան տալ եւ մնալ ջրի երեսին, մինչեւ օգնությունը հասնի:


Եթե անսպասելիորեն ջուրն եք ընկել, ջրի վրա լողալու կամ ջրի մակերեսին մնալու համար հնարավոր է, որ հագուստը ձեզ խանգարի եւ այն հանելու կարիք լինի: Սակայն որոշ դեպքերում կարող եք օգտագործել ձեր հագուստն հօգուտ ձեզ: Եթե ձեզ հաջողվի օդ հավաքել վերնաշապիկի ուսերի մասում, ապա փրկվելն ավելի հեշտ կլինի: Դրա համար հանգուցեք վերնաշապիկի ստորին եզրերը կամ վերնաշապիկը դրեք անդրավարտիքի գոտու տակ: Խորը շունչ քաշեք, գլուխը թեքեք առաջ, քաշեք վերնաշապիկը դեպի վեր եւ փշեք վերնաշապիկի բացվածքի մեջ: Ներփչած օդը բարձրանում եւ վերնաշապիկի ուսերի հատվածում բուշտ է առաջացնում, որն օգնում է ձեզ մնալ ջրի մակերեսին:

Կանխարգելում

Զրում տեղի ունեցող դժբախտ պատահարներից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետեւյալ կանոները: Երեխաներին մի թողեք ջրի մոտ առանց հսկողության: Միշտ ձեռքի տակ ունեցեք փրկարար լողունակ միջոցներ:

Երեք մենակ ջուր մի մտեք եւ միայնակ մի լողացեք, ինչքան էլ հիանալի լողորդ լինեք:

Ջրի մոտ գտնվելիս ոգելից խնիքներ մի՛ օգտագործեք: Լողալու ընթացքում կատակներ մի արեք՝ իհար մի՛ քաշքեք, մի՛ փորձեք սուզել եւ այլն: Նման կատակները հաճախ դժբախտ պատահարների պատճառ են դառնում:



ՕՉԵՐԻ ԿԾԱԾՆԵՐ, ԿԱՐԻԾՆԵՐԻ ՈՒ ՄԻԶԱՏԾՆԵՐԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ



Բոլորս էլ սիրում ենք ամռանը հաճախս լինել բնության գրկում: Մեզանից բացի այս ժամանակը սիրում են նաև կենդանիները՝ հատկապես օձերը, կարիծները, բազմաթիվ միջատներ, որոնց հանդիպելը մեզ հանար, թերեւս, այնքան էլ հաճելի չէ: Պետք չէ նրանցից վախենալ, այսրազպես զգույշ լինենք: Ինչպես հասկացաք, կխոսենք թունավոր եւ ոչ թունավոր օձերի կծածների, կարիծների եւ միջատների խայթոցների մասին: Մարդիկ սովորաբար սարսափիում են այդ կենդանիների հենց միայն տեսքից ու խուճապի մատնված՝ հաճախ չեն կարողանում ճիշտ գործել: Կան վիճակագրական տվյալներ, որոնց հանաձայն օձերի կծածներից մահացածների մոտ 40 տոկոսը մահանում է ոչ թե թույնից, այլ սարսափից: Սակայն իրականում դրանք այնքան էլ սարսափելի չեն, եթե կարողանաք սաօնասրտորեն կողմնորոշվել ու ճիշտ օգնություն ցույց տալ:

Հայաստանում հանդիպում են 21 տեսակի օձեր, որոնցից թունավոր են միայն չորսը՝ իժերի ընտանիքին պատկանող տափաստանային իժը, Դարեւսկու իժը, փոքրասիական իժը եւ անդրկովկասյան գյուրզան:

Տափաստանային իժը Հայաստանի տարածքում տարածված է կենտրոնական եւ հյուսիս-արեւմտյան շրջաններում: Փոքր կամ միջին չափերի օձեր են, մարմնի երկարությունը սովորաբար 30-60 սմ է: Թունավոր օձ է, բայց նրա խայթելու հետեւանքով մարդկանց մահացու ռեակտը հայտնի չեն: Դարեւսկու իժը հանդիպում է Հայաստանի հյուսիսում: Իր արտաքին տեսքով եւ մարմնի չափերով շատ նման է տափաստանային իժին:

Փոքրասիական իժը Հայաստանում տարածված է Արագածի հարավային լանջերից մինչեւ Մեղրու շրջան: Միջին չափսերի՝ 60-120 սմ երկարությամբ օձեր են: Շատ թունավոր եւ վտանգավոր են մարդու հանար:


Անդրկովկասյան գյուրզան տարածված է Հայաստանի հարավային շրջաններում, այն շատ թունավոր օձ է, որի կծելուց հաճախ են լինում մահացության դեպքեր:

Օձերի այս 4 տեսակները պատկանում են իժերի ընտանիքին, որոնց թույնն ազդում է սրտանորային համակարգի վրա: Թունավոր օձերի վերին ծնոտի առջեւի մասում տեղավորված են 2 խոշոր ժանիքատիկ ատամներ, որոնք կապված են թունավոր գեղձերի հետ:

Դայաստանում ապրող թունավոր օձերը պատկանում են իժերի ընտանիքին եւ ունեն այնպիսի բնորոշ հատկանիշներ, որոնք չունեն ոչ թունավոր օձերը: Դրանց գլխի վերին մասը ծածկված է մաճր, անկանոն դասավորված թեփուկներով, որոնք իրենց չափերով նման են մարմնի վրա գտնվող թեփուկներին: Պոչն, ի տարբերություն ոչ թունավոր օձերի պոչի, կտրուկ ընդհատվում է: Աչքերի բիբը ծեղածել է, այն դեպքում, եթի ոչ թունավորներինը՝ կլոր է: Գլուխն ակնհայտորեն առանձնացած է պարանոցից: Սակայն ոչ մասնագետի համար դժվար է արտաքին հատկանիշներով անսխալ զանազանել թունավոր օձը ոչ թունավորից: Այնինչ օձի կծելուց հետո մաշկի վրա մնացած հետքերով կարելի է հեշտությամբ կողմնորոշվել: Թունավոր օձի կծած տեղում մարմնի վրա նկատվում են թունավոր ատամներից առաջացած երկու խոր վերքեր, որոնց միջեւ երեւում են ոչ թունավոր ատամներից մնացած երկու շարք ավելի մանր հետքեր: Իսկ ոչ թունավոր օձերի կծած տեղում մարմնի վրա երեւում են չորս շարք երկայնական դասավորված կետիկներ:

Թունավորման վտանգավորությունը կախված է օձի չափսից, տարիքից, տեսակից: Վերջին առումով առավել վտանգավոր են գյուղանմերը: Օձերն ավելի վտանգավոր են ամռանը: Թունավորման ծանրությունը կախված է նաև կծածների քանակից, տեղակայումից եւ խորությունից: Առավել վտանգավոր են պարանոցի եւ գլխի շրջանում տեղակայված կծածները, քանի որ այտուցի հետևանքով կարող է առաջանալ վերին շնչուղիների խցանում: Լուրջ են նաև իրանին եւ ձեռքի հատվածում կծածները, որովհետեւ այդ դեպքում թույնը շատ արագ տարածվում է ամբողջ օրգանիզմում:

Կծելու ժամանակ թունավոր օձի թույնը ներարկվում է մարդու մարմին: Կծած տեղում մարդն ուժեղ ցավ եւ այրոց է զգում: Քիչ անց կծած տեղը կարմրում է եւ սկսում այտուցվել: Այտուցը հետզհետեւ տարածվում է ամբողջ մարմնով, զգացվում է ուժեղ թուլություն, սրտխառնոց, փսխում: Տուժածը կարող է ունենալ գլխապ-



տույտ, տեսողության եւ խոսքի խանգարումներ: Նկատվում են վերջույթների թուլություն կամ զգայունության կորուստ: Տուժածի շնչառությունը դժվարանում է, անոթազարկը՝ հաճախանում: Հնարավոր է արյունահոսություն բերանից, քթից եւ հետանցքից:

Ի՞նչ անել

Ոչ թունավոր օձի կծածի դեպքում վերքը լվացեք եւ ծածկեք մանրէազերծ վիրակապով:

Թունավոր օձի կծածի դեպքում մեծ նշանակություն ունի ժամանակին ցուցաբերված առաջին օգնությունը:

Հնարավորության դեպքում աշխատեք հիշել կըող օձի տեսքը: Օձի կծելուց հետո առաջին 5 րոպեի ընթացքում սեղմեք կծած տեղի շուրջը, որպեսզի արյուն դուրս հոսի վերքից: Այս գործողությունը թույլ է տալիս որոշ չափով հեռացնել թույնը: Սեղմելը դադարեք, երբ վերքից այլեւս արյուն դուրս չի գալիս: Հանգստացրեք տուժածին, քանի որ նյարդային, գրգռված վիճակն արագացնում է արյան շրջանառությունը՝ նպաստելով մարմնում թույնի տարածմանը: Հանեք բոլոր զարդերը եւ ճնշող իրերը: Եթե օձը կծել է վերջույթը, ապա անշարժացրեք այն եւ պահեք սրտի նակարդակից ցածր: Սահմանափակեք տուժածի շարժումները, նստեցրեք կամ պառկեցրեք նրան: Թունավոր օձի կծելու դեպքում ճշմարիտ է հետեւյալ ասացվածքը՝ «Օձի կծածը բուժելու ամենաարդյունավետ միջոցը ավտոմեքենայի բանալիներն են»: Ժամանակն այս դեպքում ամենաորոշիչ գործննն է: Շատ կարեւոր է ահազանգը կամ տուժածի արագ տեղափոխումը հիվանդանոց, սակայն դա պետք է անել պասսիվ կերպով՝ բացառելով տուժածի ցանկացած շարժում: Այդ ընթացքում տուժածին խմեցրեք մեծ քանակությամբ հեղուկներ՝ ջուր, հյութ, թեյ, թան եւ այլն: Վերահսկեք տուժածի վիճակը, տվյալները գրանցեք եւ համապատասխան առաջին օգնություն ցուցաբերեք:



Ի՞նչ չի կարելի անել

Կան գործողություններ, որոնք չի կարելի անել օձերի կծած-ների դեպքում: Մի՛ արտածեք թույնը բերանով. բերանում եղած անգամ փոքր վերքից թույնը կարող է անցնել ձեր օրգանիզմ:

Կծած տեղի շրջանում կտրվածքներ մի՛ արեք, մի՛ այրեք կծած տեղը. ցավն արագացնում է արյան շրջանառությունը, ինչը նպաս-տում է թույնի տարածմանը:

Մի՛ օգտագործեք սառը թրջոցներ եւ սառցապարկեր. դրանք օգուտ չեն տա տուժածին եւ կարող են նրա հնճնագիտակցությունը վատացնել: Օձերի կծածների դեպքում չի կարելի տեղադրել լարան՝ սեղմող միջոցներ. սա կրերի տվյալ հատվածի հյուսվածքների մեկու-սացման, ինչի հետեւանքով տուժածը կարող է կորցնել վերջույթը:

Տուժածին նի՛ տվեք ոգելից խնիչքներ. որոնք եւս արագացնում են արյան շրջանառությունը:

Կարիճների ու միջատների խայթոցներ

Հայաստանում տարածված են երեք տեսակի կարիճներ՝ դեղին, սեր եւ խայտարդետ: Այս կարիճների եւ ընդիհանրապես միջատների խայթոցները մահացու չեն մարդու համար: Մահացության դեպքերը հիմնականում պայմանավորված են սուր ալերգիկ ռեակցիաներով: Ավելի վտանգավոր են բերանի խոռոչում կամ նրա շուրջը տեղակյա-ված խայթոցները, որովհետեւ այդ դեպքում զարգանում է վերին շնչուղիների այտուց եւ շնչառության խիստ դժվարացում:

Կարիճների եւ միջատների խայթոցների ժամանակ խայթած տե-ղում ցավ է լինում, այտուց, կարմրություն: Նման դեպքերում օգնություն ցուցաբերելիս մաշկի վրայից հեռացրեք խայթը եւ վնասված մասը պա-հեք սառը ջրի տակ: Այնուհետեւ վերքը ծածկեք մաքուր գործվածքով:

Ի՞նչ անել

Եթե խայթոցը պարանոցի կամ բերանի շրջանում է, ապա տու-ժածին կում-կում խմեցրեք մեծ քանակությամբ սառը ջուր: Պար-զեք՝ տուժած ումի՞, արդյոք, պերգիա միջատների խայթոցներից: Եթե տուժածը ալերգիկ է, ապա այս դեպքում նրա մեջ հնարավոր է զարգանա անաֆիլակտիկ շոկ: Դա որեւէ արտաքին ազդակի նկատ-մամբ մարմնի սուր ալերգիկ ռեակցիան է: Անաֆիլակտիկ շոկը կա-րող է զարգանալ միջատների խայթոցներից, որոշ դեղամիջոցնե-րից: Դա կատարվում է շատ արագ, եւ հաճախ հնարավոր չի լինում կանխատեսել ու կանխարգելել այն:

Նման դեպքերում տուժածի մոտ լինում են գիսացավ, գիտակ-ցության խանգարում, մաշկի կարմրություն, տաքություն, ցան, այտուց-ներ: Տուժածի շնչառությունը շնչուղիների այտուցման հետեւանքով դժվարացած է, աղմկոտ, անոթազարկը՝ թույլ եւ արագացած:

Անաֆիլակտիկ շոկի դեպքում անհապաղ ահազանգեք շտապօգնություն, եւ եթե տուժածն իր մոտ պահում է հակառակօգիկ դեղամիջոցներ, ապա օգնեք նրան ընդունել դրանք:

Կանխարգելում

Օձերի կծածներից, կարիճների եւ միջատների խայթոցներից կարելի է խուսափել՝ պահպանելով մի շարք պարզ, կանխարգելիչ կանոններ: Բնության գրկում գրունելու, հանգստանալու, արշավների կամ էլ աշխատանքի ժամանակ հագեք բաց գույնի հագուստ, որի վրա լավ երեւում են մուգ գույնի միջատները: Յագեք նաև երկարածիտ եւ ամուր կոշիկներ: Տարատի փողքերը դրեք գուլպայի կամ կոշիկների մեջ, շապիկի եզրերը՝ տարատի մեջ: Զբոսնելիս քայլեք ծառուղու մեջտեղով, խուսափեք բարձր խոտերից: Օձի պատահելիս մի... տրորեք, մի անհանգստացրեք նրան, ետ դարձեք նույն ճանապարհով, որով եկել եք եւ եղեք ուշադիր, որովհետեւ շուրջը կարող են լինել ուրիշ օձեր: Վերադարձնալով տուն՝ ուշադիր զննեք ձեր մարմինը, հատկապես մազածածկ մասերը՝ միջատներ կամ նրանց խայթոցներ հայտնաբերելու համար:

ԿԱԼՎՈՂ ԹՈՒՅՆԵՐ ԵՎ ՍԵՆԴԱՅԻՆ ԹՈՒԽՎՈՐՈՒՄՆԵՐ



Առօրյա կյանքում հաճախ են հանդիպում թունավորնան տարբեր դեպքեր: Որոշ դեպքերում թունավորումները զարգանում են շատ արագ եւ պահանջում են անհապաղ առաջին օգնություն: Մարդու կյանքի համար անհրաժեշտ է սնունդ, սակայն, ցավոք, անորակ սննդի ընդունումը երբեմն կարող է դժբախտ պատահարի պատճառ դառնալ:

Կլիման ճանապարհով անցնող թույները մարդու օրգանիզմ են թափանցում մարսողական համակարգի միջոցով: Դրանցից են օրինակ ալկոհոլը, դեղամիջոցները: Այս խնդիր թույները կարող են պարունակել նաև սննդամբերքում, որոշ բույսերի, պտուղների մեջ:

Սննդային թունավորումներից ամենատարածվածը մանրէային թունավորումներն են: Թունավորնան պատճառ են դառնում սննդում գտնվող ախտածին մանրէների արտադրած թունավոր նյութերը: Մանրէային թունավորումներ ավելի հաճախ են հանդիպում ապիստած մսի, երշիկի, ձկնեղենի, կաթնամթերքի, ձվի, տնային պայմաններում պատրաստված պահածոների ընդունման արդյունքում:

Սննդային մանրէային թունավորնան դեպքում տուժածի նոտ լինում է սրտխառնոց, փսխում, լուծ: Տուժածը բողոքում է որովայնի ցավերից, գլխացավից, գլխապտույտից: Նրա մարմնի ջերմաստիճանը կարող է բարձրանալ: Բնականաբար նա ունենում է հիվանդագին տեսք, թույլ է լինում:

Ի՞նչ անել

Կլվող թույներով թունավորնան դեպքում ամենաարդյունավետ օգնությունը արհեստական փսխում առաջացնելն է: Դրա շնորհիվ տուժածի մարսողական համակարգից դեռեւս չներծծված թույները դուրս են բերվում: Արհեստական փսխում առաջացնելու համար տուժածին հարմար նստեցրեք, կողքին ունեցեք որեւէ թաս, որի մեջ նա կարող է փսխել: Տուժածին խմեցրեք 2-3լ գոլ ջուր: Ցանկալի է ջրի յուրաքանչյուր լիստի մեջ ավելացնել 1 գդալ կերակրի սողա: Զուրը խմելուց հետո տուժածի նոտ առաջացրեք փսխում՝ մատով, փայտի-

կով կամ գդալի պոչով սեղմելով լեզվարմատը: Փսխելիս տուժածի գլուխը պետք է մի քիչ առաջ թեքված լինի: Ցանկալի է փսխնան ընթացքում պահել տուժածի գլուխը՝ ձեռքով բռնելով նրա ճակատը: Երբեք մեջքի վրա պառկած վիճակում տուժածի մոտ փսխում մի՛ առաջացրեք, քանի որ դա կարող է շնչուղիների խցանման պատճառ դառնալ: Փսխումից հետո տուժածը պետք է ողողի բերանը: Կրկնեք արհեստական փսխումը 4-5 անգամ:



Ուշադրություն

Արհեստական փսխում չի կարելի առաջացնել, եթե թույնը քայլայիշ նյութ է կամ նավթային հիմք ունի: Այս դեպքերում թույնի խտությունը նվազեցնելու համար տուժածին մեծ քանակությամբ հեղուկներ տվեք: Կարող եք տալ նաև մածուն: Արհեստական փսխում չի կարելի առաջացնել նաև այն դեպքերում, երբ տուժածը սրտային հիվանդ է, հղի կին է կամ անգիտակից վիճակում է:

Թունավորման դեպքում ահազանգեք շտապ օգնություն: Ցանկալի է, որ փսխութը եւ թունավորման պատճառ դարձած նյութը, օրինակ պահածոն, փակած ամանով ուղարկեք հիվանդանոց:

Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները եւ ցուցաբերեք համապատասխան ԱՕ:

Բոտուլիզմ

Ցատկապես այս վերջին տարիներին շատացել են մի խիստ վտանգավոր թունավորման՝ բոտուլիզմի դեպքերը: Բոտուլիզմի դեպքում մահացությունը շատ բարձր է, եւ հաճախ էլ, եթե անգամ մարդը փրկվում է, հաշմանդամ է մնում ողջ կյանքի ընթացքում: Մեր ժողովուրդն այնքան էլ լուրջ չի ընդունում այս թունավորման սպառնալիքը, եւ դրա համար էլ այդ ցավալի դեպքերը չեն նվազում:

Բոտուլիզմի դեպքեր պատահում են տնային պայմաններում պատրաստված պահածոների օգտագործումից, երբեմն նաև ապիստած մսից եւ ձկնեղենից:

Բոտուլիզմի հարուցիչները միշտ առկա են հողում: Բանջարեղենի, մրգերի հետ նրանք կարող են ընկնել պատրաստվող պահածոյի

մեջ: Նկատի ունեցեք, որ անգամ լավ լվացված բանջարեղենի վրա կարող են մնալ հարուցիչներ: Տնային պայմաններում պահածոյի պատրաստման ընթացքում հարուցիչը չի ոչնչանում, քանի որ դրա համար անհրաժեշտ պայմանները հնարավոր է ապահովել միայն գործարաններում: Այսպիսով, բոտուլիզմի հարուցիչն անցնում է պահածոյի մեջ, ուր շատ բարենպաստ պայմաններ են նրա կենսագործունեության համար: Ինքը՝ հարուցիչը վտանգավոր չէ, սակայն իր կենսագործունեության ընթացքում նա արտադրում է շատ ուժեղ թույն՝ բոտուլոտոքսին, որը մարդկությանը հայտնի մարդեային թույներից ամենաուժեղն է:

Դիշեք, որ բոտուլոտոքսին պարունակող մթերքը ոչնչով՝ ոչ համով, ոչ հոտով, ոչ տեսքով չի տարբերվում նորմալից: Սակայն եկեք շանտեսենք, որ կա կանխարգելման մի պարզ միջոց: Բավական է օգտագործելուց առաջ 10-15 րոպե եռացնել պահածոյի պարունակությունը, եւ թույնը կը զգոքանա, քանի որ ի տարբերություն բոտուլիզմի հարուցիչի, նրա արտադրած թույնը շատ ջերմազգայուն է:

Ի՞նչ՝ վրա ուշադրություն դարձնել

Բոտուլիզմի նշանները սովորաբար ի հայտ են գալիս բոտուլոտոքսին պարունակող սննունդ ուտելուց 15 րոպեից մինչեւ 2 ժամվա ընթացքում, սակայն կարող են արտահայտվել եւ ավելի ուշ: Թույնի ազդեցությունից տուժածի մոտ առաջանում է մկանների թուլացում: Տուժածի մոտ լինում է ուժեղ գլխացավ, գլխապտույտ, բերանի չորություն: Բնորոշ է, որ տեսողությունը կարող է մշուշված եւ երկառված լինել, հնարավոր է կոպերի իջեցում, շլուրյուն: Խանգարվում է տուժածի խոսքը, ձայնը խոպոտում է: Դժվարանում է տուժածի շնչառությունը, հատկապես ներշնչումը կատարվում է մեծ դժվարությամբ: Տուժածի որովայնը կարող է փեխած լինել: Որոշ դեպքերում տուժածը կարող է ունենալ սրտխանոց, եղակի փսխում, որովայնի շրջանում ցավեր կամ ծանրության զգացում:

Ի՞նչ անել

Նշանների ի հայտ գալուն պես անմիջապես ահազանգեք եւ մինչեւ շտապ օգնության ժամանելը առաջացրեք արհեստական փսխում: Ահազանգեք բոտուլիզմով թունավորման անգամ չնշին կասկածի դեպքում կամ հնարավորության դեպքում շտապ տեղափոխեք տուժածին հիվանդանոց՝ սուր թունավորումների կամ վերակենդանացման բաժանմունք: Տուժածի հետ հիվանդանոց տեղափոխեք փսխութքը, կասկածելի կերակրի նմուշները:

Դիշեք, բոտուլիզմի դեպքում նահացությունը շատ բարձր է, եւ տուժածին անպայման պետք է տեղափոխել հիվանդանոց: Երբեք

մի' փորձեք ինքնուրույն բուժել նման թունավորումը:

Զրագրկում

Սննդային թունավորումների դեպքում տուժածը կարող է ունենալ լուծ եւ փսխում, որոնց հետեւաճրով հաճախ նկատվում են ջրազրկման երեւությներ: Դա հատկապես վտանգավոր է երեխաների ու տարեց մարդկանց համար:

Տուժածի ջրազրկման մասին է վկայում ծարավի զգացումը, բերանի չորությունը: Զրագրկված տուժածի անորազարկը հաճախանում է, թուլանում է մաշկի առաձգականությունը, ձայնը նվազում է, հնարավոր են ցնցումներ:

Այս նշաններից անգամ մեկ-երկուսի ի հայտ գալու դեպքում պետք է շտապ լրացնել հեղուկի եւ աղերի կորուստը: Դրա համար տուժածին տվեք ջրազրկման բուժման համար նախատեսված լուծույթներ, օրինակ ռեհիդրոն, օրալիտ՝ պահպանելով դրանց պատրաստման եւ օգտագործման կանոնները:

Դուք կարող եք նաեւ ինքնուրույն պատրաստել ջրազրկման ժամանակ տրվող հետեւյալ լուծույթը. 3-4 թեյի գրալ շաքարը եւ կես թեյի գրալ աղը լուծեք 1 լիտր՝ այսինքն 4-5 բաժակ ջրում: Ժամը մեկ տուժածին տվեք առնվազն 2 բաժակ այդ լուծույթից: Ցանկալի չէ տուժածին կես լիտրից ավել սովորական ջուր տալ:

Թունավորումների կանխարգելում

Թունավորումները շատ ավելի հեշտ է կանխարգելել, քան օգնել թունավորված տուժածին: Շատ հաճախ երեխաների թունավորման պատճառը մեծահասակների անգուշությունն է: Եթե դուք հետեւեք մեր առաջարկած քայլերին, ապա կնվազեցնեք թունավորման դեպքերը:

- ✓ Տնային պայմաններում պատրաստված պահածոն օգտագործելուց առաջ 10-15 րոպե եռացրեք: Յիշեք, որ պահածոն պատրաստելիս եռացնելը օգուտ չի տալիս, այն պետք է եռացնել օգտագործումից առաջ:
- ✓ Մի՛ օգտագործեք կասկածելի արտադրության սննդամթերք: Օգտագործեք գործարանային արտադրության պահածոներ:



- ✓ Բոլոր դեղամիջոցները, թունավոր նյութերը պահեք դժվար բացվող տուփերում եւ դրեք երեխաներին անհասանելի տեղում:
- ✓ Թունավոր նյութերը պահեք գործարանային սրվակներում, հակառակ դեպքում այդ նյութերի սրվակների վրա նախազգուշացնող պիտակներ կպցրեք: Բացատրեք այդ նշանների իմաստը երեխաներին:
- ✓ Երբեք մի՛ պահեք թունավոր նյութերը կերակրի համար նախատեսված տուփերի եւ տարողությունների մեջ:
- ✓ Երեխաներին դեղ տալիս երբեք այն կոնֆետ մի՛ կոչեք, այլ ճշտեք, որ սա դեղ է, ոչ թե քաղցր հյութ կամ կոնֆետ: Երեխայի ներկայությանք դեղորայք մի՛ ընդունեք, որովհետեւ նա կարող է ձեզ նմանակել եւ խմել դեղը:
- ✓ Մի՛ օգտագործեք ժամկետանց դեղորայք կամ սննդամթերք:

ԶԵՐ ՏՈՒՆԸ ԴԱՐՁՐԵՔ ԱՆՎԱՆՎ



Երեխայի մեծանալուն գորգընթաց ավելանում են նրան սպառնացող վտանգները եւ նա պետք է պաշտպանված լինի ամեն քայլափոխիք: Երեխաների աճի եւ զարգացման համար անհրաժեշտ անվտանգ միջավայրի ապահովման խնդիրը հիմնականում դրված է նրանց ծնողների եւ մանկավարժների վրա: Նայեք ձեր շուրջը եւ փորձեք պարզել՝ արդյո՞ք երեխային շրջապատող միջավայրն անվտանգ է եւ երեխայի շուրջը չկան իրեր, որոնք կարող են վնասվածքների պատճառ դառնալ: Երբեմն մենք չենք նկատում, թե ինչքան վտանգներ կան մեր շուրջը՝ եռացող ջուր, սալօջախի վրա եփվող ճաշ, դեղեր, քիմիական նյութեր, ապակի, բարձր պատշգամբ եւ այլն: Դրա հետ մեկտեղ հաշվի առնելով երեխաների անգայուշ շարժումները, անսահման հետաքրքրասիրությունը եւ ամենուր խաղալու ու կազելու ցանկությունը, պարզ է դառնում, որ նրանք ավելի խոցելի են նշված վտանգների առումով: Կարդալով ստորեւ բերված խորհուրդները, որոնք հիմնված են կյանքի փորձի վրա, փորձեք գնահատել, թե ինչքան է անվտանգ ձեր տունը: Եթե այն համապատասխանում է նշված պայմաններին, ապա դուք կարող եք հանգիստ լինել ձեր երեխայի համար: Նաևառակ դեպքում վերափոխիք ձեր տունը, դարձրեք այն անվտանգ ձեր եւ ձեր երեխայի համար:

- Ներախոսի կողքը փակցրեք արտակարգ իրավիճակներում գործող ծառայությունների համարները եւ բացատրեք երեխաներին ինչպես եւ երբ է պետք ահազանգել:



- Հոսանքի բոլոր լարերը պահեք երեխաներից հեռու, մի անցկացրեք դրանք սենյակի միջով կամ գորգի տակով, այլ ամրացրեք պատերի տակ: Ելեկտրական սարքերն օգտագործելուց անմիջապես հետո դրանք հավաքեք եւ պահեք երեխաների համար անհասանելի տեղում: Ելեկտրական վարդակները փակեք հատուկ խցաններով:
- Գորգի եզրերն ամրացրեք հատակին, որպեսզի երեխան քայլելիս կամ խաղալիս ոտքով չղիպաշի ու վայր չընկնի:
- Երեխայի վայր ընկնելը կանխելու համար պատուհաններին ամրացրեք ցանցավանդակ, պատշգամբը պետք է ունենա բարձր բազրիք: Միշտ հետեւեք, որ բացած պատուհանի կողքին կամ պատշգամբում չլինի աթոռ, որի վրա բարձրանալով երեխան կարող է վայր ընկնել:
- Մահճակալը տեղադրեք պատուհաններից հեռու, քանի որ երկրաշարժի, ուժեղ քամու եւ այլ պատճառներով կոտրված ապակիները, փլվող պատը կարող են ընկնել հենց երեխայի վրա: Բացի այդ, պատուհանին մոտ լինելու դեպքում, անկողնուն կանգնելով, երեխան կարող է հեշտությամբ դուրս կախվել եւ ընկնել:
- Գրքերի դարակները, նկարները եւ այլ ծանր իրերը մի՛ կախեք կամ տեղադրեք մահճակալների վերեւում: Նույնիսկ թոյլ երկրաշարժի դեպքում դրանք կարող են ընկնել քնած մարդու վրա:
- Քեռու պահեք պոլիէթիլենի տոպրակները, քանի որ խաղալիս երեխան կարող է դրանք գլխին քաշել ու շնչահեղձ լինել: Դեն նետելուց առաջ մի զլացքը հանգուցել պոլիէթիլենի տոպրակը:
- Վտանգավոր իրերը՝ լուցկին, կրակվառիչը, պայթունավտանգ, դյուրավառ, թունավոր, քայքայիչ նյութերը եւ դեղերը պահեք երեխաներին անհասանելի հատուկ տեղերում, կրակի ու ջերմության աղբյուրներից հեռու: Երեխաներից հեռու պահեք նաև սուր առարկաները (դանակ, մկրատ, ասեղ), կոտրված ապակիներն անմիջապես թափեք:
- Սալօջախի վրա կաթսաների բռնակները շրջեք այնպես, որ երեխաները չկարողանան դրանց հասնել ու շրջել իրենց վրա:
- Զուրը շատ մի՛ տաքացրեք, եթե հետագայում այն օգտագործելու համար պետք է հովացնեք:
- Տաք ջրով կաթսաները կամ դույլերը մի՛ թողեք միջանցքներում կամ այլ վայրերում, որտեղ երեխան կարող է սայթաքել եւ շրջել դրանք:
- Մի՛ թողեք փոքր երեխաներին առանց հսկողության լոգարանում, խոհանոցում կամ այն վայրերում, ուր միացրած ջեռու-

ցիշներ կամ այլ տաք առարկաներ կան:

- Տաք սուլմանով ամանները դրեք երեխայից հեռու: Մի՛ խմեք թեյ կամ այլ տաք հեղուկ, երբ ձեր ծնկներին երեխա է նստած:
- Քիմիական նյութերը պահեք երեխաներից հեռու: Թայքայիշ նյութերի սրվակների վրա ունեցեք նախազգուշացնող պիտակներ:
- Զգույշ եղեք կրակի հետ: Մի՛ ծխեք անկողնում: Մի՛ թողեք վառվող մոմերն առանց հսկողության: Թույլ մի՛ տվեք երեխաներին խաղալ լուցկուր, գազայրիչների եւ կրակի այլ աղբյուրների հետ:



Երեխայի խաղալիքները

Երեխայի կյանքում մեծ նշանակություն ունեն խաղերը եւ խաղալիքները, որոնց միջոցով նրանք ճանաչում են աշխարհը, ձեռք են բերում նոր հմտություններ, զարգացման ծարպելություն եւ երեւակայություն: Այդ իսկ պատճառով հատուկ ուշադրություն դարձրեք խաղալիքների ընտրությանը: Փոքրիկ երեխաներին թույլ մի՛ տվեք խաղալ մասր խաղալիքներով, լրու հատիկներով, կոճակներով եւ այլն: Եթե տանը մեկից ավելի երեխա կա, ապա մեծին բացատրեք, թե ինչ խաղալիքներ չի կարելի տալ փոքրիկին: Ուշադրի եղեք նոր խաղալիք գնելիս՝ մի՛ գնեք ներկի կամ այլ տիած հոտ ունեցող խաղալիքներ, քանի որ դրանք կարող են թունավոր լինել: Ուշադրություն դարձրեք տարիքային սահմանափակումները նշող պիտակներին: Խաղալիքը պետք է հաճապատասխանի երեխայի տարիքին, զարգացման նակարդակին եւ անվտանգության չափանիշներին:

Ծանոթացեք խաղալիքի օգտագործման ցուցումներին եւ հետեւեք դրանց: Սովորեցրեք երեխային խաղից հետո միշտ հավաքել խաղալիքները ոչ միայն նրա մեջ կարգապահություն դաստիարակելու համար, այլ նաև բացատրեք, որ այդ խաղալիքների վրա կանգնելով նա եւ ուրիշները կարող են սայթաքել ու ընկնել, ստանալ տարբեր վնասվածքներ:

Հանսին-Ավաճիի երկրաշարժը. դասերի ժողովածու

Ուղերձ Հանսին-Ավաճիից

Այսօր արդեն շատերը գիտեն, որ ճապոնիան սեյսմավտանգ գոտում է, եւ այստեղ հաճախ են ավերիչ երկրաշարժեր լինում: ճապոնացիները, սակայն, սովորել են հաշտ ապրել տարերքի հետ: Աշխարհին տեխնոլոգիական հրաշքներով զարմացնող այս երկիրը եւս մի ուսանելի ոլորտ է բացահայտել՝ սեյսմակայուն շինարարություն:

2010 թ. Հայիթի եւ Զիլիի կործանարար երկրաշարժերը եւս մի հիշեցում են, որ անփութությունը շինարարության ոլորտում պատճելի է: Մենք կարող ենք դա հաստատել, մենք դրա ականատեսն ենք եղել 88-ին՝ Սպիտակում: Իսկ որ իրազեկվածությունը եւս կարող է կյանքեր փրկել, նույնպես յուրացրել ենք:

Չեզ ենք ներկայացնում ճապոնական Հանսին-Ավաճի նշանակած 1995 թ. հունվարին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քաղաք դասերի ժողովածուն, որ մեզ են տրամադրել մեր ճապոնացի գործընկերները: Մասնագետների կողմից՝ այդ երկրաշարժի հետեւանքների ու հետագա իրադարձությունների մանրակրկիտ հետազոտման ու նշակման արդյունքում ստեղծված այս ձեռնարկը, կարծում ենք, օգտակար կլինի բոլորի համար:

1995 թվականի հունվարի 17-ին Հանսին-Ավաճիում տեղի ունեցած երկրաշարժից մեծ կորուստներ կրեց Հյոդո նահանգի հարավային հատվածը: Զոհվածների թիվը մոտ 6400 էր, իսկ վնասի ընդհանուր գումարը՝ 1 տրիլիոն իւն: 2005 թվականի հունվարին Կորեում Աղետների հետեւանքների նվազեցման համաշարհային համաժողով հրավիրվեց, որտեղ ընդգծվեց զարգացող երկների՝ միջազգային համագործակցության միջոցով աղետներին

դիմակայելու հնարավորությունների շտապ գլոբալ հզորացման կարեւորությունը:

Այդ կապակցությամբ Աղետների նվազեցման ուսուցման միջազգային կենտրոնը եւ «Խսիոս տո բռսայի միրայի»-ն («Մարդկության ապագան ու անվտանգության միջոցառումները»), գործնականում կիրառելով Հանսին-Ավածիի երկրաշարժի փորձն ու քաղած դասերը, աշխարհում աղետների նվազեցման ոլորտում կաղրերի պատրաստումը խթանելու նպատակով, որպես ուսումնական ծեռնարկ, հրատարակել են «Հանսին-Ավածիի երկրաշարժից քաղած դասերի ժողովածում»:

Այդ ժողովածում կազմված է այն արժեքավոր դասերից, որոնք սերտել են Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո՝ որպես ուղերձ ապագա սերունդներին եւ աշխարհի բոլոր մարդկանց: Մենք ցանկանում ենք, որ այն՝ որպես ուսումնական ծեռնարկ, լայնորեն կիրարվի տարեք երկրներում՝ աղետների հասցրած վճակի նվազեցման եւ անվտանգության միջոցառումների մշակման համար:

Մորիկավա Դիդեն
Աղետների վտանգի
նվազեցման ուսուցման
միջազգային կենտրոնի
տնօրին

Սովորել

Միշտ եւ ամենուրեք սովորել աղետների եւ դրանց վտանգի նվազեցման մասին:

- Շատ կարեւոր է անվտանգության միջոցառումների վերաբերյալ դասընթացների եւ ուսուցման միջոցով իմանալ սեփական տարածաշրջանի տարերային աղետների մասին եւ փոկվելու համար ճիշտ տեղեկատվություն ունենալ:

Դասեր քաղել աղետներից եւ կապել դրանք աղետների վտանգի նվազեցման եւ կանխարգելման միջոցառումների հետ.

- Աղետները մշտապես կրկնվում են: Ծատ կարեւոր է՝ հաջորդ սերնդին նախկին աղետներից քաղած դասերը փոխանցելիս կիրառել դրանք աղետների վտանգների նվազեցման տարբեր միջոցառումներում:

Պահպանել

Սեփական ուժերով ապահովել սեփական կյանքի ու քաղաքի պահպանությունը:

- Անվտանգության միջոցառումների գլխավոր գործոնը ինքնօգնությունն է: Երբ ինքնօգնությունն ու փոխօգնությունը բավարար չեն, գործում է հանրության օգնությունը, այդ պատճառով էլ պետք է կարգավորել ինքնօգնությունը, փոխօգնությունն ու հանրային օգնությունը:

Սեփական տների անվտանգությունն ապահովելու շնորհիվ պաշտպանել ընտանիքն ու հարեւաններին:

- Սեփական կյանքն ու ընտանիքը պաշտպանելու համար կարեւոր է տան սեյսմակայունության ապահովման միջոցառումներ ձեռնարկել: Սեփական տան անվտանգության պահպանումը կապված է շրջանի սեյսմակայունության բարձրացման հետ:

Տուժածների համար կարեւոր է «կացարանի ապահովումը» եւ «կապը» շրջապատի մարդկանց հետ:

- Կյանքի նորմալ ընթացքի վերականգնման համար տուժածին ամենից առաջ կացարանով ապահովում է պետք: Կարեւոր կետ է նաև շրջապատի մարդկանց հետ կապը:

Մտածել

Կարողանալ պատկերացնել աղետը:

- Չի կարելի մտածել, որ մեզ հետ ոչինչ չի պատահի, պետք է պարզել, թե ինչ վտանգներ կան այնտեղ, որտեղ ապրում ենք:
- Նաև կարեւոր է սովորական կյանքում աղետին պատրաստվելիս անել այն ամենը, ինչ կարող ենք:

Օգնել միմյանց

Շատ կարեւոր է օգնություն ցույց տալ տուժած շրջանի հասարակության պահանջներին ու կարիքներին համաձայն:

- Անհրաժեշտ է մտածել, թե տուժածներին իրականում ինչ պետք, կարեւոր է, որ բարի նպատակներով ցուցաբերված օգնությունը տուժած շրջանի համար «2-րդ աղետ» չդառնա:

Ստեղծել

Ստեղծել սեփական քաղաքը սեփական ձեռքերով:

- Կարեւոր է, որ քաղաքի բնակչությունը մասնակցի դրա ստեղծմանը:
- Բացի դրանից, քաղաքի պլանավորումը մարդկանց ու շրջակա միջավայրի համար կիանգեցնի աղետների ժամանակ դրա կայունությանը:

Կարեւոր է հնարավորինս արագ միջոցների ձեռնարկել տուժած շրջանի ինքնուրույնությունն ապահովելու համար.

- Ձեռնարկությունների ու խանութների արագ վերաբացումը նպաստում է տուժած շրջանում կյանքի նորմալ ընթացքի ապահովմանը:
- Նույն կերպ, աղետից հետո տնտեսական վերկանգնմանն ուղղված ջանքերը նպաստում են դրա վերածննդին:

Շրջանում տարահանման վայրերը՝ օգնության կենտրոններ:

- Աղետի առաջացման ժամանակ կարեւոր է դրա եւ կյանքի մասին տեղեկատվություն ունենալը:
- Տուժած շրջանում տարահանման կենտրոնները կենսականորեն անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր են հանդիսանում:

Աղետի ժամանակ

I. Անվտանգության մշակութի դաստիարակման հիմնական կետերը

1. Պետք է կարգավորել ինքնօգնությունը, փոխօգնությունն ու հանրային օգնությունը:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո գիտակցվեց «ինքնօգնության» ուժը, որը գործադրում է յուրաքանչյուրն անձնապես, «փոխօգնության» ուժը, որը նպաստում է բնակչության, ձեռնարկությունների, կանավորների, ճամագործների, պարզաբնակությանը, եւ ուրիշների համագործակցությանը, եւ «հասարակական օգնության» ուժը, որն իրականացնում է կառավարությունը:

Աղետի առաջացման ժամանակ հիմնական սկզբունքը հետեւյալն է. «յուրաքանչյուրը հոգ է տանում իր անվտանգության մասին»: Այդ պատճառով էլ կարեւոր է առօրյա կյանքում պատրաստվել

աղետներին եւ համապատասխան միջոցներ ձեռնարկել: Նաեւ պետք է, որ աղետի կամ դրա առաջացման վտանգի դեպքում բոլորը ճիշտ քայլեր ձեռնարկեն: Եվ ձեռնարկություններում, աշխատողների կյանքը պահպանելու համար, պետք է միջոցներ ձեռնարկվեն:

Բացի այդպիսի օգնությունից, կարեւոր է չմոռանալ ծերերին ու հաշմանդամներին ցուցաբերվող օգնության մասին:

«Սեփական շրջանը սեփական ուժերով պաշտպանելու համար» տեղի բնակչության համար կարեւոր է շրջանի խնդիրները լուծել՝ հանգործակցելով ինչպես աղետների ժամանակ, այնպես էլ առօրյա կյանքում:

Բացի այդ, կարեւոր է բնակչության, տեղական ձեռնարկությունների, կամավորների, մասնագետների ու վարչարարների համատեղ աշխատանքը:

Պետությունն ու տեղական վարչական մարմինները պատասխանատու են անվտանգության կանոնների մշակման համար, որպեսզի պաշտպանեն բնակչության կյանքն ու ունեցվածքը: Միաժամանակ նրանք պետք է աջակցեն բնակչության՝ ինքնօգնության եւ համատեղ գործելու ջանքերին:

Աղետների հետեւանքների նվազեցման եւ արագ վերականգնման համար կարեւոր է «ինքնօգնության», «փոխօգնության» եւ «հասարակական օգնության» փոխներգործումը:

2. Զի կարելի մտածել, որ մեզ հետ ոչինչ չի պատահի, պետք է կարողանալ պատկերացնել աղետը:

Հանսին-Ավածիի երկրաշարժից տուժած շրջանում «աղետ» բառն ասելիս մարդիկ պատկերացնում էին ջրհեղեղ կամ թայֆոն: Այդ պատճառով էլ ոչ միայն բնակչությունն, այլև վարչական մարմինները մտածում էին, որ «Կանսահի շրջանում երկրաշարժ չի լինի»: Բայց տեղի ունեցավ Հանսին-Ավածիի երկրաշարժը, որը լուրդ հետեւանքներ ունեցավ:

ճապոնիային մինչ այժմ մեծ վնաս են հասցրել հետեւյալ աղետները. Երկրաշարժ, ցունամի, հրաբուխների ժայթքում, փորորիկ, հեղեղ, ուժեղ ձնահյուսեր, ջրհեղեղ, ծովի ճակարդակի բարձրացում, սղանքներ, փլուզումներ եւ այլն:

Ապագայում եւս աղետների առաջացման վտանգ կա: Դայտնի չէ, թե աղետը երբ եւ որտեղ կպատահի:

Երբ տարերային աղետ է տեղի ունենում, մարդիկ մտածում են, որ «աղետը սարսափելի բան է», «պետք է մի բան ձեռնարկել», բայց ժամանակն անցնում է, եւ այդ զգացմունքները մոռացվում են: Եթե մտածենք, թե «մեզ հետ ոչինչ չի պատահի», «մեզ մոտ վտանգներ չկան», ապա վնասն էլ աղետի դեպքում մեծ կլինի: Այն, ինչ մենք չենք կարողանա անել սովորական պայմաններում, առավել եւս չի ստացվի արտակարդ պայմաններում: Այդ պատճառով էլ բոլորի համար կարեւոր է միշտ մտածել, թե ինչ կլինի իմ, իմ ընտանիքի ու երեխաների հետ, եթե աղետ տեղի ունենա: Ու նաեւ մտորել աղետների վտանգի նվազեցման ու կանխարգելման միջոցների մասին ու գործել դրանց համաձայն:

3. Ծատ կարեւոր է սերունդներին՝ նախկին աղետներից քաղած դասերը փոխանցելիս, կիրառել դրանք աղետների նվազեցման ուղղությամբ տարբեր միջոցառումների համար:

Սերունդներին Դամսին-Ավաձիի Երկրաշարժից քաղած դասերի ու փորձի փոխանցման նապատակով, Երկրում եւ արտասահմանում աղետների հասցրած վնասի նվազեցման, ինչպես նաև կյանքի հանդեպ հարգանքի եւ համակեցության կարեւորության գաղափարի տարածման համար, մենք ստեղծել ենք «Դիտո տո բռսափի միրափ» կենտրոնը:

Մեր Երկրում, աշխարհագրական տեղակայման պատճառով, հաճախ են տարերային աղետներ լինում, նախորդ աղետների պատմությունից էլ պարզ է, որ խոշոր բնական աղետի առաջացման հավանականություն կա, որը մեծ վնաս կհասցնի ավելի ընդգրկուն տարածքներում:

Հանսին-Ավածիի երկրաշարժը մեզ շատ բան է սովորեցրել: Սակայն, չպետք է մոռանալ, որ սա երկրաշարժի միայն մի օրինակ է:

Այդ պատճառով ել կարեւոր է սերունդներին աղետներից քաղած դասեր փոխանցել, սկսած Հանսին-Ավածիի երկրաշարժից մինչեւ այսօրվա աղետները՝ վնասները նվազեցնելու համար, եւ որ յուրաքանչյուրը հստակ պատկերացում ունենա իր անելիքի մասին:

4. Աղետի մասին տեղեկատվությունը նվազեցնում է վնասի չափը:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո փլուզումների եւ սողանքների հետազոտում անցկացվեց, Վտանգավոր վայրերում ազդանշանային համակարգեր եւ թեքնան չափիներ տեղադրվեցին: Թեեւ որոշ շրջաններում տարահանման ազդարարում էր հայտարարվել փլուզումների, սողանքների եւ շենքերի փլման վտանգի պատճառով, բնակչությանը ճշգրիտ տեղեկատվություն չէր տրվել, որը հանգեցրեց խուզապի:

Անմիջականորեն կյանքի հետ կապված տեղեկությունները՝ նյութական օգնության ու ջրատարների վերաբերյալ, սկզբուն բանավոր էին փոխանցվում, այնուհետեւ կյանքի մասին տեղեկատվությունն աստիճանաբար սկսեց փոխանցվել տարահանման վայրերում:

Հանսին-Ավածիի երկրաշարժի փորձի համաձայն, աղետների վտանգի նվազեցման մարմիններում տեղակայվում են ռադիոկապի սարքերը, աղետների ժամանակ կապի արդյունավետ միջոցները, ինչպես նաև՝ աղետի վերաբերյալ տեղեկատվության հավաքման ու փոխանցման համակարգը: Բացի դրանց, ձեւավորվում է երկրաշարժերի, փլուզումների, ցունամիների, հրաբուխների, ծյան եւ անձրեւի չափման համակարգը, տարվում է չափման տվյալների պարբերական դիտարկում, մշակում եւ վերլուծություն, արվում են կանխատեսումներ: Այդ տվյալները փոխանցվում են ոչ միայն համապատասխան հաստատություններ, այլև կիրառվում են սովորական մարդկանց կողմից:

Երկրաշարժի ժամանակ ճիշտ գործելու եւ վճասները նվազեցնելու համար անհրաժեշտ է տեղեկատվության արագ հավաքում ու ճգդիտ փոխանցում: Այդ պատճառով էլ կարեւոր է աղետների ժամանակ կայուն տեղեկատվության փոխանցման ցանցի ստեղծումը, ինչպես նաև աղետների նվազեցման միջոցառումների հետազոտությունների զարգացումը, օրինակ, չափման ու կանխատեսման համակարգի ուժեղացումը: Որպեսզի յուրաքանչյուր բնակիչ կարողանա ճիշտ գնահատել իրադրությունը եւ գործել դրան համապատասխան, ինտերնետով եւ բջջային հեռախոսների միջոցով անհրաժեշտ է հասկանալի լեզվով փոխանցել աղետի վերաբերյալ տեղեկատվությունը, օրինակ՝ տարահանման մասին:

5. Իրավիճակի ճիշտ գնահատումն ու արագ գործողությունները կյանքեր են փրկում:

Յանսին-Ավաձիի երկրաշարժի ժամանակ կապի ցանցի ծանրաբեռնման ու անջատնան, ինչպես նաև վարչական մարմինների տեղեկատվության հավաքման համակարգի խափանման պատճառով դժվարություններ առաջացան տուժածներին անխոչընդուն տեղեկատվություն փոխանցելու ժամանակ:

Բարեբախտաբար, Յանսին-Ավաձիի երկրաշարժից հետո խուժապ չառաջացավ տեղեկատվության պակասից: Սակայն, տեղեկատվական ցանցերի աշխատանքի խափանման հետեւանքով՝ տեղեկատվության դժվար հասանելիության պայմաններում, եթե մարդիկ ինքնակամ գործողությունների դիմեն ասելուսների վրա հիմնվելով՝ խուժապ անխուսափելի է: Այդ պատճառով էլ կարեւոր է դյուրահավատ չլինել եւ չվստահել անհայտ աղբյուրներից ստացված տեղեկատվությանը, այլ վստահելի ինֆորմացիա ստանալ:

Միեւնուն ժամանակ, աղետների պատճառով կարող են խնդիրներ ծագել, որոնց հետեւանքով ստույգ տեղեկատվությունը մեզ չի հասնում: Նման դեպքերում, իրավիճակը ճիշտ գնահատելու եւ համապատասխան գործողություններ կատարելու համար, պետք է

միշտ ճիշտ գիտելիքներ ձեռք բերել եւ գործնական փորձ կուտակել:

6. Արտակարգ իրավիճակներում կարեւոր է մտածել նաև այլ տուժածների մասին եւ ինքնատիրապետում ունենալ:

Խոշոր աղետի կամ վթարի առաջացման ժամանակ քաղաքի շատ ենթակառուցվածքներ կարվածահար են լինում, եւ նարդիկ, հոգեբանական անկայունության պատճառով, խուժապի են մատնվում եւ կարող են դիմել բռնության:

Չնայած նրան, որ մարդիկ չեն սպասում նման խոշոր աղետի, Ղանսին-Ավածիի երկրաշարժի ժամանակ մեծ անկարգություններ չեղան: Նրանք հերթով նյութական օգնություն եւ ջուր ստացան, ինչը գրավեց արտասահմանյան լրատվամիջոցների ուշադրությունը: Մյուս կողմից, հեռախոսակապից օգտվողների թվի հանկարծակի եւ կտրուկ աճն անհասանելի դարձրեց կապը, իսկ ավտոմեքենաների օգտագործումը տարահանման կամ վիրավորների տեղափոխման նպատակով, առաջարեց խցանումներ:

Անեն դեպքում, կարեւոր է մտածել ոչ միայն սեփական անձի, այլեւ մյուսների մասին: Պետք է նշել, որ եթե մենք դժվար իրավիճակում ենք գտնում, մյուսներն էլ են նույն վիճակում: Առավել եւս, որ աղետի ժամանակ կարեւոր է ինքնատիրապետումը, փոխգործակցությունն ու դժվար ժամանակները միասին հաղթահարելու պատրաստակամությունը:

7. Էլեկտրականության եւ գազի անջատման ստուգումը՝ իրդեհի առաջացումը կանխելու համար. յուրաքանչյուրի գործողությունը կփրկի քաղաքը:

Ղանսին-Ավածիի երկրաշարժը տեղի ունեցավ վաղ ձմռանը: Շատերը տաքացնում էին բնակարանները եւ ուտելիք էին պատրաստում գազի եւ էլեկտրական վառարաններով: Յզո՞՝ 7 մագնիտուդով, ցնցումների ժամանակ շատերը չկարողացան ստուգել անվտանգությունը՝ անջատել էլեկտրականությունը,

տաքացուցիչները, սալօջախները: Այդ պատճառով էլ միաժամանակ բազմաթիվ վայրերում հրդեհներ բռնկվեցին:

Եթե երկրաշարժ է տեղի ունեցել, կարեւոր է սենյակի անվտանգ վայրում պատսպարվել՝ մինչեւ ցնցումների ավարտը: Դրանից անմիջապես հետո պետք է, որքան հնարավոր է արագ, հանգստել կրակը: Տարհանումից առաջ կարեւոր է նաև փակել գազի փականը եւ անջատել էլեկտրականությունը: Բացի դրանից, պետք է մշտապես ստուգել տաքացուցիչների, սալօջախների եւ այլ սարքերի վիճակը, ինչպես նաև ոյուրավառ վտանգավոր նյութերը պահել պատշաճ կերպով: Պետք է միշտ պատրաստ լինել անվտանգության նման միջոցառումներ ձեռնարկելուն:

8. Համայնքի եւ հարեւանների կողմից հրդեհների մարման եւ փրկարարական աշխատանքների մեջ արդյունավետությունը:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո շատ մարդիկ հայտնվեցին ավերված տների փլատակներում, եւ նրանց պետք էր անհապաղ փրկել: Թեեւ գործիքներն ու մարդիկ չեին բավարարում, տեղական բնակչության փրկարարական աշխատանքների շնորհիվ շատերը ողջ մնացին:

Տուժած շրջանում, միաժամանակ մի քանի վայրերում, նաև հրդեհներ բռնկվեցին, եւ այնտեղ հրշեց մեքենաներ ուղարկելու անհնար էր: Նման պայմաններում եղել են դեպքեր, երբ տեղի բնակչներն ու ձեռնարկությունները հրդեհների նախնական մարում են իրականացրել եւ, զարմանալի կերպով, կարողացել են կանխել կրակի հետագա տարածումը:

Ցնցումների եւ հրդեհների ժամանակ կյանքեր փրկելու համար կարեւոր է, որ ինքնօգնության կազմակերպությունների միջոցով միշտ միավորվեն տեղական բնակչության շանքերը եւ ուղղվեն դեպի փրկարարական աշխատանքներն ու հրդեհների նախնական մարման գործողությունները:

Նաև անհրաժեշտ է, որ աղետի ժամանակ օգնության կարիք ունեցողները, ինչպես, օրինակ, ծերերն ու հաշմանդամները, որոնք

չեն կարող տարահանվել սեփական ուժերով, կարողանան հեռանալ անվտանգ վայրեր՝ տեղական բնակչության օգնության շնորհիվ:

9. Ծառ կարեւոր է օգնության ցույց տալ տուժած շրջանի կարիքների եւ պահանջների համաձայն:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո ամբողջ երկրից եւ արտասահմանից նվիրատվություններ ստացվեցին՝ 180 միլիարդ իեն ընդհանուր գումարի չափով: Այդ նվիրատվություններն օգտագործվել են գումարային նվերների եւ տուժածներին օգնության ցուցաբերման տեսքով, այդ միջոցները նաև բաշխվել են ըստ քաղաքների: Որքան մեծ են աղետի ծավալները, այնքան շատ են տուժածները, այդ պատճառով էլ նվիրատվությունների ավել մեծ քանակ է պետք: Կարեւոր է, որքան հնարավոր է շատ նվիրատվություններ հավաքել նարդկանց փրկելու համար, ու նաև, որ միջոցներն արդյունավետ օգտագործվեն տուժածներին օգնելու համար՝ ուղարկողների ցանկությամբ:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո ամբողջ երկրից տուժած շրջաններ ժամանեցին կամավորներ եւ բազատեսակ գործունեություն ծավալեցին. նյութական օգնության բաշխում, տարահանման կետերի կառավարում, բժշկական օգնություն, աջակցություն, ընտանի կենդանիների փրկում: Այդ կերպ նրանք նարդկանց ապրելու ուժ տվեցին: Սակայն, սկզբում կամավորների ընդուննան համակարգը չէր կարգավորվել, եւ փորձված կարգավորողներ չկային: Նաեւ բազմաթիվ փորձված կամավորներ եկել են՝ առանց մտածելու բնակության վայրի եւ սննդի մասին, այդ պատճառով նրանք խնդիրներ ունեցան աղետի վայրում: Կամավորների գործունեությունը կախված է իրենցից: Դրա համար էլ, նման գործունեության համար պետք է այն բանի գիտակցությունը, որ սեփական գործերը պետք է սեփական ուժերով անել, եւ պատրաստ լինել դրան:

Թեեւ տուժած շրջաններում շատ մարդասիրական օգնություն ստացվեց, դրա մի մասն օգտագործման համար պիտանի չէր, եւ բաշխելու համար բանվորական մեծ ուժեր էին անհրաժեշտ:

Արդյունքում, որոշ իրեր այրվեցին կամ անօգուտ ընկած մնացին պահեստներում: Կարեւոր է մտածել, թե իրականում ինչի կարիք ունեն տուժած շրջաններում եւ այնպիսի օգնություն չուղարկել, որը լրացուցիչ խնդիրներ կստեղծի, օրինակ՝ անպետք կամ դժվար բաժանվող իրեր:

10. Տարահանման վայրերը շրջանում օգնության կենտրոնների գործառույթ են իրականացնում:

Հանսին-Ավաձիի Երկրաշարժից անմիջապես հետո շատ մարդիկ տարահանվեցին հասարակական հաստատություններ, տարահանվածների ամենամեծ թիվը գերազանցեց 300 հազարը:

Տարահանման վայրերը ոչ միայն իրենց ուղղակի գործառույթն էին իրականացնում, այլև նարդասիրական օգնության բաշխման եւ տարատեսակ տեղեկատվության փոխանակման կենտրոններ էին:

Թեեւ տարահանման վայրերը ժամանակավոր կացարաններ են՝ տուն գտնելուց առաջ, այսուեղ կարելի էր հանդիպել հարեւանների: Մարդկանց՝ որքան հնարավոր է արագ բնականոն կյանքի վերադարձնելու եւ շրջանը վերականգնելու համար կարեւոր է վերականգնման եւ վերակառուցման աշխատանքներն սկսել աղետից անմիջապես հետո: Տարահանման վայրերում մարդիկ կարող են քննարկել շրջանի վերածննդի խնդիրները, ապագայի համատեղ պատկերացումներ ունենալ եւ գործել այդ ուղղությամբ:

11. Զեռնարկությունների եւ խանութների արագ վերաբացումը կյանք եր հաղորդում տուժած շրջանին:

Երկրաշարժի ժամանակ տուժեցին նաեւ սուպերմարկետներն ու շուրջօրյա խանութները: Դրանցից ոմանք, առաքման համար մոտոցիկլետներ, փոքր բեռնատարներ ու նավակներ օգտագործելով, կարողացան վերսկսել աշխատանքը: Նաեւ բեռնատարների վարորդների ասոցիացիայի, տաքսիների եւ

մասնավոր ձեռնարկությունների շնորհիվ, իրականացվում էր մարդկանց եւ մարդասիրական օգնության տեղափոխում: Չնայած աղետից հետո առաջացած քառսին, խանութների եւ ձեռնարկությունների արագ վերաբացումը կյանք հաղորդեց տուժած շրջանին:

Թեեւ աղետ է տեղի ունենում, տեղական խանութների ու ձեռնարկությունների աշխատանքի արագ վերսկսումը կարեւոր է քաղաքի եւ մարդկանց առօրյա կյանքի արագ վերականգնման համար: Կարեւոր է նաև կարգի բերել առաքման եւ տեղափոխման համակարգերը՝ խանութների, ձեռնարկությունների աշխատանքը վերսկսելու համար:

II. Աղետի ժամանակ անվտանգության մշակույթի դաստիարակման հիմնական կետերը

12. Կարեւոր է հզորացնել աղետների նվազեցման եւ անհապաղ բուժօգնության համակարգերը՝ ընդարձակ տարածքներում:

Դանակն-Ավագիի երկրաշարժի փորձի հիման վրա երկրով մեկ սկսվեց փոխօգնության պայմանագրերի ստորագրում: Խոչոր աղետի առաջացումից հետո մեծացավ անհապաղ գործողություններ ձեռնարկելու կարիքը՝ մարդկանց փրկություն, հրդեհների մարում, վիրավորների բուժօգնություն, առավել տուժածների տեղափոխում: Տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող միայնակ լուծել այս խնդիրները, այդ պատճառով էլ պետությունը եւ տեղական հասարակական կազմակերպությունները ձգտում են ընդլայնել փոխօգնությունը՝ շրջանի վարչական սահմաններից դուրս: Այդպես, խոչոր աղետի ժամանակ օգնություն ցույց տալու համար սկսվեց «Անհետաձգելի օգնության հրշեց ջոկատի» (հրշեց ծառայություն) եւ «Ընդարձակ տարածքներում անհետաձգելի օգնության օժանդակ ջոկատի» (ոստիկանություն) գործունեությունը: Բացի դրանից, փոխվեցին աղետների ժամանակ ինքնապաշտպանական ուժերի եւ հիմնական միջոցների վերաբերյալ օրենքները, ինչը մեծացրեց տեղական վարչական միավորների՝ ինքնապաշտպանական ուժեր

ուղարկելու իրավունքները եւ բազմապատկեց տուժած տարածքներում գործող ինքնապաշտպանական ուժերի սպաների իրավունքները: Այդպես, Հանսին-Ավաձիի երկրաշարժի դասերն ունեցան իրենց դրական ազդեցությունը:

Հանսին-Ավաձիի երկրաշարժից տուժեցին բազմաթիվ բժշկական հաստատություններ, եւ այդ պատճառով չկարողացան բավարար բուժօգնություն ցուցաբերել: Այդ պատճառով էլ առաջացավ հիվանդանոցներում գտնվող ծանր վիրավորների ու հիվանդների տեղափոխման խնդիր՝ դրա սահմաններից դուրս գտնվող այլ բուժհաստատություններ: Սակայն շտապօգնության մեքենաները չեն բավարարում, իսկ ուղղաթիռների օգտագործումը չէր օգնում: Նաեւ խնդիրներ առաջացան բուժօգնության արդյունավետ կազմակերպման հետ՝ բժշկական խճերի եւ կամավորների ընդունում անբողջ երկրից, տեղացիների եւ բժշկական խմբերի միջեւ վատ կաա: Հանսին-Ավաձիի երկրաշարժից հետո ջանքերն ուղղվեցին բուժօգնության համակարգի վերակառուցմանը: Կարեւոր է կազմակերպել անհետաձգելի բուժօգնության համակարգ ընդարձակ տարածքներում ներառյալ ուղղաթիռների եւ դրանց թռիչքահրապարակների պատրաստումը՝ «փրկելու համար այն կյանքը, որը կարելի է փրկել»:

13. Կարեւոր է արագ հասկանալ վնասի չափերը եւ իրականացնել դրա գնահատման ստուգում:

Հանսին-Ավաձիի երկրաշարժից հետո կազմակերպությունների կողմից աղետների վտանգի նվազեցման վերաբերյալ տեղեկատվության հավաքումն անկարգ ծեւով էր իրականացվում, ինչը զգալիորեն դժվարացնում էր վնասի հետ կապված իրավիճակի ընկալումն ու վերլուծությունը: Հանսին-Ավաձիի երկրաշարժի դասերի հիման վրա այդ մարմինները ձգտում են աղետների վտանգի նվազեցման վերաբերյալ տեղեկատվության հավաքման եւ համատեղ օգտագործման համակարգման: Աղետի առաջացման ժամանակ պետք է արագ կարգի բերել անհետաձգելի միջոցառումների համակարգն ու իրականացնել դրանք, աղետից հետո պետք է հնարավորինս արագ տեղեկատվություն ձեռք բերել:

Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո յուրաքանչյուր տեսակի օգնության գնահատման անհրաժեշտության համար օգտագործվել են վնասի չափերի վերաբերյալ վկայությունները: Սակայն այդ ժամանակ գնահատման նորմերը հնացել են եւ չեն համապատասխանում ժամանակակից տների կառուցվածքին եւ յուրահատկություններին, այդ պատճառով էլ դրա արդյունքները տարբերվում են՝ կախված փորձագետից: Բացի դրանից, որոշ ինքնակառավարման մարմիններ կիրառում են իրենց սեփական գնահատականները՝ հաշվի չառնելով միասնական նորմերը: Հանսին-Ավածիի երկրաշարժից հետո պետությունը վերանայեց վնասի գնահատման միասնական նորմերը, որպեսզի օբյեկտիվ փորձաքննություն իրականացնի՝ ժամանակակից տների կառուցվածքի եւ յուրահատկությունների համաձայն: Վնասների վերաբերյալ վկայություններն օգտագործելու համար անհրաժեշտ է նախնական ստույգ փորձաքննություն: Դրա համար կարեւոր է կարգի բերել իրավիճակի արագ գնահատման եւ վնասի չափերի հետազոտության համակարգը:

14. Գլխավորը կապի կարեւորագույն գծերի փոխազդեցության վերականգնումն է եւ երթևեկության արագ ապահովումը ճանապարհներով:

Հանսին-Ավածիի երկրաշարժի ժամանակ տուժեցին քաղաքների հիմքերը, ճանապարհները եւ կապի կարեւորագույն գծերը, որոնք ապահովում են բնակչության կենսագործունեությունը: Բացի ճանապարհային կառուցվածքների փլուզումից, տրանսպորտի շարժին խանգարում են ընկած հեռագրասյունները եւ տների փլատակները, ինչպես նաև լրված մեքենաները: Փրկարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով մարդկանց ու տեխնիկան, ինչպես նաև մարդասիրական օգնությունն աղետի վայր հասցնելու համար, ճանապարհային տնտեսության աշխատակիցները պետք է արագ տրանսպորտային ազատ երթևեկություն ապահովեին: Ելեկտրաէներգիայի, գազի, ջրնուղի եւ կապի վերականգնման նպատակով՝ չտուժած շրջանների աշխատակիցները իրավիճակի փորձաքննություն են իրականացնում, որպեսզի ճշտեն վնասների չափերը եւ

Վերականգնման աշխատանքների մասշտաբները: Այդպես, հաջորդ օրը վերականգնված էր հեռախոսակապը, մեկ շաբաթից՝ էլեկտրաէներգիան, 3 ամսից՝ գազն ու ջրանուղը:

Առաջին գործողությունների տեղեկատվական կապի արագ ապահովման, ինչպես նաև տեխնիկայի եւ մարդկանց տեղափոխման համար անհրաժեշտ է տրանսպորտի արագ վերականգնում:

Քաղաքի եւ դրա բնակչությունների նորմալ կյանքի, տնտեսական գործունեության վերականգնման համար կարեւոր է կարգի բերել կապի կարեւորագույն գծերը: Նման վերակառուցումը պետք է ընթանա միաժամանակ:

III Դասեր. անհետաձգելի օգնությունից մինչեւ վերականգնում

15. Շփումները մարդկանց միջեւ եւ առնչումը մշակույթին ամրացնում է ապրելու ուժը:

Հանսին- Ավաճիի՝ Երկրաշարժից տուժած տարածքում «Զհանձնվես Կորե» կարգախոսի եւ ողջունող արշավների, առողջ ապրելակերպի ուսուցման, մշակութային գործունեության մեջ ներգրավման եւ սպորտով զբաղվելու, ինչպես նաև Երկրաշարժից հետո «Կորե Սումինարիե» ծննդային փառատոնի անցկացման շնորհիվ, տուժածներից յուրաքանչյուրը վերականգնվելու ուժ ստացավ եւ կարողացավ դիմակայել բոլոր դժվարություններին: Նաև՝ որպեսզի մարդիկ, կյանքի պայմանների փոփոխության պատճառով, չամփոփեն իրենք իրենց մեջ, հրավիրվեցին առողջ ապրելակերպի հիմունքների ուսուցման, մշակութային գործունեությամբ եւ սպորտով զբաղվելու:

Շփումները մարդկանց միջեւ եւ առնչումը մշակույթին ամրացնում է տուժածների ապրելու ուժը, դրում վերականգնման: Այս ամենը բանալի է՝ նորմալ կյանքի վերադառնալու համար:

16. Համայնքներում ի հայտ եկան կյանքի նոր ոճ եւ գործարարություն:

Հանսին-Ավաձիի երկրաշարժից հետո, համայնքը կազմակերպելու եւ պահպանելու նպատակով, ներդրվեց «Քոլեքտիվ հառագինգ»՝ «Տուն-հանրակացարան» հանակարգը: Ինչպես նաեւ այն հաստատությունների համար, որոնք տրամադրում են «Գրուփ հոռում» («աղետից հետո նորմալ կյանքի վերադառնալու հանրակացարան») որտեղ մշտապես օգնող աշխատակից է բնակվում, ֆինանսական միջոցներ հատկացվեցին վերականգնան ֆոնդից: Բացի դրանից, Հանսին – Ավաձիի երկրաշարժից հետո, տեղական բնակչությունը տարբեր ոլորտներում նոր՝ համայնքային բիզնես սկսեց, որը սերտորեն կապված էր տվյալ շրջանի հետ: Բիզնեսի նման տեսակը զլիավորապես ուղղված էր՝ տեղացիների կողմից տեղական խնդիրների լուծմանը, այդ պատճառով էլ սպասվում էր, որ այն կնպաստի տեղական համայնքի կազմակերպմանը, աշխատատեղերի ստեղծմանը եւ շրջանային տնտեսության զարգացմանը:

Կարեւոր է, որ նման որոշումը, որը հայտնվել էր Հանսին – Ավաձիի երկրաշարժից հետո, անրապնդվեց կյանքի կամ աշխատանքի բազմաբնույթ ոճերի առկայության պայմաններում: Ծերացող եւ քիչ երեխաներ ունեցող հասարակության համար կարեւոր է կյանքի եւ աշխատանքի այնախսի ոճ որդեգրել, որն ուղղված է տվյալ տարածքում բնակվող մարդկանց միջեւ կապերի պահպանմանը:

17. Կարեւոր է ծգտել աղետից հետո վերամշակել աղբը:

Հանսին-Ավաձիի երկրաշարժից տուժած շրջանում, բացի փլատակների մեծ քանակության գոյացումը, դեն էին նետվել նաեւ շատ անպետք իրեր կամ կահույք՝ կապված ժամանակավոր տներ տեղափոխվելու հետ: Այդ ամենը հավաքելու համար մեծ քանակությամբ միջոցներ եւ ժամանակ պահանջվեց:

Նկատվեց, որ թեեւ արագ վերականգնան նպատակով պետական միջոցներով քանդվել ու մաքրվել են փլուզված տները, դրա հետ միասին քանդվել են նաև վերանորոգնան ենթակա շինությունները:

Մյուս կողմից էլ, կամավորները, որոնք հյուսնի եւ կահույք վերանորոգողի հնտություններ ունեին, խրախուսում էին վերամշակումը, ինչը պարզվեց շատ արդյունավետ է՝ աղետից հետո քափոնների քանակը նվազեցնելու համար:

Նաեւ ժամանակավոր տները, որոնք կառուցվել էին Հանսին – Ավածիում՝ երկրաշարժից հետո, եւ որոնք կարելի էր եւս մեկ անգամ օգտագործել, տրամադրվեցին թուրքիայում եւ Թայվանում տուժածներին:

Վերջին տարիներին հետաքրքրություն է առաջացել վերամշակման համեա, եւ ընդունվել է քափոնների վերամշակման մասին օրենք, պարտադիր է դարձել տների տեսակավորումն ու տարբերակումը։ Նաեւ ընդունվել են վերամշակման մասին տարբեր օրենքներ, օրինակ՝ կենցաղային տեխնիկայի վերամշակման մասին օրենք։ Մենք պետք է ջանանք առօրյա կյանքում չժանրաբեռնել շրջակա միջավայրը, նաեւ կարեւոր է հնարավորության դեպքում աղետից հետո նվազեցնել քափոնների քանակը։

18. Տուժածների մասին հոգ տանելու եւ ապրելու ցանկությունը վերականգնելու համար անհրաժեշտ է բնակիչների կամավոր համագործակցությունը։

Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո կյանքի պայմանների եւ մարդկանց հարաբերությունների հանկարծակի փոփոխության պատճառով մեծացավ այն տուժածների թիվը, որոնք խիստ ներամփոփեցին։ Տուժած շրջանում միջոցառումներ են տարվում աղետից տուժածների ֆիզիկական եւ հոգեբանական վերականգնման համար՝ օգնելով վերագտնել կյանքի ինստրու եւ ուրախությունը։ Նաեւ միջոցառումներ են իրականացվում՝ համայնքների ծեւավորման եւ շրջանի համար հոգ տանելու ուղղությամբ, որպեսզի ծերերը հասարակությունից չհեռանան։ Շնորհիվ այդպիսի աշխատանքի, շատ տուժածներ կարողացան

Վերականգնել իրենց ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը: Բացի դրանից, աղետից անմիջապես հետո, սկսվեց մշակութային գործունեություն, որը նոր զգացողություններ եւ ապրելու ուժ տվեց շատ մարդկանց: Այդ շրջանում, երկրաշարժից հետո, քաղաքի բնակիչների եւ մասնավոր խմբերի մշակութային ակտիվությունն աշխուժացավ:

Աղետի շրջանուն մեծացավ բնակիչների ցանկությունը՝ մասնակցություն ունենալու իրենց խնդիրների լուծմանը, եւ գտնվեցին գործունեության նոր ոլորտներ, ինչպես, օրինակ, բարեկեցությունը, անվտանգության միջոցառումները, շրջակա միջավայրը, մշակույթը, եւ այլն: Աղետից հետո առօրյա կյանքին վերադառնալու նպատակով կարեւոր է նպաստել բնակիչների համագործակցությանը եւ աջակցությանը սեփական համայնքին:

19. Տարահանման վայրերին եւ ժամանակավոր բնակավայրերին աջակցելու համար անհրաժեշտ է բնակչության, կամավորների եւ աղմինհստրացիայի համագործակցությունը:

Հանսին - Ավագիի երկրաշարժից հետո դպրոցների աշխատակիցները, աղմինհստրացիան, կամավորները եւ այլ մարդիկ օգնեցին կյանքը տարահանման վայրերուն կազմակերպելու գործին: Նրանք՝ բարեկեցության, սանհিতարիայի ու բժշկության որոլտի նաև գետների հետ միասին, օգնություն են ցույց տվել նաեւ ժամանակավոր տներում ապրող ծերերին:

Տարահանման վայրերուն եւ ժամանակավոր տներուն ինքնուրույն կյանքի համար պահանջվում է համագործակցություն բնակիչների եւ տեղացիների միջեւ: Համագործակցություն է անհրաժեշտ նաեւ կամավորների, մասնագետների եւ աղմինհստրացիայի աշխատակիցների միջեւ:

20. Անհրաժեշտ է համայնքների ստեղծում՝ բնակարանով ապահովման եւ վերակառուցման համար:

Հանսին - Ավագիի երկրաշարժից հետո ժամանակավոր եւ պետական շատ տներ տրանադրվեցին տուժածներին: Այդ տների բնակիչների համար կազմակերպվել էին միջոցառումներ՝ շփման միջոցով նրանց նորմալ կյանքի վերադարձնելու նպատակով:

Մյուս կողմից էլ նկատվել է, որ կապերը համայնքի ներսում այնքան էլ սերտ չէին:

Ժամանակավոր կացարանով ապահովելը կարեւոր քայլ է տուժածների տները վերակառուցելու ճանապարհին, բայց դրա համար անհրաժեշտ է վերականգնել կյանքի հետ կապը: Ուստիեւ կարեւոր է, զնահատելով մարդկային հարաբերությունները, իրականացնել ժամանակավոր կացարաններով ապահովում եւ վերակառուցում:

21. Կարեւոր է հոգեբանական աջակցությունն ու այդ աջակցության կարիքն ունեցողների հանդեպ հատուկ հոգածությունը:

Համարին - Ավաձիի Երկրաշարժից հետո, ծայրահեղ ուժեղ հոգեբանական հարվածի պատճառով, հետտրավմատիկ սրբեսի՝ տեւական ուժեղ սրբեսային ռեակցիայի, բազմաթիվ դեպքեր գրանցվեցին, ինչը խանգարում էր հասարակության նորմալ կյանքին: Աղետից հետո հոգեբանական առողջության համար հիմնվեցին հոգեբուժական կարինետներ, ժամանակավոր կացարանների տարածքում կառուցեցին հոգեբանական օգնության կենտրոն: Նախատեսվել էր նաեւ բժշկական, սանիտարային սպասարկման եւ օգնության կարիք ունեցողներին՝ հատկապես ծերերին ու հաշմանդամներին համապատասխան խնամքի տրամադրման պահանջը: Կորե քաղաքում սոցիալական խորհրդատուններ նշանակվեցին ոչ միայն աղետից հետո աջակցության կարիք ունեցողներին օգնելու համար, այլև՝ համայնքի գործունեությանը մասնակցելու, իսկ հիմա նրանք աշխատում են այն կենտրոններում, որոնք օգնություն են ցուցաբերում տներում, կազմակերպում եւ ընդլայնում են խնամքի համարադրային համակարգը՝ սկսած տուժածների համար պետական տներից, վերջացրած սովորական թաղամասերով:

Աղետից հետո շոկից դուրս գալու եւ նորմալ կյանքի վերադառնալու համար կարեւոր է հավաքագրել կամավորների, վարչական աշխատողների եւ մասնագետների փորձը եւ հոգեբանական աջակցություն ցույց տալ դրա կարիքն ունեցողներին:

22. Զարգացումը պլանավորելիս կարեւոր է առեւտրարդյունաբերական ոլորտը վերականգնել որքան հնարավոր է արագ:

Դանակին - Ավածիի Երկրաշարժի տեղի ունեցավ Երկրում խոր տնտեսական ճգնաժամի ֆոնին, այդ պատճառով էլ Կոբե քաղաքը լուրջ տնտեսական վնաս կրեց: Տուժած շրջանում առաջ էր ընթանում արդեն գոյություն ունեցող արդյունաբերության վերականգնումը եւ անցում էր կատարվում արտադրության նոր ձեւերի: Սակայն քաղաքային հիմնական հաստատությունների վերականգնումը շուտ ավարտվեց, մասր եւ միջին ձեռնարկությունների, ինչպես նաև խանութների վերակառուցումն ուշանում էր, ինչի արդյունքում տնտեսության վերծննդի համար շատ ժամանակ պահանջվեց:

Եթե ամենասկզբում չսկսվի տեղական տնտեսության վերականգնումը, ապա ամբողջ շրջանի տնտեսությունն ընդհանուր առաջամբ հետ կը նկանի: Այդ պատճառով էլ կարեւոր է նախնական էտապում սկսել շրջանի առեւտրարդյունաբերական ճյուղի վերակառուցումը: Նաեւ պետք է հեշտ կիրառվող օգնության միջոցներ տրամադրել տուժած ձեռնարկություններին:

23. Վերականգնման հիմնական միջոցառումը բնակարանի հարցի լուծումն է:

Դանակին - Ավածիի Երկրաշարժի ժամանակ լրիվ ավերվեց մոտ 100 հազար տուն, մասամբ՝ մոտ 109 հազարը, այդ պատճառով էլ մեծ թվով ժամանակավոր եւ հիմնական բնակարանների կարիք զգացվեց: Հյոդոյի գավառում, աղետների ժամանակ տրամադրվող օգնության մասին օրենքի համաձայն, կառուցվեց 48 300 ժամանակավոր կացարան, Օսակա գավառում՝ 1381, «Հյոդոյում բնակարանների վերականգնման պլանի» համաձայն նախագծվեց 125 հազար մշտական բնակարան եւ 38 600 պետական բնակարան տրամադրվեց տուժածներին: Այդ կերպ հսկայական միջոցներ ծախսվեցին պետքութեցից:

Նաեւ միջոցներ ձեռնարկվեցին պետական շենքերում բնակվարձի իջեցման եւ ժամանակավոր բնակարաններից մշտական տուն տեղափոխվելու ուղղությամբ՝ ներդնելով «Քոլեքտիվ հառւգինգի»

(համատեղ բնակություն) եւ հանրակացարանների կառուցման պրակտիկան:

Բացի դրանից, տուժած շրջանում կար նաեւ մասնավոր տների վերակառուցմանն աջակցելու պահանջ, 2004 թ. մարտին մասսամբ փոխվեց տուժածների կյանքի եւ վերակառուցման աջակցման օրենքը, որի շնորհիվ կայուն բնակության աջակցության համակարգ ստեղծվեց, ինչպես նաեւ որոշվեց դրանական սուրսիդիանների չափը:

Տուժածներին ամենաշատը հետաքրքրում է բնակարանով ապահովումը: Տուժածների կյանքի հիմնական պահանջը բավարարելու կայունության կայունությանը, այլեւ շրջանի վերականգնմանը, այսինքն, վերականգնման գլխավոր միջոցառումը բնակարանի հարցի լուծումն է:

IV. Դասեր՝ կապված վերածննդի ու կանխարգելման հետ

24. Կարեւոր է սովորական կյանքում ապահովել պատրաստվածությունը աղետներին:

Կարեւոր է աղետին նախապատրաստվել այնպես, որ դրա առաջացման ժամանակ հանգիստ գործենք:

Օրինակ, պարբերաբար բժշկական ստուգում անցնել, նաեւ ստուգել սեփական տան սարքին լինելը եւ անհրաժեշտության դեպքում վերանորոգել: Երկրաշարժի ժամանակ առաջանում է նաեւ կահույքի եւ այլ իրերի ցած ընկնելու վտանգ, այդ պատճառով էլ կարեւոր է ստուգել կահույքի կայունությունը:

Աղետից հետո մեծ խնդիրներ են ծագում կապված ջրի, սննդի եւ դեղերի հետ, կարեւոր է սովորական օրերին ջուր, սնունդ եւ դեղեր նախապատրաստել, որպեսզի ցանկացած պահի այն վերցնեք ձեզ հետ: Նաեւ կարող է իրդեն բռնկել, ինչպես սեփական, այնպես էլ՝ հարեւանի տանը, այդ պատճառով էլ կրակնարիչը, դույլերն ու ջուրը լոգարանում պետք կգան: Բացի դրանից, կարեւոր է

ընտանիքի բոլոր անդամների հետ պայմանավորվել կապի եւ տարահանման միջոցների շուրջ:

Որպեսի աղետի ժամանակ գործեք առանց խուճապի եւ պատշաճ կերպով, յուրաքանչյուրը հնարավորության դեպքում պետք է սովորի անվտանգության կանոնները:

25. Զեռնարկություններում աղետների վտանգի նվազեցման միջոցառումները հասարակության ավելի ուժեղ կդարձնեն աղետների առօն:

Բարեբախտաբար, Յանսին - Ավածիի երկրաշարժը տեղի ունեցավ վաղ առավոտյան: Եթե այն տեղի ունենար ցերեկը, ապա կտուժեին քաղաքի կենտրոնով աշխատանքի գնացող նարդիկ, կաճեր զոհերի թիվը: Յանսին - Ավածիի երկրաշարժից հետո տուժած շրջանի շատ ձեռնարկություններ միջոցներ են ձեռնարկում անվտանգության համակարգերի հզորացման ուղղությամբ եւ մասնակցում են ոխսկի նվազեցման գործունեությամբ:

Խոշոր աղետի կամ վթարի ժամանակ, որպեսզի ձեռնարկությունները կարողանան ապահովել աշխատողների եւ հաճախորդների անվտանգությունը, նաև շարունակեն աշխատանքը, կարեւոր է ոխսկի կառավարման միջոցներ ձեռնարկել, օրինակ, հետեւել անվտանգության պլանին կամ ԱՇՊ-ին (աշխատանքի շարունակման պլան): Բացի դրանից, ձեռնարկությունները, որպես հասարակության մի մաս, պետք է համագործակցեն տեղական բնակչության հետ՝ շրջանի ապահովման բնագավառում:

26. Սեփական տան անվտանգությունն ապահովելով՝ պաշտպանել ընտանիքն ու հարեւաններին:

Յանսին - Ավածիի երկրաշարժի ժամանակ ավերված տների 95%-ը կառուցվել էին մինչեւ սեյսմակայունության նորմերի ընդունումը (1981թ.): Կորե քաղաքում զոհերի 80%-ից ավելին զոհվել է ավերված տների փլատակներում: Նաև շրջաններում, որտեղ տները խիտ են կառուցված, ցնցուներին զուգահեռ հրդեհներ բռնկեցին, որոնք տարածվեցին, եւ վնասն ավելի մեծ եղավ: Բացի դրանից, կարեւոր է ոչ միայն ապահովել տան անվտանգությունը,

այլեւ՝ միջոցներ ձեռնարկել կահույքի ցած ընկնելը կանխելու համար:

Տունը սովորաբար մեծ դեր է կատարում կյանքը պահպանելու գործում: Սեփական եւ ընտանիքի կյանքն ապահովելու նպատակով կարեւոր է միջոցներ ձեռնարկել տան սեյսմակայությունն ապահովելու համար: Տան հաստատունությունն ապահովելով՝ կպահպանեք նաեւ հարեւանների կյանքը:

27. Կարեւոր է հարաբերություններ ձեւավորել բնակչության, կանավորների, մասնագետների, վարչական աշխատողների եւ մյուսների միջեւ:

Հանսին - Ավածիի երկրաշարժի փորձից ելնելով՝ ընկալվեց խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությունը: Տուժած շրջանի վերականգնումը հնարավոր եղավ նաեւ այն պատճառով, որ տեղական բնակչությունը, կանավորներն անբողջ երկրից, մասնագետներն ու աղմինիստրատիվ աշխատողները միավորեցին իրենց ջանքերը:

Հատկապես Հանսին - Ավածիի երկրաշարժի ժամանակ շատերը գիտակցեցին համայնքի կարեւորությունը: Շրջանների վերականգնումը հնարավոր դարձավ նրանց ջանքերի շնորհիվ: Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո տուժած շրջանում փորձում են զարգացնել համայնքները եւ ինքնապաշտպանության մարմինները, եւ դրանք ակտիվ են դառնում:

Նաեւ շատ ոլորտներում կամավորները մեծ դեր խաղացին: Այժմ կանավորներն իրենց տեղն ու դերն ունեն հասարակության մեջ: Սակայն, մյուս կողմից, խնդիր է առաջանում՝ ինչպես կազմակերպել կամավորներին եւ կոորդինատորներ դաստիարակել:

Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո վերականգնման ֆոնի հաշվին ստեղծվեց տարբեր ոլորտների մասնագետների ուղղորդման համակարգ, որոնք, կապվելով իրար հետ, օգնություն էին ցույց տալիս:

Տեփական կյանքն ու քաղաքը պահպանելու համար կարեւոր է մշտապես հարաբերություններ ձեւավորել բնակչության, կանայինների, մասնագետների, վարչական աշխատողների եւ մյուսների միջեւ:

28. Կարեւոր է շարունակել բնակելի տների տնտեսական վճասի նվազեցման միջոցների դիտարկումը:

Կյանքի վերականգնման համար տուժածներին անհրաժեշտ է կրկին կառուցել դրա հիքմերը՝ տունը: Սակայն, տուժածների համար, որոնց անհանգուտացնում է իրենց գոյությունը պահպանելը, վճասված տան վերակառուցումն ու վերանորոգումը դժվար գործ է:

Թեեւ Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո դիտվում է երկրաշարժի դեպքում ապահովագրված ընտանիքների թվի աճ, ապահովագրվածների ընդհանուր թիվը շարունակում է փոր մնալ: Նշանակում է, համակարգը դեռ լայն տարածում չի գտնել: Կարեւոր է միջոցներ ձեռնարկել տնտեսական վճասը նվազեցնելու համար, մտածելով, թե ինչ վճաս կլիի տունը խոշոր երկրաշարժի դեպքում:

Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո, բնակարանի վերականգնման՝ տուժածի տնտեսական բեռը թեթեւացնելու համար, սեփականատերերին առաջարկվում է փոխօգնության համակարգ՝ անդամավճարների հավաքնան հաշվին:

Եթե տների վերակառուցումն ու վերականգնումը սահուն չընթանա, դա կազդի կյանքի վերածննդի վրա: Այդ պատճառով էլ կարեւոր է քննարկել տան հետ կապված տնտեսական կորուստների նվազեցման միջոցները:

29. Կարեւոր է, որ քաղաքի բնակչությունը մասնակցի դրա ստեղծմանը:

Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո քաղաքի վերականգնման ժամանակ տարածայնություններ առաջացան վարչակազմի կողմից առաջարկվող եւ բնակչության նախագծերի միջեւ, որի պատճառով որոշումն ուշանում էր, սակայն շատ վայրերում

խորհրդակցություններ անցակցվեցին, որի շնորհիվ էլ եկան համաձայնության:

Շրջաններում կարեւոր դեր է խաղում տեղի բնակչությունը: Որպեսզի հաջողությամբ իրականացվի քաղաքի վերականգնումը, անհրաժեշտ է դրա բնակչությունը: Սակայն, թե վերականգնելու համար համախմբվեն աղետից հետո միայն, ոչինչ չի ստացվի: Այդ պատճառով էլ կարեւոր է, որպեսզի քաղաքի բնակչությը մշտապես քննարկեն, թե ինչպես կառուցեն շրջանը: Նաև կարեւոր է աջակցման համակարգի ստեղծումը բոլոր բնակչությունի մասնակցությամբ:

30. Կարեւոր է կադրերի պատրաստումը, որոնք հմտացած են անվտանգության կանոնների ուսուցման եւ տեղեկատվության տրամադրման մեջ:

Աղետի վնասները նվազեցնելու համար անհրաժեշտ է արթնացնել անվտանգության միջոցառումների պահպաննան անհրաժեշտության գիտակցությունն առօրյա կյանքում, նաև շատ կարեւոր է կադրեր դաստիարակել, որոնք աղետի ժամանակ կարող են հանգիստ եւ ծիշտ գործել: Դրա համար պետք է անվտանգության կանոնները սովորեցնել երեխաներին, պետական գործիչներին, ինչպես նաև հրշեց ծառայության աշխատակիցներին, կամավորներին, տեղական բնակչությանը եւ մյուսներին: Նաև կարեւոր է, աղետի ժամանակ իրավիճակի ծիշտ գնահատման եւ համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար, մարզվել նաև առօրյա կյանքում:

Բացի դրանից, որպեսզի տեղական բնակչությունը կարողանա իր ուժերով պաշտպանել իրեն, կարեւոր է հասկանալի տեղեկատվություն տրամադրել՝ վտանգավոր վայրերի քարտեզների օգնությամբ, նաև պայմաններ ստեղծել ուսուցման եւ պարապմունքների համար:

31. Քաղաքը, որն ստեղծվում է մարդկանց եւ շրջակա միջավայրի համար, վերաճում է աղետների նկատմամբ կայուն բնակավայրի:

Հանսին - Ավագիի երկրաշարժի ժամանակ տուժեցին բազմաթիվ տարեցներ: Աղետը, առաջին հերթին, հարվածում է երեխաներին, տարեցներին ու հաշմանդամներին: Անհրաժեշտ է նպաստել այնպիսի քաղաքի ստեղծմանը, որտեղ աղետի ժամանակ օգնության կարիք ունեցողները կարող են իրենց անվտանգ ու հանգիստ զգալ: Հանսին - Ավագիի երկրաշարժի փորձի հիման վրա կարեւոր է ձգտել, որ բոլորը մասնակցեն անվտանգ ու հարմարավետ բնակավայրի ստեղծմանը:

32. Կարեւոր է նպաստել աղետակայուն քաղաքային հանրության ստեղծմանը:

Հանսին - Ավագիի երկրաշարժն ապացուցեց, որ երկրի քաղաքաշինությունը շատ թույլ է, եթե դեմառդեմ հանդիպում է աղետներին: Տուժած շրջանում Հանսին արագընթաց նայորություն կորեի գիծը, կորե նավահանգիստը, ճանապարհները, նավահանգիստները, երկարգծերը, ջրնուղ եւ կոյուղու ցանցերը, էլեկտրաէներգիան, գազը, կապը՝ հիմքերը, որոնց շնորհիվ իրականացվում է քաղաքային, տնտեսական գործունեությունն ու մարդկանց կյանքը, ավերվել էին:

Քաղաքի հիմնական ենթակառուցվածքների վերականգնումն իրականացվեց կարծ ժամանակահատվածում՝ վերստեղծման երեքամյա պլանով, այդ պատճառով էլ երկրաշարժի ազդեցությունը, տնտեսության եւ մարդկանց կյանքի վրա, նվազագույն էր: Նաեւ, երկրաշարժից հետո, պլանավորվում է ջրնուղի, կոյուղու, էլեկտրականության, ջրի, գազի, կապի, ճանապարհների, երկարգծերի, նավահանգիստների եւ այլ ենթակառուցվածքների սեյսմակայունության ուժեղացում:

Կարեւոր են, աղետների վնասի կանխարգելման եւ նվազեցման նպատակով, կենսական կարեւորություն ունեցող կոմունիկացիաների, ճանապարհների, երկարգծերի, նավահանգստի եւ հասարակական շենքերի ստեղծման շարունակական ձգտումները՝ հաշվի առնելով անվտանգության նորմերը:

**V. Միջոցառումների ձեռնարկում պետական եւ
տեղական մակադրակով՝ աղետների վճասի
նվազեցման տեսանկյունից:**

33. Կարեւոր է օրենքներ ստեղծել խոշոր աղետների ժամանակ միջոցառումների մասին:

Հանսին - Ավագիի երկրաշարժի փորձի հիման վրա փոփոխություններ արվեցին խոշոր աղետների ժամանակ միջոցառումների մասին օրենքում, եւ պլանավորվում է յուրաքանչյուր շրջանում բարելավել հարակից որոշումները: Նաեւ փոփոխություններ են սպասավոր Տոկահ, Տոնանկահ եւ Նանկահ երկրաշարժերի վերաբերյալ օրենքում: Բացի դրանից, աղետից տուժածներին օգնելու համար օրենք է ընդունվել տուժածի կյանքի վերականգնման մասին: Այդպես, մեր երկրում, սկսած աղետների ժամանակ միջոցառումների վերաբերյալ հիմնական օրենքից, որոշումներ են ընդունվել անհետաձգելի օգնության մասին՝ աղետների ժամանակ օգնության վերաբերյալ եւ տուժածի կյանքի վերականգնման մասին, աղետից հետո վերականգնման մասին, ֆինանսական միջոցները տնօրինելու մասին, երկրաշարժերի, հրաբուխների, թափունների, ատոմակայանի վթարների ժամանակ միջոցառումների մասին, օրենքներ՝ կապված յուրաքանչյուր ոլորտում աղետի վտանգի կանխարգելման հետ:

Հանսին - Ավագիի երկրաշարժից հետո հաստատվել են անվտանգության ընդհանուր, ներառյալ՝ վերականգնման միջոցառումները: Կարեւոր է ստեղծել ռիսկի կառավարման համակարգ, որն ընդգրկում է հստակ գործողություններ՝ ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներից մինչեւ վերականագնում, եւ գործել դրանց համաձայն, նաև օրենքներ ընդունել ու համակարգեր, որոնք կօգնեն իրականացնել այդ միջոցառումները:

34. Կարեւոր է հզորացնել առաջին գործողությունների համակարգը, որպեսզի աղետի ժամանակ արագ միջոցներ ձեռնարկվեն:

Հանսին - Ավածիի երկրաշարժի փորձի հիման վրա նախարարների կարինետում պետականորեն հաստատվեց արտակարգ իրավիճակների վերահսկողի պաշտոն՝ նախարարների կարինետի գլխավոր քարտուղարի տեղակալ (պատասխանատու է անվտանգության եւ արտակարգ իրավիճակների կառավարման համար), ձեւավորվեցին արտակարգ հավաքների խումբ եւ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնը: Դիմնվելով տարերային աղետների ժամանակ հիմնական միջոցառումների վերաբերյալ հիմնական օրենքի վրա՝ կարելի է ստեղծել արտակարգ իրավիճակների միջոցառումների իրականացման շտար, որի դեկավարը կլինի անվտանգության միջոցառումների նախարարը, նաեւ ստեղծել աղետների ժամանակ շտապ միջոցառումների շտար, որը կղեկավարի վարչապետը: Շրջանային աղմինհստրացիաներում, հիմնվելով տարերային աղետների ժամանակ հիմնական միջոցառումների վերաբերյալ հիմնական օրենքի վրա, արագ եւ ճիշտ գործելու համար, կարելի է ձեւավորել շտար աղետի ժամանակ իրականացվող միջոցառումների համար, որը կգլխավորի աղմինհստրացիայի դեկավարը:

Կարեւոր է շարունակել եւ հետագայում էլ ուժեղացնել առաջին գործողությունների եւ անհետաձգելի օգնության համակարգերը, խոշոր աղետի ժամանակ միանգամից արձագանքելու համար: Բացի դրանից, եթե աղետ է առաջանում շատ մեծ տարածքում, որը մեծ վնաս է հասցնում, անհրաժեշտ է արագ եւ սահուն կերպով սկսել անհետաձգելի միջացառումների իրականացումը:

35. Կարեւոր է ապահովել կառավարության կողմից ֆինանսների կարգավորման ֆունկցիան՝ վերականգնման եւ վերածննդի նպատակով խոշոր գումարներ հատկացնելու համար:

Աղետից հետո վերականգնման համար անհրաժեշտ են մեծ միջոցներ: Հանսին - Ավածիի երկրաշարժից հետո վերականգնման եւ վերստեղծման միջոցառումների իրականացման ժամանակ

տուժած շրջանի ինքնակառավարման մարմիններին նյութական աջակցություն ցուցաբերելու համար պետությունը հատուկ միջոցներ առանձնացրեց՝ դրանց սուլա լինելու պատճառով:

Աղետից հետո վերականգնումն իրականացնելուց առաջ հիմնական քաղաքային հաստատությունների եւ քաղաքի վերակառուցման ու այլ միջոցառումների համար մեծ միջոցներ պահանջվեցին: Այդ պատճառով էլ, վերականգնման միջոցառումների իրականացումը ֆինանսավորելու համար, կարեւոր է պետության՝ ֆինանսական միջոցները կարգավորելու ֆունկցիան:

36. Կարեւոր է, տարերային աղետը պատկերացնելիս, ստեղծել պետական եւ տեղական հոդային ծրագրեր՝ աղետի վտանգի նվազեցման եւ կանխարգելման տեսանկյունից:

Հանսին - Ավածիի երկրաշարժից տուժած շրջանում աշխատանքներ են ընթանում քաղաքի հիմնական ենթակառուցվածքները ստեղծելու, խիտ կառուցապատված շրջանները բարելավելու, համայնքներն ուսուցանելու, աղետակայուն քաղաքաշինություն զարգացնելու ուղղությամբ: Նաև, երկրաշարժից հետո, յուրաքանչյուր շրջանում՝ անվտանգության միջոցառումների բարելավմանն ուղղված միջոցառումներ են անցկացվում:

Անհնար է կանգնեցնել այնպիսի բնական երեւույթներն, ինչպիսիք են երկրաշարժերը, ցունամիները, հրաբուխների ժայթքումները, թայֆունները, հորդառատ անձրեւները, ուժեղ ծնաբքերը եւ ջրհեղեղները: Գործանականում անհնար է նաև բացառել աղետի վնասները: Պետական եւ տեղական հոդային ծրագրերի ստեղծման ժամանակ կարեւոր է աղետների վտանգի կանխարգելման եւ նվազեցման տեսանկյունից պատկերացնել, թե ինչ կլինի, եթե տարերային աղետ տեղի ունենա:

37. Վերականգնման եւ կանխարգելման համար կարեւոր նախնական պայման է ռիսկի գնահատումը:

Հանսին - Ավագիի երկրաշարժի եւ վերջին խոշոր տարերային աղետների վնասները դիտարկելիս, մարդիկ կենտրոնացել են վնասի նվազեցման միջոցառումների կարեւորության, դրանց անհետաձգելիության եւ վերականգնման որոշումների վրա: Որպեսզի առաջին քայլն արվի անվտանգության ստեղծման ուղղությամբ, գոյություն ունի ռիսկի գնահատում, որը պետք է նպաստի վտանգի եւ վնասի նվազեցմանը:

Տարերային աղետների հետեւանքով միայն զարգացող երկրներում չէ, որ մարդիկ են զոհվում եւ ունեցվածք կորցնում, այլ նաեւ զարգացած երկրներում, որոնցից է ճապոնիան, բավարար չեն տվյալները ռիսկի տրամաբանական գնահատման վերաբերյալ եւ չի գոհացնում դրանց համատեղ օգտագործումը:

Տերմինների բառարան

Տերմինաբանական այս բառարանը մշակվել է ՍԱԿ-ի կողմից՝ տվյալ բնագավառի մասնագետների աջակցությամբ եւ պարունակում է տարերային աղետների ռիսկի ՝^{3 ½»}օնչ Յ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները: Բառարանը ցույց է տալիք աղետների ռիսկի ՝^{3 ½»}օնչ Յ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները: Բառարանը ցույց է տալիք աղետների ռիսկի ՝^{3 ½»}օնչ Յ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները: Բառարանը ցույց է տալիք աղետների ռիսկի ՝^{3 ½»}օնչ Յ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները: Եթե աղետների ռիսկը կազմությամբ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները կազմությամբ աճան՝ Ց ՆՇ Նական սահմանումները:

Թույլատրելի ռիսկ

Վնասի մակարդակ, որը հասարակությունը կամ հանրությունն ընդունելի է համարում՝ հաշվի առնելով առևկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնիկական եւ բնապահպանական պայմանները: Ինժեներական տերմինաբանության մեջ թույլատրելի ռիսկն օգտագործվում է կառուցվածքային եւ ոչ կառուցվածքային բնույթի միջոցառումները գնահատելիս, որոնք ձեռնարկվում են հնարավոր վնասը նվազեցնելու համար, եւ նշանակում է բնակչության եւ ունեցվածքի անվտանգության ապահովման մակարդակը՝ համաձայն ընդունված նորմերի կամ «ընդունված» փորձի, որոնք, ի թիվս այլ հանգամանքների, հիմնված են սպառնալիքի առաջացման հավանականության վրա:

Կենսաբանական վտանգ

Օրգանական ծագման կամ կենսաբանական փոխանցողներով պայմանավորված գործընթացներ՝ ներառյալ ախտածին միկրոօրգանիզմների, տոքսինների, կենսաբանական ակտիվ էակիմքների ներգործությունը, որոնք կարող են հանգեցնել մահվան կամ մարմնական վնասվածքների, ունեցվածքի կորստի, սոցիալական ու տնտեսական ցնցումների եւ էկոլոգիական հետընթացի: Կենսաբանական վտանգի օրինակներ են համաճարակային հիվանդությունների բռնկումները, կենդանիների ու բույսերի վարակումը, միջատների հարձակումը (արշավները) եւ մակարույժերով վարակումը:

Շինարարական նորմեր

Կարգադրություններ եւ կանոններ, որոնք կարգավորում են ցանկացած շենքի ու շինության նախագծումը, շինարարությունը, նյութերը, փոփոխություններն ու բնակեցումը՝ նարդկանց անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու նպատակով:

Շինարարական նորմերը ներառում են ինչպես տեխնիկական, այնպես էլ գործառնական չափանիշներ:

Ներուժ (կարողություն, պոտենցիալ)

Բնակչության, հասարակության կամ կազմակերպության բոլոր ուժերի ու ռեսուրսների համատեղում, որը կարող է նվազեցնել ռիսկի աստիճանը կամ աղետի հետեւանքները: Ներուժը կարող է ընդգրկել ֆիզիկական, ինստիտուցիոնալ, սոցիալական կամ տնտեսական հնարավորություններ, ինչպես նաև որակավորված անձնակազմ կամ կոլեկտիվ հատկություններ, ինչպիսիք են առաջնորդումն ու կառավարումը: Ներուժը կարելի է բնութագրել նաև որպես ընդունակություն:

Ներուժի կառուցում

Ուսկի մակարդակի նվազեցման կարիք ունեցող հասարակության կամ կազմակերպությունների սոցիալական ենթակառուցվածքների, մարդկային հնտությունների զարգացմանն ուղղված ջանքեր: Ավելի լայն հմաստով կարողությունների (պոտենցիալի) կառուցումը ենթարկում է զարգացում ինստիտուցիոնալ, ֆինանսական, քաղաքական եւ այլ ռեսուրսների, որոնցից է հասարակության տարբեր խմբերի ու մակարդակների տեխնոլոգիան:

Կլիմայի փոփոխություններ

Որոշակի տեղանքի կամ շրջանի կլիման փոփոխվում է, եթե երկար ժամանակի (սովորաբար տասնամյակների կամ ավելի երկար ժամանակաշրջանի) ընթացքում նկատվում է վիճակագրական տվյալներով արձանագրված միջին չափորոշիչների նշանակալի փոփոխություն կամ տվյալ տեղանքի կամ շրջանի կլիմայի ընդհանուր անկայունություն: Կլիմայի փոփոխությունը կարող է պայմանավորված լինել բնական գործնթացներով կամ ներնյութում ու հողօգտագործման բնագավառում անընդհատ տեղի ունեցող մարդագին փոփոխություններով: Ուշադրություն դարձրեք, որ $\theta^2\bar{1} - \bar{C}\bar{1} \bar{E}\bar{C}\bar{U}^3 \bar{I}\bar{C} \div \bar{A} \div \bar{A}\bar{E}\bar{A}\bar{U}\bar{A}\bar{O}\bar{Y}\bar{Y}$ » $\bar{N}\bar{C}$

մասին կոնվենցիայում «կլիմայի փոփոխություններ» արտահայտությունն ավելի նեղ իմաստ ունի, քանի որ ներառում է միայն այն փոփոխությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի ձեւով կապված են մարդու գործունեության հետ:

Հաղթահարման ներուժ (կարողություններ, պոտենցիալ)

Միջոցներ, որոնց օգնությամբ մարդիկ եւ կազմակերպություններն օգտագործում են իրենց ունեցած ռեսուրսներն ու հնարավորությունները՝ հաղթահարելու բացասական հետեւանքները, որոնք կարող են աղետի հանգեցնել:

Ընդհանուր առնամբ՝ խոսքը վերաբերում է ռեսուրսների կառավարմանը՝ ինչպես նորմալ ռեժիմում, այնպես էլ ճգնաժամերի կամ անբարենպաստ պայմանների ժամանակ: Հաղթահարման կարողությունների ամրապնդումը սովորաբար բարձրացնում է բնական ու տեխնածին սպառնալիքների հետեւանքներին դիմակայելու ունակությունը:

Պատասխան միջոցներ

Ցանկացած միջոցներ՝ ուղղված տարերային աղետների ռիսկի նվազեցմանն ու հակազդեցությանը: Դրանք գլխավորապես իրենց մեջ ներառում են ինժեներական (կառուցվածքային) բնույթի միջոցներ, սակայն կարող են ընդգրկել նաև ոչ կառուցվածքային միջոցներ ու մեթոդներ, որոնք նշակվել եւ կիրառվում են բնական սպառնալիքների կամ դրանց հետ կապված էկոլոգիական ու տեխնածին աղետների անբարենպաստ հետեւանքները սահմանափակելու կամ դրանցից խուսափելու համար:

Աղետ

Հասարակության գործառույթների լուրջ խախտում, որը կարող է հանգեցնել լայնածավալ մարդկային, նյութական, տնտեսական, էկոլոգիական կրորուստների, որոնք գերազանցում են տուժած միության կամ հասարակության՝ դրանք սեփական ռեսուրսներով հաղթահարելու ունակությունը:

Աղետը գործընթացի գործառույթներից մեկն է ռիսկի պայմաններում: Այն ծագում է սպառնալիքի, խոցելիության պայմանների եւ ռիսկի բացասական հետեւանքների նվազեցմանն ուղղված կարողությունների կամ ջանքերի թուլությունը համադրելու արդյունքում:

Տարերային աղետների ռիսկի կառավարում

Հասարակության՝ բնական սպառնալիքների ու դրանց հետ կապված տեխնածին ու էկոլոգիական աղետների ազդեցության նվազեցման նպատակով քաղաքական որոշումները, ռազմավարությունները եւ ներուժն իրականացնելիս Վարչական որոշումների իրականացման, կազմակերպական ու օպերատիկ ունակությունների եւ հմտությունների պարբերական կիրառման գործընթաց:

Այն ընդգրկում է գործունեության բոլոր ձեւերը՝ ներառյալ կառուցվածքային եւ ոչ կառուցվածքային բնույթի, որոնք ուղղված են սպառնալիքների անբարենպաստ հետեւանքներից խուսափելուն (կանխարգելում) կամ սահմանափակմանը (հետեւանքների մեղմում եւ պատրաստվածություն):

Տարերային աղետների ռիսկի նվազեցում

Բաղադրիչների հայեցակարգային կառուցվածք՝ հասարակության մեջ տարերային աղետներից խոցելիությունը նվազագույնի հասցնելու հնարավորության եւ ռիսկի նվազեցման հաշվով, որպեսզի կայուն զարգացման ընդհանուր ենթատեքստում հնարավոր լինի խուսափել (կանխարգելում) կամ սահմանափակել (հետեւանքների մեղմում եւ պատրաստվածություն) սպառնալիքների անբարենպաստ ազդեցությունը:

Տարերային աղետների ռիսկի նվազեցման հայեցակարգը բաղկացած է հետեւյալ գործողություններից՝

- ռիսկի ընկալում եւ գնահատում՝ ներառյալ սպառնալիքների, խոցելիության եւ կարողությունների վերլուծությունը.
- գիտելիքների ընդլայնում՝ ներառյալ կրթությունը, ուսուցումը, հետազոտություններն ու իրազեկումը.
- հասարակական պարտավորություններ ու ինստիտուցիոնալ կառուցվածքներ՝ ներառյալ կազմակերպական, քաղաքական, օրենսդրական եւ հասարակական բնույթի միջոցները.
- որոշակի միջոցների կիրառում՝ ներառյալ էկոլոգիական կառավարումը, հողօգտագործումն ու քաղաքային պլանավորումը, կարեւոր օբյեկտների պաշտպանությունը, գիտության տեխնոլոգիայի օգտագործումը, համագործակցությունն ու ցանցերի ստեղծումը, ֆինանսական գործիքները.
- վաղ ազդարարման համակարգ՝ ներառյալ կանխատեսումը, կանխարգելումը, պատրաստվածությունը եւ արձագանքումը:

Վաղ ազդարարում

- Որոշակի ինստիտուտների աջակցությամբ ժամանակին ու արդյունավետ տեղեկատվության ապահովում, որը տվյալ սպառնալիքին ենթակա անձանց թույլ կտա ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կօգնեն խուսափել այդ սպառնալիքից կամ նվազեցնել դրա առաջացնան ռիսկը եւ պատրաստվել արդյունավետ արձագանքմանը: Վաղ ազդարարման համակարգերն ընդգրկում են · ործողությունների հետեւյալ հաջորդականություններ:
- սպառնալիքի ճանաչում եւ քարտեզագրում.
- գսպասավոր իրադարձության կանխատեսում եւ մոնիթորինգ.
- տվյալների մշակում.
- քաղաքական իշխանության ու բնակչության տեղեկացում (ազդարարում).
- սպառնալիքին ի պատասխան՝ ժամանակին ու համարժեք գործողությունների իրականացում:

Էկոհամակարգ

Որպես մեկ ամբողջություն գործող եւ իրենց ֆիզիկական միջավայրի հետ փոխգործակցող կենդանի օրգանիզմների բարդ փոխհարաբերությունների շարք: Էկոհամակարգի սահմանները վիճելի են ու կախված հետազոտության կամ հետաքրքրության բուն նպատակից: Այսպիսով՝ էկոհամակարգի չափերը կարող են տատանվել շատ փոքրից մինչեւ այնպիսիք, ինչպիսին ինքը երկիր մոլորակն է:

Էլ-Նինյոյի առաջացրած տատանումները Հարավային օվկիանոսում

Արեւադարձային շրջանում խաղաղ օվկիանոսի եւ գլոբալ մթնոլորտի բարդ փոխազդեցություն, որն աշխարհի տարբեր մասերում հանգեցնում է օվկիանոսային եւ եղանակային պայմանների անկանոն փոփոխությունների, հաճախ ուղեկցվում է նշանակալի ազդեցությամբ՝ ներառյալ բնակության ծովային միջավայրի եւ տեղումների բաշխման ռեժիմի փոփոխությունները, ջրհեղեղները, երաշտներն ու փոթորիկները:

Էլ-Նինյո նշանակում է ջերմաստիճանի զգալի բարձրացում էկվադորի ափի երկարությամբ, Պերուի, Չիլիի հյուսիսային հատվածի եւ խաղաղ օվկիանոսի արեւելյան հատվածի լայնությամբ այդ ժամա-

նակ, երբ հարավային մասում տատանումները ենթադրում են տեղում-ների ու մբնոլորտային ճնշման գլոբալ փոփոխություններ: Հա Նինյան Ել-Սիմոյի հակապատկերն է: Այս երկուսի յուրաքանչյուր դրսեւորում սովորաբար տեսում է մի քանի սեզոն:

Կառավարումն արտակարգ իրավիճակներում

Ուսուրաների կառավարում եւ կազմակերպում, պատասխանատվություն արտակարգ իրավիճակի բոլոր քաղադրիչների՝ հատկապես պատրաստվածության, արձագանքման եւ վերականգնման համար: Կառավարումն արտակարգ իրավիճակներում ենթադրում է պետական, հասարակական ու մասնավոր կազմակերպությունների բնականոն աշխատանքն ապահովելու համար նշակված պյանների, կառուցվածքների ու նեխանիզմների առկայություն՝ արտակարգ իրավիճակի բոլոր պահանջմունքներին համակողմանի ու համակարգված արձագանքելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

Տվյալ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով իրականացված ընթացիկ էկոլոգիական հավասարակշռությունը խախտող որեւէ նոր գործոնի ուսումնասիրություն: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը քաղաքական գործիք է, որն անհրաժեշտ է միջոցառումների էկոլոգիական ազդեցությունը վերլուծության ենթարկելու եւ տվյալներ ներկայացնելու համար՝ մտահղացման ծագման պահից մինչեւ որոշման իրականացումը: Այն լայնորեն կիրառվում է զարգացման ոլորտում իրականացվող ազգային ծրագրերում եւ միջազգային նախագծերում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է ներառի ռիսկի մանրանասն գնահատում եւ առաջարկի այլընտրանքային որոշումներ ու տարբերակներ:

Շրջակա միջավայրի վատթարացում (դեգրադացիա)

Շրջակա միջավայրի՝ սոցիալական ու էկոլոգիական նպատակների ու պահանջմունքների բավարարման ունակության նվազում:

Չնարավոր ազդեցությունը կարող է տարբեր լինել: Այն կարող է հանգեցնել խոցելիության, բնական սպասնալիքների հաճախականության ու ուժգնության աճի: Առանձին օրինակներ ընդգրկում են հողի դեգրադացիան, անտառազրկումը, անապատացումը, անտառային

իրդեհները, կենսաբանական բազմազանության կորուստը, հողի, ջրի եւ օդի աղտոտումը, կլիմայի փոփոխությունները, ծովի մակարդակի բարձրացումը եւ օգնային շերտի քայլայումը:

Կանխատեսում

Ապագա իրադարձության ծագման որոշակի պնդում կամ վիճակագրական գնահատական (ՅՈՒՆԵՍԿՕ): Կախված կիրառության ոլորտից՝ այս բառը տարբեր նշանակություններ ունի:

Երկրաբանական սպառնալիք

Բնական գործընթացներ կամ երեւությներ, որոնք կարող են հանգեցնել մահվան կամ մարմնական վնասվածքների, նյութական վնասի, սոցիալական եւ տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վիճակի վատրարացման: Երկրաբանական սպառնալիքներն ընդգրկում են տեկտոնական բնույթի ներքին գործընթացները, ինչպիսիք են երկրաշարժերը, երկրաբանական ճեղքածքները, ցունամին, հրաբուխների գործունեությունն ու ժայռքումը, ինչպես նաև արտաքին գործընթացները, ինչպիսիք են զանգվածների շարժումները՝ սոլանքներ, փլուզումներ, քարաթափումներ ու ճնահյուսներ, երկրի մակերես-տույրի փլուզումներ ու բոլոր հնարավոր տեսակների հեղեղային հոսքեր: Ըստ ծագման ու ազդեցության երկրաբանական սպառնալիքները կարող են լինել՝ եզակի, հաջորդական կամ միագումար:

Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (ԱՏՀ)

Տվյալների ընթացիկ բազան եւ տարածական վերարտադրությունը համադրող վերլուծություն, որի արդյունքներն ամենից հաճախ ներկայացվում են քարտեզների տեսքով: Առավել մանրամասն սահմանումը նշանակում է համակարգչային ծրագրեր, որոնք ստեղծված են երկրի վերաբերյալ տվյալների հավաքագրման, պահպանման, սոութման, ամբողջացման, վերլուծության ու ներկայացման համար՝ հաշվի առնելով տարածական կողմնորոշչները: Աշխարհագրական տեղեկատվական համակարգերն ավելի հաճախ օգտագործվում են սպառնալիքների ու խոցելիության քարտեզավորման, տարերային աղետների ռիսկի կառավարման վերլուծության եւ կիրաօնման համար:

Սպառնալիք

Չնարավոր ավերիչ ֆիզիկական իրադարձություն, երեւոյթ կամ մարդու գործունեություն, որը կարող է հանգեցնել մահվան կամ մարմնական վնասվածքների, նյութական վնասի, սոցիալական եւ տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վիճակի վատքարացման: Սպառնալիքները կարող են ունենալ թաքնված բնույթ, այսինքն՝ վտանգ ներկայացնել ապագայում, ինչպես նաև կարող են ունենալ տարբեր ծագում՝ բնական (Երկրաբանական, հիդրոօդերեւութաբանական եւ կենսաբանական) կամ մարդու գործունեության հետեւանքով առաջացած (շրջակա միջավայրի վիճակի վատքարացում եւ տեխնոլոգիական աղետներ): Ըստ ծագման եւ ազդեցության՝ սպառնալիքները կարող են լինել եզակի, հաջորդական կամ միագումար: Յուրաքանչյուր սպառնալիք բնութագրվում է տեղայնացմանը, ուժգնությամբ, հաճախականությամբ եւ հավանականությամբ:

Ձերմոցային գագ

Զրի գոլորշիներ, ածխածնի երկօքսիդ, մեթան, քլորֆտորածխածնային գագ եւ հիդրոքլորֆտորածխածնին պարունակող գագ, որը կլանում եւ կրկնակի ջերմային ճառագայթում է արձակում՝ տաքացնելով երկրի մակերեւույթն ու նպաստելով կլիմայի փոփոխությանը:

Սպառնալիքի վերլուծություն

Սպառնալիքի բացահայտում, ուսումնասիրություն եւ մոնիթորինգ՝ դրա պոտենցիալը, առաջացումը, բնութագրերն ու վաղքը որոշելու նպատակով:

Հիդրոօդերեւութաբանական սպառնալիքներ

Մթնոլորտային, հիդրոլոգիական ու օվկիանոսագրական բնույթի բնական գործընթացներ կամ երեւույթներ, որոնք կարող են հանգեցնել մահվան կամ մարմնական վնասվածքների, նյութական վնասի, սոցիալական եւ տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վիճակի վատքարացման: Հիդրոօդերեւութաբանական սպառնալիքներ են՝ ջրհեղեղները, հեղեղային կամ ցեխի հոսքերը, արեւադարձային ցիկլոնները, ամպրոպներն ու կարկուտը, անձրեւները, փոթորիկները, ձնաբութերն ու այլ երեւույթներ՝ երաշտ, անապատացում, անտառա-

յին հրդեհներ, ջերմաստիճանի տատանումներ, ավագի կամ փոշու փոթորիկներ, հավերժական ցուրտ, ձյունե եւ սառցե հյուսեր: Ըստ ծագման եւ ազդեցության՝ հիդրոօդերեւութարանական սպառնալիքները լինում են եզակի, հաջորդական կամ միագումար:

Հողօգտագործման պլանավորում

Ֆիզիկական եւ սոցիալ-տնտեսական պլանավորման բնագավառ, որը որոշում է հողի օգտագործման տարրեր ձեւերի միջոցները, առավելությունները կամ սահմանափակումները՝ որոշումներ ընդունելիս հաշվի առնելով բնակչության տարրեր խնբերի վրա համապատասխան ներգործության կամ հասարակության շահերը: Հողօգտագործման պլանավորումը ներառում է ուսումնասիրություններ եւ քարտեզագրում, բնապահպանական տվյալների վերլուծություն եւ սպառնալիքների գնահատում, հողի օգտագործման այլընտրանքային տարրերակների նշակում, տարրեր աշխարհագրական ու վարչական միավորների համար երկարաժամկետ ծրագրերի կազմում: Հողօգտագործման պլանավորումը կարող է նպաստել տարերային աղետների հետեւանքների մեղմացման ու ռիսկի նվազեցմանը՝ հանդես գալով խիտ բնակեցված շրջանների առաջացման ու վտանգավոր գոտիներում առանցքային նշանակության օբյեկտների շինարարության դեմ, վերահսկելով բնակչության խտությունն ու տարածքի վրա բաշխումը, սահմանելով տրանսպորտային, էներգետիկ, ջրային եւ կոյուղու կարեւությունները:

Հետեւանքների մեղմում

Կառուցվածքային եւ ոչ կառուցվածքային բնույթի միջոցներ՝ ուղղված բնական սպառնալիքների անբարենպաստ ազդեցության, շրջակա միջավայրի վիճակի վատթարացման ու տեխնածին աղետների հետեւանքների սահմանափակմանը:

Բնական սպառնալիքներ

Բնական գործընթացներն ու երեսույթները, որոնք տեղի են ունենում կենսոլորտում եւ պոտենցիալ ավերիչ իրադարձություն են: Բնական սպառնալիքները կարելի է դասակարգել ըստ իրենց ծագման, մասնավորապես՝ երկրաբանական, հիդրոմետեորոլգիական կամ կենսաբանական: Սպառնալիքի բնույթը ունեցող իրադարձությունները կարող են տարբերակվել ըստ մագնիտուդի կամ ինտենսիվության, հաճախականության, տետրոդության, ազդեցության գոտու չափերով, վրա հասնելու արագությամբ, ժամանակային եւ տարածական ընդգրկվածությամբ:

Պատրաստվածություն

Ժամանակին ձեռնարկված գործողություններ ու միջոցներ՝ սպառնալիքի ազդեցությանն արդյունավետ արձագանքումն ապահովելու համար՝ ներառյալ ժամանակին ու արդյունավետ վաղ ազդարարումն ու վտանգավոր գոտուց մարդկանց եւ ունեցվածքի ժամանակին տարահանումը:

Կանխարգելում

Սպառնալիքի անբարենպաստ ազդեցությունից խուսափելու համար ձեռնարկվող եւ դրանց հետ կապված էկոլոգիական, տեխնոլոգիական ու կենսաբանական աղետները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցներ: Սոցիալական ու տեխնիկական հնարավորություններից, ինչպես նաև տնտեսական շահութաբերությունից կախված՝ կանխարգելիչ միջոցառումներում արված ներդրումներն արդարացված են տարերային աղետներից ավելի հաճախ տուժող շրջաններում: Հանրային իրազեկվածության եւ կրթության ենթատեսառում տարերային աղետների նվազեցման խնդրի եւ դրան համապատասխան վարքագիր նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը նպաստում է «կանխարգելման մշակույթի» ստեղծմանը:

Հանրային իրազեկվածություն

Բնակչության տեղեկացման գործընթաց, ոխկից եւ սպառնալիքներից սեփական խոցելիությունը նվազեցնելու միջոցների վե-

րաբերյալ գիտակցության մակարդակի բարձրացում: Դա հատկապես կարեւոր է պետական ծառայողների համար, որոնք աղետի դեպքում պատասխանատու են մարդկանց կյանքի եւ ունեցվածքի փրկության համար: Հանրային իրազեկման ապահովման ոլորտում իրականաց-վող միջոցառումները նպաստում են վարքագի փոփոխությանը եւ ռիսկի նվազեցման մշակույթի ձեւավորմանը:

Հանրային տեղեկատվություն

Հետազոտությունների կամ ուսման ընթացքում ներկայացված կամ ստացած եւ հանրության շրջանում տարածման համար մատչելի տեղեկություններ, փաստեր ու գիտելիքներ:

Վերականգնում

Որոշումներ եւ գործողություններ, որոնք ձեռնարկվում են աղետից հետո՝ տուժած բնակչության կյանքի պայմանները բարելավելու կամ վերականգնելու համար՝ միաժամանակ ապահովելու ռիսկի նվազեցմանն ուղղված անհրաժեշտ փոփոխությունները: Վերականգնումը (օեարիլիտացիա եւ վերակառուցում) տարերային աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների մշակման եւ կիրառման հնարավորություն է տալիս:

Կայունություն

Հնարավոր վտանգին ենթակա համակարգի, հասարակության կամ կազմակերպության հարմարվելու ընդունակություն: Գործելու որոշակի մակարդակի հասնելու եւ այն պահպանելու համար համակարգը կամ հասարակությունը դիմադրություն է ցույց տալիս կամ ենթարկվում ձեւափոխության: Դա որոշվում է սոցիալական համակարգի ինքնակազմակերպման ընդունակությամբ՝ ուղղված դրա մակարդակի բարձրացմանը՝ հաշվի առնելով նախկինում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների փորձը եւ նպատակ ունենալով կատարելագործել եւ ուժեղացնել ռիսկի նվազեցման ու պաշտպանության միջոցները:

Վերագինում (կամ մոդեռնիզացիա)

Կառուցվածքների ուժեղացում՝ դրանք աղետների նկատմամբ ավելի դիմացկուն եւ կայուն դարձնելու նպատակով: Վերագինումը

Ենթադրում է նյութի ծավալը, ամրության գործակիցը, մաշվածությունը, բեռնվածությունն ու ճկունությունը փոփոխելու հնարավորություն, ինչպես նաև կտրուկ փոփոխությունների, ինչպիսիք են էներգիան կլանող ամորտիզատորների կամ իինքի վիբրամեկուսացման համակարգերի ներդնումը: Վերազինման օրինակները ներառում են նաև քամու ուժգնությունը եւ աերոդինամիկական ծանրաբեռնվածության գործոնները կամ սեյսմաակտիվ գոտիներում կրող կառուցվածքների ամրացումը:

Ոիսկ

Կործանարար հետեւանքների կամ սպասվող կորուստների (զոհեր, վիրավորներ, ունեցվածքի կամ ապրելու միջոցների կորուստ, տնտեսական ցեցումներ եւ շրջակա միջավայրին հասցված վնաս) հավանականություն՝ խոցելիության եւ բնական ու մարդածին սպառնալիքների փոխազդեցության հետեւանքով: Ավանդաբար ռիսկն արտահայտվում է «Ոիսկ = Սպառնալիք x Խոցելիություն» բանաձեւով: Երբ խոսքը խոցելիության ֆիզիկական առումների մասին է, որոշ դիսցիպլիններ ներառում են նաև ազդեցության հասկացությունը: Ֆիզիկական վնասի հավանականության արտահայտումից բացի՝ կարեւոր է հասկանալ, որ ռիսկը կարող է ստեղծվել ու գոյություն ունենալ սոցիալական համակարգի ներսում: Անհրաժեշտ է հաշվի առնել ռիսկի սոցիալական ենթատեսատը, ինչպես նաև այն, որ մարդիկ պարտադիր չեն, որ միատեսակ ընկալեն ռիսկը եւ դրա սկզբնապատճառները:

Ոիսկի գնահատում/Վերլուծություն

Ոիսկի բնույթի ու աստիճանի որոշման մեթոդիկա՝ հնարավոր սպառնալիքների վերլուծության եւ խոցելիության՝ գոյություն ունեցող պայմանների գնահատման եղանակով, որոնք կարող են հնարավոր վլոնագ ներկայացնել կամ վնաս պատճառել մարդկանց, գույքին, գոյության միջոցներին եւ շրջակա միջավայրին, որից նրանք կախված են: Ոիսկի գնահատման գործընթացը հիմնվում է սպառնալիքի տեխնիկական բնութագրերի որոշման (դրա տեղայնացման, ուժգնության, հաճախականության, հավանականության), ինչպես նաև դրա ֆիզիկական, սոցիալական, տնտեսական ու էկոլոգիական չափումների խոցելիության ու ազդեցության վերլուծության վրա: Ընդ որում՝ հասուկ ուշադրություն պետք է դարձնել հաղթահարման կարողություններին՝ հաշվի առնելով ռիսկի տարբեր սցենարները:

Օգնություն կամ արձագանքում

Օգնության տրամադրում եւ աջակցություն աղետի ժամանակ կամ դրանից անմիջապես հետո՝ մարդկանց կյանքը փրկելու եւ տուժած բնակչության նվազագույն պահանջմունքները բավարարելու նպատակով: Օգնությունը կարող է ունենալ անհետաձգելի, կարճաժամկետ կամ շարունակական բնույթ:

Կառուցվածքային ու ոչ կառուցվածքային բնույթի միջոցներ

Կառուցվածքային բնույթի միջոցները վերաբերում են ցանկացած ֆիզիկական կառուցվածքի, որը նվազեցնում է սպառնալիքների հետեւանքները կամ թույլ է տալիս խուսափել դրանցից: Դրանք իրենց մեջ ներառում են անվտանգության եւ պաշտպանական օբյեկտների, ենթակառուցվածքների նախագծման ու կառուցման մեթոդներ: Ոչ կառուցվածքային բնույթի միջոցներն են օրենսդրությունը, իրազեկվածությունը, գիտելիքների ընդլայնումը, հասարակական մասնակցությունը, ինչպես նաև շահագործման փորձն ու մեթոդները՝ ներառյալ համատեղ գործողությունների ու տեղեկատվության տրամադրման մեխանիզմները, որոնք նպաստում են ռիսկի եւ դրա հետ կապված սպառնալիքների նվազեցմանը:

Կայուն զարգացում

Զարգացում, որը բավարարում է ներկա սերնդի պահանջմունքները եւ միաժամանակ ռիսկի չի ենթարկում հետագա սերունդներին: Այն իր մեջ ընդգրկում է երկու առանցքային հասկացություն՝ «պահանջմունքներ», մասնավորապես՝ մոլորակի աղքատ բնակչության պահանջմունքները, որին անկասկած պետք է առաջնահերթություն տրվի, եւ «սահմանափակումներ»՝ կապված տեխնոլոգիայի վիճակի եւ շրջակա միջավայրի՝ ընթացիկ ու ապագա պահանջմունքները բավարարելու ունակության վերաբերյալ սոցիալական կազմակերպման հետ (Բրուտոլանդի հանձնաժողով, 1987): Կայուն զարգացումը հիմն-

Ված է սոցիալ-մշակութային զարգացման, քաղաքական կայունության եւ համընդհանուր կանոնների, տնտեսական աճի ու էկոհամակարգի պահպանության վրա: Այս ամենը կապված է տարերային աղետների ռիսկի նվազեցման հետ:

Տեխնոլոգիական սպառնալիքներ

Վտանգավոր գործընթացներից, տեխնոլոգիական կամ արդյունաբերական աղետներից, ենթակառուցվածքներում տեղի ունեցած վթարմերից կամ մարդու գործումեռությունից բխող վտանգ, որը կարող է հանգեցնել մահվան, վնասվածքների, նյութական կորստի, սոցիալական եւ տնտեսական ցնցումների ու շրջակա միջավայրի վիճակի վատթարացման: Առանձին օրինակներ ընդգրկում են արդյունաբերական աղտոտումը, միջուկային եւ ռադիոակտիվությունը, թունավոր (վնասակար) թափոնները, ամբարտակների փլուզումները, վթարմեր տրանսպորտում, արդյունաբերության եւ արտադրության մեջ (պայթյուն, հրդեհ, արտահոսք):

Խոցելիություն

Ֆիզիկական, սոցիալական, տնտեսական եւ էկոլոգիական գործոններով կամ գործընթացներով որոշվող պայմաններ, որոնք մեծացնում են բնակչության ենթակայությունը սպառնալիքների ազդեցությանը: Դրանք գործոնները, որոնք օգնում են մարդկանց հաղթահարել սպառնալիքները, ներկայացված են «Կարողություններ» բաժնում:

Անտառային հրդեհներ

Բուսականության գոտում յուրաքանչյուր հրդեհ՝ անկախ բռնկման աղբյուրից, հասցրած օգուտից կամ վնասից: